Universitäts- und Landesbibliothek Bonn

Nor ǰuġa kês darov yaraǰ kam Yišoġut'iink' anc'eal žamanakac'

Vienna, 1909

urn:nbn:de:hbz:5:1-72601

Visual Library

Goussen
4°
3077
4°

~~Gousse 3077~~

Goüssen 4° 3077

Ա 3077

ՆՈՐ ՋՈՒԿԸ

ԿԷՍ ՊԱՐՈՎ ՅԱՒՒԱՋ

ԿԱՄ

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՔ ԱՆՅԵԱԼ ԺԱՄԱՆԱԿԱՅ

ԳՐԵՑԻ

Թ. Տ. Ս.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՆՊԱՍՏԻՒ ԱՋՆԻՒ ԲԱՐԵԿԱՄԻ ՄԻՈՑ

ՎԻԵՆՆԱ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1909.

3077

Իմ Ազնիւ եւ սիրելեալ բարեկամ . . .,

Որովհետեւ ձեր բնիկ հաստատութեամբն չէք ժամանեցիք յիշել ձեր ասոնցմէ, սակայն պատուհասի ձեր կարգին: Բայց հարկ կը համարիմ զձեզ յիշատակել ասոր իմ ակնարկով եւ ձեր ընդունակութեանցն վրայ սիրելոյդ այսպէս քաղցրութեամբ պատուհասդ ծնողացն "վարպետի" խնդիրն :

Քանի ամօք յառաջ, պատահեցաւ որ սորա գրիչն, առ ժամանակ մի, կը ընակէր մի մենաւոր գիւղանիստ վայրում՝, ուր ընթերցանութեան միջոցք եւս հազիւ կային: Եւ երկար ձմեռնային երեկոյքն ծանրանալով իւր վերայ, միայնակութիւնից — որպէս ընական է այսպէս դէպքում՝ — ընկղմեալ կը մնայր երկար ժամք մտածութեան մէջ: Մատաղ հասակն կը սիրէ միշտ ապառնւոյ վերայ շրջշրջել միտքն, այլ ծերութիւնն, որոյ ապառնին այլ եւս կարճ է, կը ձգտէ իւր մտածութիւնն առ անցեալն: Եւ այսպէս էր գի վեր մտածութեանց մէջ, երեւակայութիւնն յառաջ կը բերէր նորա յիշողութեան վարագուրի վերայ բազում՝ եւ պէսպէս անցեալ դիպուածոց եւ անցից լուսաթափանց շարժուն պատկերներ: Սոյն պատկերներն մնարմնացնելոյ աղագաւ որպէս զբաղմունք ինչ, թղթոյ փոքրիկ պատառաց վերայ ի գիր անցուցան, որք մնացին ապա երկար ժամանակ լքեալ եւ աննշմար: Բայց երբ պաշտօնից հրաժարիլ պարտաւորեցաւ ասացեալ գրիչն ի պատճառս ծերութեան եւ անառողջութեան, օր մի ակնարկութեան ներքոյ գտեալ ասացեալ պատառաց ծրարն, հետամտութեամբ սկսաւ կարդալ զայնս — պարապ ժամանակ ունելով — եւ այսպէս թուեցաւ իրն որ թէ եւ շատ արժանիք չկային

ի նոսին, քայց դեռ եւս գուցէ արժանի համարուէին այլ ազգակից անձանց ընթերցման եւս: Թէեւ, աշաց վատութեան պատճառաւ, փոքր մի նեղութիւն եղեւ հատաքել եւ օրինակել զայնս կանոնաւորապէս, սակայն դարձեալ որպէս զբաղմունք ինչ յանձն էառ զայն. եւ ահա այս է արդիւնքն զոր կը դնէ ընթերցողի յանդիման:

Գրչին զբաղմունք եղեն մնռածմունքն, նոցին մարմնացնելն, նոյնպէս եւ օրինակելն: Եւ եթէ ժամ մի կամ երկու զբաղել կարողանայ նոյնն ընթերցողին եւս, ուրեմն գրչի նպատակն ապարդիւն չպիտի լինի:

ՅԱՆԿ

Տունք եւ շինուխիխնք,
Քաղաքական վիճակ,
Ներքին կառավարուխիեան վիճակ,
Սիխիական վիճակ,
Ընտանեկան կեանք,
Ընտանեկան Յարաբերուխիխնք
Լալ պահելն,
Կնոջ իր ամուսնոյն օտար ձեռանայն,
Արական սեռի նախապատուխիխնն,
Ամուսնք եւ մանկանուսնք,
Ընտանեկան հանդերձանք եւ կարասիք եւ կահիք,
Հագուստ եւ զարդ,
Ուտելիք եւ ըմպելիք,
Հիւանդուխիխն, բժիշկ եւ դեղ,
Մարդասիրուխիխն եւ առողջական զգուշուխիխնք,
Այցելուխիխնք եւ հիւրընկալուխիխնք,
Ծնունդ,
Մկրտուխիխն,
Երեխայից զարգացնելոյ ձեւ,
Յարդ եւ Օրորոց
Հարսանիք,
Մահ.

ՏՈՒՆՔ ԵՒ ՇԻՆՈՒԹԻՒՆՔ



Որ Ջուղայոյ տունքն իւրեանց բարձր՝ բարձր որմերովն, թէ եւ մի օտարականի աչքում բանտի նմանութիւն կը բերեն, այլ թէ սովորութիւն եւ թէ հարկի պարտաւորութիւն էր եղել նոա այնպէս բանտանման շինել իւր տունն, Ջուղայեցին կը սիրէր ղայն։ Կը սիրէր նորին անմիջամուխ առանձնութիւնն։ Այն իւր բերդն էր, իւր ամրոց եւ պատսպարան էր, իւր առանձին փոքրիկ աշխարհն էր, եւ նորա մէջ էր, որ ընտանեկան կեանքն իւր բոլոր զուարճ կամ տխուր, ախորժ կամ անախորժ դերովքն կ'անցանէր, վարագուրուած օտարի աչքից։ Ջուղայեցիք՝ ի սկզբանէ անտի ոչ միայն անասէր են եղած, այլեւ անկանոն եղանակաւ անշինասէր, բառիս նիւթական նշանակութեամբն առեալ։ Ի սկզբանէ անտի, դուցէ եւ մինչ այժմ, ամէն մի Ջուղայեցւոյ առաջին փափաքն,

առաջին փառասիրութիւնն, առաջին նպատակն եղեալ է
իւր համար մի սեպհական տուն ունիլ, կամ շինել եթէ
կարելի։ Դարձեալ տան մէջ բնակելոյ սովորութիւն երեւի
բնաւ չէ եղած եւ հին ժամանակներում։ Առաջին ան-
գամ տուն վարձելոյ անյքն զոր ես կը մտաբերեմ, փոքր
մի ծիծաղելի էր, եւ տանուտեառն համար ոչ այնչափ
քաջալերական։ Պատուաւոր Հայ ոմն իւր գերդաստանով
Համադանից առ Ջուղա գալով, Յակոբջանեանց կամ
Պրատէնց թաղում, վարձու ստացաւ բաւական մեծ տուն
մի տարեկան տասներկու, կամ ամեակն մի Ղուան վար-
ձով։ Փոքրն լաւ է քան ոչինչն, պիտի մտածած լինէր
տանուտէրն իւր մտքում բաւարարութեամբ, բայց խեղճ
մարդն չգիտէր որ իւր ծառն նոր սկսած է կանաչել։
Տարւոյ վերջում, օր մի հանդիպելով իւր տան վար-
ձատու բնակիչին, յառաջ քան իւր բերան բանային, վեր-
ջինդ կ'ասէ, "Ուրախ կեցնեմ, Պարոն, եթէ շնորհէք մեր
թեթեւ հաշիւն աւարտել"։ Տանուտէրն զարմանալով,
թէ ինչ հաշիւ պիտի լինի այն, քանզի ոչինչ դրամոց
տուրեւառ չէր պատահեալ նոցա մէջ, եւ մտածելով որ
եթէ հաշիւ աւարտելոյ բան կայ, աւարտելն յաւէտ նորա
ձեռքումն է եւ ոչ իւր, քանզի ահա ժամանակ էր որ
իւր տան վարձն գտանէր, կը հարցնէ թէ ինչ հաշիւ է
այն։ "Տան մասին", կը պատասխանէ միւսն, "Գերմանկ
նորոգութիւնք էին հարկաւոր զոր պարտեալ եմ։ Հաշուի
— փողոցապրան գաւիթ — լամբէրի աղիւսներն խախ-
տուած էին, զայդ շինեալ եմ, երկու նոր ակուռ եմ
պատրաստեալ, փոսի պղտկին նորոգեալ եմ, եւ այլ այդ-
պիսի ծախքեր եմ արարել, եւ բոլոր ծախուց գումարն
է տասներեօթն Ղուանիք եւ մի Արաբի, եւ շնորհակալ կը
լինիմ, եթէ նեղութիւն չէ ձեր համար, տասներկու Ղուա-

նիք, տան վարձու համար պահելով, հինգ ղուանիք եւ մի Արասին վճարէք ինձ»։ Այսպէս էր յառաջն տուն վարձու տալն ի Ջուղա։ Ի հարկէ սորա պատճառն դժուարին չէ հասկանալ, երբ կը մտաբերենք որ ժամանակ է եղել ի Ջուղա, շատ տներ անտէր եւ անբնակիչ են եղած, քանզի երբեմն այնպէս դառն հալածմունք կային եւ խղճիկ Ջուղայեցւոց վերայ, որ միայն իւրեանց անձն փրկելոյ համար, տուն եւ ստացուածք լքանելով, կը փախչէին առ օտար աշխարհ։ Պատահած է ժամանակ, որ Ջուղայու տներն կէս թուով եւս բնակիչք չեն եղել անդ, եւ գիւղայիք յետոյ գալով ի Ջուղա, դադարկ եւ անտէր տներին սիրացեալն առանց գին տալոյ։ Կէս դարով յառաջ եւս կային տներ, որոց դրունքն փակ էին եւ չունէին բնակիչ։ Ցետոյ այլ ի սովորութիւն եւս եղել է միշտ, եւ գուցէ կայ մինչ այժմ, որ եթէ ոք սեպհական տուն չունէր, կարող էր այլոյ տան մէջ ձրի բնակութիւն գտանել, եւ սոքա հակառակ բառի նշանակութեանն, կը կոչուէին "անուոր„, գուցէ միեւնոյն դիտամբ որպէս սովորութիւն կր կուբին աչքառոր կոչել, հաւանական է թէ նոցա սիրտն չցաւացնելոյ համար, քանզի աչքաւորն աչք ունող, որպէս եւ անուորն տուն ունող կը նշանակէ։ Բազում տանուտեարք կը հրաւիրէին եւ կը համոզէին որ այս ինչ կամ այն ինչ անուոր գնայր իւրեանց տան մէջ բնակուէր, քանզի ապահովութիւն կը համարէին զայն, եւ գրեթէ ամէն հինգերորդ կամ վեցերորդ տուն իւր անուորն ունէր, որ մի կամ երկու սենեակ գտանելով իւր համար կ'ապրէր անկախ եւ միխիթար։ Ի դէպս անհամաձայնութեան ինչ, կը սպառնայր անուորն առ տանուտէրն, որ նորա տունն կը թողնէր ի բաց կ'երթայր, եւ շատ անգամ տանուտէրն կը խոնարհէր, քանզի անուորի համար միշտ բնակութիւնն պա-

կաս չէր։ Այսպէս էր կէս դարով յառաջ ի Զուղա, եւ այսպիսի հանգամանաց ներքոյ ով կերազէր տան վարձ տալ։ Ցեսոյ որքան չնչին եւ թեթեւ էին տանց արժէքն։ Այն ժամանակուամ ի բոլոր Զուղա, չկարծեմ, կայր տուն որ երկու հարիւր թուման[ներ]ոց յաւել դին բերէր։ Բայց տան եւ հինգ թուման[ներ]ով եւս կարելի էր տուն գնել։ Մի տուն Սուրբ Սահակ[ան]նոս եկեղեցւոյ կից, վաճառուեց տան եւ ութ թուման[ներ]ով, եւ գնողն կը պատմէր թէ խաբուած էր ինքն, եւ այնու դրամով յաւել լաւ տուն էր կարող գնել։ Զարսու թաղի բազանիքի փողոցում մի տուն վաճառուեց տան եւ մին թուման[ներ]ով, չգիտեմ սա եւս անիրաւեալ էր կարծում ղինքն թէ ոչ։

Շինուածոց մասին Նոր Զուղա, բացառութեամբ քանի մի եկեղեցեաց եւ տանց, չկարէր շատ պարծիլ, բայց ասացեալ բացառութիւնքն բաւական հոյակապ շինութիւնք էին, որք ի հարկէ գեռ պէտք է կանգուն լինին, թողեալ Քօչէր թաղում եղեալ Մնացականեանց սատակեալ տունն — փառաւոր եւ շքեղ դարպաս մի յաւել՝ քան տուն — զոր անիրաւ պարսիկ սուտ ժառանգ մի տիրապետելով, առանց մի քար միւսոյ վերայ թողնելոյ, բոլորովին հիմնայատակ արար, եւ Զուղայեցիք, աւաղ, ձեռն ձեռնի վերայ դրած, ականատես եղեն սոյն ափսոսելի կործանմանն, եւ ոչ ոք քայլ մի չյառաջացաւ փրկել այն փառաւոր շինութիւնն յայդպիսի անարգ կործանմանէ։ Հազիւ կայ կարծեմ այժմ ի Զուղա այնպիսի ազքայավայել շինութիւն, եւ գուցէ պակաս քան երկու հարիւր թուման[ներ]ով հնարէր փրկել զայն։ Վերն ասացի թէ Զուղայեցիք ոչ միայն տնասէր, այլեւ անկանոն եղանակաւ տնաշինասէր էին, բայց շատ զարմանալի եւ տարօրինակ էր յիրաւի նոցա նոյն սէրն յուցանելոյ եղանակն։ Տարօրինակութիւն բանին այն էր, որ շինու-

թիւնն ընդհանրապէս կը սկսանէր նախ քանդելով արդէն եղած շինուածն։ Մի տան նորոգութիւն տալն բնաւ մտածելի բան չէր։ Թող թէ տան որմերն անծեփ էին, թող թէ ամենայն ինչ պատաքոյ եւ ի նեղքոյ քանդ քանդուած եւ խահրեալ էր, որդւոյ յորդիս կը բնակէր անդ տանուտէրն որչափ դեռ յարկն չէր փլեալ, եւ թէեւ կաւաշէն բայց ջուղայու աներն հարիւրաւոր տարիք այսպէս անխնամն եւ առանց նորոգութեան եւս կը մնան, ի պատճառս խիստ չորութեան օդոյն, եթէ փոքր մի կաւեայ ծեփոյ տանիքն նորոգուի, ասա՛, հինգ կամ վեց տարին միանգամ, փլանիքն չգիտեն ինչ է, եւ կը մնան կանգուն դարէ ի դար։ Բայց եթէ ըստ բերման բախտի, տանուտէրն կամ նորա ժառանգն յաջողութեան հանդիպէր, մանաւանդ թէ ի հնդկատանայ փոքր ինչ դրամով վերադառնայր, առաջին գործն, հայրենական տան շինութեան գործն էր նորա համար։ Ահա կը կարծէր ոք, որ փոքր մի կը նորոգէր զայն ի ներքուստ եւ արտաքուստ, որմերն ծեփելով, խահրուածքն ի կարգի դնելով, սենեակքն սպիտակացնելով, եւ ամենայն եղանակաւ չափաւոր գեղեցկութիւն, եւ վայելուչ եւ մխիթարական կերպարան տալով տանն, բայց ո՛չ, կամ միայն մի մնան կը քանդէր եւ ի նորոյ կը շինէր, մինչդեռ միւս մնան իւր սովորական կիսաւեր վիճակումն կը մնէր, որպէս հին կարկատան նոր ձորձոյ վերայ, կամ ի հիմանց նոր շինութիւն մի կը սկսանէր կից հնոյն, եւ այս առանց շինութեան ծախքն հաշուելոյ, եւ ըստ աւետարանական առակին կը մնայր անկատար, եւ կամ եթէ պարտքի նեղքոյ անկանելով հազիւ հազ ի կատար հասուցանէր, կը պարտաւորէր վանդրամ գտանելոյ եւ պարտքն վճարելոյ կրկին պանդխտութիւն գնալ, եւ շատ տարիք մաշելով իւր կեանքն, հեռի յընտանեաց, երբեմն վերադառնալոյ եւ նորա մէջ բնակելոյ

ափոփանացն եւս չէր արժանանալ, մեռանելով օտար աշխարհում։

Նոր Ջուղայ իւր դրից եւ շինուածոց մասին չպիտի շատ փոփոխուած լինի կէս դարու միջոցում, քանզի նորա օդոյ պարզութիւնն եւ չորութիւնն ժամանակի ժանիքն այնպէս սուր չպահէ որպէս խոնաւ աշխարհներում, ուր յիսուն տարիք բաւական են զարմանալի փոփոխութիւնք պատճառել։ Բայց միանգամայն անփոփոխ եւս չէ Ջուղա։ Կէս դարով յառաջ կային ինչ ինչ ի Ջուղա, որք ափսոս չկան արդ։ Կային նորա նախկին շքեղութեան եւ փառաւոր վիճակի պատուական նշխարներն, կային այն սքանչելի եւ հոյակապ պալատանման շինուածոց աւերակներն, որք անբարբառ վկայէին թէ ինչ էր եղեալ երբեմն Նոր Ջուղա, եւ ինչ է այն արդ։ Դեռ կանգուն կային ամրողջ յարկաւ, ոչ միայն «Շաւէլոնց», «Զանգակով», «Խլիսարազմբկթ» եկեղեցիքն, եւ Սուրբ Յովհաննու վանքն, այլ բազում հոյակապ շինուածքներ նաեւ թէ Զանգարուա գետոյ կողմում, թէ Ղէյնուն ասացեալ տեղում, եւ թէ Նազարեանց մեծ փողոցի երկու կողմում եւս։ Բոլոր այս շինուածքներն թէ եւ անխնամ լքեալ գրեթէ հարիւր տարի անց ժամանակ, բայց դեռ ըստ մեծի մասին ամրողջ եւ հաստահիմն կանգնած կային, եւ փոքր մի խնամածութեամբ կը տեւէին դեռ հարիւրաւոր տարիք։ Եւ ինչ պատկառելի եւ պաշտելի արձաններ եւ հնութիւնք էին այնք, ինչ գեղեցիկ յիշատակարանք նախկին Ջուղայեցւոց մեծագործութեանց։ Մատաղ հասակում երբ ընկերակիցք ոմանք զբօսնոյ կ'երթայինք առ գետոյ կողին, կը զմայլէինք, կը սքանչանայինք, այն լքեալ, անխնամ եւ անտէր, փառաւոր եւ մեծագործ շինուածոց վերայ, որոց ոմանց փողոցադրանց պատշգամբն միայն յաւել մեծածախ եւ գեղեցկաշէն էր, քան Ջուղայու-

ներկայէն բաղում տանց ամբողջ շինութիւնն։ Ցետոյ կը մտանէինք վերոյիշեալ եկեղեցւոց մէջ, եւ չկարեմ մոռանալ, թէ ինչ մի ախուր, այլ երեւակայութիւն արծարծող ազդեցութիւն կ'առնէին այնք իմ մտաց վերայ։ Նոցա լռին՝ վեհաւոր եւ անշուք տեսարան, նոցա կիսաւեր պատուհանքն, նոցա խարխարեալ յատակն, անդուռն խորանքն, անվարագոյր, անտաճար սեղանն, որոց որմոց վերայ դեռ սպացառ գունով կ'երեւէին Սրբազան պատկերներ, այսոքիկ բոլորք այնպիսի ահ եւ պատկառանք կը ներշնչէին ի մեզ, որ բնական մղմամբ ինչ, հանդարտ եւ շշնջելով կը խօսէինք, եւ եթէ յանկարծ մեր միջից մին սկսաներ եկեղեցական երգ մի երգել, յայնժամ մտաց յանդիման կը գայր պարզ եւ կենդանի գունով այն անցեալ օրերն, երբ նոյն եկեղեցւոյ մէջ քահանայք եւ դպրաց դասք իւրեանց տեղում կանգնած, հարուստ Աղայքն եւ նոցա շնորհաշուք տիկնայքն իւրեանց տեղում, միաբան ջերմեռանդութեամբ կը վերառաքէին առ Ամենակալն ոտն իւրեանց բարեբանութիւն եւ աղերսք։ Կ'երեւակայէր միաքն որպէս թէ քահանայից մինն կը խնկարկէր սեղանոյ յանդիման, եւ նոյն իսկ խնկոյ բուրումն՝ որպէս թէ, զգալի կը լինէր առ ժամն։

Կը մտաբերեմ Աննախանձելոյ անուանեալ Ղասըն, կամ աշտարակն, որ թէ եւ կիսաւեր, բայց եօթն յարկերիցն դեռ չորքն կանգուն եւ ամբողջ էին։ Գեղեցկաուեստ եւ զմայլելի շինուած մի։ Ուխտանկիւնի աշտարակ մի էր այն, որ իւր կատարեալ վիճակում պիտի 120 ոտնաչափից անց բարձր եղած լինէր։ Ամէն մի յարկ, որ կը պարունակէր միայն մի սենեակ շրջապատեալ բացօթեայ գաւթով, ունէր իւր յատուկ ձեւն եւ ճարտարապետական կազմութիւնն միանգամայն տարբեր միւսից, եւ կ'երեւէր որպէս թէ շի-

Նոցին ցանկացեալ էր ի մի հաւաքել այդ աշտարակի վերայ բոլոր ճարտարապետական կազմուածոց տեսակ տեսակ ձեւերն։ Դորեան, Հռալական, Գոթացի, Ռուսական, Պարսկական եւն։ Աշտարակն կը բարձրանայր օդոյ մէջ հինգ-ուրոյն, եւ բաժան այլ շինուածքից, վասն որոյ եւ բայ ամենայն կողմից։ Ամէն մի սենեակն զարդարուած էր պէսպէս գեղարուեստ քանդակով, ոսկեզօծ դրուագօք եւ նկարուք հանճարեղ իւր ճարտարապետական ոճոյն, եւ պատուհանքն եւս ոյք կը բացուէին շուրջանակի, նոյնպէս յարմարեալ էին ձեւոյ շինուածոյն մէն մի սենեկի։ Բայց այս մեծածախ հոյակապ աշտարակն, որպէս երեւէր, շինուած էր միայն որպէս զբօսարան մի, ուր ամառնային եղանակուամ, որ յարկն որ աւելի ախորժելի լինէր, անդ վայելէր շինողն հեզիկ հոգւոյ հնչտարար զուարթիւնն, միանգամայն եւ իւր շրջակայից տեսարանն, քանզի այն տեղից երեւելոց էին, մի կողմից Ջուղայոյ հարաւային կողման լերինքն, եւ բոլոր Ջուղա, եւ միւս կողմից գետն եւ բոլոր Ասպահան քաղաք։ Ցուն որոյ մի անկեան վերայ շինեալ էր այս աշտարակն, թէ եւ նոյնպէս կիսաւեր, բաւական շինուած ունէր դեռ կանգուն, որով կ'երեւէր զի աշտարակին վայել, ոչ սակաւ պալատանման եւ հոյակապ էր եւ այն։ Մի յարկեան էր այն, եւ միջակում մեծ սրահ մի ունելով. չորս կողմունն կային ընդարձակ սենեակներ եւ բարձրակատոյց պատշգամներ եւ գաւիթք, բոլորն քարայատակ, եւ որմերն ծածկեալ գեղանից մինչ ուխտ ոանաչափ բարձրութիւն, ընտիր ապիկեալ ծաղկենկար պարսկական կղմինարով։ Ամէն մի սենեկի եւ իւր վերաբերեալ պատշգամի ձեղունն եւս պէսպէս նկարուք եւ դրուագօք զարդարուն էին։ Բայց աւաղ, հինչ տխրագին տեսարան կ'ընծայէր այն աչաց։ Մեր դպրոցի պատանի ուսուցիչքն պատրաստութիւն տեսեալ,

օր մի զբօսանաց տալ, սոյն Աննախանձէից Ղասրն ընտրե-
ցին զբօսանաց տեղին, եւ մեզ, քանի մի մանկանցս եւս
Թոյլ տալով ընկերել իւրեանց անդ, բոլոր օրն անցուցինք
այս անմոռանալի շինուածոյ մէջ: Զէր հնար միանգամայն
աւերակ կոչել զայն, քանզի Թէ եւ մասամբ քանդուած էր,
բայց այն մասունքն որ դեռ կանգուն կային, խիստ ակնա-
գրաւ եւ զարմանալի դիմադրութիւն յանդիման կդնէին
աչաց՝ համեմատելով աւերակ մասանցն: Մինչդեռ մի սե-
նեկի յարկի կէսն փլած էր, միւս կէսն որ դեռ ամուր էր,
իւր բոլոր ոսկեգիծ նկարուքն, եւ զարդարուն գեղարուես-
տական քանդակովքն եւ պսակօքն այնպէս նոր եւ պայծառ
կերեւէր, որպէս Թէ նոր ի նորոց ձարտարապետն դուրս
եկած լինէր նորա միջից: Մինչդեռ մի գաւԹի որմերն քանդ-
քանդեալ եւ եղծեալ էին միւսոյ ապիկեալ ծաղկանկար որ-
մերն այնպէս կենդանի եւ պայծառ գունով կը փայլէին, որ
կը կարծէիր Թէ միայն երէկէն շինուածն էին: Վերջին ան-
գամ որ տեսի զայն, մուրճն եւ բահն սկսեալ էին արդէն
իւրեանց կորստական գործն, եւ հիմն յարեւ դարձուցին,
խաղողոյ այգի կազմելով զայն:

Թողեալ եկեղեցիքն, այսպիսի պալատանման տներ, իմ
տեսածով, գուցէ քառասնից եւս յաւել կային, ոմանք
Նաղարեան փողոցի հիւսիսային կողմամբ մինչ գետոյ եզեր
մօտ, ոմանք Ղէյնունայ կողմամբ, եւ ոչ սակաւք եւս նոյն
իսկ արդի Ջուղայի Սահմանափակի միջոցի, այսինքն վե-
րոյիշեալ փողոցի հարաւային կողմամբ: Շատք ի նոցանէ
այնպէս վիճակում էին դեռ, որ ԹեԹեւ մինչ նորոգու-
Թեամբ բնակելի կարէին լինել, որպէս, օրինակի համար
Ղարիպեանց Տէր ՄատԹէոսէնց տունն, յորում դեռ
բնակիչ կայր, յորժամ սկիզբն արարին քանդելոյ, նոյնպէս
եւ Շուկրեանց ասացեալ այգում եղեալ փառաւոր կըղ-

Ճեմարակազմ շէնքն, որ առանց նորոգութեան եւս կարէր բնակիլն լինիլ, եւ Ցակոբջանեանց Թաղն միջում էր կից բնակեալ տանց, եւ ոչ արտաքոյ Ջուղայու սահմանից: Այս բոլոր մեծածախ, սխրանաց արժանի, եւ հոյակապ շինուածքունքն, տխոռ, հաղար տխոռ, չիան այլ եւս, եւ ոչ մի ի նոցանէ: Ժամանակի կործանիչ ձեռն, յեղափոխութիւնք եւ թշնամիք լինայելին նոցա, բայց Ջուղայեցիք իւրեանց ձեռօք, խաղաղ ժամանակում, քանդեցին, հիմն յատեւ դարձուցին, միայն, որպէս կասկին, վասն նոյն շինուածոց "հօնվալն„ կամ հողն ի գործ դնելոյ որպէս կալոցութիւն իւրեանց ցորենոյ անդոյ եւ խաղողոյ այգեաց համար: Թող որ յատկենական յիշատակ պէտք էր ճնային այն շինութիւնքն եւ աւերակքն եւս՝ Ջուղայու նախկին փառաւորութեանն, նախկին Ջուղայեցւոց մեծագործութեանց, այլ եւ այսօր, մինչ տան եւ անդոյ պակասութիւն ունին, կարող էին բնակիլ նոցա մէջ: Լաւ էր՛ն միթէ նոյն շինուածոց աւերակքն անգամ, քան այդ կաւաշէն փոքրիկ անկոն որք կան այդ, եւ ի պատասխանի ի նորոյ կը շինուին: Կանգուն շինուածն քանդել, եւ նորն շինել, իսկ թէ զուարճութիւն ունի ոմանց համար, այլ թէ խոհեմութիւն է այն, այդ այլ խնդիր է ի հարկէ: Հայք միշտ կը պարծին թէ սիրող են հնութեանց, ուրեմն ո՞ւր ճնայ այդ սէրն, որ մինչ անգամ սրբավայր եկեղեցեաց եւս պատկառ չկացին: Զգրեմ զայս մեղապրանաց հոգւով, այլ ցաւելով, եւ երկրայ չեմ գուցէ կան բազումք որք համակրութիւն ունին ինձ:

Հին շինուածոց եւ նոցա աւերակաց վերայ խօսելով, յուշ կը գան մարդոյ նոցա շինողքն: Ո՛վ կարող է չքանաչանալ, եւ եթէ կարող՝ չօրինակել, այդ անվեհեր հոգին, այդ մեծ գործունէութեան եռանդն, այդ նախանձելի ան-

խանջ աշխատասիրութիւնն, այդ հնարամիտ ճարտարութիւնն, զոր ջուղայու հիմնադիրքն ցոյց տուին, յետ բըռնութեամբ քարշուելոյ եւ բերուելոյ իւրեանց հայրենի աշխարհից ի Պարսկաստան ու մի նոր եւ օտար աշխարհ, նոր՝ անծանօթ եւ այլակրօն ազգի մէջ։ Դժուար չէ երեւակայել թէ որչափ ողորմելի եւ թշուառ պիտի եղած լինի նոցա վիճակն յետ յԱսպահան հասանելոյ։ Բոլորովին առնինչ, աղքատ, եւ զրկուած բոլոր իւրեանց ստացուածքից, զոր ունէին իւրեանց հայրենի աշխարհում։ Բայց տէս նոցա քաջ եւ անվհատելի հոգին, ձեռն ձեռին վերայ չդրին, նստել լալ եւ աւազել իւրեանց տարաբախտութիւնն, այլ նման մի մարդոյ որ անկեալ լինի խոր ջրոյ մէջ, եւ տեսնելով իւր խեղդուելոյ վտանգն, իսկոյն վերայ կը հաւաքէ իւր միանանց զօրութիւնն, կը տարածէ իւր բազուկքն, եւ աքացկելով զջուրն կը սկսի լողալ առ ցամաք — Հայք բնականապէս այս լողալոյ ձիրքն ունեցած են միշտ ի պարծանս իւրեանց — վերահաւաքեցին նոքա իւրեանց բնիկ քաջասրտութիւնն եւ անընկճելի ոգին, եւ ձեռն ի գործ արարին առանց ժամանակ կորուսանելոյ, դարմանել իւրեանց ի բախտէ կրեալ հարուածն, եւ ապացուցանել որ Մեծն Շահ Աբբաս սխալ չէր իւր կարծեաց մէջ, որ Հայոց բերած էր ի Պարսկաստան իւր ազգին գործունէութիւն սովորացնել, եւ վաճառականութեան ոգին եւ արհեստ մուծանել նոցա մէջ։ Քանզի թէեւ զայս առնելոյ եղանակն չարաչար եւ անողորմ էր, սակայն աներկբայ իրողութիւն մի է, որ Շահ Աբբաս ուշ թէ ի գերութիւն բերից զՀայս ի Պարսկաստան, այլ բերից նոցա բնակացնել իւր աշխարհում որպէս աշխատասիրութեան օրինակ իւր ազգին, եւ նորա մեծամեծ քաղցրութիւնքն եւ շնորհաճութիւնքն զրս ի կենդանութեան միշտ ցոյց տուեց նոցա, ապացոյց

են այս բանին: Եւ Շահ Աբբաս ուղիղ երեւոյթ իւր մտածութեան մասին, արժէքն զոր կը վերագրէր Հայոց գործունեայ ոգւոյն, եւ վաճառականական ճարտարութեանն, մեծ չէր քան որ ինչ էր իրապէս: Դեռ գալ մի էր անցեալ, եւ ահա ինչ մեծ փոփոխութիւն կերեւէր, ինչ աքանչելի այլակերպութիւն: Այն ինչ, սնանկ եւ թշուառ Հայքն, որք գրեթէ գլուր եւ բոլոան հասած էին Ասպահան, ահա վարձատ, եւ մեծահարուստ վաճառականներ էին, բոլոր Եւրոպա եւ Հնդկաստան իւրեանց վաճառականութեան գործոց դաշտ կազմելով: Ցաւել դրամ եւ հարստութիւն ժողովեցին սոքա այս փոքր ժամանակում, իւրեանց համեմատաբար փոքր խմբի մէջ, քան — եթէ սխալ չլինի ասել — բոլոր Պարսկաստան ունէր յայնժամ: Եւ յայնժամ էր, որ այդ փոքրիկ՝ արեւապաշտից Գաւառապատ ասացեալ գիւղն, որպէս թէ մի կախարդական գաւազանաւ, փոխարկուեց. եղեւ մի շքեղ քաղաք: Ցարածեցան նորա շինութիւնքն, պալատաձեւ տներ, շքեղաշուք բարձրագմբէթ եկեղեցիք Ջանդարուստ գետեղեր վերայ, ընդարձակեցաւ, տարածեցաւ այն մինչ Գաւիկ անուանեալ տեղին, Դասկերտ գիւղոյ մօտ, եւ բնական է որ նոյնպիսի ապարանից եւ մեծածախս շինուածոց շինողքն, նոցին շքեղութեան համեմատ իւրեանք եւս ամենայն շքեղութեամբ եւ ամենայն բարւոց եւ փափկութեանց վայելչութեամբ կը կենցաղավարէին: Այս էր Ջուղայու ոսկեդարն, բայց աւաղ շատ կարճատեւ եղաւ, իբր ութսուն տարի միայն տեւեցաւ այն, եւ յայնմհետէ սկսաւ նորա խոնարհումն: Եկին այլ Փարաւոնք, որք Յովսէփին չէին ճանաչում: Այլ Շահ Աբբասներ կամ Շահ Աբբասի յաջորդք, որք փոխանակ խնամ տանելոյ եւ քաջալերելոյ զՀայս, նոցա առեւտրական մեծամեծ յաջողութեանց մասին, միայն անդ նոցա

ակնագրաւ ճոխութիւնն սկսան նայիլ քաղցեալ աչօք։ Եկին
ի վերայ հասին շորթութիւնք, հալածուածն, բռնութիւն
եւ յափշտակութիւն, յետոյ զան՝ տանջանք եւ սպանու-
թիւնք, եւ ինչ զարմանք, եթէ անհետացան չքացան ի
միջոյ այն արիական դիւցազնանման ոգիքն, որք ի դժուա-
րութենէ ընկճիլ չգիտէին։ Դուցէ ասելոց են ոմանք, թէ
անսգամանելի չէին նոքա, եւ իւրեանց ձեռօք այս կործա-
նուածն բերին իւրեանց վերայն թէ անապարծութեան եւ
փառասիրութեան հոգւով եւ առանց շրջահայեցութեան
եւ իւրեանց ժամանակի եւ երկրի հանգամանքն նկատելոյ,
շատ ակնագրաւ եղանակաւ բացան պարզեցին իւրեանց մե-
ծամեծ հարստութիւնքն քաղցեալ աչաց յանդիման, եւ
այս մասամբ մեղադրելի էին, բայց ո՞վ եմք մեք, որ վստա-
հանալք դարմանել կամ մեղադիր լինել նոցա։ Եթէ իրա-
պէս անխոհեմ էին նոքա, անափառ, եւ անզգոյշ, ո՜հ ինչ
սարսափելի էր տուգանքն զոր կրեցին այս մասին։ Ո՞ր աչք
կարող է զսպել իւր արտասուքն, երբ յուշ կածէ նոցա
մարտիրոսանման անմեղ զոհուածն ժամանակի դառնութեանն,
թող ամենայն Ջուղայեցի պատկառանօք յիշէ նոցա անունն,
օրինակ պահէ իւր աչաց յանդիման նոցա անխոհեմութեան
արարքն, եւ ջանայ արծարծել իւր մէջ այն անվհատ աշ-
խատասիրութեան հոգին, զոր ցուցանել կարացին նոքա։

Իմ առարկայիցն բաւական հեռացայ։ Բայց թող
արդէն զգուշացնեմ ընթերցողին, որ չսպասէ ակնկալէ
կանոնաւոր պատմութիւն մի կամ ժամանակագրութիւն
գտանել այս փոքրիկ գործն, այլ գրեմ միայն որ ինչ
հետզհետէ յառաջ գան այն իրաց յիշատակներից. որք
թողեալ են իւրեանց ապաւորութիւնն իմ մտաց վերայ։
Իսկ նշմարանաց մասին զորս կը տեսանէ ընթերցողն արա-
չեալ աստ եւ անդ, սորա գրիչն չունի այնչափ սնապար-

ծութիւն համարել թէ նոր, խելացի եւ կամ զմայլելի նշմարանքներ են, այլ միւն, որ միանգամայն բարեմտութեամբ են արարեալ թէ ինչ որ են, եւ միւս զի կարող իցեն այնք գուցէ ծառայել այլ բարեգոյն, եւ եւս օգտաւէտ մտածութիւնք զարթուցանելոյ ընթերցողն մտաց մէջ, ի նպաստ հայրենակցաց։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Ցեւս բարի եւ խաղաղասէր Նասրադին Շահի աթոռ նստելոյն որ այժմ յիսուն տարիքներէ շատ հեռի չէ, Պարսկաստան, համեմատաբար խօսելով, առաւել խաղաղութիւն եւ անդորրութիւն է վայելեալ կարծեմ, քան թէ երբէք հարիւրաւոր ամօք յառաջ վայելեալ էր։ Բայց եւ այնպէս, այս միջոցում, քանի մի շփոթութիւնք պատահեալ են ի Ջուղա գործս կը սիշեմ, եւ սոցա առաջինն էր Ռոսատամբէգ Ջուղայոյ Դաւուդպայի սպանումն՝ մի կարապետ անուամբ Հայի ձեռամբ։ Բարեբախտապէս սակաւ անգամ է պատահեալ այս, բայց երբ որ Հայ մի Պարսկի սպանութեան պատճառ է եղեալ, իրապէս՝ կամ սուտ ամբաստանութեամբ, մեծամեծ վնասք եւ նեղութիւնք են պատճառեալ այնու Ջուղայու բոլոր ժողովրդոց։ Սակայն մի բան զարմանալի է, որ թէ իրապէս սպանողք եւ թէ ամբաստանեալքն ստութեան, յետ բանտարկութեան եւ չարչարանաց ինչ, ի վերջոյ ազատուել են, եւ օրինաց վճռով գլխատուած չեն բնաւ։ Վերոյհիշեալ Կարապետ Հայն եւս ի վերջոյ ազատեալ փախաւ ի Թաւրիզ, եւ անդ շատ տարիք գեռ կենդանի էր։ Որչափ ինձ մտաբերելի է, անցեալ բոլոր դարու միջոցում միայն մի Հայ է օրինաց դատապարտութեամբ գլխատուել, եւ այն էր Աստուածա-

ռուր անուամբ գիւղական մի, զոր գլխատեցին Ջուղայոյ Մէդանուճն, եւ նա եւս, կ'ասէին ոմանք, կ'ազատուէր եթէ այլ մի իշխանական Հայի քինու ազդեցութիւնն ի մէջ չգայր: Ոմանք Հայք եւս սպանուել են Շահնամի Պարսիկներից երբեմն երբեմն՝ ի պատճառս առանձին քինու կամ ատելութեան, բայց մի թէ այսպիսի սպանութիւնք, նոյն իսկ Պարսից մէջ, կամ քաղաքակիրթ աշխարհաց մէջ եւս չպատահէն ժամանակ առ ժամանակ: Միայն տարբերութիւնն այս է, որ Հայի սպանողն անպատիժ կը մնայր, քանզի Մահմեդականք այսպէս կը հաւատան, թէ հօթն քրիստոնեայք պէն են արեան միոյ մահմեդականի, եւ ճերմակ հշ մի բառական դին էր՝ մի քրիստոնէի արեան: Զարմանալի չէ՞ որ այսպէս մի ընդհանրական կարծեաց ներքոյ, եւ պիտի չմոռանալ որ նոյա դենպետքն եւս հաստատ ձայն են այս կարծեաց կամ վարդապետութեանն, գեռ կան այսքան Հայք ի Ջուղա, որչափ կան այժմ: Նախկին ժամանակաց Պարսիկ իշխանութեան կամ լաւ է ասել անիշխանութեան հարստահարութիւնք եւ հալածմունքն էին, որք Ջուղայու աւերման պատճառն եղեն, բայց սոյն անիշխանութեան ժամանակում միեւնոյն չափ վտանգներ եւ վնասներ կրեցին, երբեմն առաւել իսկ, Պարսից ժողովրդոց ընդհանրութիւնն եւս, եւ միայն Հայք չէին հալածանաց կրողքն, վասն որոյ արդարութեամբ խօսելով Պարսից ժողովրդոյ հասարակութիւնն, մանաւանդ Ասպահանայ եւ շրջակայից բնակիչքն, որք դրացի են Ջուղայու, չեն այնքան անողորմ եւ անբարեսիրտ մարդիկ, որպէս Ջուղայեցիք միշտ կը կարծէին, այլ ընդհակառակն խաղաղասէր եւ ընկերասէր: Թող ամենայն Ջուղայեցի իրաւախոհութեամբ մտածէ թէ արդեօք եթէ Պարսկաստան մեր աշխարհն լինէր, եւ մեք այդչափ թուով, որչափ Պարսիկքն են, եւ

Պարսիկքն գերի բերուած լինէին անդ որպէս մեք բերուած էինք, ոչչափ էր լինելոց նոցա թիւն այժմ, կամ խոստովանիք լինի մեր մէջ, բնաւ Պարսից հետք անգամ կերեւէր անդ: Զայս ասելով, չկամեմ ասել Հայքն անդթագոյն են քան զնոսա, այլ իմ տեսածով, այնչափ խիստ նախապաշարմամբ եւ անբնական խեթիւ կը նայէին Հայք առ իւրեանց դրացի Պարսիկքն, որ ճշմարիտն ասել, եթէ վերջ դրուածոյ համեմատ Հայք Պարսից թուով լինէին, եւ նոցա չափ ոյժ ունէին, եւ ես Պարսիկ մի լինէի, յաւէտ կը փափաքէի այլ ո՛ եւ իցէ աշխարհումդ բնակիչ լինել քան ի Պարսկաստան: Եւ Պարսիկքն ինքեանք եւս լաւ դիտէին զայս, լաւ դիտէին որ լաւ Պարսիկն եւս, Հայն լաւ շուն կը կոչէր, այլ դեռեւս այնչափ խեթիւ չէին նայել առ Հայն որպէս կը կարծէր ոք, եւ գործնական կամ բարեկամական յարաբերութեանց մէջ ընդհանրապէս շատ պատուով եւ վայելչապէս կը վարուէին: Ի հարկէ կրօնական տարբերութեան մասին, մոլեռանդն մահմետականք, երբեմն երբեմն նեղել եւ վշտացնել կը ջանային ոմանց. բայց քաղաքական իշխանութիւնն կը պաշտպանէր Հայոց, եւ Հայքն իսկ, ի գտանելն պատեհութիւն, պակաս չէին իւրեանց կողմից որ ոք զրկանաց կամ անիրաւութեան համար խստիւ վրէժխնդիր լինիլ:

Այնքան պարզ եւ որոշ չեն իմ յիշողութիւնքն վերյիշեալ Ռոստամբէգի սպանութեան անցից մասին, քանզի դեռ հասակ իմ փոքր էր յոյժ, այլ այսչափ ինչ կը մտաբերեմ, որ մի առաւօտ, մինչ մայրս անուշահամ կերակուր ինչ կը պատրաստէր ճաշու համար, յանկարծ մեծ աղաղակ եւ խռովութիւն բարձրացաւ փողոցումն, եւ բոլոր մեր ընտանիք ահ ու դողի մէջ անկանելով, քանզի դրացիքն յայտնեցին թէ ահա մեծ բազմութիւն Պարսից

պէտք էր գայլին եւ ի սուր մաշէին բոլոր Ջուղա, ոմանք աղօթում էին, ոմանք արտասուում էին, եւ կերակուրն էլ եւ ճաշն էլ մոռացուեց: Ուղեղն ասել, ես իմ մասին շատ խոժոռված էի, ոչ սպանութեան երկիւղին, այլ վասն քաղցած լինելոյս, եւ ինձ այսպէս թուէր, որ բանն լաւ կարգի առնելով, արժան էր նախ ճաշն վայելել, եւ յետոյ եթէ հարկաւոր էր, բաւական ժամանակ կայր լալոյ եւ աղօթելոյ համար: Զիարդ եւ իցէ, ոչինչ կենայ վտանգ չպատահեցաւ Հայոց, միայն մի քանի հարիւրաւոր թուման պարտաւորեցան տուգանք տալ:

Միւս մի բաւական մեծ շփոթութիւնն որ պատահեցաւ էր "Հուիթբազի" ասացեալ խռովարար վիճակն: Կամ Միրզա Աբդօլհօսէնի ապստամբութիւնն: Առաջինն՝ հետեւանք էր վերջնոյն, որպէս պիտի տեսնուի ահա: Բայց այս շփոթութեան ժամանակում, Ասպահանայ ժողովուրդքն՝ համեմատաբար առաւել հարուած, կեղեքուին եւ վնաս կրեցին քան Ջուղայեցիք: Միրզա Աբդուլ Հօսէն էր առաջին առենապետ եւ խորհրդական քաղաքապետին Ասպահանայ, եւ որպէս ասէին բաւական կիրթ եւ փորձառեալ ոմն իւր պաշտօնում: Այս ժամանակի քաղաքապետն, որոյ անունն չմոռաբերեմ արդ, երեւի փոքր մի թուլամորթ եւ դանդաղ մարդ էր, եւ այս պատճառաւ Միրզա Աբդուլ Հօսէն տակաւ տակաւ քաղաքի իշխանութիւնն իւր ձեռն առնելով, սկսեալ էր վարիլ միանգամայն իւր կամաց եւ քմայ համեմատ, եւ տեսնելով թէ կը յաջողի առ ժամն առնել ինչ որ կը ցանկայ, եւ քաղաքապետն չկարէ զսպել կամ սանձ դնել իւր ինքնակամութեանն, խորհուրդ կը յղանայ իւր մտքում բոլորովին ապստամբիլ յիշխանութենէ: Թէեւ յիմարական խորհուրդ մի էր այս, եւ առաւել յիմարական նորա գործքն,

քանզի միայն Ասպահանայ իշխանութիւն ձեռք բերելով, չկարէր ինքնագլուխ լինել, մինչդեռ Թագաւորն ի Թէհրան ունէր անմիջապէս նուաճել եւ ջնջել զնա որպէս եւ արար, բայց եւ այնպէս, ասացեալ չիմարական նպատակաւ սկսեալ էր հետզհետէ ժողովել իւր շուրջն մեծ բազմութիւն սրիկայ, խռովասէր եւ անգործ մարդկան, եւ պատրաստեալ էր, որպէս կ'ասէին, զինք եւ հանդերձանք կռուոյ վասն՝ իբր տասն հազար՝ մարդոց: Այս խաժամուժ ամբոխն, այս ընտրու եւ չարեաց հետամուտ մարդիկն էին, որք "լութք" կը կոչուէին, որ կը նշանակէ սրիկայ, եւ սանձարձակ կը շրջէին բոլոր քաղաքում եւ ջուղայու մէջ, եւ կը վնասէին, կը կողոպտէին խաղաղասէր եւ անպաշտպան ժողովրդոց, թոյլտուութիւն գտանելով եւ դուշխ եւ քաջալերութիւն իւրեանց պէտ Միրզա Արդուլ Հօսէնից, որ աչք կը խփէր նոցա սպարմանց վրայ: Իւր մտքին եւս կը պատմէին, թէ քաղաքումն եւ շրջակայ գիւղօրէից մէջ, բազում եւ մեծամեծ անիրաւութիւնք, կողոպտմունք եւ սպանութիւնք կը գործէր: Հայոստա վաճառականաց եւ դրամատէր անհատից տանց մէջ մտանելով դիշերով, իւր ապիրատ թիկնապահօքն, մեծամեծ գումարք կը պահանջէր, եւ եթէ զնայլին տալ, կամ չկարողանային այնչափ տալ, որով լցուցանէին նորա քաղցն, յայնժամ խիստ տանջանաց ներքոյ կը ձգէր զնոսա, եւ երբեմն եւս կը սպանանէր զնոսա: Կը պատմէին թէ մի վաճառականի՝ նորա հինոջ ծնկաց վերայ դլխատեց, որովհետեւ մեծ դումարն, զոր կեղեքել կամէր ի նմանէ, կամ տարաբախտ այրն չունէր որ վճարէր, կամ զլացեալ էր վճարել: Ջուղայեցւոց՝ ուղղակի միջոցաւ՝ ոչինչ վնասեաց նա, եւ ոչ կարծեմ, երբէք եկաւ նա ի Ջուղա: Այլ ի պատճառս շփոթութեան եւ անիշխա-

նուիրեան ժամանակին, յորում կայր յայնժամ բոլոր Ասպահան, Ջուղա եւս ոչ պակաս խառովութեան եւ շփոթի մէջ մնայ առ ժամանակ մի: Ջուղայու խառվայոյզքն եւ նեղչէքն, վերասացեալ սրիկայքն էին, եւ մանաւանդ նոցա սատրնակարդ եւ խաժամուժ մասն: Կորուակք, շինավաճառք, բաղանեպանք, մագործք եւ այլ այսպիսի եւ այս դասու մարդիկ, ամէն մինն մի բութ դանակ մխելով իւր գօտւոյ մէջ, այն օրերուամ, սրիկայից խմբի պատուելն անդամ մի կը համարէր իւրն, եւ յետոյ այլ դատարկասէր եւ գործատեաց անձինք եւս ժամանակն հաճոյ եւ բարեպատեհ գտանելով, միաբանեցան վերոյիշեալ հետ, եւ սոքա քաղաքամիջում չկարողանալով երես ցոյց տալ իւրեանց պատուաւոր դասու մօտ, Ջուղա կազմեալ էին որպէս իւրեանց գործողութեան դաշտ: Կը շրջէին Ջուղայու փողոցաց մէջ, եւ ինչ Հայ որ միայնակ գտանէին կը կողոպտէին նորան, եւ սպառնալեօք գինի կամ ոսկի կը պահանջէին, զոր այդ ժամանակում յղփութեամբ եւ ազատ կարէին ըմպել եւ արբենալ առանց պատժոյ, քանզի այսպիսեաց արարմանց համար հարցուփորձ չկայր: Ինձ թուի, սոյն խառնիճաղանջ եւ սինքզոր մարդկան, ի Ջուղա յաճախելոյ պատճառն առաւելապէս գինին եւ օղին էր, զոր Ջուղայեցիք միայն կը պատրաստէին եւ մահմետականաց մէջ գտանելի չէր, եւ ըմպելն եւս արգելեալ էր: Սոցա թիւն աճելով, եւ յետոյ առաւել վատահութիւն գտանելով, երբեմն խաբանօք կամ ուժով, սկսան քանի մի տանց մէջ մտանել Ջուղայում, եւ ոչ միայն ըմպելիք պահանջել, այլեւ գողանալ եւ կողոպտել որ ինչ յանդիման կը գայր նոցա: Ջուղայեցիք ի վերջոյ պատասխորեցան փակել Ջուղայու բոլոր պատաքին «Դարպասէքն» կամ փողպրունքն, հող

լցելով նոցա յետ կոյսն, որ դժուար լինի բանալն, եւ սկսան այնուհետեւ այլ միջոցներ ի ձեռն առնուլ՝ ինքեանց պաշտպանելոյ համար, եւ զլխաւորն եւ լաւագոյնն ի սոցանէ էր ընդդիմանալ եւ պատժել ասացեալ անարգ եւ անպիտան սրիկայից յանդգնութիւնն, որք ջուղայեցւոց մինչ ցայնժամ երկիւղն եւ թուլութիւնն տեսնելով, ի հարկէ օր ըստ օրէ իւրեանց լքեալ թիւնն եւ յանդգնութիւնն եւս կը յաւելանայր: Ցետ զլխաւոր փողոցադրուններն փակելոյ, այլեւս այնչափ վստահութիւն չգտանէին միջամուխ լինել ի ջուղա, միայն երբեմն գողանման եթէ երկու կամ երեք՝ մի կամ միւս եղանակաւ յաջողէին մտանել, կը շրջէին սոքա հասարակօրէն այն թաղից մէջ, ուր ժողովուրդք սակաւաթիւ էին, եւ յետ աղաչելով կամ սպառնալեօք փոքր մի դինի կամ օղի գտանելոյ կը հեռանային ի բաց, սակայն դեռեւս միշտ այսպիսեաց երբեմն հանդիպելոյ երկիւղն կայր, յատկապէս երեկոյեան կամ գիշերոյ մութ ժամուց մէջ: Օր մի, երիք սրիկայք վստահացան մտանել Թաւրիզեցւոյ թաղն, որ միւս թաղերից առաւել բազմամարդ է, եւ մի հայի ըմբռնելով կը պահանջէին սովորական դինւոյ պահանջն: Ա՛յ տղայ, կ'ասէ մի Հայն ցմիւս, "տղերքանց լուր տուր„: "Տղերքանց լուր տան„, իսկոյն յայտնեաց թէ որպիսի փոքրոգի, սինլքոր եւ անարդ ոմանք էին այդ դանակաւոր սրիկայքն: Երբ կը նշմարեն, որ բանն այլապէս երեւի, քան որ ինչ իւրեանք կ'ակնկալէին, վազ վեր առեալ կը սկսանին փախչիլ առ Երեւանայ փողոցադուռն, զայն փակեալ գտանելով, կը դառնան Ղէյնուռնոյ դուռն, որ դարձեալ փակեալ էր, եւ այս վազվազ փախստեան միջոցում կը ստանան մեր քաջասիրտ սրիկայքն այնչափ բոմբ, աքացի եւ ապտակ ամէն կողմից Հայոց օրհնեալ ձեռօք եւ ոտիւք, զի Թաւալգլոր

լենելով գեանոյ վերայ, սկսան, Թաղապետի ոտքն ըմբռնելով, աղաչել ամենասոր փութրոդութեամբ, որ խնայէ իւրեանց կեանքն քանզի որբ էին եւ անզօր։ Ու ի վերջոյ, վերջին ողջունական աքացեաւ միով կ'արձակին գնալ ի բաց։ Թաւրիզեցւոց Թաղի մէջ յայնմ օրէ հետէ եւ ոչ մին սրիկայ յանդգնեցաւ այլեւս մտանել երբեք։

Ա՛յլ երկու անցք կը մտաբերեմ վերաբերութեամբ սոյն ժամանակի։ Վարդենի անուամբ յաղթանդամ կին մի կայր մեր Թաղում, եւ օր մի՝ մինչ կանգնած էր սա իւր տան, փողոցի դրան մօտ, յանկարծ երկու սրիկայք վերայ հասանելով կը սպառնան նմա, որ կամ իսկոյն երկու շիշ դինի պէտք է տայ, կամ կը մեռանին իւրն։ Ո՞ւր են շիշքն, կը հարցանէ քաջ Վարդենին, ես դինին ունիմ, բայց շիշ ոչ։ Խնդութեամբ կը հանեն իսկոյն սրիկայքն իւրեանց լայնատարած "ջերից„, երկու մեծամեծ բաղալք ասացեալ տափարակափոր շիշքն, եւ Վարդենի առեալ զայնս, կ'ասէ, սպասեցէք մինչ գամ, եւ մտանելով տուն, դուռն կը փակէ։ Այս տունն երկու դուռն ունէր յատուկ փողոցաց վերայ, միւս դռնով դուրս կ'առաքէ իւր եղբայրն եւ երկու այլ յաղթանդամ դրացիք, որք բիր ի ձեռին կը մտանեան սրիկայիցն եւ կը հարցանեն թէ ինչ էր նոցա գործն անդ։ Սրիկայքն դուշակելով բանի հանգամանքն, ձեռն ի սուր կը լինին, եւ Վարդենի որ արդէն ի հետուստ կը հետեւէր եղբօրն եւ դրացեացն, այս կէտումն այնպէս մի ահագին եւ սարսռելի ձիչ կ'արձակէ, որ բաւական էր տան սրիկայից սիրտ ջուր կտրել, միւս դրացիք այս ձիչն լսելով կը փութան ալտաքս, եւ յայնժամ ընթերցողիդ բարի, եւ սրիկայիցն աքացի եւ բրածեծութիւն։ Նոցա բուռն սրոց մին ղոր Թողին սրիկայքն ի փախչելն, մեր քաջն Վարդենի, ըստ արժանեաց, որպէս մրցանակ գտաւ, եւ պարծանօք կը պա-

հէր գայն, եւ կը պատմէր թէ ինքն էր որ մի բռնցեաւ սրիկայից մնին գլորեալ էր առուոյ մէջ: Միւս անգքն փոքր մի առաւել վտանգաւոր եւ ծանր դէպք էր քան զայս: Օր մի, քանի մի սրիկայք ժողովեալ էին միեւնոյն (Պրտուեանց) թաղի Ղէյնուենոյ փողոցապրան արտաքին կողմում, եւ որովհետեւ ոչ միայն դուռն փակեալ էր, այլ եւ մեծ քանակութեամբ հող էր կուտեալ դրան դէմ նեղքին կողմից, որ հնար չլինի փութով բանալ, եւ սրիկայքն միւս կողմից քարով կը հարկանէին դուռն, հրացան կ'արձակէին, եւ աղաղակ բարձեալ լուտանաք կը սպառնային որ եթէ դուռն չբացուի, կը խորտակեն կամ կ'այրեն գայն, եւ ի սուր կը մաշեն բոլոր թաղի բնակիչք: Այս ժամանակում բոլոր թաղեցիք գրեթէ՝ իւրեանց տանեաց վերայ էին, քանզի այս սրիկայական շփոթի միջոցում, խառվ ինչ կամ աղաղակ եթէ լսուէր փողոցից, տանց դրունքն փակելով, բոլորքն կը փութային տանիքն ելանել, եւ ամէն տանեաց վերայ եւս տեսանելի էր կոյտ մի քարանց կամ կղմնարի բեկորաց, զոր ժողոված էին անդ, ի գործ ածել սրիկայից գլխոց վերայ երբ եւ հարկն պահանջէր: Բայց այսօր հրացանաց արձակումն, եւ սրիկայից մեծ թիւն, զոր ոմանք՝ կ'ասէին՝ հարիւրից անց էր, թէեւ չկարծեմ ստոյգ լինէր այս, մեծ ահ ու դող էր ձգել բոլորից սրտում, եւ կանայք եւ մանկունք յատկապէս, աղիողորմ կու լային դուռնատեալ դիմաք, կարծելով թէ այդ վերջին օրն էր իւրեանց կենաց: Այսպէս մի ժամ կայր մինչ արեւմուտ, երբ սրիկայից մին ելանելով միւս կողմից փողոցապրան որմոյ վերայ, սողալով ցած եկաւ ի գետին, եւ հեռանալով երկու ձեռաք սկսաւ միւս կողմ ձգել այդ հողն որ կուտեալ էր դրան յետոյն, որպէս զի կարողանայ բանալ դուռն: Թէեւ չկարծեմ եթէ յաջողուած լինէր նմա բանալ

դուռն, եւ սրիկայքն նոքա մտնէին թաղի մէջ, այդ մեծ
վտանգն պատահելոց էր որպէս կարծում էին, բայց եւ
այնպէս բաւական մեծ ճգնաժամ մի էր այդ ժամն, եւ
ոչ սակաւ երկիւղալի: Սակայն մի մարդոյ սրտի քաջու-
թիւն միայն, վտանգն ոչնչացոյց, թէեւ միջոցն ի գործ
եդեալ, ժամանակի հանգամանացն նայելով, ոչ սակաւ
վտանգաւոր էր: Ծատուր Ղուկասեան դրացի մեր, որ այդ
ժամանակում մեր տանեաց վերայ էր, ուստի պարզ ի
պարզոյ կ'երեւէր այդ սրիկային, որ հողն յետ ձգելով կը
ջանայր բանալ դուռն, նշմարելով բանի հանգամանքն
լաւապէս, իսկոյն ուժմբ դրեց իւր հրացանի մէջ, զոր
ձեռքումն ունէր, եւ դէտակն մտեալ, արձակեաց զայն:
Կ'աղաչէին միւսներն, որք անդ ներկայ էին, այդպիսի բան
չառնել, մտածել թէ ծրպիսի արհաւիրք եւ հարուածք
ունէին հետեւել եթէ սրիկայն սպանուէր, այլ նա փոյթ
չտարաւել, եւ երեւի թէ գիտելով թէ զինչ էր որ առ-
նէր, արձակեց հրացանն, եւ բարեբախտաբար ուժմբն —
որպէս ապա երեւաց — կանգնաչափ մի ի վեր սրիկայի
գլխոց ընդհարաւ դրանն: Ծխիծաղելի էր հետեւանքն: Սրի-
կայն զարհուրեալ եւ ի դողման եղեալ, դադարեց իւր
գործից: Առ ժամն պարսիկ ձիթավաճառ մի անցանելով
առ տեղեաւն, քարշեաց զնա որմոյ մօտ, կայծակնանման
արագութեամբ խառաւ նորա ուսոց վերայ, ճանկելով բար-
ձրացաւ առ որմոյ ծայրն, եւ իւրն վայր ձգելով առ միւս
կողմն, ինքն եւ իւր բոլոր ընկերք աներեւութացան: Ահա
այսպէս վատ եւ սինքդոր մարդիկ էին սրիկայքն, մինչ
ցարդ չկարծէին թէ Հայն եւս վտահանալոց է հրազէն
արձակել իւր նեղչի ընդդէմ, այլ երբ միանգամ սուռ-
դեցաւ այս, իմացան որ Հայն ի նեղ ձգելն կատակ չէ:
Ընդէ ի սկզբանէ չուղայեցիք, որպէս բազմիցս արարեալ են

յառաջն վտանգաւոր ժամանակաւ, արժանի պատուհասն տուած լինէին անգամ մի կամ երկիցս այդ խնդիրը սարկաւագի մարդկան, այդչափ նեղութիւն չէին կրելոց: Զմտաբերեմ որքան ժամանակ տեւեց այս սրիկայից խռովութիւնն, եւ այս խռովութեանց մէջ երկու Հայք սպանուեցին մին՝ փոքրիկ Ցարութիւն կոչեցեալ, եւ միւսն Ճուճուկ մականուամբ, որոյ իսկ անունն չգիտեմ: Սոքա կարծեմ երկուքն եւս զինեվաճառ էին, եւ սրիկայից ոմանց ծանօթ, եւ որ ոք քինու պատճառաւ, սպանեցին առաջնոյն Զանգակով եկեղեցւոյ մօտ, եւ զմիւսն ի Զարրաղ ասացեալ սրբուհական ճանապարհի մէջ, եւ ոչինչ հարցուփորձ եւս չեղեւ սոցա մասին: Այս անիշխանութեան ժամանակաւ, որպէս ի վեր ասացի, առաւել չարաչար հալածմանց ենթարկեցան պարսիկ քաղաքացիք, եւ բանն այնպէս գայրացաւ, եւ ժողովրդոց աղաղակն այնպէս զօրացաւ, մինչ Սուլթանն հարկաւ անուամբ կամ տիտղոսիւ նոր քաղաքապետ մի ուղարկեաց Թէհրանից գարման տանել իրին: Ի գալ քաղաքապետին միանգամայն յայտնի արար Աբդուլ Հօսէն իւր ապստամբութիւնն, եւ սրիկայից խառնիճաղանջ ժողովելով կռիւ բացաւ քաղաքապետի ընդդէմ: Քանի օրեր թնդանօթաձգութիւնք կը լինէին քաղաքաւին, այլ ի վերջոյ ինեղ անկեալ փախեաւ նա, բայց յետոյ ըմբռնեալ խեղդեցաւ հրամանաւ Թագաւորին: Ոչ սակաւք ի սրիկայիցն եւս չարչարանաց եւ մահուան ենթարկեան, եւ ապա տիրեաց խաղաղութիւն: Կը մտաբերեմ այս սրիկայից միոյ անունն, որ շատ անուանի էր ի Ջուղա, եւ միշտ կ'երեւէր ատա եւ անդ եւ գինի կը պահանջէր: Անունն էր Էբրամ Շավէրդի, այլ Հայքն կը կոչէին գնա Էբրամ շան որդի:

Ներորդ շփոթութեան ժամանակն, որ բաւական միջոց վըղովեց Ջուղայ, էր "Սարսազ բռնելն": Սարսազ բռնելն

կը նշանակէր զինուոր հաւաքել վասն տէրութեան: Ո՛չ թէ Հայք զինուոր չունէին մինչ այդ ժամանակ, այլ էն ի բաղում ամաց հետէ կայր խումբ մի հայ զինուորաց, ի ծառայութեան թագաւորին, եւ զանազան ժամանակում թէ Ասպահան քաղաքում եւ թէ այլուր բաւական նշանաւոր պատերազմաց մէջ եւս մտեալ էին, եւ գտած էին պատիւ եւ աստիճան, որոց անուանք մինչ ցայսօր եւս գուցէ կը յիշուին, որպիսի են Նահիր կամ փոխհարիւրապետ Յովհաննէս, Նահիր Մինաս, Նավար Յովհաննէս խան, Թօփչի կամ թնդանօթաձիգ զինուոր Հայրապետ, Թօփչի Մկրտում, Թօփչի Ղազար, եւն, այլ սոցա խումբն նուազեալ լինելով, հրաման էր եղած թագաւորից, որ Հայք լցուցանեն սոյն գնդի պակասորդն, կամ որպէս օրէնք է ի Պարսկաստան, իւրեանց թուոյ համեմատ, որչափ եւ բաժին կը հասանի նոցա, այնչափ թուով զինուոր տան տէրութեանն: Այս արքունական հրամանն ծնունդ առաւ այդ ժամանակի — եթէ սխալ չլինիմ 1847—50 թուականն էր — թագաւորի առաջին նախարարից, որ ընդհանրապէս Ամիր կը կոչուէր, եւ ամուսնացեալ էր թագաւորի քեռ հետ: Այս Ամիրն, կ'ասէին եւ գուցէ կ'ասեն մինչ ցարդ, որ Պարսից՝ բոլոր մինչ ցայնժամ եղեալ՝ առաջին նախարարաց երեւելագոյնն եւ աշխարհակալն էր, թէ իւր հանճարեղ աշխարհավարութեան մասին, եւ թէ առանին նորանոր բարեկարգութիւնք եւ կանոնք հաստատելոյ մասին, եւ թէ այլ ամենայն մասամբ: Նւրոպա գնացած լինելով, ունէր բաւական արեւմտեան քաղաքակրթութիւն, եւ կից ընդ բնական հանճարոյն պիտանացնելով զայն, իւր իշխանութեան հաստատօտ ժամանակում, արդարեւ շատ բարի եւ աշխարհաշէն գործոց՝ նոր ի նորոյ սկսեալ էր հիմն դնել, որք եթէ խափանուած չլինէին ի պատճառս նորա վաղահաս մահուան, այսօր գուցէ Պարս-

կաստան յոյժ առաւել յառաջադէմ կը լինէր քան որչափ է այժմ: Սոյն բարեյիշատակ նախարարն, որ յոյժ ժողովրդասէր էր, Հայոց մասին հարցուփորձ առնելով, թէ ընդէ՞ր է որ նոքա տէրութեան ծառայութեանց եւ պաշտօնից մէջ հազիւ երբեք երեւէին, եւ չունէին իւրեանց թուոյ բաժնի համեմատ յառաջադէմ մարդիկ թագաւորի դրան, եւ լսելով որ միայն մի քանի հին ղեկուորք կային, որոց թիւն նուազեալ էր եւ նուազելով դնայր, կը հրամայէ որ զինուորաց թիւն յաւելացնեն, այնպէս որ մի կատարեալ առանձին հայ զօրագունդ լինի, ասելով թէ .Հայք զինուոր տալով տէրութեանն, ոչ միայն համահաւասար բաժանորդ պիտի լինին, բոլոր Պարսիկ հպատակաց հետ, ամենայն քաղաքական իրաւանց եւ պատուոյ թեանց, այլ առանձին զօրագունդ մի ունելով ի ծառայութեան թագաւորին, բնականապէս այս զօրագնդի միջից պիտի ժամանակաւ երեւին յառաջադէմ մարդիկ, որք պէսպէս աստիճանաց տիրանալով, թագաւորի առեւտուր նշանաւոր կը հանդիսանան, եւ ոչ միայն պարծանք են լինելոց իւրեանց ազգին, եւ մինչեւ ցամ կամ խաւսման գերի կեղտ անունն կը վերնայ ի նոցանէ, այլ եւ ի հարկաւոր դէպս կարօտութեան կամ վշտաց, կարող են թագաւորի ականջն իւրեանց ձեռքում ունիլ, եւ գտանել նորա շնորհն եւ պաշտպանութիւնն: Այսպիսի բարեմտութեամբ եւ այսպիսի նպատակաւ էր, որպէս յայտնեցաւ յետոյ, որ սոյն՝ Հայոց լաւ բարեկամ Ամիրն արձակեալ էր զինուոր գրելոյ հրամանն, բայց աւաղ, ջուղայեցիք, եւ գիւղական Հայք եւս օրինակ առնելով նոցանից, միանգամայն խիստ նախապաշարմունք եւ տարօրինակ հոգւով ստացան նոյն հրամանն: "Մայօր խանի որդի" անուամբ (քանզի նորա իսկ անունն չհիշուէր երբեք) երի-

տասարդ Հայ մի, եկաւ Թէհրանէն Թագաւորական հրո-
վարտակաւ, եւ սկիզբն արար Հայոց զինուորագրութեան:
Տե՛ս դու բարի Ամիրի քաղցրութիւնն, որ ոչ Պարսիկ,
որ գուցէ նեղէր կամ բռտութեամբ վարուէր Հայոց հետ,
այլ Հայ մի կ՚ուզարկէ, որպէս զի իբրեւ իւրեանց հա-
մազգի չխորշեն եւ թեթեւ չնայեն առ նա ջուղայեցիք,
եւ խաղաղութեամբ եւ սիրով ի գլուխ տանեն իւր բարի
մտադրութիւնն: Բայց պիտի յիշատակեմ ասա, որ որչափ
եւ բարեմտութեամբ եւ քաղցրասրտութեամբ էր եղեալ
այս Հայի ընտրութիւնն ի կողմանէ Ամիրի, միանգամայն
անպատշաճ եւ վնասակար՝ ընտրութիւն մի երեւաց ապա՝ ոչ
անպատշաճ եւ վնասակար քանզի Հայ էր նա, այլ քանզի
բոլորովին անընդունակ եւ անկարող էր առ այսպիսի մի
գործ: Սորա Հայր Մայօր խանն՝ բարի եւ առաքինի մարդ
մի կը համարուէր, այլ որդին բոլորովին աննման հօրն,
առանց մի համազգեաց համակրութիւն ունելոյ, Պարսկա-
կան լաւութիւններից եւս զուրկ էր: Արբեցող էր եւ
խիստ անգութ, եւ փոխանակ իւր աղնուահոգի առաքողի
կամաց համեմատ, խաղաղութեամբ եւ քաղցրութեամբ
առնելոյ որ ինչ առնել հարկաւոր էր, այնպէս ահարկու-
թեամբ, բռնութեամբ եւ սպառնալեօք սկիզբն արար իւր
գործոյն, որ, չեմ երկբայ, մեծապէս զայրացրեց այնու
ջուղայեցւոց նախապաշարումն ընդդէմ հրամանի Ամիրին:
Եթէ սխալ չլինիմ, ալքայական հրովարտակի պատուէրն
այն էր, որ հարիւր չափահաս արանց միջից 25 զինուորք
գրուին, կամ ամէն չորսից մին, եւ չցանկացողն կարող
էր իւր փոխարէն այլ ոք ընտրել, վարձու համեմատական
ման ինքն տալով, որպէս միւս երեքն: Կարծեմ ամենայն
ոք վկայել ունի որ բնաւ խիստ եւ անողորմ չէր այս
հրամանն, բայց ո՜հ, ինչ աղաղակ, ինչ ահ ու դող,

ինչ լաց եւ գոռալք էր, որ պատճառեց այն ի Ջուղա, երբ մի քանի անձանց բռնութեամբ — քանզի կամաւ ոչ ոք չյառաջանայր — ձեռք բերելով մխեցին զինուորական համազգեստի մէջ։ Ամէն տան մէջ կը լսուէր կոծ եւ աղաղակ։ Գնողք կը գրկէին իւրեանց չափահաս որդւոց եւ կու լային նոցա ուսոց վերայ, որպէս թէ այդ վերջին անգամ էր որ կը տեսանէին զնոսա, քանզի որպէս կ'ասէին "իւրեանց երեխէն պիտի գուլու յանդիման գնայ"։ Քոլք եւ եղբարք միմեանց պարանոցաւ կ'անկանէին եւ կ'արտասուէին, կանայք կը կոծէին որպէս թէ արդէն այրիացած, իւրեանց մանկունքն ճնացած էին որը, մանկունքն եւս ձայնակից լինելով ծնողաց, արդարեւ եղերելի տեսարան մի կը ձեւանայր, եւ Ջուղա բոլոր բոլորովին մի մեծ սգոյ տան նմանութիւն կը բերէր։ Քահանայքն՝ որք ի հարկէ ազատ էին, ժամէ ի ժամ խոր հոգւոյ հանելով, կը համոզէին բոլորին աղօթել, քանզի կ'ասէին Աստուծոյ բարկութիւն էր որ եկած էր իւրեանց վերայ։ Երբ՝ որպէս ասացի, կամաւ ոչ ոք անձնատուր չէր լինում զինուոր գրուելոյ, ի հարկէ յետոյ սկան ըմբռնել ում որ ձեռք կը ձգէին հարուստ կամ աղքատ, եւ այս իսկոյն պատճառ եղեւ գրեթէ երիտասարդաց եւ պատանեաց յանկարծ անհրեւութանալոյն ի Ջուղայէ։ Փողոցաց մէջ, մի ծայրից մինչ միւս ծայր, Երեւան թաղից մինչ մէյդան, եւ ոչ մի աշխարհական չափահաս մարդ կ'երեւէր, եւ ոչ տանց մէջ տեսանելի էր այլ ոք, քան միայն կանայք եւ մանկունք։ Բայց ի՞նչ եղեն արդեօք, ո՞ւր գնացին նոքա, որպէս անհրեւութացան այսպէս յանկարծուստ։ "Վա՛յ իմ տարաբախտութեանն„ կ'ասէր մայր մի, "Ջգարիս վերայ մեծացրած էի իմ որդին, էսօր իմ թամաշի օրն էր, որ նորա ծաղկեայ հասակի թամաշէն անի, եւ ո՞ւր է նա ահա, ձեռնիցս գնաց, յերկիւղ գիշեր

երեխէս փափձնելն դաւեր քաշեց ու յերես փրկեց գնաց ով է խբար ո՛ր օտար քաղաքն, եւ ով է խբար նորա ազիզ երեան այլ եւս կը տեսնեմ թէ ոչ„: Միւս կողմից ծերունի հայր մի կ՛աղաղակեր աչքերն արտասուօք լի, "մեր Ղազարին տեսել էք այսօր, յերէկ յարակունից հետէ չէ երեւում, չկայ, ես կարծեմ խեղջ թէլքիս գնացելայ, գնացելայ որ փրկի իւրն էս բարկութիւնից, ես չէի կարծում որ այսպէս օր էլ պիտի տեսնեմ, վայ ինձ, վայ իմ ծեր հասակին„: Այս եւ այսպիսի սգալի լուր եւ կոծ էր որ կը լսուէր ամէն բերանից, եւ կը կարծէր ոք, որ Ջուղայու ծաղկեայ հասակն, Ջուղայու երիտասարդութիւնն բոլոր բոլորովին տարագիր գնաց:

Չկարեմ քան պատմել որ ինչ մեր ընտանեաց մէջ պատահեցաւ, եւ այնպէս պարզապէս կը յիշեմ որպէս թէ երեկէն անցք մի լինէր այն: Ձմեռն էր, եւ մի առաւօտ, երբ որ արթնցանք, քուրսին ասացեալ Ջերմարան սեղանիկի վերայ երեւաց մի թուղթ, զոր իմ մեծ եղբայրն՝ որ քահանայ էր, վեր առնելով կարդայ ի լուր բոլորից: Ո՛նչ ցաւալի թուղթ էր այն, ո՛րքան սրտաշարժ եւ աղեխորով նորին պարունակութիւնն: Երկրորդ եղբայրս էր գրեալ զայն: Ցետ յայտնելոյ՝ թէ տեսանելավ ժամանակի դառնութիւնն մտքումն հաստատեալ էր հեռանալ գնալ օտար աշխարհ, ապա իւր վերջին ողջոյնն կը մատուցանէր բոլոր ընտանեաց եւ այնպիսի գորովալիր խօսքերով, որ բոլորք եւս սկսանք լալ: Այս լացից եւ կոծելուց, լուրն տարածեցաւ ի հարկէ, որ մեր տան ծաղկին եւս բաժանեալ էր մեզնից, եւ ոչ ոք գիտէր թէ ո՛ւր գնաց. եւ խղճկ մայրս կ՛ասէր, "գուցէ երեխէս ճանապարհին գազանի կերակուր լինի, կամ ցրտից սառուցեալ մահանայ„, եւ դրացիքն եկին մխիթարել զմեզ, եւ յայնմ օրէ մեք եւս սկսանք

«Ղարիպի» ճանապարհ նայել, որպէս բոլորն նայում էին ալդ: Բայց առ ոչ հեռաւոր աշխարհն էին, որ անճանօթ կղզիքն գնացին այդ տարագրեալ պանդուխտքն արդեօք, պէտք է հարցանէ ընթերցողն: Ահա կը պատմեմ եւ ալդ: Դպրոց գնացող փոքրիկ մանուկ գէթ ես, եւ յետ երկու կամ երեք շաբաթուց գինի եղբօրս հեռանալոյն ի տանէ եւ ի հայրենեաց. օր մի պատահեցաւ, որ ինչ մի բանի համար գնացի մեր շերախանէն, կամ ստորերկրեայ շտեմարանն, զոր ամենայն տունն ունի ի ջուղա: Ըստ սովորականին յետ խաչակնքելոյ երեսիս. որ դիւի չհանդիպեմ (քանզի հասկացած բան մի էր մանաւանդ մանկանցս մէջ, որ ասացեալ շերախանէքոնց ոմանց մէջ դեւք հաստատեալ բնակութիւն ունէին, եւ ոմանց միայն ժամանակէ առ ժամանակ այցելութիւն կը տային) ներս մտայ, եւ ընթերցողն կարէ երեւակայել թէ որչափ էր իմ զարհուրանքն եւ սարսափն, յորժամ տեսի յանկարծ որ վերջին մառանումն (քանզի ասացեալ շտեմարանն, մի նեղ գաւիթ ունէր, եւ այս գաւթի վերոյ երկու առանձին սենեակք կամ մառանք կը բացուէին) ձրագ կայր, որոյ լոյսն կը տարածուէր առ գաւիթն, եւ ոչ այսչափ միայն, այլ եւ խօսելոյ ձայն կը լսուէր: Շչելով եւ գունատեալ դուրս վազեցի իսկոյն, եւ դողալով պատմեցի մօրս որ շերախանէն դեւօք լի էր, բայց ի զարմանս իմ, փոխանակ համակրելոյ իմ երկիւղին, սկսաւ ծիծաղել, եւ ձեռնիցս ըմբռնելով, եկ, ասաց, դեւ չկայ շերախանումն, ահա կը տեսնես ով կայ անդ, բայց զգոյշ տեսածդ ոչ ումէ չպիտի յայտնես երբէք: Ներբ վերադարձանք ի միասին առ ձրագով լուսաւորեալ մառանն, ինչ մեծ ուրախութեամբ եւ զարմանօք էր որ անդ տեսի իմ հեռացեալ օտար աշխարհ գնացեալ եղբօրն: Ու միայնակ չէր նա, այլ քանի մի հոգի ջուղայու պատուաւոր, կամ լաւ եւս ասել, բարձր աստիճանի

երիտասարդներից եւս կային անդ, յորոց ոմանք դեռ կենդանի են, գուցէ կը ծիծաղեն այժմ ի մտաբերելն այն տաղտկալարհ պանդխտութեան օրերն։ Գետնոյ վերայ տարածուած էր գորգ, եւ կային փափուկ նստարանք եւ բարձք, յորոց վերայ ասացեալ պանդուխտքն նստեալ եւ յենեալ, ուրախ եւ զուարթ դիմօք կը զուարճանային թղթախաղով, զոր երբեմն երբեմն կ'ընդհատեր անուշահամ հին գինւոյ բաժակի շրջաբերութիւնն։ Շաբաթ մի կամ երկու մեր տան մէջ այսպէս ծածկեալ մնալով, յետոյ գնացին գիշերով միասոյ տուն, անդ պանդխտանալ։ Բոլոր Ջուղայու աներեւութացեալ պատանեաց եւ երիտասարդաց նժդեհութեան աշխարհներն եւս այսպիսի տեղիք էին, կամ շտեմարանք, կամ մառանք, կամ տանց այլ ծածուկ խորշք եւ սենեակք, ոմանք եւս այգեաց մէջ կ'անցուցանէին իւրեանց նժդեհութեան աւուրքն աներեւոյթ ի տնօսոյ այլոց։ Բայց գուցէ կը հարցանէ ոք թէ ուրեմն ինչ էր եւ ընդէ՞ր այն ամենայն կոծ, լաց եւ աղաղակ զոր կը յարուցանէին մէն մի ընտանիք, իւրեանց աներեւութացեալ անդամոյ համար, մինչդեռ լաւ գիտէին թէ ուր էին նոքա։ Զայս պարտաւորման էին առնել քանզի մին միւսից կը կասկածէր որ մի գուցէ մատնի իւր որդւոյն կամ եղբօրն եւ ըմբռնեալ զինուոր դրուն։

Մի որոշեալ թուով զինուորք հարկաւոր էր տալ, բայց ուր որ կը հրաւիրէին կամ կը պարտաւորէին յանձն առնուլ զպաշտօնն, իսկոյն կ'աղաղակէր, այս ինչ եւ այն ինչ մարդիկ եւս կան — անունն տալով — ընդէ՞ր ինքն միայն պէտք է զինուոր կարգուի եւ նոքա ոչ։ Եւ այս պատճառաւ հաւատարմութիւն չունէին միմեանց վերայ, եւ մին միւսից կը ծածկէր իւր որդւոյ կամ եղբօր կամ ամուսնոյ թաքստեան տեղին, ստմանութիւն կեղծելով որպէս թէ իրապէս հեռացեալ էին նոքա ի Ջուղայէ։

Ինչ որ փոքր մի մանրամասնութեամբ պատմեցի վերաբերութեամբ այս զինուորագրութեան, թող չկարծուի թէ գրեցի ծաղրածուութեան ոգւով, ո՛չ, գրեցի միայն որ ինչ ճշմարտապէս բանի անցքն էր, եւ չեմ երկբայ կան շատ անձինք դեռ կենդանի ի Ջուղա որք վկայ կը լինին գրուածոյս ստուգութեանն: Հաւատամ ես որ ո՛չ թէ առնացի քաջութեան պակասութեան կամ փոքրոգութեան աղագաւ էր զի այսպէս շփոթեալ էին նոքա, եւ կը խորշէին զինուորութեան պաշտօնից, այլ սաստիկ նախապաշարումն մի էր որ կը տիրէր Ջուղայեցւոց վերայ, իբր զի զինուորութիւնն առնարգ պաշտօն է, իբր զի զինուորութիւնն միայն կը նշանակէ ռմբով սպանուել: Պիտի չմոռանամք ի հարկէ, որ մի սոսկ զինուորի պաշտօն եւ վիճակն, մի շատ պատուաւոր եւ մխիթարական վիճակ չէ, յատկապէս ի Պարսկաստան, բայց այն եւս մոռացեալ է որ զինուոր գրուելով, ամէն ոք սոսկ հասարակ զինուորի վիճակում չունի մնալ, ռամիկ եւ գռեհիկ մարդիկ կը մնան միշտ հասարակ զինուոր, բայց ուսեալ, սրամիտ եւ պատուաւոր անձինք անխափան պիտի յառաջանան առ բարձրագոյն աստիճան եւ վիճակ, եւ այսպէս լինելոյ էր եւ Ջուղայու զինուորական գնդի համար: Եւ որովհետեւ այս գունդն առանձին եւ որոշ հայկական գունդ մի պէտք էր լինէր եւ մնայր միշտ, նորա միջից ի հարկէ պէտք է ընտրուէին յիւանապետք, հարիւրապետք, եւ գնդապետ եւս, եւ յետոյ շատ հաւանական էր որ այսպիսի մի փոքրիկ գունդ հազիւ երբեք տէրութիւնն պատերազմելոյ պիտի ուղարկէր, եթէ պատերազմ եւս պատահէր, այլ միշտ գուցէ Ասպահան քաղաքում կը պահուէին կամ ի Թէհրան, եւ թագաւորի թիկնապահութեան կամ այլ հաւատարմութիւն պահանջող պաշտօնից մէջ կը գործածուէին:

Այլ զնարդ եւ լոյէ, որպէս եւ ասացի, սաստիկ նա-
խապաշարումն մի էր այն, եւ կարծեմ եթէ գործն խո-
հական անձին միոյ յանձնուած լինէր, որ Ամիրի բարի դի-
տումն յայտնելով, խաղաղութեամբ կատարէր զայն, հա-
ւանական է թէ բանի վախճանն այլապէս կը լինէր քան
ինչ որ եղեւ, եւ այսօր մեր ազգիս երեւելի պաշտօնաւորք
կը լինէին արքունական դրան, որք մեծամեծ օգուտ կա-
րէին տալ Ջուղայեցւոց: Ադ քանի մի հին հայ զինուորքն, որք
կային յայնժամ, միշտ յատուկ սէր եւ շնորհ կը ցուցա-
նէր տէրութիւնն, եւ պատիւ, պաշտպանութիւն եւ օգուտ
էին նոքա Ջուղայուն: Կը սիրէին իսկ իւրեանց պաշտօնն, եւ
գոհ եւ մխիթար կ'երեւէին, եւ ոչ ոք արտունջ կը լսէր
ի նոցանէ: Թէեւ բոլորն եւս անուս եւ գռեհիկ մարդիկ
էին, բայց գեռեւս նոցա մէջ եւս, որպէս յիշեցաւ, մինչ
փոխ Հարիւրապետի աստիճան ունեցող եւս կայր: Սոքա Ղոս-
րովխան Հայ քաղաքապետի ժամանակում, Ասպահանում
պատահեալ քաղաքական կռուոյ միոյ մէջ հաւատարմու-
թեամբ մեծ քաջութիւն էին ցոյց տուած, երբեմն Շուշ-
տար էին գնացեալ եւ անդ Հօրից ապստամբութիւնն նուա-
ճեալ, ի ներքոյ հրամանատարութեան Սողոմոն Ղեան Ինա-
կօլփեանց երեւելի Հայ զօրավարի, եւ անուն եւ պատիւ
ունէին իւրեանց համար, եւ որպէս կը տեսնուի ահա, լա-
լով եւ ողբով էր որ լսեցին իւրեանց բազմամեայ ծառայու-
թիւնից ի բաց արձակուելն:

Ի վերջոյ բազում դժուարութեամբ կարծեմ ի մէջ
Ջուղայու եւ Հայոց գիւղօրէից իբր երկու հարիւրաչափ զի-
նուորք գրուեցան, այլ բոլորն սուր եւ ռամիկ մարդիկ. եւ
երբ պատուաւոր դասու մարդիկն տեսան, որ տարեկան մի
զինուորի թոշակի մի մասն տալով, կարողանում էին այս-
պիսի մարդկան իւրեանց փոխանորդ տալ, յայնժամ բոլոր

Թաքստականքն մի զինի միոյ յերեւան եկին: Արդէն Ջուղա սկսած էր զինուորական կերպարան մի ստանալ: Մէյտա-նուին ամէն առաւօտ կը տեսնուէին նորընտիր զինուորքն, որք զինուորական համազգեստուէ կը կատարէին իւրեանց կրթութիւնն: Զինուորական փողոյ եւ թմբկի ձայնք լսելի կը լինէին, եւ կ'երեւէր որպէս թէ մի նոր գործունէու-թեան ոգի կը շարժէր թմրեալ Ջուղայու մէջ, բայց դեռ կը բարձրանայր Ջուղայեցւոց բողոքի աղաղակն, դեռ օր ըստ օրէ կը զայրանայր նոցա տրտունջն, մանաւանդ երբ նորըն-տիր զինուորաց մին փոքր մի կը պատժուէր վասն ընդդէմ գնալոյ զինուորական խիստ կանոնաց կամ ժամապահու-թեան: Այս միջոցներուս ժամանեցաւ ի Ջուղա Տանդու-ցեալ Թադէոս Եպիսկոպոս Բէգնազարեան, եւ զնա միջ-նորդ ուղարկեցին ի Թէհրան, որպէս զի, որպէս սովոր էին ասել, այն սաստիկ հարուածն վերացնէ իւրեանց գլխից: Կը պատմէին թէ երբ վերաստացեալ Եպիսկոպոսն ներկայա-նալով Ամիրին աղերսաւոր էր եղեալ այս մասին, Ամիրն արհամարանաց քթածիծաղ մի տալով, ասացեալ էր: "Յաղթ-ձա, ես բարեմտութեամբ եւ յօգուտ քո ազգի, այս հրամանն արձակեցի, բայց եթէ նոքա չկարեն իւրեանց օգուտն իմանալ, եւ իւրեանց թագաւորին ծառայելն հա-լածանք կը համարեն, ուրեմն թող չլինին ոչ հին եւ ոչ նոր հայ զինուոր նորա ծառայութեան մէջ, արձակուած են նոքա այսօրից": Ո՜հ ինչ ուրախութեան օր էր այն ի Ջուղա, երբ հասաւ աւետաբեր լուրն որ, "սարուազ բռնել մուղուճ ելաւ, աչքերանիդ լոյս": Նկեղեցւոյ զան-գակներն սկսան հնչել, խնդութիւն եւ հրճուանք կ'ոստոս-տէր ամէն դիմաց վերայ, փողոցում կամ տան մէջ երբ մին միւսի կը հանդիպէր, կը փարէին միմեանց պարա-նոցաւ եւ ցնծութեամբ կը շնորհաւորէին միմեանց, եւ մի

անճանօթ ոմն կը կարծէր թէ Ջուղայեցիք, Իսրայէլացւոց նման, հաղիւ ազատութիւն էին գտել իւրեանց հարիւրաւոր տարեաց գերութիւնից այդ օր: Բայց այն եւս կը մտաբերեմ պարզապէս, որ այդ միեւնոյն օրում, մեր Թաղում բնակեալ քանի մի հայ զինուորքն — Նայիբ Մինաան, Թօփչի Մկրտումն, Սարուազ Ղօլավէրդին, իւրեանք եւ իւրեանց ընտանիքն ժողովեալ ի միասին, գառնագին եւ ալիողորմ կ'արտասուէին: "Մեք ինչ էինք արարել„, կ'ասէին, "որ մեր այսքան ամաց ծառայութիւնն ոչնչացուցին, որ մեր հացն բերանից կտրեցին„: Այսպէս վերջացաւ ահա, "Սարուազ բռնելոյ„ անցքն, եւ Ջուղայու արդի մատաղ սերունդքն, թող քաղեն վեր պատմութիւնից ինչ բարոյական խնամատ եւ խորհրդածութիւն որ իւրեանց հաճոյ կ'երեւի:

Ի վեր յիշեալ քանի մի շփոթութիւններից արտաքոյ, Ջուղայու սովորական քաղաքական վիճակն մինչ ցամին 1864, խաղաղ եւ անդորր էր: Այո՛, որպէս ի վեր ասացաւ, ի պատճառս կրօնական խտրութեան, եւ մոլեռանդութեան երբեմն երբեմն կը պատահէին թեթեւ վրդովմունք Հայոց եւ Պարսկաց մէջ, այլ քաղաքական իշխանութիւնն միշտ պատրաստ էր պահպանել Հայոց, եւ խափան դնել վնասու կամ անիրաւութեան: Կը յիշեմ որ քանիցս անգամ մահմետական դէնպետաց մին կամ միւս (թէեւ պէտք է ասեմ. աննշան դէնպետաց, քանզի նշանաւորքն ոչ երբէք այսպիսի յիմարական հրաման կ'արձակէին) վճռաբար հրամայած է որ Ջուղայեցւոց ի սուր մատնեն, եւ Ջուղայեցիք լսելով բաւական ահ ու դող են զգացել, այլ ոչ միայն այնպիսի վճիռքն եւ հրամանքն, ոչնչի տեղ են գրուել, այլ եւ ասացեալ դէնպետքն քաղաքապետին կամ թաղաւորից պատժուել են:

Այսպէս անդք մի պատահեցաւ Անգղիացւոց եւ Պարսից պատերազմի ժամանակում, յամի 1856, եթէ սխալ չլինեմ: Իրաց հանգամանքն այնպիսի երեւոյթ մի ունէին, որ Ջուղայեցւոց համար բաւական վտանգաւոր կ'երեւէր: Հուր էր տարածուած Ասպահնայ մէջ, իբր զի Հայք, որպէս Անգղիացւոց հաւատակից, Ջուղայցւոց թղթակցութիւն կը պահէին նոցա հետ, եւ լրտեսական դաւաճանութեամբ զանազան ծանօթութիւնք կուտային նոցա: Եւ զայս լուր կը գունաւորէր տարաբախտապէս դէպք մի, զոր չէր հնար ուրանալ: Բարեյիշատակ հանգուցեալ Թադէոս Եպիսկոպոս Բէգնազարեան, առաջնորդ ժամանակին, այս միջոցս մի Ջուղայեցի հայ թղթատար էր առաքել առ Շիրազ: Թէեւ բարի նպատակաւ էր արարեալ զայն, քանզի մտածելով որ ի պատճառս խռովութեան պատերազմին Շիրազեցի փոքրաթիւ Հայքն գուցէ նեղութիւն կամ հալածանք կրեն Պարսից կողմից, գրել էր Շիրազայ քաղաքապետին, խնդրելով որ չմոռանայ Թաղաւորի հաւատարիմ հպատակ հայ խմբին, որք կան իբր իշխանութեան նեղքոյ, եւ հովանի եւ պաշտպան լինի նոցա: Այս էր թղթատար ուղարկելոյ առիթն, բայց ի հարկէ նպատակին տեղեկութիւն չունելով, եւ մանաւանդ գիտելով որ Անգղիացւոց գործակատար Պարոն Ս. Պ. Աղանուրեան Հայ էր եւ նեղքին բարեկամն առաջնորդին, հետեւապէս տարածեալ լուրն որպէս թէ ճշմարտութեան կերպարանք կը ստանայր Պարսից մօտ, եւ երեւի այնպէս զայրացուցեալ էր Պարսից խաժամուժ ամբոխն, եւ նոցա կրօնականաց ոմանց միտքն, զի յանկարծ լուր հասաւ ի Ջուղա թէ դենպետաց մին ամբոխի վերայ բարձրանալով ասացել էր որ Ջուղայեցի քրիստոնեայք ի պատճառս իւրեանց դաւաճանութեան արժանի էին «ղաթլի», այսինքն բնա-

ջինջ կործանման, եւ մահվեստական հաւատացեալք պարտաւանց կը համարուէին եթէ թոյլ տային նոցա այլեւս կենդանի մնալ։

Մեծ էր սարսափն եւ զարհուրանք զոր զգացին Ջուղայեցիք ահա, եւ որպէս ասացաւ հայ թղթատարի առ Շիրազ ուղարկելն անուրանալի լինելով, հանգամանք բանին շատ վտանգաւոր կ'երեւէր, մանաւանդ որ ժամէ ի ժամ կը լսուէր թէ մեծ եւ կատաղի Պարսից ամբոխ մի պէտք էր փութով Ջուղայու վերայ գայր։ Զրօրհնեաց Թաթախ կամ ճրագալուցի օրն էր, եւ Թադէոս Առաջնորդն, թէեւ միւս առաւօտ պատարագիչ պիտի լինէր, սակայն առանց ժամանակ ի ձեռաց տալոյ, քանի մի պատուաւոր Հայոց հետ փութացաւ իսկոյն առ քաղաք, հանդիպիլ քաղաքապետին։ Ականատեսք կը պատմէին, որ այնպէս շփոթեալ էր Նախիջեւանի յարդարացի բարկութենէ, եւ մասամբ յանձկանաց սրտի ի պատճառս վտանգի ժողովրդոյն, որ երբ քաղաքապետն — բարի եւ հայասէր այր մի Զէրազ Ալի Խան անուամբ — կը նկատէ Նախիջեւանի շփոթութիւնն, կը ձայնէ, "Խաչիկա, ինչ է պատահեալ, ընդէր ես այդպէս շփոթեալ„։ Ցայնժամ ըմբռնելով իւր շքանշանաց ոսկի շղթայքն, զորս կը կրէր իւր պարանոցում, կ'ասէ նախիջեւանն, "Ձէ՛ր, այս ինչ է որ աննշան դէնպէտ մի կը հրամայէ իմ ժողովրդոյ բնաջինջ առնել, եթէ յանցանք կայ, ես նոցա առաջնորդն եմ, այս շղթայիւք նախ դու ինձ խեղդիր, եւ ապա թող իմ ժողովրդոյ ի սուր մատնեն„։ Ն'ամենքէ՝ կը հանդարտեցնէ զնա քաղաքապետն, եւ յետ բանի անցն իմանալոյ, ոչ միայն առ ժամայն դէնպետին աքսորեց առ Թէհրան, որ անդ իւր յանդգնութեան պատուհասն կրէ Թագաւորիցն, այլ եւ միւս օր ուղարկեց Ծանրագին խիլա մի վասն Նախիջեւանին, որպէս սիրոյ եւ

հաւատարմութեան նշան, եւ նոյն խիլայն մեծ հանդիսիւ ստանալով եպիսկոպոսն Երեւան թաղէ ելեւէջում, խուռն բազմութեամբ Հայոց եւ Պարսից անցանելով ընդ բոլոր ջուղա մտաւ վանքն։

Բայց թէ ինչ փոփոխութիւնք եւ յառաջադիմութիւնք են եղել կէս դարու միջոցում ի Պարսկաստան իւր քաղաքական վիճակում, որ նոյն է ի հարկէ Ջուղայեցւոց համար եւս, տեսողն կարող է դատել։ Կէս դարով յառաջ, Թողեալ երկարն, կարճ ճանապարհորդութիւնք եւս, ոչ միայն ստացուածոց, այլ եւ կենաց վտանգաբեր էին։ Քաղաքաց միջում գողութիւնք եւ յափշտակութիւնք յաճախ էին, եւ բազմից անպատուհաս։ Իրաւունք գտանելն քաղաքական կամ քրէական դատից մէջ շատ դժուարին էր։ Հայք կամ քրիստոնեայք արտօնութիւն չունէին քաղաքի շուկայից մէջ առեւտրութեան պարապել խանութ պահելով։ Ամենայն հաւատափոխ Հայ կարող էր իւր ընտանեաց եւ ազգականաց բոլոր կալուածքն գրաւել եւ իւր շինել։ Ոչ հեռագրութիւն կայր, ոչ թղթատարութիւն։ Հնդկաստանից եթէ մի թուղթ հասանէր Ջուղայ հինգ կամ վեց ամսոց միջոցում, բաւական նոր թուղթ էր համարելի։ Թէհրան, Շիրազ եւ այլ Պարսկաստանի քաղաքներ թուղթ ուղարկելն միայն ճանապարհորդաց ձեռամբ կը լինէր, որք երբեմն կը պատահէին կամ ոչ։ Եթէ յայտնուէր որ մի Ղասիդ կամ թղթատար էր հասեալ ա՛ւ եւ իցէ քաղաքից, քանի օր որոնել հարկաւոր էր նախ Ղասիդն դտանել, եւ յետոյ քանի եւ ինչ գնով, որ նորա կամքն էր, կը վաճառէր բերեալ թուղթն։ Սովորութիւն էր, երբ մի Ջուղայեցի բուշեռից կը բաժանուէր նաւել առ Հնդկաստան, կ՚ասէին այս ինչ անձն "Ներս է մտել„, եւ "Թիքանա„ կամ իւր նպատակն ժամանման թուղթն եթէ մի տարից

յետ գտանէին, բաւական ուրախալի դէպք կը համարէին զայն։ Օտար աշխարհայ հետ շատ ընչին էր Պարսկաստանայ առեւտուրն, եւ այն եւս առաւել ներմուծութեամբ քան արտածութեամբ։ Աշխարհն աղքատ էր յոյժ եւ մեծ պակասութիւն կայր դրամոյ։ Հարիւր թումանն բաւական մեծ գումար կը համարուէր, եւ հարիւր թումանի ունեցողն հարուստ մարդ։ Այսպէս էր Պարսկաստան, եւ նոյնպէս եւ, գուցէ վատթար Ջուղայու դրութիւնն, եւ զայսոսիկ դիմադրելով սրտի հանդամանաց, տեսողն միայն կարող է կշռադատել թէ, ինչ ինչ յառաջադիմութիւնք են եղած, կամ թէ եղած են թէ ոչ։ Բայց միշտ մտածելի է, որ մի ազգ, կամ մի երկիր կէս դարում կատարեալ եւ բովանդակ յառաջադիմութիւն չէ կարող ստանալ, մանաւանդ երբ կրօնն այդպէս մեծ դեր ունի քաղաքական իշխանութեան մէջ, որպէս ունի Մահմետականութիւնն ամենայն Մահմետական աշխարհում։ Ինձ թուի Պարսկաստան մեծ ապառնի յոյս ունի իւր համար, եւ ով գիտէ Ջուղա եւս գուցէ երբեմն վերաստանայ իւր նախկին շքեղութիւնն եւ նախանձելի վիճակն։

ՆԵՐՔԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿ

Ջուղա բաց ի իւր անհրաժեշտ մանակցութենէն Ասպահանայ, կամ լաւ եւս ասել, բոլոր Պարսկաստանի ընդհանուր քաղաքական վիճակին, ունէր միշտ իւր համար մի առանձին եւ ուրոյն փոքրիկ նեղքին կառավարութիւն եւս, եւ Ասպահանայ Ոստիկանն միշտ թեկն կ'ածէր եւ կը պաշտպանէր ըստ կարելւոյն սոյն նեղքին կառավարութեան արտօնութիւնք եւ հրամանքն։

Գլուխ էր միշտ այս իշխանութեան, ժամանակի Ամենափրկչեան վանաց վիճակի Առաջնորդն, որ ունէր ընդհանրապէս — եթէ ներելի է այսպէս ասել — իւր պատաքին գործոց նախարարն, առանին իրողութեանց նախարարն, տէրունի հարկաց ժողովող եւ գանձապետն, եւ քանի մի առանձին խորհրդականք: Բարեյիշատակ Թադէոս Բէգնազարեան Առաջնորդն, հաստատեց նաեւ, առաջին անգամ, փոքրիկ ատեան մի, որ Սինօթ կը կոչուէր, բաղկացեալ ի քանի մի քահանայից եւ աշխարհականաց, եւ այս ատեանն, որ շաբաթն երկու անգամ նիստ ունէր Ամենափրկչեան վանաց մէջ, կը ջանայր որ եւ իցէ դատ կամ վէճ կամ անհամաձայնութիւն պատահիլ ի մէջ ժողովրդոց, քննել եւ իրաւագատ լինել: Ինձ թուի շատ մի բարի հաստատութիւն էր այս, որ լսեմ ի պատիւ ջուղայեցւոց տեւէ մինչ այժմ իսկ: Այո թէ եւ իշխանական այժ չունի այս ատեանն, իւր վճիռքն գործադրելոյ, բայց եւ այնպէս, եթէ արժանի անձինք լինին նոքա որք կը կազմեն ատեանն, այսինքն ուսումնական, աշխարհատես, փորձառեալ, անաչառ եւ արդարամիտ, եւ փոքր ի շատէ տեղեկութիւն եւս ունենան օրինաց, որով կարող լինին ժողովրդոց վարին եւ պատկառանքն գրաւել, եւ անշուշտ այսպիսի անձինք պիտի միշտ լինին ի ջուղա, յատկապէս այժմեան ժամանակում, կարող են իրապէս մեծ օգուտ լինիլ ջուղայեցւոց, արդարասիրութեամբ իրաւարար լինելով նոցա, եւ թոյլ չտալով ոստիկանութեան դուռն երթալ եւ մեծամեծ ծախուց եւ վնասուց ենթարկիլ: Ինձ միայն մի անգամ դէպք եղեւ ներկայ գտանիլ Սինօթի ատենում, եւ այդ եւս հետաքրքրութեան հոգւով էր միայն: Այդ օր վէց թուման դատ մի կայր ատենի յանդիման, եւ մինչդեռ դատախազն կը յայտներ որ ութ ամիս

իւր մուրհակի պայմանաժամէն արդէն անցած էր, եւ ոչ վաշխ էր գտել եւ ոչ դրամագլուխն կարէր գտանել, պարտապանն կը յայտնէր թէ առ ժամն դրամ չունէր ինքն, եւ ուստի՞ պիտէր հատուցանէր: Առեւանն յետ խորհրդածելոյ, առաջարկեց որ դատախազն ընդունի միայն հինգ թուման ստանալ առանց վաշխի, եթէ պարտապանն իսկոյն կը վճարէ զայն պատրաստ դրամով: Երկուքն եւս սկսեցին բողոք բառնալն, այլ առեւանն համոզեց նոցա յառաջ գալ հաշուրիլ միմեանց, եւ կարծեմ դատն վերջացաւ հաշուրիւ, եւ հաւանութեամբ հպատակելոյ վճռոյն: Ահա գուցէ ընթերցողն կը ծիծաղի ասելով այս ինչ տեսակ իրաւարարութիւն է: Այո, ճշդիւ արդարութիւն չէր այս, ես եւս կը վկայեմ, սակայն բարոյական համոզմամբ այսպէս վէճն աւարտելն երկու ազգայնոց մէջ լաւ չէր արդեօք, քան թողլ տալ նոցա Ոստիկանութեան առեւանն երթալ, ուր թէ դատախազն եւ թէ պարտապանն գուցէ երկիցս յաւել քան յիշեալ գումարն կը պարտաւորէին ծախել, թողեալ այլ վնասք: Ինձ թուի շատ բարի մարդիկ էին սոքա: Դատախազն մտածեց որ վեց թումանից՝ հինգ թուման գտանելն յաւել լաւ է քան ոչինչ, պարտապանն եւս իւր պարտատեառն բարեսրտութիւնն նկատելով՝ գէթ ամաչեց, եւ եթէ կրկին պարտք եւս պիտի անէր, յանձնառու եղեւ վճարել գումարն: Արդարութիւն եւ իրաւունքն շատ լաւ են, այլ յոյժ մեծածախ է միջոցն գտանելոյ զայնս ամենայն աշխարհում, որպէս բաղումք փորձով գիտեն, առաւել լաւ է ողորմախառն արդարութիւնն, եւ զայս բարոյական ոյժն առաւել դիւրաւ կարող է տալ քան իշխանական ոյժն: Երանի թէ միշտ ըստ արժանւոյն արժէք դնէին ջուզայեցիք այս իւրեանց Սինօթ անուանեալ փոքրիկ առե-

նին, ջանային որքան հնար է այնպիսի անձինք ընտրել սոյն պաշտօնուամ, որք անշահասէր են, եւ ժողովրդոց հաւատարմութիւնն կը գրաւեն, եւ զայս առնելով, չգիտեմ ընդէ՞ր իրաւարարութիւնն, որ ամենայն կառավարութեան առաջին նպատակն է, Ջուղայու ներքին փոքրիկ կառավարութիւնն չպիտի միանգամայն բովանդակ եւ կատարեալ յօրինէ։

Ցետոյ կային Քաթխուդայք կամ Թաղապետք, որք դարձեալ, որպէս անդամք էին վեր կառավարութեանն։ Սոցա գործն էր՝ ամէն մին իւր Թաղի ժողովրդոցն տեսուչ լինել, նոցա փոքրիկ անհամաձայնութիւնք կամ կռիւքն խաղաղել՝ խրատելով ոմանց, համոզելով միւսոց, եւ երբեմն ստահակաց անարգելով եւ թեթեւապէս պատժելով եւս։ Նաեւ սոցա պարտքն էր ի կարգի դնել եւ վերահասու լինել որ "Գաղմայքն„ կամ գիշերային պահապանքն ժամանակին դուրս գային, եւ արթնութեամբ հսկէին բոլոր գիշերն վասն Թաղն ազատ պահելոյ ի գողոց եւ ի փորձանաց։ Ասացեալ պահապանքն նոյն իսկ Թաղի ժողովուրդքն էին, որք փոփոխաբար, մի նշանակեալ թուով, իւրեանց ծառայութիւնն պիտի տային այս մասին։ Կը յիշեմ՝ օր մի մեր Թաղն Սարգազնայն կամ գիշերային պահապանաց պետն, զոր վարձով կը պահէին, եւ որոյ պարտականութիւն էր լուր տալ ամէն ուժեք երբ նորա ժամանակն լինէր գիշերն հսկելոյ, եկեալ մեր դրացւոյն յայտնեաց, որ առաջնակայ գիշերն իւր ժամանակն էր։ "Այս գիշեր ես պատրաստ չեմ„, ասաց դրացին։ "Պատրաստ չե՞ս„, պատասխանեաց պետն, "միթէ հրաւիրուած եմ գաս հօրս հոգւոյ համար պատարագ անես, որ պատրաստ չես, գաղմա գնալոյն ինչ պատրաստութիւն է հարկաւոր„։

Դառնալով առ Թաղապետքն, սոցա պարտականու-
Թիւնն էր նաեւ, երբ տէրութեան հարկի ժողովելոյ ժա-
մանակն լինէր, ժողովէին իւրեանց Թաղի մարդիկն, եւ նոյն
Թաղի բաժին վճարելի հարկն բաժանէին նոցա մէջ Թէ ով
որքան պիտի վճարէր համեմատ իւր կարողութեան կամ
քսակին: Եւ յետոյ ի ցուցակ անցուցանելով իւրաքան-
չիւրոց անուանքն, կը յանձնէին ցուցակն հարկաժողովին
առ ի ժողովել զնոյն: Այս Թաղեցւոց ժողովն ընդհանրա-
պէս կամ մի խանութի դրան կամ փողոցայ միոյ գլխուն
կը հաւաքուէր, եւ մի օր լինէ, որ այդ ժամանակուն օգ-
նական ուսուցչութեան պաշտօն կը վարէի, կոչեցին գրել
վերատացեալ ցուցակն: Շատ գրել եւ եղծանել էր հար-
կաւոր մինչ լրանայր այն, քանզի եթէ մի մարդոյ բաժին
հանէին երկու Ղռանի, իսկոյն աղաղակ կը բառնայր Թէ
ընդէ՞ր ինքն երկու Ղռանի պիտի վճարէր, մինչդեռ Կիրա-
կոս, կամ Պետրոսն միայն մի եւ կէս Ղռանի բաժին դռեալ
էին: Այլ զնարդ եւ լեղի, ի վերջոյ աւարտեցաւ ցուցակն
եւ ժողովն եւս ընդ նմին: Բայց դու տես իմ աշխատանաց
վարձն ինչ էր: Այդ երեկոյ դարձեալ բաւական Թուով
անձինք ժողովուած էին փողոցի միւս գլխուն, եւ կը խօ-
սէին եւ կը քննադատէին նոյն աւուր հարկի բաժանում-
դութեան ցուցակի վրայ. եւ Թաղեցւոց մին, ոմանիկ ծե-
րունի ոմն որ ցերեկէն ժողովուածն ներկայ չէր եղած, հար-
ցրեց Թէ արդեօք իւր բաժինն ինչ էր ցուցակուածն: "Երեք
Ղռանի„, ասաց ոմն: "Երե՞ք Ղռանի„, պատասխանեաց
ծերունին բարկութեամբ: "Ի՞նչ, երեք Ղռանի՞, ո՞ր անօ-
րէն, անիրաւն գրեաց զայն, այ ես դորա գրողի Հայրն անի-
ծեմ, այ դորա գրողի պապն անիծեմ„, եւ անէծքն սկսաւ
բարձրանալ առ եւս բարձրագոյն նախնիք իւր: Ուղիղն խոս-
տովանիլ, պատուելի ընթերցող, սրտիս այդ խորշն, ուր

ընդհանրապէս կը կարծուի թէ ազգասիրութեան կաթսայն կեռայ, փոքր մի խոցուեց, այլ փոյթ չառայ, ասացի ազգասէր անձն մի պէտք է ներող լինի։ Ներեցի։

Այսպէս Ջուղայու այս ներքին ինքնուրոյն կառավարութիւնն բաւական լաւ ձեւ ունէր ըստ երեւութին եւ կազմութեանն։ Արտաքին գործոց նախարարն, որ ընդհանրապէս պարսկերէնագէտ կրօնական մի էր, քաղաքական իշխանութեան հետ կը խօսէր եւ կը տնօրինէր ամենայն բան հարկաւորեալ ժամանակում, յայտնելով Առաջնորդի խընդիրն եւ կամքն վերաբերութեամբ ազգային գործոց։ Առանին իրաղութեանց նախարարն եկեղեցական եւ աշխարհական բարեկարգութեանց կը պարապէր, խորհրդականք իւրեանց, Սինօթի անդամք իւրեանց, եւ նոյնպէս եւ հարկապետն եւ թաղապետք իւրեանց պաշտօնում կը պարապէին, եւ կարելի էր որ այսպէս Ջուղա մի ամենայնիւ բարեկարգ եւ կատարեալ ինքնիշխան կառավարութիւն ունենար իւր համար, որով արդարեւ կարող պիտի լինէր ոչ սակաւ առաւնին լաւութիւնք եւ յառաջադիմութիւնք ցուցանել յօգուտ իւր մանաւանդ զի, որպէս ասացաւ, արքունական իշխանութիւնն եւս միշտ պատրաստ էր թեկնածել եւ պաշտպան կալ նմա ամենայն ազգօգուտ, խոհեմամիտ եւ բարի առաջարկից մասին, այլ տարաբախտաբար կային թերութիւնք, կային վրէպք զանազան կողմից, որով այն լաւագոյն արդիւնքն որ ակնկալելի էր՝ չկարէր գոյանալ։ Եւ ոչ մեղադրելի էին այս մասին վերատացեալ կառավարութեան գլուխ կամ անդամք։ Մի մարդ իւր տեսածից, լսածից եւ կարդացածից կարող է բան սովորել, եւ այն ժամանակում սակաւք ոմանք կային, որ յաւել ինչ էին տեսած կամ լսած — մեծ մասն կարդալ բնաւ չգիտէին — քան որչափ կարող է ոք լսել եւ տեսանել մի-

այն Ասպահանայ սահմանափակ փոքրիկ շրջանի մէջ, եւ այդ՝ արդարեւ, շատ սակաւ ինչ է, եւ չէ կարող տալ այն վարձն, հմտութիւնն, խոհականութիւն եւ անշահասիրութիւնն, նաեւ գործունեայ հոգին, որ անշուշտ հարկաւոր է բոլոր այսպիսի ձեռնարկից մէջ: Կը ջանային առնել որչափ նոցա կարողութիւնն եւ միաքն կը զօրէր, եւ չէր հնար յաւել ինչ ակնկալել քան զայն: Բայց ի հարկէ նոյն հարկաւոր տարերաց պակասութիւնից պիտի հետեւէին թերութիւնք:

Թերութեանց առաջինն այն էր որ առքն ջուղայեցի միշտ կը հրաժարէր յանձն առնուլ ո՛ եւ իցէ պատասխանատուութիւն անհատաբար կամ խմբովին: Եւ սորա հետեւանքն էր որ նոցա գլուխ կամ Առաջնորդն (քանզի միշտ վանայ առաջնորդն կամ նորա տեղականն էր վեր կառավարութեան նախագահն) եթէ չսիրէր առնել զայն, եւ ընդդէմ կամաց իսկ լինէր, կը պարտաւորուէր միահեծան եւ բացարձակ իշխանութիւն ի գործ դնել: Բայց յետոյ սորա ընդդէմ կը բարձրանայր տրտունջ աղաղակ եւ բողոք, եւ երկպառակութիւն: Ժողովրդոց մին կէսն կը գառնային Առաջնորդականք, եւ միւսն հակառաջնորդականք, մին կ'ընդդիմանայր միւսոյն, եւ երկոքին խոչ եւ խափան կը լինէին միմեանց ամենայն ազգային գործոց: Չէին մտածել բնաւ թէ յանցանքն ի սկզբանէ իւրեանցն էր, եւ իւրեանց ձեռամբ էր, որ միահեծան իշխանութեան լուծն զրին իւրեանց պարանոցի վերայ, այլ լծոյ ծանրութիւնն զգալով կը սկսանէին իրերաց հետ կռուիլ: Փոխանակ փոշմանելոյ իւրեանց անփոյթութեան վերայ, եւ միաբանուելոյ, եւ օրինաւոր միջոցաւ ջանալոյ բառնալ իւրեանց վերնից նոյն ծանրութիւնն, որ ո՛չ դժուարին էր, ոչ անհնար, գառն բանիւք մին միւսոյն մեղադիր կը լինէր:

Առաջնորդ մի որ կը հասանէր ի Ջուղա, (եւ սոքա որպէս ամենայն ոք գիտէ, ոչ Ջուղայեցի այլ օտարական եւ բոլորովին անծանօթ մարդիկ են), հասանելն ի բաց, առանց մարդոյն ճանաչելոյ, առանց նորա արժանիքն գիտելոյ, առանց դեռ մի թեթեւ գործ տեսանելոյ նորանից, փառաբանութեան երգօք կը սկսանէին բարձրացնել նորան մինչ ամպոց մօտ: Շառաք եւ շնորհաւորութիւնք կը կարդացուէին այնպիսի չափազանցական գովեստիւ եւ դրուատանաց խօսքերով, որ ծիծաղելի պիտի երեւէր այն նոյն իսկ գովեստ ընդունողին: Եւ փոքր մի ժամանակ ոչինչ կը լսուէր քան միայն Սրբազանի անուն եւ Սրբազանի (դեռ չտեսնուած) լաւութիւններն: Եւ այս միջոցում մեծից մինչ փոքր բանիւ, գործով եւ շարժմամբ այնպէս կը ցուցանէին նորեկ Առաջնորդին, որպէս թէ իւրեանք միտք եւ կամք ասացեալ բառն բնաւ չգիտէին ինչ է, որպէս թէ իւրեանք միայն մատաղ խակ երեխայք էին, եւ Սրբազանի ձեռն էր որ պիտի առաջնորդէր ինքեանց, որպէս Սրբազան հօր հրամանէն կախուած էր ոչ միայն ամենայն ինչ հոգեկան եւ մարմնական, այլ եւ գրեթէ եւ իւրեանց կեանքն իսկ: Եւ եթէ Սրբազանն այնուհետեւ սկսանէր նայել առ նոսա որպէս մի իսկական ոչխարաց խումբ, զոր արժան էր միայն ոչխարաց նման տարու բերել ինչպէս իւր կամքն կամ հարկն կը պահանջէր, մեղաւոր էր նա արդէօք: Բայց՝ որպէս Ջուղայեցիք ինքեանք սովոր էին ասել, այդ միայն "ովսաննայն„ էր զոր կ'երգէին: Զկնի փոքր ժամանակի, երբ Սրբազանն, նոցա ցուցանելոյ հաւեմատ, համարելով զնոսա որպէս խակամիտ երեխայք կը սկսէր նմանապէս եւս վարիլ նոցա հետ, յայնժամ "ի խաչ հան զդա„ աղաղակն կը բարձրանայր: Բայց կը կարծես թէ յետ իւրեանց սխալութիւնն նշմարելոյ, կը վստահանայր ոք ինքն

առանձին, կամ քանի մի այլ անձանց հետ ներկայանայր Սրբազանի մօտ, եւ համեղութեամբ եւ պատուով հասկացնէր նորան, որ ի վերայ ամենայնի, իւրեանք մարդիկ եւ ոչ երեխայք էին, որով եւ Առաջնորդն զգուշանայր եւ վարէր նոցա հետ ըստ արժանւոյն, քաւ լիցի, արտաքոյ ազաղակ էր միայն եւ ժժգոհութիւն, այլ Սրբազանի մօտ ևթէ ներկայանայր աղաղակողն, աղաղակն իսկոյն կը լռէր, մեւնոյն անմռունչ երեխայն էր, միեւնոյն Սրբազանի խոնարհ կամակատարն:

Կը մտաբերեմ մի անգք, որ լաւագոյն կը յայտնէ վեր նկարագրութեան ստուգութիւնն: Երկար ամօք յառաջ, միեւնոյն վերասացեալ Թադդէոս Եպիսկոպոսի առաջնորդութեան ժամանակում, Տէր Յովհաննէս Ղաչիկեանն, որ յայնժամ Կալկաթոյ առաջնորդական էր, քանի մի անձանց ի Ջուղա, թուղթ էր գրեալ, որ որովհետեւ ինքն լաւ էր թէ Ջուղայու վանքն բարեկարգութեան մէջ չէր, բարւոք էր լինելոց, որ Ջուղայեցիք ընդհանուր ժողով մի կազմէին, եւ նորանոր բարեկարգութեան կանոններ հաստատելով, դնէին Առաջնորդի մօտ, որ այնուհետեւ նոյն կանոնաց ներքոյ ընթանայր վանաց կառավարութիւնն: Եթէ սխալ չլինիմ, ասացեալ կանոնքն եւս, նոյն ինքն վերասացեալ քահանայն ուղարկել էր, որ ժողովն վաւերացուցանէ, եւ այս կանոնքն մեծաւ մասամբ կը չափաւորէին նաեւ Առաջնորդի իշխանութիւնն վանաց կառավարութեան մասին: Արժան չէ յիշել ասա, թէ ինչ հոգւով էր արարեալ զայս վերասացեալ քահանայն, եւ թէ յետոյ որպիսի չարաչար հետեւանք ծագեցին անոի ի մէջ իւր եւ Առաջնորդին: Այլ միայն բաւական է ժողովոյ անգքն պատմել: Ժողովն գումարեցաւ Պրուսեանց Թաղի Սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյ ընդարձակ գաւթում, եւ ներկայ էին քահանայք

եւ աշխարհականք գուցէ ուրանից յաւելի թուով: Ներկայ էր եւ իմ խոնարհութիւնն, այլ հետաքրքրաց պատանեկաց, եւ ոչ ձայնաւոր անդամից դասում: Աւագ քահանայի թուղթն հանդիպ կանոններովն առաջի եդաւ ժողովոյն, ժողովոյ անդամոց բաւական մնան, խօսեցին եւ բողբեցին որ շատ անկոպար իշխանութեամբ կը վարուէր Առաջնորդն, եւ կային անկարգութիւնք վանաց կառավարութեան մէջ, եւ արժան էր ընդունել, հաստատել եւ գործադրել ասացեալ կանոնքն: Բայց հարկ է յիշել աստ, որ այս ժողովոյ կոչումն եւ գումարումն, ի հարկէ որպէս թէ ապստամբութիւն մի էր ընդդէմ Առաջնորդին, եւ որպէս թէ բոլորովին առանց նորա գիտութեան եւ խորհրդոյ էր, սակայն Առաջնորդն լաւ տեղեակ էր բանին, եւ ժամէ ի ժամ կը ծանօթանայր ժողովոյ անցիցն իւր լրտեսաց ձեռամբ: Ըստ բաւական բանախօսութեանց, ժողովն միաբան հաւանութեամբ վճռեաց զի ասացեալ կանոնքն ընդունելի են, եւ նա եւ առաջարկեցաւ, որ վեց հոգիք ժողովոյ անդամներից ընտրուին որպէս երեսփոխան ժողովոյն, գնան Առաջնորդի մօտ, եւ նորա յանդիման գնեն ժողովոյ վճիռն եւ ասացեալ կանոնքն, խնդրելով որ գործադրէ զայն ըստ արժանւոյն: Բայց աստ ահա կատուի պատանոցում զանգակ կապելոյ առակի անցքն պատահեց: Ո՞յք արդեօք պիտէր այդ վեց հոգին բաղկացնէին: Ամէն մին սկսաւ հրաժարիլ, ասելով թէ միւսն յաւել արժանի էր նոյն պատուոյն քան ինքն, եւ յաւել լաւ եղանակաւ կարող էր Սրբազանի հետ խօսել, եւ յետ շատ համոզանաց, հրաւիրանաց եւ հրաժարմանց, ի վերջոյ ընտրեցան վեց հոգիք եթէ սխալ չլինիմ, երեք քահանայք եւ երեք աշխարհականք, եւ յետ ժողովոյ արձակմանն, յուղի անկան գնալ ուղղակի առ վանքն եւ կատարել իւրեանց պատ-

գամաւորութիւնն: Որ ինչ պատահեցաւ ապա, այս էր զոր կը պատմէին: Մինչ Վանայ դուռն հասանելն, վեց պատգամաւորներէն միայն երկուքն էին մնացել, եւ այս երկուքն՝ որք քահանայք էին, հասանելով Առաջնորդարանի աստիճանաց մօտ, որ մի նեղ ճանապարհ էր եւ միայն մի հոգի առժամն կարող էր ի վեր ելանել, մինչդեռ մինն յառաջ կը քայլէ ի վեր, նայելով յետս կը տեսանէ որ իւր ճնաճեալ կարգակից եղբայրն եւս աներեւութացաւ: Այժմ ինչ պէտք է անէ խեղճն՝ չդիտէ, բայց յառաջ քան միտքն վերջաւորելն, Առաջնորդի սպասաւորն Առաջնորդարանի դրան վարագոյրն կը բարձրացնէ, քանզի արդէն առաջնորդարանի սեմոց մօտ էր քահանայն, եւ նշմարելով որ Սրբազանն յանդիման նստած է, ի հարկէ կը պարտաւորի ներս մնանել: "Ի՞նչ կայ տէր Հայր" կը հարցանէ Առաջնորդն, որ արդէն լաւ գիտէր նորա այն տեղւոյն գտանուելոյ պատճառն: "Սրբազան„, կը պատասխանէ Տէր Հայրն, երեսի գոյնն հատեալ եւ կկմալով, "ժողովուրդն կ'առաջարկէ որ վանքն բարեկարգութեան ներքոյ լինի„: Առաջնորդն որ իւր ժողովրդոց եւ քահանայից լաւ կը ճանաչէր, խոժոռեալ դիմօք կը հարցանէ, "մի՞ թէ իմ վանքն անբարեկարգ է, որ դուք կը ցանկայք բարեկարգել„: "Ների՛ր, Սրբազան Հայր„, կը պատասխանէ քահանայն, տխուր եմ ես, որ երբէք վստահացայ այս մասին ձեր ատեանն գալ„: Առաջնորդն կը ծիծաղէ, խղճալով անկասկած՝ խեղճ քահանայի վերայ, որոյ հինգ ընկերքն այդպէս փոքրոգութեամբ շրջիացեալ էին, եւ կը ձայնէ, "Ղազար, (նորա սպասաւորի անունն էր այս) Տէր հօրն բաժակ մի թէյ առը„: Եւ այս թէյն սկիզբն, մէջն, եւ վախճանն հանդիսացաւ սոյն արժանայիշատակ ժողովոյ բարեկարգութեանն, պատգամաւորութեան եւ նոցին հետեւելի արդեանցն:

Ահա հարցանելի է, եթէ վանայ կառավարութիւնն անկարգութեան նկատից չէր; ինչ հարկ կայր ժողով կազմելոյ եւ աղաղակ բառնալոյ, իսկ եթէ իսկապէս կարօտ էր այն բարեկարգութեան, ուրմէն որ երկիւղն կամ անվըստահութիւնն ի բաց կը պահէր զնոսա իւրեանց բարի անօրէնութիւնն եւ նպատակն ի գլուխ հանելոյ: Թադպէոս առաջնորդն ոգեպ մարդ չէր, աշխարհատես եւ փորձառեալ էր, խոհական էր եւ հանճարեղ, եւ սիրող էր բարեկարգութեան, եւ թէեւ ջուղայեցիք ի սկզբանէ իւրեանց թուլութեամբն պարտաւորեալ էին զնա միահեծան իշխանութեամբ վարիլ նոցա հետ, բայց եւ այնպէս, եթէ քանի մի խոհական մարդիկ, քաջութեամբ պատասխանատուութիւն յանձն առնլով, առանց կաղկաթոյ աւագերիցուն, կամ նոյն իսկ Առաջնորդին աչառելոյ, բարեմտութեամբ եւ ազգասիրական հոգւով, իրաց հանգամանքն առաջի դնէին Առաջնորդին, անկասկած՝ եթէ կային անկարգութիւնք, նոյն ինքն Առաջնորդն սիրով եւ յօժարութեամբ աջակից կը լինէր նոցա, անկարգութիւնքն բառնալ, եւ հաստատել ամենայն բարեկարգութիւն: Բայց դիտցուք թէ սա կամ միւս Առաջնորդք, որպէս եղեալ են երբեմն, անձնապաստան եւ յամառ մարդիկ լինէին, եւ ցանկային բռնաւորաբար վարել եւ ժողովրդոց իրաւունքն ոտնակոխ առնել, արդեօք ձայն բազմաց չէ՞ ձայն Աստուծոյ: Ո՞վ է կարող բազմին եւ ընդհանրին հակառակել, երբ իրաւունքն վերջնոյդ կողմանն է, եւ կանգնեալ կան պատասխանատու մարդիկ: Թադաւորք եւ կայսերք իւրեանց գլուխն կը խոնարհեցնեն ընդհանրի ձայնին, Ջուղայու Առաջնորդք, որք միայն հոգեւոր հովիւ են, եւ քարոզ սիրոյ, խաղաղութեան եւ բարեկարգութեան պիտի բռնակալ ցուցանեն զինքեանս: Բայց իրաւունք պահանջելոյ համար, բարեկարգութիւն հաստա-

տելոյ համար, միաբանութիւն, համաձայնութիւն է հարկաւոր։ Անհամաձայնութիւնն՝ հայքս սովոր եմք ասել միշտ, հայ ազգի տարաբախտութիւնն է եղեալ, եւ այս ասութիւնն հեռի չէ ի ճշմարտութենէ։ Կարծեաց անհամաձայնութիւնն մարդկան մէջ բնական է, քանզի ամէն մարդ միեւնոյն իրն կամ առարկայն միեւնոյն հայեցուածոյ կէտից չնշմարէ որպէս միւսն, եւ հետեւապէս մին միւսից տարբեր կարծիք պէտք է ունել, եւ այս յաւէտ լաւ է, քանզի զանազան հայեցուածոյ կէտերից մի առարկայ նկատելով, նորա բոլոր յատկութիւնքն եւ հանգամանքն լաւ եւս կը տեսնուին, եւ յաւել լաւագոյն կարելի է քննել եւ դատել զնոյն։ Բայց այս լաւութիւնն ապարդիւն կը լինի, եւ կը փոխարկուի ի վնասակարութիւն, երբ ամէն մին յամառ եւ կամակոր կը մնայ իւր կարծեաց մէջ, միայն իւր կարծիքն ճշմարտութիւն կը համարի, եւ ոչ միայն կը պահարակի իւր ընկերի կարծիքն որպէս անոտի ինչ եւ անպիտան, այլեւ կը զանայ տալ նմա բնաւ իւրնից տարբեր կարծիք ունելոյ իրաւունքն, զոր ինքն կը պահանջէ։ Եւ այս բանից կը ծագէ յետոյ կրից յուզումն, աւերութիւն, նախանձ, եւ երկպառակութիւն, եւ ի հարկէ, այսու ամենայն բարի առաջարկութեանց եւ ազգօգուտ գործոց արգել եւ խափանումն կը դրուի։ Ա յս պատճառաւ էր, որ վերասացեալ ներքին կառավարութիւնն չունէր այն պտուղն, օգուտն եւ յառաջադիմական ընթացքն, զոր կարող էր ունել, եւ միշտ կը տիրէր իշխանական կողմից ինքնահաճ անկախութիւն, եւ իշխեցելոց կողմից մշտական տրտունջ եւ տժգոհութիւն։ Վերջինքդ ժողով կը գումարէին երբեմն ոեւիցէ ազգային գործոյ համար, այլ անկանոն եւ անբաւարկարգ եղանակաւ։ Ժողովն աթոռակալ չունէր, ժողովոյն առաջարկելն առարկայքն յառաջագոյն չհրատարակէին, եւ ոչ կանոնաւորապէս ժողո-

վոյ յանդիման կը դրուէին այնք: Խառնիխուռն եւ օտար առաջարկութիւնք յառաջ կը բերուէին ըստ քմաց, եւ կը բարձրանայր աղաղակ եւ խառնաձայնութիւն: Մին միւսոյ խօսք կ'ընդհատէր, մին միւսից կը հարցանէր բարկութեամբ, թէ նա ով էր եւ ինչ իրաւունք ունէր ժողովուծն խօսելոյ, եւ պատասխանի կ'ընդունէր թէ ինքն ով էր, եւ լաւ կ'անէր ձայնն կարէր, եւ յետ քանի մի ժամ այսպէս մաքառելոյ, եւ բազմից անարգ եւ յիշոցատուութեան խօսքեր պարսելոյ առ միմեանս, ժողովն կ'արձակուէր, եւ ժողովոյ արդիւնք կը լինէր — ոչինչ: Բայց եթէ իշխանական կողմից հրաւիրեալ լինէր ժողովոյ գումարուծն, եւ մանաւանդ թէ Առաջնորդն եւս նախագահէր, յայնժամ միանգամայն վերոյին հակառակ, յոյժ ակնագրաւ տեսարան մի կ'երեւէր: Ամէն մարդ կը փոխարկուէր կը լինէր որպէս պարզամիտ մանուկ մի, որում ինչ որ պատրիրես պատրաստ է իսկոյն կատարել: Ո՞վ կը վստահանայր բառ մի խօսել կամ կարծիք մի յայտնել: Անմեղ անմռունչ կը նստէին, եւ ինչ որ ժողովոյ յանդիման բերուէր, ամէն ոք պատրաստ եւ յօժարակամ էր իւր հաճութեան քուէն տալ, եւ եթէ հարկաւոր, միոյ փոխարէն երկու: Շատ խաղաղութեամբ եւ բարեկարգութեամբ կ'աւարտուէր ժողովն, թէեւ, որչափ ինձ է յայտնի, բնաւ որ ոք ժողովոյ անցք ի գլուխ չէին անցուցանել, միայն բերանացի ինչ որ վճռեցաւ այն էր, եւ այն բաւական կը համարուէր: Ահա կը կարծէ ոք, որ եթէ այդպէս յօժարութեամբ իւրեանց քուէն ընծայեցին, ուրեմն ժողովոյ անդամքն եւ հաճ եւ հաւան էին բոլոր առաջարկութեանց մասին, եւ բանն վերջացաւ: Բայց ոչ այդպէս: Ժողովատեղիցն դուրս գալն ի բաց, կը բարձրանայր տրտունջ, բողոք եւ աղաղակ: Ուրեմնք չէին հաւան, կ'ասէին, եւ ոչ մի առաջարկութեան: Այդպէս ժողովներ գումարում էին

միայն իւրեանց քուէն խլելոյ համար, այս ինչ կամ այն ինչ առաջարկութիւն ընտասակար էր ժողովրդեան, մին կ'ասէր ինքն բնաւ չպիտի ընդունէր զայն եւ իւր քուէն տալ, եթէ այլքն եւս հակառակէին, միւսն կը հակառակէր ասելով թէ առաջին քուէ տուողն նոյն ինքն էր եղել, եւ այսպէս փնփնթալով եւ միմեանց մեղադրելով կը դառնային տուն։

Մեծ անտարբերութիւն կայր այդ ժամանակում ժողովրդական գործոց մասին։ "Ինձ ի՞նչ„։ "Ես բան չունիմ այդպէս բաների հետ„։ "Իմ անձնական օգուտն ի՞նչ է այդ բանում որ գլուխ ցաւացնեմ„։ "Անօգուտ է միշտ այդպէս եղէլայ եւ կ'ելնի„։ "Այդ բոլոր ջանքն ունայն է, մեզ համար յառաջադիմութեան յոյս չկայ, եւ միշտ յետ ընկանելով պիտի երթանք„։ "Ընդէ՞ր պէտք է գլուխս առանց ցաւելոյ դնեմ Աւետարանի նեղքոյ„։ Այսպէս խօսքեր կը լսուէին միշտ եթէ որ ոք անձն մի ազգօգուտ բան առաջարկէր։ Ինչ որ եղած էր, նոյնն եւս պիտի լինէր, եւ որպէս թէ բախտի վճիռ էր, որ շարժումն կամ յառաջանալն որ ոք բանում, հնարաւորութենից արտաքոյ բան մի էր։ Կը տրտնջէին, բայց կը տրտնջէին բախտի ընդդէմ, եւ ամենայն ինչ կը համարէին ճակատագրոյ բերմունք։ Ու յետոյ մի բան որ շատ զարմանալի էր, այս էր։ Թէեւ արդի ժողովս համեմատաբար փոքրիկ գիւղաքաղաք մի է, բայց բաժանուած լինելով եօթն թաղ, մին թաղեցիք միւս թաղեցւոյ այնպէս տարբեր աչօք կը նայէին, որպէս թէ յատուկ եւ օտար ժողովուրդ լինէին նոքա։ Ամէն թաղ իւր գլխոյ ճարն պիտի տեսնէր վտանգի ժամանակում, կամ ձեւիցէ հարկաւորեալ գործում։ Սովորութիւն էր ասել, "ես Զարովցի, դու Մահլաթցի, ես ով, դու ով„։ Մինչեւ անգամ, ամէն մի թաղ իւր առանձին "դարվաչէք„ կամ փողոցագրունք կամ թաղա-

դրունքն ունէր, զոր փակելով միւս թաղերից կը մեկուսանայր բոլորովին, եւ գիշերն այս դրունք կը փակուէին եւ դժուարին էր մի թաղից առ միւս թաղ գնալ: Պարծելոց էր ոք, թէ իմաստուն ասութեան համեմատ որ "միաբանութիւնն զօրութիւն է„, եթէ Ջուղա պարսպափակ եւ դռնափակ առնելն հարկաւոր էր, (եւ իսկապէս հարկաւոր է այդ ժամանակներում, որոյ վերայ կը խօսեմք), այնպէս կը անօրինէին որ թաղադրունքն փակելովն բոլոր Ջուղայեցիք միացեալ մնային, մինն միւսին օգնելոյ համար, մինչդեռ այդպէս չէր: Շփոթութեան ժամանակում առաջեալ դրունքն փակելով, եօթն թաղքն կը մնային միմեանցից անջատ եւ բաժան, եւ մէն մի պարտական էր զինքն պահպանել եթէ կարող էր: Թէ ընդէ՞ր էր այս այսպէս չգիտեմ, բայց այսպէս էր:

ՆԻՒԹԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Ջուղա շատ աղքատ էր իմ տեսածով: Ամենայն իրաց երժանութիւն էր, բայց դրամոյ թանգութիւն: Հազար թումանն միայն երեւակայելի եւ չափազանց հարստութիւն կը համարուէր, հարիւր թումանն բաւական մեծ գումար էր: Կենաց պիտոյից շատ երժանութիւնն, մի աշխարհի աղքատութեան եւ դրամոյ նուազութեան, յայտնի նշան է միշտ, եւ այսպէս էր յայնժամ Պարսկաստանի մեծ մասին դրութիւնն: Ալիւրն՝ լիտրն վեց Շահով, որ մի Ղռանուոյ գրեթէ չորրորդ մասն էր, ես տեսած եմ վաճառիլ: Իւղն հինգ Ղռանով, խաղողն՝ քսան լիտրն՝ չորս Ղռանով, ընդեղէնք՝ լիտրն տասն ռաճ Շահով, խնձոր, ծիրան եւ այլ պտուղք երկու կամ երեք Շա-

հով: Բայց մի օրական վարձկանի վարձ եւս մի "Փանաբադի" էր, որ այժմեան Ղռանւոյ գրեթէ երրորդ մասն կը համարուի: Գուցէ սխալ լինիմ, բայց ինձ թուի, մի աշխարհում՝ դրամոյ չափն եւ մեծութիւնն եւս նշան է նորա աղքատութեան կամ հարստութեան: Զորք տեսակ արծաթի դրամք կային այդ ժամանակում, եւ սոքա էին Ղռանի, որ 24 սիսեռնակշիռ մաքուր արծաթ ունէր, կամ դոնէ այդպէս կը համարուէր, եւ մի անձեւ եւ անարուեստ կազմուածով դրամ էր, բոլթի եղնգան չափով բայց բոլորակ: Կէս Ղռանի, որ Ղռանւոյ կէս կշիռն ունէր եւ հետեւապէս եւ կէս մեծութիւն: Փանաբադի, զոր Հայք հաւու աչք կը կոչէին, քանզի մեծութեամբ ոչինչ յաւել էր քան զայն, եւ նուազ արժէք ունէր քան կէս Ղռանին, եւ երկու Փանաբադին կը համարուէր մի հազար Ռայիճ դենար: Այս "Ռայիճ" կամ սեաւ եւ ճերմակ բառքն միշտ կը յիշուէին, ցուցանել, որ մի Ռայիճ թուման քսան Փանաբադի էր, եւ ճերմակ թուման քսան կէս Ղռանի կամ տասն Ղռանի: Առեւտրում միշտ յառաջագոյն կը վերջաւորէին, արդեօք ճերմակ թէ ռայիճ էր վճարելի գումարն: Ճերմակ Շահի, որ թղթոյ նրբութեամբ Ղռանւոյ չափով մի դրամ էր, որոյ արժէքն էր հինգ պղնձի դրամ, եւ քառասուն եւ վեց պղնձի դրամ կը կազմէին մի Ղռանի: Ճերմակ Շահին հազիւ առեւտրում կը պիտոյանայր, Հայք միայն կը պահէին զայն՝ քահանային, յիշենք, պաշտօնէից, կամ տնօրհնէնքի աջհամբոյր տալ: Ոսկի դրամ եւս կայր, որոյ արժէքն, ըստ օրինի, պիտի տասն Ղռանի կամ մի Թուման լինէր, բայց որովհետեւ այն եւս անձեւ եւ անարուեստ էր շինուած, ձեռնէ ի ձեռն անցանելով ամէն ոք, եթէ այդպէս ցանկանայր, մի փոքր կը խուզէր նորա եզերքէն, եւ կշիռն կը

պակասէր, վասն որոյ առանց կշռելոյ, եւ պակասորդն գնդելոյ իսկական արժէքից, հնար չէր գործադրել զայն: Այսպէս էին Պարսից դրամքն յայնժամ, եւ մեծագումար դրամոյ երես տեսնելն շատ հազուագիւտ դէպք էր, յատկապէս Ջուղայու մէջ: Հնդկաստանից եկող, կամ Հնդկաստանում ազգական ունող մարդկան մէջ, երբեմն քանի մի հարիւր Թուման ձայն կը լսուէր, բայց բաւական զարմանալի բան կ'երեւէր այն, եւ կը մտածէին բազումք թէ այդքան մեծ գումար մի որպէս պիտի կարողանայր ծախել ունողն: Մի Արասին, որ մի Ղռանուց հինգերորդ մասն էր, բաւական արժէք ունէր, եւ մի Արասով բաւական բանջարեղէն հնար էր գնել Ջուղայու Մէդան ասացեալ շուկայից, որ շաբաթ մի բաւական լինէր վասն չափաւոր թուով ընտանեաց միոյ: Ձայս փորձով ասեմ: Մի սպասաւորի վարձ, ութ կամ տասն Ղռանի էր առ ամին, եւ մի սպասաւոր՝ կը նշանակէր հասարակօրէն, տասն աւելացու, խոհարար, ձիադարման, պարտիզպան եւն եւն: Դպրոցայց գլխաւոր վարժապետաց վարձն էր երեսուն կամ քառասուն Թուման առ տարին, եւ օգնական ուսուցչաց վարձն ի չորս Թումանէ սկսեալ մինչ 18 Թուման առ տարին: Հարիւր Թուման վարձ առ տարին, երբէք լսուած չէր, զոր դուած լինէր ոք ուրիցէ պաշտօնի ծառայելով: Եթէ սխալ չլինիմ դուցէ տասն ընտանիք իսկ չկային ի Ջուղա, որոց տարեկան ծախքն յաւել լինէր քան մի հարիւր Թուման, բայց 15 եւ 20 Թումանով կենցաղավարուող ընտանիք եւս կային:

Արհեստից մասին՝ ոսկերչական արուեստն բաւական շահատու էր երբեմն, եւ բազումք կը պարապէին այս գործումբ, բայց մի ժիր աշխատաւորի վարձ եւս, օրական կէս Ղռանից յաւել չէր: Այլ յետոյ երբ եւրոպական մեքենա-

հիւս պատահեղէնքն սկսան ներմուծանիլ ի Պարսկաստան, շուտով սկսաւ նուազիլ այս արհեստն։ Ոմանք կը պարապէին ոսկերչութեամբ, եւ քանի մի եւս հիւանութեամբ կամ փայտագործութեամբ, այլ երկու արհեստուն եւս այնչափ ճարտար եւ հմուտ չէին արհեստաւորքն, եւ հասարակ եւ պարզ իրք միայն կարող էին շինել, բայց եւ այնպէս կը կարողանային իւրեանց աշխատութեան արդեամբքն կենցաղավարիլ։ Վաճառի եւ առեւտրոյ մասին, գրեթէ բոլորն իւրեանց՝ Ջուղայեցւոց եւ գիւղացի Հայոց մէջ էր փակուած, քանի մի բացառութեամբ։ Կային քանի մի մանգործք, նալարավաճառք՝ որք խանութ ունէին, հացավաճառք, կօշկակարք, եւ փերեզակք։ Վերջինքդ մանրամասն իրք գնելով կը տանէին Փէրիոյ կամ Զարմահալայ հայաբնակ գիւղերն, եւ յորենւոյ, գարւոյ, պանրոյ եւ այլ այսպիսեաց հետ կը փոխանակէին։ Աստ միտս կը գայ ծիծաղելի անցք մի վերաբերութեամբ մեր թաղում եղած փերեզակաց միոյն։ Ծերուկն անձն մի էր սա, եւ ամէն տարի վեց ամիս Հայոց գիւղօրէից մէջ կը շրջէր։ Մի օր գալով մեր տուն, ասաց եղբօրս, "Ցէր Հայր գեղ գնալու վերայ եմ, կը խնդրեմ մի քանի հատ թուղթ գրես իմ բերանովն մեր Շուշանին, որ հետս տանեմ„ (Շուշանն իւր կինն էր)։ Եղբայրս չէր հասկանար թէ ծերունին ինչ կը ցանկայր ասել, եւ բացատրութիւն հարցանելով, "Ձես տեսանե՞ „ ասաց ծերունին, "ես անց վեց ամիս գեղում մնանան եմ, եւ Շուշանն իմ լուրն չլսելով մտածմանց մէջ է լինում, վասն որոյ եթէ շնորհես մի քանի հատ թուղթ գրես, գիտես ես գրել չեմ կարող, եւ թղթոյ մէջ ասես որ ես դինջ եմ, եւ բանս յաջող է, ես այդ թղթերն կ'առնում հետս կը տանեմ, եւ երբ գալոցող լինի, ամիսն մի հատ յետ կ'ուղարկեմ Շուշանին եւ միամիտ կը մնայ նա։„ Զյիշեմ, արդեօք եղբայրս

այս զարմանալի թղթերն գրեաց թէ ոչ, այլ միշտ զմայլած եմ ես այդ մեր ծերունւոյ մտաց հնարագիտութեան վերայ, եւ գուցէ կը զմայլի եւ ընթերցողդ։

Այդ ժամանակում, որպէս երեւէր, Պարսիկք գուլպայ գործելոյ արհեստին դեռ տեղեակ չէին, եւ եթէ սխալ չլինեմ, գրեթէ բոլոր Պարսկաստանի հարկաւորեալ գուլպայն միայն Ջուղա կը մատակարէր, կարծեմ մերձ երկու հազար Թուման, եթէ յաւել ոչ, այս մի հատիկ աշխատութիւնն գրամ կը բերէր Ջուղայու մէջ, օտարի քսակից, եւ այս աշխատութիւնն, ի մեծ գովեստ նոցա, միայն Ջուղայեցի իգական սեռի մատանց գործն էր, շատ ամօթ էր համարելի արական սեռին բնաւ պարապել այս աշխատութեամբ, չգիտեմ ընդէ՞ր։ Կային այլի եւ անտերունչ կանայք, որք գիշեր՝ ցերեկ անխոնջ վաստակելով, իւրեանց գուլպայից գնոմէն միայն կը հոգային իւրեանց եւ զաւակաց ապրուստն, եւ այսպիսեաց թիւն պակաս եւս չէր։ Ո՛չ այսչափ միայն, այլ եւ քանի՛ քանի անձինք որք դալալ կը կոչուէին, այս գուլպայի առեւտրոմէն կը գտանէին իւրեանց ապրուստն, եւ այս դալալներից ոմանք, ժամանակի համեմատ հարուստ եւս կը կոչուէին, ինձ թուի, թէ այդ ժամանակում, այս իգական սեռի ձեռագործով, յաւել գրամ կը մտանէր ի Ջուղա, քան արական սեռի աշխատութեամբ։ Վերջնոյդ աշխատութեան արդիւնքն փակուած էին բոլորովին նոյն իսկ Ջուղայեցւոց մէջ, այսինքն մի Հայ աշխատելով, միւս Հայից իւր վաստակոյ վարձն կը գտանէր։ Հայ խանութապանի կամ մանգործի, կամ հացավաճառի յաճախորդքն՝ միայն Հայք էին, եւ հետեւապէս միշտ Հայի գրաճն էր, որ Հայի ծոց կը մտնէր, օտարից ներմուծութիւն չկայր, բայց գուլպայից վաճառից յառաջ եկեալ գրաճն բոլորովին օտարի քսակից էր, եւ յաւելուճն Ջու-

ղայու հարստութեան, կամ յաւել լաւ է ասել ի գարմանն Ջուղայու աղքատութեան: Եւ այո՛, կայր ժամանակ, որ առանց այս մեծ օդնականութեան, առանց այս գովելի աշխատասիրութեան արդեանցն, շատ ընտանիք, Ջուղայու մէջ, բոլորովին անապրուստ կը ճնային: Թող ասենք ուրեմն, գովեստ Ջուղայու կանանց, գովեստ նոցա ժրաղլուխ աշխատասիրութեանն, բայց այս մասին դեռ ունիմ խօսել յետոյ:

Գինեվաճառութիւնն եւս միւս մի աղբիւր էր արտաքուստ դրամ բերելոյ Ջուղայու մէջ: Բայց անարգ եւ արհամարհ գործ մի կը համարուէր, քանզի ստոր եւ անկարգ եղանակաւ կը կատարուէր այն: Միշտ ստոր է այս առեւտրոյ մանրավաճառութիւնն, ամէն աշխարհում, բայց հնար էր օրինաւոր վաճառականութիւն կազմել այնու, մանաւանդ զի, որպէս թէ մենավաճառութիւն էր Հայոց ձեռքում, եւ Պարսիկք չկարէին միջամուխ լինել: Բաւական մեծ եկամտի աղբիւր կարէր լինիլ այս Ջուղայեցւոց համար, որ ոչ սակաւ ընտիր խաղողոյ այգիք ունէին, բայց այդպէս չէր: Մին՝ որ այս այգիքն թէ եւ բարեբեր ընտիր տեսակ խաղողք ունէին, բայց Ջուղայեցիք կը պահէին եւ կը կառավարէին նոյն այգիքն ոչ այնպէս գործնական միջոցաւ, որ շահու եւ եկամտի աղբիւր լինէր, քան որչափ զբօսանաց եւ վայելչութեան տեղի: Զկամիմ ասել բոլորովին անշահատու էին, այլ հնար էր շատ առաւել շահատու առնել քան որչափ էին այն ժամանակում: Ոչ միայն գիտնական եղանակաւ չէր այգեաց մշակութիւնն, իմանալ իւրաքանչիւր գետնոց եւ տնկոյ յատկութիւն եւ որպիսութիւն, եւ ըստ արժանւոյն ջրել, րրել, եւ հողն պարարտացնել, եւն. բայց եւ նախահայեցութիւն գործ չդնելով, շատ անգամ բոլոր որթոց տունկքն ի ցրտոյ կը

չորանային, եւ երկու կամ երեք տարի կը տեւէր մինչ նորաբոյս որթքն դարձեալ պտղաբեր լինէին: Այլ աշխարհներուն, ուր ձմեռն խիստ ցուրտ լինի, որթքն գետին ձգելով հողով ծածկուած են, եւ այնպէս ցրտից ազատ են լինում: Իսկ գինւոյ պատրաստութեան մասին եւս, իրաւ որ շատ մի նախադասեան եղանակաւ էր այն: Կամ եւս լաւ է ասել Նոյեան եղանակաւ. քանզի եթէ Նոյ, որպէս պատմեն Սուրբ գիրք, գինի ունէր եւ մի օր չափից յաւել ըմպելով՝ այն ինչ արար, զոր չպիտէր առնել, պիտի իւր խաղողն ճմլած լինէր ձեռնով կամ ոտքով, լցած լինէր զայն մի թակոյկի կամ այլ անօթոյ մէջ, եւ յետ եռն դադարելոյ պարզած լինէր մի կտոր թանձր պաստառով, եւ ջուղայեցիք եւս այսպէս կը պատրաստէին իւրեանց գինին: Այն զգուշութիւնն, որ հարկաւոր էր տհաս պտուղքն ի բաց հատանել լաւ եւ հասունացելոց միջից, որպէս զի առաջնոյ թթութիւնն չընաշէր միւսոյն, եւ յետոյ բոլորովին մաքրել կարասներն անցեալ տարւոյ մրրից եւ կծուեալ հիւթից, եւ մի տեսակ խողողն միւսոյն յարմարել, որպէս զի նոցա միաւորութիւնն գինւոյն անուշութիւն տայր, այդպիսի բան չկայր: Ոտանիխուռն կը լծէին հնձանի մէջ, ոտքով կը կոխոտէին զայն, եւ կը ձգէին կարասի մէջ: Պարզելն եւս շատ անկատար էր, քանզի կը մղէին զայն միանգամ կամ երկից խոշոր կտաւեայ քսակով, որով անհնար էր երբեք արգելել բաւական մրուր գինւոյ մէջ մնալն, եւ հետեւապէս, միշտ գինին յետ ժամանակի ինչ կը սկսաներ պղտորիլ: Եւ շատ փոքր գինի բաւական հնանալ կարող էր, կը թթուէր եւ յետոյ քացախ կը լինէր: Երեք տեսակ գինի կային, յորոց մին կը կոչուէր "Քիշմիշ", որ այդ անուամբ խաղողից կը պատրաստուէր — ժժգոյն բայց բաւական զօրաւոր գինի —: Միւսն կը կոչուէր "Ալեւանդ", որ

երկու տեսակ խաղողից խառն կը շինուէր, եւ այլ միւս՝ "Թառաքի„, որ յոյժ յեղին տեսակն էր, եւ տարի մի եւս չկարէր տեւել առանց քացախելոյ: Մինչդեռ այդքան տեսակ տեսակ գեղեցիկ խաղողներից, զոր Ջուղայու այգիքն կ'արտադրեն, յարմարաւոր բաղադրութեամբ, հնար էր բազում ընտիր ընտիր եւրոպական գինեաց նման գինիք պատրաստել, որոց երկոտասան շիշքն որ իրր մի եւ կէս Ասպահանայ լտեր ծանրութիւնն կը պարունակեն, այս աշխարհներում, քառասնից մինչ եօթանասուն Ռուփովք կը վաճառուին, որ կը նշանակէ փոքր յաւել պակաս, 13ից մինչ 21 Թուման: Ցեղոյ գինւոյ ոգին կամ օղին եւս, միայն մի եղանակ ունէր պատրաստուման, եւ միայն մի անուն ունէր, այն է. "Էրաղ„ կամ "Արաղ„, որ պարսկական բառ է, — մի չոր ու ցամաք կսկծեցուցիչ ոգի, որ ըմպողի բերանից սկսեալ մինչ փորոտիքն այրելով կ'երթայր: Մինչդեռ հինչ պատուական Բրանդի, Լիկիոր, եւ այլ բազմատեսակ ըմպելիք հնար էր կազմել: Ներանի թէ քանի մի ձեռնահաս Ջուղայեցիք, իւրեանց պատանեակ որդւոց ուղարկէին Եւրոպա, գինի եւ այլ տեսակ ըմպելիք պատրաստել սովորելոյ նպատակաւ, եւ ոչ միայն այդ, այլ եւ սովորել զանազան պղպեղից քաղցրաւենիք եւ անուշեղէնք կազմելոյ եղանակն, ինձ թուի մեծ շահու եւ հակամտի աղբիւր կը գոյանայր ասոնք: Այն ժամանակներում ամէն բերանից այս միայն կը լսուէր, "Բանուգործ չկայ, աշխատանաց ճանապարհ չկայ, մարդ ի՞նչ անի„: Բայց ոչ ոք չմտածէր թէ փոքր մի շարժուածն, թէ փոքր մի նորութիւն յառաջ բերել արժան էր: Որ ինչ հարիւրաւոր ամօք եղած էր, նոյնն իսկ կը շարունակէր, զոր ինչ հայրն արարեալ էր որդին նոյն կ'առնէր, եւ բնականաբար յառաջադիմութեան նշան բնաւ չերեւէր:

Միւս մի արտաքուստ դրամ մուծանելոյ միջոցն ի Ջուղա, էր Հնդկաստան։ Հարիւրաւոր տարիքներէ հետէ կը շարունակէր այս, եւ կը շարունակէ դեռ մինչ ցայժմ։ Ոմանց կարծիք էր թէ Հնդկաստանի դրամն յաւել վնաս էր եղած միշտ Ջուղայուն քան օգուտ, բայց դժուար է հասկանալ թէ ընդհ՚ պիտի այսպէս լինէր։ Ջուղայոյ հիմնարկութիւնից մինչ արդ, Հնդկաստանից յաւել դրամ է մտած ի Ջուղա քան այլ ո՛ եւ իցէ աղբերից, եւ չսխալիմ ասել, որ այն զի դեռ Ջուղա կանգուն է, այս մշտական աղբեր մեծ օգնականութեամբն է։ Ստուգիւ կարեմ ասել, զի կեռումս յոր գրեմ զայս, միայն Կալկաթոյ Մարդասիրական ձեռնարկից ելեալ մանկունքն, որք այժմ զարգացեալ կը պարապին աշխատանօք ի Հնդկաստան եւ ի Ջաւա, տարեկան երկքից երեք հազար Թուման, եթէ ոչ յաւել, ի մեծ գովեստ եւ ի պատիւ իւրեանց, դրամական օգնականութիւն կը տան Ջուղայուն, իւրեանց ընտանեաց եւ ազգականաց մխիթարելով։ Ոսկ հին ժամանակաց մասին, թողլ ընթերցողն կարդայ հանգուցեալ բարեյիշատակ Ց. Թ. Տէր Օհանեանի Ջուղայու պատմութիւնն։ Բայց եթէ նոքա որք կ՚ասէին, եւ գուցէ եւ այժմ կ՚ասեն, որ Հնդկաստանայ դրամն վնասեալ է Ջուղայուն, կը ցանկանամ ասել որ մասամբ ծուլութեան հոգի է ներշնչեալ ոմանց Ջուղայեցւոց մէջ, ուրեմն նոցա ասութիւնն հեռի չէ ի ճշմարտութենէ։ Իմ տեսածով կային ոմանք մարդիկ ի Ջուղա, որ բնաւ բանուգործ չունէին, եւ բոլորովին պարապորդութեամբ կ՚անցուցանէին իւրեանց կեանքն, եւ եթէ հարց լինէր թէ դոքա ինչպէս են կենցաղավարման առանց աշխատանաց, պատասխանին այս էր թէ Հնդկաստանից՝ տարեկան այսքան կամ այնքան դրամ կը գտանէին, եւ սոքա կը համարուէին աղնուական կամ վերագոյն դասու մարդիկ։

Եթէ որքան որ Հնդկաստանէց դրամ է մտել Ջուղայու մէջ, նորա կէսն եւս մնացած լինէր, անտարակոյս նոր Ջուղայեցիք բոլոր աշխարհի Հայոց կարգում հարստագոյնն կը լինէին։ Բայց սովորութիւն էր ասել, որ "Հնդկաստանայ դրամն "Բարաքաթ„ չունի„։ Բարաքաթ բառի նշանակութիւնն չգիտեմ, այլ կարծեմ ասողքն կամէին նշանակել այնու իբր զի տեւականութիւն չունի, կամ առատանալ չէ կարող։ Եւ ճշմարիտ էր այս ասութիւնն ըստ իւրեանց հայեցուածոյ։ Քանզի ի՞նչպէս է կարող դրամն, թէ որքան եւ մեծագումար լինի, տեւել կամ շատանալ, երբ անդադար կը ծախուի այն առանց ջանալոյ մի կամ միւս եղանակաւ արդիւնաւորելոյ զայն։ Սակայն Հնդկաստանայ դրամն չէ յատկապէս, որ այսպէս ի հանգամանաց ներքոյ "Բարաքաթ„ չէ կարող ունիլ, այլ ո՛ եւ իցէ դրամ նոյնպէս անբարաքաթ է լինելոց։ Ցաւն, քան եւ մինչ երեսուն հազար Հնդկաստանայ Ռուփովք եւս մարդիկ մտելն ի Ջուղայ, եւ այն ժամանակներում մեծագանձ հարստութիւն մի էր այս, բայց վախճանն նոյն է եղել, այսինքն Բարաքաթ չի ունեցել, եւ ի վերջոյ աներեւութացեալ է այն բոլորովին, ոչ շատ տարեաց միջոցում։ Եւ միթէ բնական օրէնք չէ այս։ Մի մեծ լեճ եւս, եթէ իւրմէ շատ կամ նուազ բղխումն չունի, եթէ դրդալով եւս անդադար ջուր վեր առնուս, ի վերջոյ պիտի ցամաքի։ Ի հարկէ միշտ կը գանգատէին իբր զի աշխատանաց միջոց չկայր, եւ դրամագլուխն արդիւնք չէր բերում, բայց այս ասութիւնն եթէ ուղիղ լինէր, ուրեմն Պարսից մէջ եւս նոյն պէտք է լինէր, այսինքն Ասպահանայ Պարսից մէջ, որ դրացի են Ջուղայեցւոց, եւ վասն որոյ բնաւ դրամագլխոյ տէր մարդիկ չպիտէր գտանուէին նոցա մէջ, եւ բոլորքն պէտք էր լինէին աղքատ։ Բայց միթէ այդպէս էր։ Միթէ բաղում հարուստ

մարդիկ եւ վաճառականք չկային նոցա մէջ, եւ հասարակ ժողովուրդքն եւս, թէ եւ Հնդկաստանից դրամ չգտանէին, միթէ իւրեանց վճռակի համեմատ չապրէի՞ն մխիթար: Այո՛, անուրանալի է, որ կրօնական խստութեան պատճառաւ, Հայք այնչափ աղատ չէին գերմակ առեւտրում, բայց ամենայն աշխատանաց դրունք կամ միջոցք փակ չէին նոցա համար: Վաճառականութեան եւ այլ զանազան առեւտրոց ճանապարհք բաց էին, եւ նոքա որք կը ցանկային աշխատել, կը կարողանային աշխատել: Բայց աշխատելն բաւական չէ, մեծ գաղտնիքն աշխատանաց համեմատ կենցաղավարին է, կամ որպէս նոյն ինքն Ջուղայեցիք կասէին, "Վէսէլի համեմատ ոսքն ձգելն„ է:

Կային քանի քանի անձինք ի Ջուղա, որք բոլորովին Հնդկաստանից անկախ էին, բնաւ երբէք Հնդկաստանի դրամ երես տեսած չէին, եւ դեռեւս օրինաւոր առեւտրով եւ աշխատանօք կը պարապէին, եւ պատուով եւ մխիթարութեամբ կը կենցաղավարուէին, կարողացած էին դրամագլուխ եւս հաստատել իւրեանց համար, եւ չափաւորապէս հարստանալ: Թէեւ անուանց յիշատակութիւնք դուցէ անյարմար երեւին ասա, բայց ի պատիւ նոցա, չկարեմ քան յիշատակել, եւ յարգանօք յիշատակել, մի երկու այսպիսի արժանաւորաց անուանք, որոց վերայ խօսքս կայ: Սոքա էին Յօհնսարեանց Աբրահամն եւ որդիք իւր, Յատուր Աղանեան եւ որդիք իւր, երկու եղբայրք, որք Ռուս կը կոչուէին, եւ որոց իսկ անունն չմոռանամ, եւ այլք քանիք, որ արտաքին առեւտրովք ի Թէհրան եւ այլուր, Ջուղայու մէջ դրամ կը բերէին, եւ պատիւ եւ օգուտ էին իւրեանց, եւ պատիւ եւ օգուտ Ջուղայու համար: Բայց, աւաղ, աշխուժականաց եւ երեւելեաց դասուճն չէին սոքա, Հնդկաստանից դրամ դառնողաց

մօտ այնչափ մեծ յարգ եւ արժէք չունէին, քանզի սոքա
չափաւորութեամբ կ'ապրէին, միշտ իւրեանց գործով
զբաղած էին, կամ ի ջուղա կամ այլուր, եւ իւրեանց
յերեւան հանել, կամ "մեծմեծանալ" չգիտէին, որ ի
հարկէ նոցա յաջողութեան միմիայն գաղտնիքն էր: Բայց
Հնդկաստանից դրամ գտանողն, կամ Հնդկաստանից փոքր
կամ շատ դրամով վերադարձողն, այլ ոմն էր: Նա որ
անուն չէր ունեցած երբեք, այժմ պիտէր անուն եւ համ-
բաւ ստանալ, եւ նա որ արդէն անգամ մի անուն էր
հաստատել, պիտի պահպաններ զայն: Վասն որոյ դրամոյ
լինայութիւն առնել, կամ գործոյ եւ աշխատանաց ծա-
ռայեցուցանել զայն անկարելի էր: Կոչունք եւ հանդիսա-
կատարութիւնք պիտի տեղի առնուին, ընկերական զուար-
ճութիւնք, զբօսանք եւն եւն, եւ մեծաճախութեամբ,
համեմատաբար իւրեանց քսակին փոքր կամ երկար ժա-
մանակում, վախճանն միշտ զարմանք էր թէ ինչպէս վեր-
ջացաւ իւրեանց դրամն: Եւ յետոյ կը սկսանէին տրտնջել,
եւ հայհոյել, ասելով, "Որքան կայր եկին կերան եւ
խմեցին, եւ այժմ մահլ եւս չեն գձում„: Զմտածելով
որ մեղքն իւրն էր: Բայց այս եւս պիտի ասեմ որ նոցա
բարձակից եւ ընկերակիցքն եւս անմեղ չէին, քանզի սով-
րութիւն էր ի ջուղա, որ ով որ լինէր, թէ ինչ եղա-
նակաւ եւս փոքր մի գումար ձեռ բերած լինէր, եւ Հնդ-
կաստանից վերադառնայր, պատրաստ էին շողոմութեամբ
եւ բարեկամական ցոյցքով օգնել նմա այն դրամ ծախե-
լում որչափ շուտով եւ կարելի էր: Թէ յառաջն ով էր
եղած նա կամ ինչ, այդ փոյթ չէր, որքան որ դրամն կը
տեւէր, ազնուականաց դասակարգի մարդ էր, պարոն էր,
եւ մանրիմ ձեւով կը տրփացնէին նորա մէջքին, եւ ամէն
օր զուարճութիւն էր եւ զբօսանք, մինչ երբ աղքատա-

ցաւ, յայնժամ կը խոնարհէր հանդարտութեամբ առ իւր նախկին աստիճանն, բայց ամօթ համարելով զայն, քանզի ի բարձրութենէ խոնարհեալ էր արդ, կը փախչէր ի բաց դարձեալ ի Հնդկաստան, ուր ջանաց դրամ գտանել կրկին, եւ վերստանայր իւր վաղանցիկ համբաւն եւ պատիւն զոր միայն այդչափ կարճ ժամանակ կարողացաւ վայելել:

Այսպիսի տարաբախտից մին կը յիշեմ ես: Ի Ջուղա էի, երբ Հնդկաստանից վերադարձաւ նա յետ երկար տարիք պանդխտութիւն կրելոյ, եւ այս պանդխտութեան ժամանակում, որպէս ասպա լսեցայ, շատ վաստակով մի ստոր ծառայութեան մէջ, կարողացել էր մի քանի հազար Ռուփի բերել իւր հետ: Սա յառաջն ոստայնանկ էր, աղքատ եւ օրական ապրուստ հազիւ աշխատող մի մարդ, եւ աշնուականաց դասից շատ հեռի, եւ ստոր: Անունն, ասենք թէ, Կրպօ կը կոչէին: Բայց եկ տես արդ, երբ Հնդկաստանից վերադարձաւ բանն ինչ տեսակ փոխարկուեց: Ճանկարծ լուր տարածուեց թէ Պարոն Կարապետ եկաւ, եւ մեծ հարստութեամբ: Ի՞նչ Պարոն Կարապետ, ի՞նչ Պարոն Կարապետ, կը հարցանէին մին միւսից, մինչ ի վերջոյ յայտնուեց, որ Կրպօն էր, որ այժմ Պարոն Կարապետ էր եղել: Մենք չունեցանք նորա հետ բարեկամանալոյ արժանաւորութիւնն, եւ նորա առատաձեռն հիւրասիրութիւնն վայելելոյ, բայց կը լսէինք որ Պարոն Կարապետն կը փայլէր իւր բարեկամասիրութեամբ, եւ իւր բարեկամքն պատուասիրելովն: Կը վայելէր ինքն, եւ վայելել կու տայր բոլորին ընկերական ինջոյք եւ զբօսանք, եւ այս ժամանակում հեռացայ ես ի Ջուղայէ: Միւս անգամ որ Պարոն Կարապետին տեսի, տեսարանն ի զաւեշտականէն առ եղերերգականն էր փոխարկուած: Կալկաթայ Հայոց հիւրանոցումն էր, ի սպառ

էքաւոր, անգործ, տարտամեալ եւ տարակուսեալ, եւ անդ յետ ժամանակ մի մնալոյ, յանկարծ փորբերանի հիւանդութեամբ մեռաւ մի գիշերուն թողնելով ի Զուղա կին եւ մանկունք յետին թշուառութեան մէջ: Ահա այսպէս էր որ Հնդկաստանայ դրամն „բարաքաթ„ չունէր, եւ ուստի՞ պէտք է ունենար այսպէս չարաչար գործածելով:

Մի բան եւս միտքս կը գայ այդ մասին, որ միտապէս կը դանգատէին թէ բանուգործ եւ աշխատանաց ձանապարհ չկայր: Մի խմբի կամ ժողովրդոյ համար երկու միջոց կայ հարստանալոյ: Մին՝ դրսից կամ օտարից դրամ ներս բերել իւրեանց մէջ, եւ միւս՝ որքան կարելի է թոյլ չտալ իւրեանց ձեռքում եղեալն գնալ օտարի քսակ: Զուղայու աղքատութեան պատճառն, ինձ թուի այն էր, զի առաջինն որքան նուազ էր ի պատճառս անաշխատութեան, երկրորդն աղատ էր եւ շարունակ, եւ թէեւ կային ինչ ինչ միջոցք, որով հնար էր խափան դնել նոյն շարունակ դրամ դուրս գնալոյն իւրեանց խմբի միջից, բայց կամ փոյթ չունէին առնել զայն, կամ ոչ ոք միտք չէր ձգեալ առ այն: Օրինակի համար, որպէս վերն ասացաւ, Զուղայեցիք միշտ սիրող են եղած մեծածախ շինուածքներ շինելոյ, եւ գրեթէ միշտ թէ նոր շինութիւնք եւ թէ նորոգութիւնք կը շարունակէին ի Զուղա, բայց զարմանալի էր, որ մի հատ եւս հայ շինութեան ձարտարապետ չկայր Զուղայում: Բեռնակիրք եւ վարձկանք հայք էին, որք շինութեանց համար կաւ եւ աղիւս եւ այլ նիւթք, տարժանելի վաստակով կը տանէին ի վեր երկայն սանդղոց վերայ, այլ ձարտարապետն, եւ շինողն Պարսիկք էին, նոյնպէս եւ նոցա օգնականքն: Սոքա գրագէտ եւ ուսեալ մարդիկ չէին, եւ ոչ երեւելի դպրոցում կրթեալ ձարտարապետութեան արհեստում, այլ մին միւսին աշակերտելով սովորեալ էին եւ հմտացեալ

արհեստին։ Գլխաւոր ճարտարապետն այն ժամանակ, օրական 10 ղուռնի վարձ կը գտանէր, միայն վերահասութիւն տալոյ համար որ շինութիւնն ուղիղ ըստ յատակագծին ընթանայր, եւ օրական կէս կամ մի ժամ յաւել ներկայ չէր լինել։ Շինողք, կամ "ուստայքն„, որպէս կը կոչուէին, եւ որոց քանից ոմանց անուանքն դեռ կը յիշեմ եւ տեսած եմ, որպիսի են՝ ուստա Աբբաս, ուստա Զէնէլաբդին, ուստա Մէհդի, եւն, օրական երկքից երեք ղուռնի վարձ կը գտանէին, եւ ամենայն տեսակ պարզ կամ գեղարուեստական շինութիւնք կարող էին շինել։ Եթէ սխալ չլինիմ, վեր յիշեալ երեք հոգին գրեթէ միշտ Ջուղայում կ'աշխատէին։ Այժմ հարցանելի է թէ արդեօք Ջուղայեցիք բաւական ուշիմութիւն չունէին այս արհեստն սովորել, եւ գոնէ այս մի միջոցաւ իւրեանց դրամն իւրեանց խմբի մէջ պահել, թէ ամեթ կը համարէին ինքեանց սովորել։ Հաւատալի է՞ թէ Զէնէլաբդնի պէս անձն, զոր ճշդիւ կը յիշեմ, մի ռամիկ, տգէտ մարդ էր, կարողացած էր սովորել այս արհեստն, եւ Ջուղայու ուշիմ պատանիքն անկարող էին։ Թող այս հարցման ընթերցողն պատասխանէ, եւ նաեւ վկայէ թէ արդեօք շինութեան ճարտարապետութիւնն ստոր արհեստ է։ Ուր լեմն չսովորելոյ պատճառն այլ ինչ էր։

Սխալեցի ես ասելով, որ Հայոց մէջ մի հատ եւս շինութեան ճարտարապետ եղած չէ։ Եղած է ժամանակաւ Ինդիրէդ անուամբ Հայ ճարտարապետ մի, այլ ես բարեբախտութիւն չեմ ունեցած տեսանել իւրն։ Գիւղացի է եղած սա եւ ոչ Ջուղայեցի։ Նա կը պատմէին սորա մասին, որ ընդհանրապէս լաւ որմնադիր էր, բայց երբ յարկի կազմութեանն հասանէր, խղճմտանօք մարդ էր։ Նիսաւարտ կամ լրանալոյ ժամանակում յանկարծ կը ձայ-

նէր, "այ տղերք, ձեր արիւնն ձեր գլուխն վախէք" ինքն բոլորիցն յառաջ վազելով, եւ յարկն կը փչէր: Սորա որդւոյն տեսածեմ ես, որ Ղևսէի նման, հօր մաշկեակն իւր վերայ էր առեալ: Մեր թաղում մի տան մէջ "Ֆառշի" մի մանն փչեալ էր առ գինեառունն, եւ սորան կոչեալ էին փչեալն նորոգել: Չգիտեմ քանի օր էր աշխատել, այլ այն օր որ ըստ դիպաց ես ներկայ գտանուեցի ասացեալ տան մէջ, արդէն փչեալ յարկի փոխարէն, նորն էր շինեալ, եւ կղմնարով ծածկում էր նորին վերին կողմն: Ցան բնակիչ պատանեակ մի, եւ ես, կանգնեալ հետամտութեամբ նշմարում էինք շինութեան գործն, եւ մինչ այնպէս կը նայինք, յանկարծ տեսինք որ ճարտարապետն աներեւութացաւ ի միջոյ, մեր ոտից մօտ մի մեծ ծակ բացուելով: Բարեբախտաբար շատ բարձր չէր յարկն գինեատն յատակից, եւ զարմացած վայր նայելով, տեսինք որ ինքն եւս զարմացած ի վեր կը նայէր առ մեզ, եւ այնչափ մի ծիծաղելի տեսարան էր, որ մեր ծիծաղին ինքն եւս ձայնակից եղեւ, եւ շինութիւն սկսաւ ի նորոյ դարձեալ: Ողորմի իւրեանց հոգւոյն, ծաղր չեմ անում, այլ ջուղայեցիք եթէ ցանկան, կարող են իւրեանց միջից արտադրել յաւել թուով, եւ յաւել քաջակիրթ շինօղք եւ ճարտարապետք, որք կարողանան ոչ միայն ջուղայու շինութիւնքն իւրեանք կազմել, այլ եւ առաւել ճարտարութեամբ Պարսից դրամ եւս քսակել, մրցելով նոցա ճարտարապետաց հետ: Միայն աշխատասիրութեան հոգի է հարկաւոր եւ ոչ այլ ինչ: Կան եւ այլ այսպիսի արհեստք եւ աշխատանաց միջոցք, որոց ուսանել, եւ այնու դրամ աշխատելն, ոչ անհնարին է, ոչ շատ դժուար է եւ ոչ ամօթ:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔ

Շատ պարզ եւ գրեթէ նահապետական էր Զուղայեցւոց ընտանեկան կեանքն: Ընտանեաց հայրն, կամ եթէ նա կենդանի չէր, մայրն կամ անպրանիկ որդին գլուխ կը համարուէր ընտանեաց բոլոր անդամոց, եւ վերջինքդ եղբարք՝ քորք հարսունք, բոլորն սիրայօժար կը պատահէին նորան: Ներեմն երեք չորք եղբարք, իւրեանց ամուսնով եւ զաւակօք միեւնոյն հայրենական տան մէջ ի միասին կը բնակուէին սիրով եւ խաղաղութեամբ իւրեանց ծնողաց հնա, եւ իւրեանց աշխատանաց արդիւնքն հաւասարաբար կ'ընձեռէր ընտանեաց ապրուստն հոգալոյ: Արական գործունեայ անդամքն, կը պարապէին իւրեանց աշխատութեամբ արտաքոյ, եւ տան ներքին կառավարութիւնն ի ձեռին կայր տանտիկնոջ եւ իւր դստերաց եւ հարսանց:

Զուարճութիւն կը համարիմ ինձ, խօսել աստ փոքր մի, Զուղայու քաջ եւ ժրագլուխ իգական սեռի վերայ, նոցա ամօթխած պարկեշտութեան, հլու եւ անտրտունջ եւ անմեղ բնաւորութեան, նոցա աննման զաւակասիրութեան եւ ընտանեաց օգտի անձնատրութեան, եւ ի վեր քան զամենայն նոցա ժրաձեռն տնարարութեան վերայ: Նոցա անարատութեան եւ անմեղութեան վերայ խօսելով, կը մտաբերեմ մի ծերունի Զուղայեցի պարոնի ասութիւն: Սա մեր թաղի պատուաւոր անձանց մին էր, որ անգամ մի Թէհրան գնալով, գործոյ աղագաւ, եւ վերադառնալով, յորժամ օր մի այցելութիւն եկեալ էր մեր ընտանեաց, կը զրուցէր իւր ի Թէհրան տեսեալ զանազան իրաց վերայ, Զուղայու ընտանեկան կենաց վերայ այսպէս կ'ասէր, "յիւրաքանչիւր մեր տանն մի ընտանեաց բնակութիւն որպէս մի կուսանաց վանք է": Առժամն, քանզի հասակաւ մանուկ էի,

չկարողացայ հասկանալ վերը ասուածեան իմաստն, այլ աշխարհատեսութիւն եւ փորձն, լաւ բացատրեցին ինձ զայն յետոյ: Եւ նորա նման պէտք է ասեմ եւ ես, որ արդարեւ, կուսական էր Ջուղայու իգական սեռի համեստութիւնն, պարկեշտութիւնն, անտխեղծ անմեղութիւնն, եւ նոցա սրտագրաւ անկեղծ պարզմտութիւնն: Այո՛, գրական ուսումն չունէր, բայց եթէ այս մեծ պարգեւից զուրկ էր, մի՞թէ զարդարեալ չէր այն բազում այլ բնիկ պարգեւօք եւ կատարելութեամբք: Ինչպէս անարատ եւ մաքուր էր նոցա կեանքն, ինչպէս խորթ եւ հեռի էր նոցա սրտից ամենայն անվայել եւ անոտի խորհուրդ անգամ կամ մտածութիւն: Նոցա ամօթխածութեան կարմիր քօղն, կը ծածկէր միայն սուրբ եւ անմեղ միտք: Յետոյ նոցա քաղցր եւ հլու բնաւորութիւնն, որով միշտ պատրաստ էին առնել ամենայն ցոհողութիւն անտրտունջ եւ յօժարակամ, նոցա ժրագրութիւնն եւ անձնանուէր փոյթն եւ աշխատութիւնն իւրեանց տուն մաքուր եւ մխիթար, եւ ընտանիքն գոհ առնելոյ համար: Ջուղայու տիկնայքն եւս ինքեանք իւրեանց ծառայք եւ աղախինք էին, բայց առանց իւրեանց տիկնութեան պատիւն կորցնելոյ: Իւր տունն իւր ձեռամբ աւելել եւ մաքրել, ընտանեաց զգեստն կարել եւ կարկատել, եւ լուանալ, օրական կերակուրն եփել, եւ սեղան պատրաստել ժամանակին սոքա բոլորն մի Ջուղայեցի մօր զբաղմունք էին, իւր դստերաց կամ հարսանց օգնականութեամբ եթէ ունէր, եւ եթէ չունէր միայնակ: Եւ ինչ յօժարութեամբ, ինչ պարծանօք կը կատարէին զայն, առաւել որպէս զուարճութիւն քան պարտիք: Եւ ինչ սիրուն եւ հաճոյական տեսարան մի էր, երբ մի քանի հրաւիրեալ ընտանիք կը ժողովուէին մի տան մէջ, եւ բոլորն ի միասին, ծերունի տիկնայք, հարսունք, աղջկունք

անական արարմանց մէջ զբաղեալ կ'երեւէին, խնդալով, զուարթ դիմօք, ամէն մին, մի բանուամ պարապելով անուշահամ կերակրներ պատրաստելոյ համար, զոր յետոյ ի միասին ընդ ամուսնոց եւ եղբարց կը վայելէին, մին միւսոյն այնպիսի շնորհալի ձեւով ծառայելով, զոր ոչ ծառայ կարող էր առնել ոչ մատակարար: Իրաւ, որ շատ քաղցր էր եւ բնական այս ընտանեկան անպաճոյճ եւ պարզ, բայց խիստ ցանկալի կեանքն, եւ չկարծեմ պանդուխտ Ջուղայեցին պէտք է մոռանայ երբէք, կամ կարող է մոռանալ նոյն իսկ օտար աշխարհի յաւել շքեղ եւ փափուկ կենցաղավարութեան մէջ: Ցետ իւր անական առօրեայ հարկաւոր զբաղմունքն աւարտելոյ, միթէ անդորձութեան կը պարապէին այս՝ մեղուի նման՝ աշխատասէր տիկնայքն, ոչ, նոքա որք կարօտ չէին, գեղարուեստ ձեռագործի կը պարապէին, ոսկեթել ասղնեգործութեան, զարգարուն կարի, եւ այլ այսպիսի տիկնավայել գործոց, եւ կարօտաւորքն դուրսէն գործելով գրամ կ'աշխատէին: Թէեւ այն ժամանակուն իգական սեռի համար գպրոց չկայր գրաւոր ուսումն տալոյ, բայց բոլոր պատուաւոր ընտանիք իւրեանց դստերաց կ'ուզարկէին աշակերտել ասղնեգործութեան "զառ քարշելոյ", կար սովորելոյ եւն, եւ կային ոմանք տիկնայք որ վարժ լինելով այս արհեստներուն, աշակերտ կ'ընդունէին առանց վարձու, որպէս լաւ կը մտաբերեմ, որ իմ մանուկ ժամանակուն յաւել քան երեսուն օրիորդք մեր տուն կու գային իմ հանգուցեալ մօրն աշակերտել: Եւ այսպէս թողեալ տնարարութիւն, մեծ մասն տիկնայք իւրեանց ժամանակն գեղարուեստից, եւ ձեւ եւ կար անելուն կը պարապէին: Հազար գովեստ Ջուղայու քնքուշ սեռին: Հաւատամ եմ ես, եթէ նոցա համազգի քոյրերն, որ յաւել լաւ բախտի

վիճակեալ, ծնուած են լուսաւորեալ աշխարհներում գտած են, յաւել լուսաւորութիւն, սնուած են առաւել փափկութեամբ, նոքա եւս եթէ ականատես լինէին իւրեանց ջուղայեցի քերց համեստ եւ պարզ կենցաղավարութեանն, բնիկ ուշիմութեան, ժրութեան եւ ճարտարութեանն, եւ հզու եւ սիրելի բնաւորութեանն, գուցէ չնախանձէին նոցա, այլ անխափան պիտի գմայլէին նոցա վերայ:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՆՔ

Ընդհանրապէս սիրոյ եւ կարեկցութեան ոգի էր որ կը տիրէր գերդաստանի անդամոց մէջ, փոյթ եւ յօժարութիւն մին միւսին հաճելոյ: Ամէն ոք, գերդաստանի փոքրիկ աշխարհում, իւր արժանի տեղին ունէր — ծերն իւր պատիւն եւ պատկառանքն, միջահասակն իւր վայել վարկն, եւ մատաղ անդամքն եւս զուրկ չէին իւրեանց բաժին իրաւունքից եւ արտօնութիւններից: Ոմիատ սերտ էր գերդաստանական միակցութեան եւ միաբանութեան կապն, եւ շատ հազիւ նոյն կապն խզուէին: Բայց ընդհանրապէս միշտ բացառութիւն բառն զօրութեամբ կ'իմացուի: Գայթն սակաւ բացառութիւնք, եւ ուր է որ չկայ, այլ թէ երբեմն կը ծագէր անհամաձայնութիւն ինչ, կամ կարծեաց տարբերութիւն, եւ անոի հետեւեալ ժժգոհութիւն, միշտ գերդաստանական վարագուրի յետոյս ծածկուած էր այն, օտարի աչքից եւ օտարի միջամտութիւնից: Քահանայն էր միայն որ իրրեւ խոստովանահայր, եւ հաւատարիմ ծածկագէտ, կ'ամոքէր ի խաղաղութիւն, կը համոզէր եւ կը վերահաստատէր ընտանեկան երկինքն, փոքր կամ մեծ փոթորկից, կրկին նորին անդորր պարզութեան մէջ: "Ամէն

է տան սէռն (ծածուկին) դուրս տանել», սովորական ա-
սութիւն մի էր Ջուղայեցւոց մէջ: Եւ իրաւ որ պատուա-
ւոր ընտանիքն շատ նախանձաւոր էին այս բանին: Ընթեաց
յոյժ չափազանց ձեւով, քանզի թո՛ղ որ ընտանեկան ո՛ւ եւ
իցէ անհամաձայնութիւն, օտարի ականջն չպիտեր հասա-
էր, շատ անգամ, աւա՛ղ, իւրեանց վերջին աղքատութիւն
եւ քաղցն անգամ կը ծածկէին: Ցան դուռն վակած լռու-
թեամբ կը համբերէին քաղցուն եւ թշուառութեանն,
յաւել ընտրելով զայն՝ քան իւրեանց աղքատութիւնն
յայտնել եւ շնորհ խնդրել: Կային ոմանք այդ ժամանա-
կում — յուսամ այժմ չկան — որք կը տրտնջէին աղա-
ղակ կը բառնային թէ աղքատաց անդուին աչառաբար ան-
կարօտ ընտանեաց կ'օգնէ, կարօտաւորի բաժինն նոցա տա-
լով: Բայց եթէ տեսնէին, որպէս յանմոռանալի ցաւ իմ,
ես տեսած եմ մի երկու այս ըստ երեւութին անկարօտ
ընտանիքներից, եթէ տեսնէին ինչպէս ձմեռան խիստ ցուրտ
եղանակում, շուարեալ եւ անճար, առանց բաւական կե-
րակրոյ, առանց կրակի, եւ առանց բաւական հագուստի,
փոքր մի ցաւաք հացով օրեր կ'անցուցանէին, առանց խօ-
սելոյ, առանց տրտնջելոյ, հաւաստի եմ, յայնժամ կ'իմա-
նային որ այսպիսիքն յաւելի արժանի էին զթոյ եւ օգնա-
կանութեան, քան այն աղքատն, որ միշտ պատրաստ է իւր
կարօտութիւնն յայտնել, եւ ամօթ չհամարէ մուրալ իւր
պիտոյքն:

Բայց այս մեր առարկային դառնալով, ընտանեկան յա-
րաբերութեանց մէջ, երբեմն ասա եւ անդ լռելեայն հա-
մակրութեան նուաղութիւն մի կը տեսնուէր, ոչ անխառն
նախանձից, հարսին եւ սկսեր մէջ, երկու եղբարց կանանց
մէջ, երբ միեւնոյն տան մէջ կը բնակուէին, եւ հարսին եւ
իւր տաղերի մէջ: Եւ կարծեմ բնական էր այս, եւ ակն-

կալելն, մտածելով նոցա Համեմատական դրութիւնն, զոր
մէն մի ունէր գերդաստանական խմբի մէջ: Սկեսուրն բա-
ցարձակ իշխան էր իւր հարսին վերայ, եւ կայրն սկեսուրը,
որ այս հինաւանդ բացարձակ իշխանութիւնն երբեմն չա-
բաչար գործ կ'ածէին, իւրեանց մատաղ հարսներուն ընդդէմ:
Ի հարկէ հարսն օտար աղջիկ, օտար տանից եկած, այն-
չափ համակրութիւն չկարէր գրաւել սկսեր կողմից, որքան
իւր տալներն, եւ յետոյ ամէն մի թեթեւ սիրոյ ցոյց, ամէն
մի թեթեւ կողմնակցութիւն ամուսնոյ կողմից առ հարսն,
բաւական էր նախանձ եւ զժգոհութիւն արթնացնել սկսեր
սրտում: Ցայսչափ ժամանակ իւր որդւոյ սէրն եւ եկա-
մուտն իւրն էր եղած, ահա այս օտար աղջիկն ո՞վ էր, որ
եկած էր գողանալ նոյն սէրն, եւ բաժանակից լինել նորա
եկամտին, եւ թէեւ լինքն մայրն էր եղած որդւոյ համոզողն
եւ ամուսնացնողն, բայց երեւի չէր կարողացած մտածել
փոփոխութիւնն, որ պիտի հետեւէր անտի, եւ յետոյ բա-
ւական փիլիսոփայական հոգի չունէր մտածել, որ ի ներքոյ
հանգամանացն, լաւ էր նորեկ օտարին՝ իւր որդւոյ սիրոյ
համար, իւր գտերաց կարգում դնել, եւ փոխադարձ սի-
րով նորա համակրութիւնն գրաւել, եւ այնու ընտանեկան
խմբի միաբանական սէրն անվրդով պահել: Սկեսուրն եւ
տալներն ազատ էին խօսել, բայց հարսին բերանն կապած
էր: Եթէ վերջինը մատաղահասակ եւ պարզամիտ էր, հե-
զութեամբ կը տանէր ողորմելի աղջիկն ամէն արհամարհա-
նաց, ամէն կծանող խօսքերի, ամէն չարաչար վարմանց
լռութեամբ, բայց եթէ հասակաւ մեծ էր, եւ կը ճանա-
չէր իւր իրաւունքն, յայնժամ գերդաստանական երկինքն
միշտ լի էր թղթով: Հարսն լեզու չունէր սկսեր հետ խօ-
սել, բայց իւր ամուսնոյ ականջն գոնէ ունէր իւր ձեռքում,
ամէն գիշեր իւր գանգատներն լցել նորա մէջ: Ու յետոյ

Ա՛կ տես այս խեղճ մարդոյ, կամ նոր ամուսնացած պատանւոյ, վճռակն ինչ էր: Եթէ կնոջ համար ոչինչ կողմնակցութիւն կ՚անէր, մայրն եւ քորքն կը զինէին նորա դէմ, ապերախտ, անպիտան, եւ կնոջէ իշխեալ այր կոչելով զնա: Եթէ լուռ կը մնայր անդադար իւր կնոջ լացն եւ գանգատն կը լսէր եւ նորա թշուառութիւնն կը տեսանէր: Թո՛ղ տանիք որ չկայնի այնպէս անձինք որք ի վերջոյ յուսահատեալ մօրն եւ կնոջն երկքին եւս կը գանէին:

Ցեղոյ երկու եղբարց կանանց մէջ եւս երբեմն նախանձաւորութիւն կը ծագէր երբ ի միասին կը կենցաղավարէին, միւնոյն տան մէջ բնակեալ: Զորոյց մի էր այս, որ սովորաբար կը լսուէր վերաբերութեամբ երկու դժկամակ անձանց, թէ "Տէգրակնանքոնց նման կը նայեն նոքա իրեար„:

Բայց ընդհանրի պատկեր չէր վեր նկարեալն, քաւ լիցի, շատ ընտանիք կային, անդամքն բոլորն իրարից սիրով սիրեցեալ, եւ փոխադարձ գութ եւ համակրութիւն կը տիրէր բոլորից մէջ: Սկեսուրն հարսին համար միւնոյն խանդակաթ եւ կաթոգին մայր էր, քաղցր խրատող, եւ բարի առաջնորդ, որպէս իւր դստերաց համար էր, եւ գերդաստանական երկինքն միշտ պարզ էր եւ պայծառ եւ անդորր, եւ երջանկութեան արեւն կը փայլէր անդադար բոլորի վերայ: Ու արդարեւ, այնչափ քաղցր էր այսպէս ընտանեաց բարեկամութիւն վայելելն, քաղցր էր նոցա ընկերակցութիւնն եւ մտերմութիւնն, որ շատ տխրելի էր տեսանել սորա հակառակ պատկերն: Բայց հակառակ պատկերի թշուառութեան պատճառն եւս, ոչինչ էր քան կարճմտութիւն եւ դաստիարակութիւնից զուրկ լինելն, եւ գուցէ փոքր մի եւս վրէժխնդրութեան հոգի սոցա հետ խառնած, քանզի ինչ որ մի տիկին իւր սկեսերից գտած էր, գուցէ արդարացի կը համարէր փոխարինել նոյնն իւր

հարսին: Այլ այժմ որ իգական սեռն այսպէս զուրկ չէ դաստիարակութիւնից, եւ ուսման լոյսն սկսեալ է տարածել նոցա մէջ, անկասկած պիտի բարձուին բոլորովին այս-պիսի անմխիթարութեանց եւ թշուառութեան շարժառիթքն: Սակայն մի բան եւս չպիտի մոռացած, որ այն, թէ եւ ըստ երեւութին լաւ բան է ի միասին բնակելն, սիրուն տեսարան է այն յիրաւի եթէ կան սէր եւ համակրութիւն, մանաւանդ որ խմբովին ապրելն ծախուց եւս թեթեւութիւն է, բայց, աւաղ մարդկային բնութիւնն այն է ինչ որ կայ: Դեռ այդ կատարելութիւնն չէ ստացեալ որ Քրիստոսաւանդ ոսկի կանոնին միշտ հետեւի, ցանկալ ընկերին, զոր ինչ իւր համար կը ցանկայ, եւ փորձն կը սովորացնէ, որ լաւագոյն եղանակն այն է, որ մի մարդ յետ ամուսնանալոյ, առանձին կենցաղավարութիւն սկսանի, եւ եթէ կարելի առանձին բնակութեամբ: Զկամիմ ասել թէ աւետարանական բանին նիւթապէս հետեւելով, ծնողք եւ ընտանիք միանգամայն լքանէ, եւ ամենայն ինչ իւր կնոջն բաժին հանէ, ոչ, լաւ մարդն կայս չառնէ, այլ իւր սէրն եւ խնամածութիւնն անպակաս պահելով ի նոցանէ որպէս միշտ, մանաւանդ եթէ խնամոյ եւ օգնութեան կարօտ են, իւր կնոջ հետ առանձին ապրի, եւ այս յաւել տակուն եւ ջերմ կը պահէ ընտանեկան սէրն բոլորից սրտում, քան միախուռն ապրելն:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՔ

Կային քանի մի ընտանեկան սովորութիւնք, որք որչափ եւ տգեղ, վնասակար եւ տարօրինակ, դեռեւս այնպէս հաստատուած էին, որք մինչ ցարդ իսկ գոյէ կը տեւեն: Սոցա մին էր —

"Հալ պահելն"

Հալ պահել կամ լալ ճնալն, որոյ առաջին բառն պարսկական բառ է, կը նշանակէր որ երբ մի օրիորդ ամուսնանայր, ամուսնութեան օրից պիտի համրանայր, եւ չպիտէր խօսել սկսեր հետ, սկեսրառն հետ, տագերոյ կամ ամուսնոյ եղբարց հետ, իւրնից հասակաւ մեծ տալների հետ, եւ իւր ամուսնոյ որ եւ իցէ բարեկամաց կամ ծանօթից հետ: (Ողորմի այս սովորութիւն հաստատողն հօր հոգւոյն, որ ամուսնոյ հետ խօսելն եւս չէր արգելած): Կարճ ասելով, խեղճիկ աղջիկն ամուսնութիւնից յետ պիտի փոխարկուէր՝ լինէր անխօս եւ անբարբառ կենդանի մի: Միայն ամուսնոյ հետ էր կարող խօսել, բայց վայ այն հարսին որ երբեք համարձակուէր յայտնապէս այսպէս բան առնել, այսինքն իւր ամուսնոյ հետ խօսել երրորդ անձին ներկայութեամբ: Այնչափ ամօթալի եւ համարձակ բան կը համարուէր այս, որ հաղիւ երբեք պատահած էր կարծեմ: Ընտանեաց գերմանկ անդամոց հետ եւս կարող էր խօսել հարսն, բայց ոչ նոցա յանդիման, որոց մօտ պարտական էր համր ճնալ: Այս խորշում, կամ այն անկիւնում եթէ պատեհութիւն գտաւ, մի երկու բառ կը խօսէր նոցա հետ բայց ո՛չ այնպէս որ ոք անձն նորա ձայնն լսէր: Ընթերցողն կարէ երեւակայել այս խեղճ մատաղահասակ աղջկան վիճակն, որ գուցէ յաւել չէր քան 13—14, տարեկան: Փոքր օրով յառաջ իւր հօր տան մէջ բոլորովին ազատ էր խօսել բոլորից հետ, խաղալ, ձայնել, վազվազել, որպէս բոլոր աղայք եւ աղջկունք կը սիրեն առնել, բայց ահա յանկարծ բեռուելով մի օտար տան մէջ, յառաջն պէտք էր խօսելն մոռանայր, խաղալն, վազվազելն բարձրաձայն, ծիծաղելն զարհուրելի մեղք էր համարելի, եւ "հաշմանն,, քթի ծայրն ձգած (այս սքանչելի բաշմաղի վերայ յետոյ կը խո-

սենք) լուռ, մունջ եւ հանդարտ պիտի շարժէր տան մէջ եւ տնական գործոց պարապէր: Մի օրում այս խեղճիկ զուարճ, աղատ զարգացած աղջիկն, պիտէր փոխարկուէր դառնայր մի լուրջ եւ ծանր վարուք կին մի, եւ ինչպէս պիտի լինէր այս երբ բնութեան ընդդէմ էր այն:

Բայց սովորութիւնն այնպէս խիստ էր, որ բացառութիւն դնել չգիտէր, այնպէս անողոքելի, որ ձար եւ փրկութիւն չկայր: Թշուառ հարսնիկն եւս գիտէր զայս, եւ կը տանէր համբերութեամբ, բայց մի բուսոյ նման որ իւր բնիկ տեղից խլուած, նոր եւ օտար հողում դնուի, կը սկսանէր թառամիլ, իւր մատաղ հասակի աշխոյժն եւ կայտառութիւնն կորցնել, եւ կատարեալ ինքնաշարժ մեքենայ մի փոխարկուիլ, ծերանալով յառաջ քան երիտասարդութիւն լինելն: Ոսկեն արգելուած էր, կարդալ չկարէր, այլ ի՞նչ զուարճութիւն ճնայ այս խեղճ աղջկան համար: Բայց գուցէ կը կարծէք ոք թէ մի կամ երկու տարի միայն այս անբնական լեզուակապութիւնն կը տեւէր: Ո՛չ, հարկաւ կային բացառութիւնք, բայց ընդհանրապէս երկար տարիք անթուլանալի կը ճնայր այս սովորութիւնն: Ցեսած եմ զաւակատէր տիկնայք 15–20 տարիքներից հետէ ամուսնացեալ, եւ դեռ սկսեր եւ սկեսրառն հետ չէին խօսել: Բայց կը հարցնուի, թէ մի տան մէջ ի միասին բնակուած, որպէն էր կարելի այսպէս բերանն կապ եւ անխօս ճնալն, ուրճն ի՞նչպէս կը պատասխանէին որ ոք հարցմանն: Ա՛յս ծաղրալի տեսարան մի էր: Նորահարսներն, խեղճերն իւրեանց վախից եւ ամաչելուց կամ գլուխ միայն կը շարժէին, որով ինչ կ'ուզէր Թող խմացուէր, կամ եթէ հարցն ստիպողական էր տան գերմանկերի ճնի ականջում փսփսալով կը յայտնէին իւրեանց պատասխանին: Ոսկ չափահաս եւ զաւակատէր հարսներն, ոչ միայն պատասխանի կը տային

սկսեր եւ միւսոց, այլ եւ երբեմն լեզուակռիւ եւս կը պատահէր: Բայց խօսելոյ ձեւն այս էր: Իւր մանկանց, կամ միւս փոքրահասակ ընտանեաց միայն յառաջ կոչելով, կը սկսաներ նորա ականջում ասել ինչ որ ասելոց էր, բայց կը խօսէր այնպէս բարձր ձայնով, որ խօսքն մանկան կամ թարգմանի կողմից կրկնելոյ հարկաւորութիւն չէր լինել) եւ երբեմն լաւ կծու խօսքեր եւս կը խօսէին, բայց ոչ բնաւ ուղղակի, այլ փոքրիկ թարգմանի ականջում, որ շուարած կը նայէր մտածելով, թէ իւր գործն ինչ էր այդ բանում, մինչդեռ ինչ որ իւր ականջում կ'ասուէր, ամէն ոք կարող էր լսել, եւ պատասխանել: Բայց դեռեւս կը համարուէր որ այս հարսն դեռ "լալ,, էր, եւ խօսել չէր կարող ամէնու հետ: Տարօրինակութիւնը թողեալ, անուրանալի է որ անգութ սովորութիւն էր այս, թոյլ չտալ Աստուծոյ պարգեւեալ լեզուն եւ բարբառն գործ ածել, եւ մարդկային խօսող բերանն համր կացուցանել: Ոչ թէ պատկառանաց եւ պարկեշտութեան նշան էր համարելի այն, բայց պատկառանքն եւ պարկեշտութիւնն կամաւորապէս պէտք է ծնունդ առնու ոչ բռնութեամբ, եւ լեզուին կապ դնելով:

Կնոջ իւր ամուսնոյն օտար ձեւանալն:

Միւս մի տարօրինակ ընտանեկան սովորութիւններ, որ կինն միշտ այնպէս պիտի վարուէր թէ ընտանեաց եւ թէ բարեկամաց մօտ, որ երբեք չկարծուէր անգամ թէ բնաւ սիրոյ նշան կամ կարեկցութիւն կայր իւր եւ իւր ամուսնոյ մէջ: Այսինքն ամօթ էր նորա հետ խօսել այլոց մօտ, զարհուրելի անպարկեշտութիւն էր, եթէ լռելեայն եւս սիրոյ հայեցուածք իմն փոխանակէին միմեանց հետ, կամ որ ոք փաղաքշանաց նշան երեւէր նոցա մէջ: Կամ կարճ ասելով, բոլորովին այնպէս պիտի երեւէր կինն որ-

պէս թէ նա իւր ամուսինն էր եւ մի օտար մարդ էր։ Հարսներն կարծում էրազում եւս կը զարհուրէին իւրեանց ամուսնոյ անուն յիշել, բայց զաւակատէր, հասակաչափ կանայք եւս բնաւ առանձին կամ այլոց մօտ իւրեանց ամուսնոյն անունը տալով չէին կոչել։ Կոչելոյ ձեւն էր, Օյ, ույ, քա, քա քեզան ասում։ Եւ եթէ հարկ լինէր նորա վերայ խօսել, որպէս երրորդ անձին վերայ, միշտ իւր զաւակաց միոյ անունն տալով կ'ասէր, օրինակի համար, Կարապետի կամ Մարիամի հայրն, կամ եթէ զաւակ չունէր, տագեր կամ տալին անունն տալով, կ'ասէր Ցովհաննիսի կամ Շուշանի եղբայրն։ Գուցէ այս եւս պարկեշտութեան նշան էր համարելի, սակայն ձշմարիտ ամօթխածութիւնն եւ պարկեշտութիւնն այսպիսի յիմարական բաներից չկարծեմ պիտի յառաջ գայ։

Արական սեռի նախադասութիւնն։

Այլ մի տգեղ եւ անվայելուչ սովորութիւն կայր ընտանեկան խմբի մէջ, որ միշտ արական սեռն ամէն բանում նախամեծար եւ առաջինն, եւ իգական սեռն երկրորդական եւ ստոր տեղին ուներ միշտ։ Բարեբախտաբար մինչ այն աստիճան չէր, որպէս Փերիոց գիւղօրէից մէջ տեսի, ուր հայ կանայք մարդկան հետ չէին կարող սեղան նստել, եւ պարտաւոր էին սպասել մինչ իւրեանց տեարքն եւ իշխանքն ուտէին, եւ յետոյ առանձին նոցա մնացորդն իւրեանց կերակուր լինէր, բայց միշտ, արական սեռն յաւելի կը պահանջէր քան կու տայր իգական սեռին արժանի պատիւն։ Ուսեալ եւ լուսաւորեալ ազգաց մէջ միանգամայն սորա հակառակն է, եւ առաջին տեղին ունի միշտ միւս սեռն, եւ նորան պատուելով որ մարդն իւր պատիւն կը նուազացընէ այլ մանաւանդ կը բարձրացնէ զայն, եւ կ'աղնուացընէ իւր բնութիւնն։ Նոքա յաւել

փափուկ բնութեան վիճակեալ լինելով, յաւել խնամոց, սիրոյ եւ պատուոյ արժանի են արական սեռից, եւ մեր մօրն, քերցն եւ կնոջն պատուելով ոչ ապաքէն մեզ կը պատուենք, եւ ընդհակառակն միթէ՞ ցածութիւն չէ մեր արական բնութեանն, նոցա յետադաս եւ ստոր դնել մեզնից, եւ ամէն բանում մեզ նախադաս եւ նախամեծար համարել: Իմ տեսածով, երբեք մի մարդ իւր կնոջ հետ ի միասին դուրս չէր երթալ, թողեալ թէ խմբովին բոլոր ընտանիքն երթային, եւ այդ շատ անգամ դիշերով միայն: Մարդ եւ իւր կինն միայնակ երբեք փողոցումն չէիր տեսնել: Եթէ միեւնոյն տեղն եւս երկուքն երթալոյ լինէին, մինն յառաջագոյն կ'երթայր միւսն յետոյ: Ընդհանրապէս կանայք փողոցում միայնակ կ'երթային, կամ եթէ մատաղահասակ ոմն էր կինն, նորա եղբայրն կամ այլ բարեկամ ոք կ'ընկերէր նորան բայց ոչ իւր ամուսինն: Կը կարծէր ոք թէ այդպէս աշխարհում բոլորովին սորա հակառակն պէտք էր լինիլ, եւ մի մարդ իւր ընկերութեան պաշտպանութիւնն հարկ կը համարէր տալ իւր կնոջն, բայց այդպէս չէր, եւ թէ Պարսիկներից էին փոխառեալ այս սովորութիւնն, թէ ցածութիւն էր մարդոյն ընկերել իւր կնոջն, չկարեմ ասել:

ԱՆՈՒԱՆՔ ԵՒ ՄԱԿԱՆՈՒԱՆՔ

Քանի մի բառով պիտի յիշողութիւն անեմ ասա եւ Ջուղայեցւոց անուանց եւ մականուանց մասին: Աւազանական անուանքն, որք գրեթէ բոլորն սուրբ գրոց անուանք էին, եթէ Կարապետ, Մկրտիչ եւ Յովհաննէսներն, ի բաց առնուէր, ինձացեաղն կարծեմ քսանի եւս չէր հասանել: Նա այնչափ կրկնութիւն կայր անուանց հետեւապէս, զի

կը պարտաւորէին այս ինչ, կամ այն ինչ անձն որոշելոյ համար, ընդհանրապէս մի մականուն բարդել աւազանական անուան վերայ:

Կը կարծէր որ թէ անուանց պակասութիւն կայր նախ Սուրբ Գրոց մէջ, որ վերոյիշեալ քանի մի անուանքն անդադար կը կրկնուէին: Բայց պատճառն այլ մի բան էր: Ցառաջն սովորութիւն էր անուան տօնախմբութիւն կատարել ի Ջուրջ, եւ որովհետեւ մի տեսակ հարկ եւ պարտականութիւն էր, բարեկամք հրաւիրել եւ հանդիսաւոր առնել տօնն, եւ եթէ հրաւէր եւս չլինէր բարեկամք գալոց էին շնորհաւորութիւն, որ կը նշանակէր նոցա պատուասիրել եւ կերակրել, վասն որոյ նախազգուշութեամբ իւրեանց զաւակաց անուանքն այնպէս կ'որոշէին, որ բոլորի տօնն միեւնոյն օրում լինէր, եւ բանն մի օրում աւարտուէր, տարին մի անգամ: Մինչդեռ եթէ յատուկ՝ յատուկ անուանք լինէին, ի հարկէ առանձին առանձին տօնակատարութիւնք պիտի լինէին եւ առաւել ծախք: Այս պատճառաւ, ընդհանրապէս որ տան մէջ որ Յովհաննէս կայր, Կարապետն եւ Մկրտիչն եւս ներկայ էին: Ուր որ Գասպար կայր, Բաղդասար, Մելքում եւ Մկրտումն, հաստատ այն տեղ էին: Ցարութիւնի հետ Աւետիքն կայր, Պետրոսի հետ Պօղոսն եւ Առաքելն, Դաւթի հետ Մարգարն, եւ Ղուկասու հետ Մատթէոսն եւ Մարկոսն, քանզի եկեղեցին, սոցա միասին կը տօնէ: Դուցէ խելքութիւն էր այս, բայց յաւել խելք բան կը լինէր, կարծեմ, եթէ տօնակատարութեան ծախքից կ'ուզէին ազատ մնալ, եթէ ազգային անուանք ընտրէին, որք տօնացուցի մէջ չկան, եւ զայս առնելով մի անգամ ընդ միշտ տօնակատարութիւնն արմատից կը կտրէին, եւ այսքան բազմաթիւ հոմանուանութիւն չէր լինել, այսպիսի համեմատա-

բար փոքրիկ խմբի մէջ: Ոգական սեռի անուանքն յաւել բազմազան եւ այլատեսակ էին, թէեւ ոմանք օտարաձայն եւ խորթ, որպէս Աջաբխան, Շախանուամ, Շախնաբաթ, Գոչոտան, որք պարսկական բառք են, եւ ոմանք գարձեալ ծննացուցից առեալ որպէս Կատարինէ, Վառվառէ, Շղնսաբէթ եւն, բայց կային եւ հայաբարբառ անուանք, որպիսի են Անոյշ, Վարդենի, Շուշան, Մանիշակ, Ծաղիկ եւն:

Այսչափն աւազանական անուանց վերայ: Իսկ տոհմական անուանց վերաբերութեամբ, կարելի է ասել երեք չորս բացառութեամբ, այսպէս բան բնաւ չկայր, եւ ոչ նորին հարկաւորութիւնը բնաւ յայտնի էր ուժեք: Պատմութիւն եւ աւանդութիւնք կը ցուցանեն որ յառաջն այսպէս չէր եղած: Երբ Ջուղայեցիք բերուեցին Հայաստանից, բոլորն եւս տոհմային անուն ունէին, յորոց բազումք մինչ ցայսօր, կարծեմ, կը յիշուին, որպէս Շահրխանեանք, Շաֆրազեանք, Շահմիրեանք, եւ այլ շատունք որք յիշատակեալ են բարեյիշատակ Ցալութիւն Թ. ՅԷր Յովհաննեանի Ջուղայու պատմութեան մէջ: Այլ վերջին ժամանակներում եւ իմ տեսածով բոլորովին բարձուած էր տոհմական անուն պահելն: Եթէ Յովհաննէսի հայրն Կարապետ էր, Յովհաննէս Կարապետեան կը յիշուէր սա, եւ այդպէս եւս կը ձեռնադրէր իւր անունն: Սորա որդին եթէ Մկրտիչ էր, Մկրտիչ Յովհաննէս կը կոչուէր, եւ նորա որդին եթէ Գասպար, Գասպար Մկրտիչ կը լինէր, եւ այսպէս ամէն որ իւր անուան յետոյից միայն հօր անունն ունէր, եւ երբ կը մտածուի որ որպէս վերն ասացաւ այնքան շատ միանման անուանք կային, հետեւապէս իմանալի է, որ ոչ միայն ՛որն որից ջոկել անհնար էր, այլ տոհմ՝ տոհմի վերայ, սերունդ սերնդի վերայ կու գային եւ կ՛երթային, եւ կ՛անհետանային գետոյ ջրոյ նման առանց մի նշան կամ հետք թող-

նելոյ թէ ով՝ ով էր, եւ կամ թէ կենդանի սերունդքն՝ ով ուրկից էին: Երբեմն երկու եղբարք, մինն հօր անունն կ'ընտրէր, միւսն հաւու, եւ զարմանալի մի բան կ'երեւէր, թէ ինչպէս կարելի էր երկու եղբարք համարել զնոսա, երբ երկու յատուկ ստորագրութիւն ունէին, մին գրելով, օրինակի համար Անդրէաս Մկրտիչ, միւս Յովսէփ Յովհաննէս: Չկարծեմ շատ ջուղայեցիք կային, որ իւրեանց հաւու անունն գիտէին, այլ հարիւրից մին չէր գտանուել որ իւր մեծ հաւու անունն լսած լինէր: Լաւ էր որ այսպէս բանն առանց դժուարութեան կ'ընթանայր, քանզի Պարսից օրէնքը կը ներէր միայն մի անուան ստորագրութեամբ որ ոք թուղթ կամ վաճառագիր վաւերական համարիլ, բայց այլ լուսաւորեալ աշխարհներում որ միշտ տոհմական անունն է նախ հարկաւոր, յետոյ հօր եւ հաւու անունն, այսպիսի դէպքում մեծ դժուարութիւն կը պատճառէ, որպէս գրչիս պատահեցաւ առաջին անգամ: Օրինական թղթոյ միոյ մէջ հարկաւոր էր յիշատակել իմ անունն, եւ հարց եղեւ ինձ թէ ո՞ւմ որդին ես, յետոյ թէ հայրդ ո՞ւմ որդին է: Ինձիւն այս տեղում էր ահա, եթէ ասէի հօրս անունն Սահփաննոս է, եւ հաւուս անունն Յարութիւն, յետոյ հարց կը լինէր ուրեմն տոհմային անունդ Սահփաննոս է՞: Ի հարկէ ջուղայեցի լինելով, ես եւս այլոց նման միայն հօրս անուն սովորեցայ գրել (թէեւ երեք եղբարցս մին մեր հաւու անունն կը գրէր) եւ այժմ եթէ ասէի իմ տոհմական անունն Սահփաննոս է, ուղիղ չէր, քանզի խոստովանք լինի իմ եւ ընթերցողիս մէջ, Ցէր Յարութիւն հաւուս հօր անունն բնաւ լսած չեմ թէ ինչ էր, եւ եթէ ասէի Սահփաննոան տոհմական անուն չէ, ուրեմն ինչ է իմ տոհմական անունն կը հարցանէին, եւ եթէ ասէի այդպէս բան չունիմք մեք ազատամիտ Ջուղայե-

ցիքս, ոչ միայն ծաղրալի կերեւէի, այլ եւ ապօրէն կը համարուէր անուանս յիշատակութիւնն, որ անհրաժեշտ հարկաւոր էր, վասն որոյ, պիտի խոստովանիմ, որ ընդդէմ կամացս, պարտաւորեցայ զայդ առնել, զոր բազում Ջուզայեցիք պարտաւորեալ են երբեմն առնել այսպիսի դէպքում այսինքն ասել որ ինչ էր ճշմարիտ: Բայց այն չէր, որ Ջուզայեցիք իւրեանք եւս դժուարութիւն չէին կրում այլով եղանակաւ, Ջուզայում իսկ, այս տոհմական անուանց պակասութեան համար, եւ դորա ապացոյցն էր, որ պարտաւորութիւնից, ամէն ընտանեաց վերայ գրեթէ մի մականուն էր դրած, յորոց ոմանք գուցէ մինչ ցայսօր կը յիշուին: Այս մականուանց մի քանիք, այնպէս էին, որ խեղճութիւն կը լինէր այն ընտանեաց համար, որ զնոյն գտած էին, միանգամայն ընդունել, եւ տոհմական անուն շինել զայն, քանզի ոչինչ տգեղ կամ անվայելուչ անուանք չէին: Սոքա էին Ճնճղեանք, Ձաղզաղեանք, Կուկուեանք, Գազանդլանեանք, Ռուսք, Ոսնասարեանք, Քօնօնեանք, Գազանգամեանք, Գուլզատեանք, եւ կային մականուանք եւս, որ քանի մի ընտանիք իւրեանց արհեստին էին գտած, որպէս Ջառախեանք, Ոսկերչեանք, Մաղմանեանք, Ջամբօռեանք, Քարտաշեանք, Սառաճեանք եւն, որք բոլորն եւս յարմար տոհմական անուն էին կազմելոց: Բայց յատուկ նախապաշարումն մի կայր ամէնի կողմից բնաւ ընդունել թէ ինքն մականուն ունէր, թէեւ լաւ գիտէր որ ունէր, եւ առանց մականուան ոչ ոք որոշել էր կարող իւրն: Այլ որ ոք անձին յանդիման իւր մականունը տալ, կամ թղթոյ վերայ դնել եթէ առաջնոցդ նման անպատիւ եւս չլինէր այն, մեծ դժկամակութիւն կը պատճառէր, եւ կը համարուէր որպէս արհամարհանք: Բայց սորա պատճառն գլխաւորապէս այն էր կարծեմ, որ վեր անփնաս եւ ոչ անվայելուչ մականուանքն չկային միայն,

այլ կային նաեւ շատ անշնորհ, խիստ գռեհիկ եւ սաստիկ քամահելի եւ անպատիւ անուանք. որ երբեք քրիստոնեայ եւ պատուասէր խմբի մէջ չկայ եւ չպիտի լինի: Թողեալ Սէ-փուլե, Շէռռէյի, Փռոշդրիկ, Համիշադդում, Բակլաքֆտա, Տօտօլմազ, Գօզգօզ, եւ այսպէս ծաղրալի եւ արհամարհական անուանք, կային նաեւ Քէֆով, Գող, Զափչի (խաբեբայ), վատահամբաւ մականունքն: Բայց որ բոլորից յաւել վատ-թարագոյն էր եւ ամօթալի, եւ որ կիսաբարբարոս ազգաց մէջ եւս չէ լսուած, այն էր որ կային մականուանք, որք առեալ էին ընտանեաց մեռած կամ կենդանի անդամոց մից կամ բնական կամ ըստ դիպաց գտեալ արատից կամ պակասութիւնից, կամ վհճակի տարաբախտութիւնից: Կը խորշիմ գրել իմ լսած այսպէս մականուանքն, բայց հարկ կը համարիմ գրել, որ եթէ դեռ կը յիշուին նոքա, յիշողն թղթոյ վերայ տեսնի, եւ մտածէ թէ որքան անմարդկա-վայել, անքրիստոնէավայել եւ ստոր եւ տմարդի բան է, մի անձին տարաբախտութիւն նորա երեսովն տալ միշտ, եւ խրատուի լինքն, եւ խրատէ իւր զաւակաց յետ կալ այդպիսի տմարդութիւնից: Այսպէս ամօթալի մականուանք էին այնք ահա, Շիլ, Պռատ, Բիդօմազ կամ Քիթկտրած, Զօլախ, Ջեռկտրած, Քօռ կամ Կոյր, Կուզլիկ, Փլիլան, Շօլի, Ականջ կտրած, Բիճ եւն: Այսպէս տոհմական անուանք բարձուել են Ջուղայից, բայց ի փոխարէն սոյն գարշելի անուանքն էին ներս բերուած: Շատ սակաւ անձինք կային, որք բնաւ տեղեկութիւն ունէին իւրեանց ծննդաբանութեան մասին, կամ թէ իւրեանց նախահայրն ով էր եղած, ուստից սերեալ, կամ որքան հին կամ նոր էր իւրեանց տոհմն: Վասն որոյ որքան լաւ կը լինի եթէ ամէն ընտանեաց գլուխ մի մշտա-կան, վայելուչ, բայց ոչ հասարակ անուն կամ մականուն ընտրէ իւր եւ իւր սերնդոց համար, որով որոշ ճնայ իւր

տոհմին, եւ այդպէս բոլոր ընտանիք խառն ի խուռն չգան եւ երթան առանց անուն կամ յիշատակ թողնելոյ բնաւ իւրեանց սերնդոց համար: Մականուն կամ լաւ եւս ասել տոհմական անունն որքան անսովոր լինի այնքան լաւ է, եւ յաւել որոշ կը ճնայ տոհմին, որպէս ոմանց ճնացած է, եւ սոքա են Աղանուրեանք, Նահապետեանք, Զօրաբեանք, Արգարեանք եւն: Եւ մինէ մականուանց պակասութիւն կայ: Հաւաստի եմ շատ ջուղայեցիք կան որք գիտեն եւ լսած են թէ Եւրոպացւոց մէջ, ինչ տարօրինակ տոհմանուանք կան, եւ որքան տարօրինակ այնքան լաւ կը համարուին ի նոցանէ: Անդղիացւոց վերայ լսեցեալ, մի երեւելի տոհմի անուն, որոց քանի մի անդամքն Հնդկաստանում յոյժ բարձր պաշտօններում էին, Խոզ էր: Ցետոյ կան գայլ, առիւծ, աղուէս, նապաստակ, ագռաւ, արծիւ, բաղէ, ծիծեռն, կարմիր, ձերմակ, սեաւ, կանաչ, փայտ, քար, առու, դաշտ, ծառ, անտառ, խոհարար, ձիադարման, բեռնակիր, արիւն, եւ մեծ տոհմի միոյ անուն եւս Դագաղ է: Նէել ինչ տարօրինակ անուանք կան զոր չեն ընտրած թէ անկենդան եւ թէ կենդանի, թէ նիւթական եւ թէ վերացական բաներից: Բայց չկան խելագար, ձեռ կտրած, եւ այդպէս կծանող եւ ամօթալի անուանք եւ ոչ յետին գռեհիկ դասու մէջ: Կռապաշտ Հնդկաց մէջ եւս, որք բոլորն եւս տոհմային անուն ունին, այսպիսի պախարակելի անուանք չկան բնաւ: Բանն այն է որ միայն ամէն մի ընտանեաց գլուխ, ընտրէ իւր համար մի տոհմական անուն, որքան նշակի այնքան լաւ, եւ զայն ստորագրէ անգամ մի, եւ յայտնէ ի լուր ամենից, որ ինքն այն անուամբ կ'ընթանայ յայնմհետէ, եւ այնուհետեւ կը շարունակէ այն որդւոց յորդիս, եւ արդարեւ այս անուան առաջին ստացողն պիտի անմահանայ, որքան որ իւր սերունդն

տեւէ աշխարհի վերայ։ Այս Ջուղայեցւոցս խառնիճնեթոր անուանց, եւ տոհմական անուն չունելոյ դժուարութեան փորձն տեսած եմ մեր Ջուղայեցի երեխայոց մէջ Հայոց Մարդասիրական Ճեմարանում։ Մի երեխայ կը գայր, եւ անունն, յիշատակարանում դնելոյ համար, երբ հարց կը լինէր թէ ինչ էր, կը պատասխանէր — օրինակի համար Ցովհաննէս Մկրտիչ։ Շատ բարի, գրեցաւ Ցովհաննէս Մկրտիչ։ Բայց յետ քանի աւուրց տեսնելով որ ոմանք մանկունք իւրեանց հաւու անունն կը գրեն, սա եւս հետեւելով նոցա օրինակին, անունն կը փոխէր, ասելով, Ցովհաննէս Մ. Կարապետ։ Այլ փոքր ժամանակ մի անց կալով՝ եւ տեսնելով որ Կարապետն լաւ ձայն չունի Անգղիերէնում, կ'որոնէր այլ մի լաւ անուն գտանել, եւ յանկարծ Ցովհաննէս Մկրտիչն, որ Ց. Մ. Կարապետ էր դարձած, կրկին կը փոխուէր Ց. Մ. Ցովսէփ։ Շատ եւ շատ անգամ Անգղիացի վարժապետք կը դանգատէին ինձ, թէ այս ինչ կամ այն ինչ մանուկն կրկին անունն փոխած է, եւ կը հարցանէին թէ այդ ինչպէս բան է, ընդհէր այդպէս կ'անեն, եւ ես կ'ամաչէի ասել, որ Ջուղայեցիքս տոհմական անուն չունենք, եւ եթէ ասէի եւս, այնքան տարօրինակ եւ ծաղրալի կ'երեւէր նոցա, որ իմ ասութիւնն չպիտի ըմբռնէին։ Կը պարտաւորուէի ասել երեխայք են, եւ անգիտութեամբ կը գործեն զայն։ Ցետոյ մանկանն կը պատուիրէի, որ մի վախճանական անուն ընտրէ, եւ այլ եւս չպիտի փոխէ, եւ հազիւ թէ այս վճռական հրամանաւ ի վերջոյ բանն կ'աւարտուէր, բայց եւ տեսած եմ զի ոմանք ճեմարանից դուրս երթալուց յետ դարձեալ այլ մի նոր անուն կ'ընտրէին։ Մականունք եւս Ջուղայուց կը բերէին իւրեանց հետ այս մանկունքն, եւ ի հարկէ լաւ ծանօթ լինելով միմեանց եւ մակա-

նուանցն եւս Ծանօթ, թէեւ չէին վստահանալ բիւրտ եւ ամօթալիքն ի գործ դնել, բայց իրերաց մէջ բազմիցս անվնաս մականուանքն գործ կածէին, եւ այս մշտական գանգատանաց պատճառ էր որ մին միւսից ունէր: Կը յիշեմ որոշակի երեք մանկուանք, որ գրեթէ ամէն օր կը գանգատէին այս մասին, մին Ձէյթուն կոչուելոյ համար, միւս Բոլղի, եւ այլ մին Շարբաթ: Ի վերջոյ երեքին եւս խորհրդատրեցի, որ եթէ կը ցանկան որ իւրեանց գանգատն բոլորովին վերջանայ, լաւն այն է, որ ընտրեն այդ անուանքն միանգամայն որպէս իւրեանց տոհմանուն, եւ այդպէս եւս ձեռնադրեն: Առաջինն իսկոյն հասկացաւ իմ խրատու օգուտն եւ այն օրից հետ Ձէյթունեան կը գրէ իւրն, այդ է Պատրն Կարապետ Յովհաննէս Ձէյթունեան, իմ նախկին շատ սիրելի աշակերտաց մին, որ այժմ կը բնակի ի Բուշեռ: Միւսն առ ժամն դժուարացաւ կատարել իմ խրատն, բայց յետոյ ընտրեաց Բոլղեան տոհմանունն: Երրորդն չցանկացաւ Շարբաթ լինել, թէեւ քաղցր ինչ է այն, եւ բաւական ախորժելի: Ձէյթունեան տոհմն եւ սերունդն, նոյնպէս եւ Բոլղեան, որք զոյգ չունին, կը մնան որքան կան, որով եւ առանձին տոհմ, առանց կարօտելոյ մի ամօթալի մականուան որպէս միւսքն, այլ Յովհաննէս Մկրտիչ, Դաւիթ եւ Մինասն ինչ պիտի լինին, այդ յայտնի է:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՆԴԵՐՁԱՆՔ, ԿԱՀՔ ԵՒ ԿԱՐԱՍՒՔ

Շատ լաւ սովորութիւն մի կայր ի Ջուղա, որ ամէն ընտանիք գրեթէ իւրեանց տարեկան պաշարն աշնան եղանակուամ կը պատրաստէին տան մէջ: Աղքատն եւս կը ջանայր գոնէ իւր հարկաւորեալ տարեկան ալիւրն ձեռք

ձգել, եւ որպէս սովորութիւն էր ասել, "աչուըն տան մէջ, պլ եւս ինչ հոգ կայր: Հայն գլխաւոր կերակուրն լինելով, միս բոլոր պիտոյքն երկրորդական բաներ էին խղճականի համար, եւ ժամանակ առ ժամանակ կարող էր ձեռք բերել զայն: Ձեռնահաս ընտանեաց տներում այնպէս ամէն բան ի պատրաստի կայր, որ հաղիւ, թողեալ միս եւ բանջարեղէն գնելոյ, պլ իրաց կարօտութիւն ունէին: Շաբաթներ անցկկայր, եւ պատրաստի դրամ ծախելոյ հարկաւորութիւն չէր լինել, քանզի միսն եւ մանաւանդ պլ պիտոյքն հնար էր ապառիկ գնել եւ յետոյ յաջող ժամանակում վճարել գինն: Ինձ թուի այս սովորութիւնն հաստատեալ էր վասն երկու պատճառաց, մին որ ձուղա յաւել գիւղ քան քաղաք է, եւ ամենայն ինչ հնար չէր ամէն ժամանակում գտանել, եւ միւս եւս՝ այսպէս տարեկան պաշարն պատրաստելով աշնան եղանակում, յորժամ ամենայն ինչ երժան է, յանկարծ սղութեան կամ իրաց թանգանալոյ չառաջն առնուլ էր: Բայց զինչեւիցէ լաւ սովորութիւն էր: Հայն, զոր ամէն ընտանիք իւր տան մէջ կը թրէր, իւղն, ընդեղէնք, գինի, եւ մինչ անգամ ձէթ, բոլորն պատրաստ, յետոյ ձմերան սկզբում մի որթ, կամ արջառ եւս զենլով եւ բոլոր միսն աղելով եւ իւղով խորովելով եւ մեծամեծ թակոյկների մէջ դնելով, որ բոլոր ձմեռն կը տեւէր, այնուհետեւ մի ընտանիք այնչափ ապահով եւ մխիթար էր, որպէս Նոյի ընտանիքն տապանում:

Կահ եւ կարասիք շատ պարզ էին, եւ երկրի օդոյ հանգամանացն պատշաճ: Մի բարեկազմ տուն պատրաստելոյ համար հարկաւոր էին սենեկաց սփռոցք, որ կամ գորգ էին կամ կարպետ, եւ այն ժամանակում բաւական երժան: Հինգ վեց թումանով բարեչափ մեծութեամբ լաւ

գորգ մի հնար էր գտանել, եւ յաւել մեծ եւ լաւագոյնքն փոքր մի յաւել գնով: Կարպետից գինն առաւել թեթեւ էր, տասնից մինչ քսան Ղռանով բաւական մեծութեամբ եւ լաւ կարպետ մի կարելի էր գնել: Կարպետքն բաւական տեւողական էին, այլ Պարսկաստանի գորգն իրապէս արժանի էր այդ մեծ համբաւոյն, զոր ունի ամենայն աշխարհում իւր պատուականութեան համար: Եւրոպացիք անգամ դեռ չեն կարողացած գտանել եւ տալ այդ գունոյ տոկունութիւնն, իւրեանց մեքենագործ գորգոյն, զոր պարսկական գորգն ունի, եւ ոչ նորին տեւականութիւնն: Եթէ որ ոք հետամուտ հայ սովորած եւ բերած լինէր այս գորգ հիւսելոյ արհեստն ի Ջուղա, որ գժուարին բան մի չէ, իցէ թէ մի նոր աշխատասիրութիւն, եւ եկամտի միջոց լինէր այն:

Հետ սփռոցաց, հարկաւոր էին, անկողինք ոչ միայն ննջելոյ, այլ եւ նստելոյ համար, զոր "դօշակ,, կը կոչէին, քանզի սովորութիւն էր գորգոյ կամ կարպետի վերայ այս դօշակն ձգել, որ կազմած էր բամբակից եւ ծածկեալ տեղագործ թանձր եւ տոկուն պաստառով լինչ: Հիւր ընդունելոյ սենեկում միշտ դօշակներն յաւել փափուկ էին եւ լաւագոյն պաստառով ծածկեալ, եւ որմոց մօտ եւս բարձր էր կային յենլոյ եւ հանգստանալոյ համար: Նստիլ եւ ամէն հանգստութիւն գետնոյ վերայ էր, քանզի օդոյ խիստ չորութիւնը կը թուլատրէր զայս, որ ընտանեաց աշխարհում: Սովորութիւնն լինչ զարմանալի բան է իրաւի, երկար ժամք ծնկնածալ կամ ծնկաց վերայ կարող էր մարդ նստել առանց ցաւ եւ տաղտկութիւն զգալոյ, այլ թող ով որ երկար տարիք խոնաւ աշխարհում է եղել, եւ աթոռոյ վերայ նստելոյ սովոր, փորձէ անգամ մի, միայն մի ժամ նստել Ջուղայու ձեւով, եւ երկնչեմ կրկին

անգամ չէ առնելոց զայս։ Վերմակ կամ լհեբն եւս միւս մի անհրաժեշտ մասն էր անկողնոյ, մանաւանդ ձմեռն եղանակաւմ, որ երբեմն յաւել քան մի հարկաւոր կը լինէր ջերմ պահելոյ համար, թէ եւ բաւական ծանր եւ հաստ էին եւ բամբակալից։ Բայց մի բան զարմանալի էր, որ ընդհանրապէս միեւնոյն լհեբ ասացեալ վերմակն ամառան ջերմ եղանակաւմ եւս ի գործ կ'ածէին որպէս ի ձմերան։ Ամառն եւս այս թանձր վերմակներովն ծածկելով իւրեանց, եւ քուն ժամանակաւմ ջերմանալով եւ քրտնելով, յետ կը ձգէին զայն, եւ առաւօտու օդոյ սառնութիւնն ներգործելով մարմնոյն այդպէս քրտնեալ վիճակաւմ հիւանդութիւն կը պատճառէր։ Հաւ է միանգամայն անծածկոյթ ննջել ջերմ ժամանակաւմ քան ծածկուիլ, քրտնել եւ յետոյ սառել։

Այս միշտ ծածկեալ ննջելոյ սովորութիւնն ջուղայեցի մանկունք կը բերէին իւրեանց հետ ի Կալկաթա, եւ կը յիշեմ զի Մարդասիրական Շեմարանաւմ երբ սովորաբար Կերթայի դիշերն վերհասութիւն տալ նոցա, յաճախ եւ յաճախ տեսած եմ Մայիս եւ Յունիս ամսաւմ, յոր ջերմաչափն 98ից—100, աստիճան կը բարձրանայ, ոմանք մանկունք մանաւանդ նորեկքն, գլխից մինչ ոտքն թանձր վերմակով ծածկեալ, քրտանց մէջ գրեթէ լողղ կը տային, եւ կը պարտաւորէի պատուիրել, որ վերմակն վերացնեն նոցա անկողնից։ Անկողնոց պատրաստութիւնն եւս, որոց վերայ մեր խօսքն է, ամէն աստիճանով եւ չափով եւս կը լինէր ի հարկէ, բայց 15ից 20 Թուամանով կարելի էր լեւուլի պատրաստել ամենայն բան։

Սեղանոյ եւ խոհանոցի սպասք եւ անօթքն բոլորն պղնձեղէն էին, յոյժ սակաւ յաղճապակի կամ չինեղէն անօթք գործ կ'ածուէին, թողեալ միայն հանդիսներուաւմ, եւ

այսպէս դէպքում ունողքն միշտ բարեսրտութեամբ փոխ կու տային որոց հարկաւորն էր: Պղնձի անօթքն միշտ կը համարուէին մի տան կարասեաց յաւել գնահատելի եւ մեծարժէք մասն, եւ շատ պղնձի անօթք ունիլն ճոխութիւն կը համարուէր: Ափսէք, պնակք, սկաւառակք, կաթսայք բոլոր պղնձի էին, եւ ի հարկէ երկար տարիք կը տեւէին: Այս լաւ էր եւ խնայական, այլ մի վնասակարութիւն ունէր որ յաճախ չէին անագել, կամ կլեկել: Ցարին անգամ մի բաւական կը համարէին, եւ որպէս լաւ կը մտաբերեմ, ընդհանրապէս կը կատարուէր այդ գործն, Աղուհացի առաջին շաբաթն, որ զատկական կերակրոց հետ եւ համն բարձուէր միանգամայն: Թէեւ ժրագլուխ տանտիկնայքն միշտ պարծանք կը համարէին մաքուր պահել ամենայնիւ իւրեանց անօթքն, բայց եւ այնպէս մոռացելով որ պղնձոյ ժանկն խիստ մահացու ժահրից մին է, փոքր ինչ մոռացութիւն, կամ անփոյթութիւն, կամ անձեռնհասութիւն կարող էր նոցա կերակուրն ժահրել: Արդեօք այդ պղնձի կեդրոնական ափսէն կայ դեռ մինչ ցարդ: Լաւ կը յիշեմ թէ որպէս պտոյտ պտոյտ կը գայր սեղանոյ մէջ տեղում: Ներանի թէ վերացած լինի այն, նոյնպէս եւ ընդհանրական "Փառջն,, կամ ջրոյ կաւեղէն սկաւառակն, որ — մեղմօրէն խօսելով — թողեալ անյարմարութիւնն, վնասակար եւս էր, որպէս ամենայն բժիշկ վկայել ունի:

Ցետոյ տան հանդերձանաց մէջ հարկաւոր էին մառանական անօթքն, այսինքն, հաց, ալիւր, եւ պաշար պահելոյ համար, փեթակներ, թակոյկներ, գինի պատրաստելոյ համար կարաս, ապակի մեծամեծ սրուակք եւն: Սոքա բոլորն եւս մեծագնի չէին, բայց մի տան հաստատութիւն եւ հնութիւն, կարելի էր ասել, վերասացեալ պղնձի անօթներից, եւ այս գերմանկ բայց հարկաւոր "խժուռտժուռ-

Ներկից,, էր կայացած։ Ու որովհետեւ ո՛ եւ իցէ տնական անօթի վաճառելն մեծ ամօթ էր, եւ գովելի գործ էր յաւելացնել նոցա թիւն, սերնդից առ սերունդ, ամէն որ իւր ձեռնահասութեան համեմատ գնելով ինչ որ դէպ կը գայր երժան գնով, մի հին հաստատուն տան մէջ յիսնեց մինչ հարիւր տարեկան այսպէս անօթք կը գտնուէին, եւ ափսոս որ լեզու չունէին, եթէ ո՛չ, ինչ հնոց լաւ լաւ պատմութիւններ էին կարող պատմել։ Կը յիշեմ որ մեր ատրեկրեայ մառանումն մի հատ ալոյ փեթակ կայր, սոսկ կաւից շինեալ առանց թրծելոյ, եւ մեր ընտանեաց ծերունիքն անգամ չդիտէին եւ չկարէին յիշել թէ երբ եւ ո՛վ էր գնեալ զայն, եւ թէ ի քանի քանի ամաց հետէ կը կանգնէր այդպէս լուրջ դիմօք իւր անկիւնումն։ Զարմանալի օդ. որ կաւից կազմեալ անօթ մի այնչափ երկար տարիք կարող է տեւել, եւ անգործ եւս չէր, ո՛վ գիտէ քանի հազարաւոր ալոյ լտերք ելամուտ էին գործած նորա մէջ, եւ հաւատարմութեամբ պահպանած էր զայն։ Գինւոյ կարասների մէջ եւս կային պատկառելի ծերունիք ոմանք, որք կարող էին իւրեանց հասակն գուցէ երկու հարիւր տարուց անց թուել, քանզի տանց շինութեան հետ, որպէս կ'երեւէր, մտած էին գինետունն, եւ անդ համբերութեամբ կը սպասէին դեռ։ Ինչ մեծ համբերութիւն։

Վերասացեալքն էին մի տան հարկաւոր հանդերձանքն եւ կարասիքն, եւ հարիւր թուականով շատ փառաւոր ձեւով հնար էր պատրաստել։

ՀԱԳՈՒՍՏ ԵՒ ԶԱՐԴ

Ինձ դեռ մինչ ցայսօր յայտնի չէ թէ մեր ազգային հագուստն ինչ է եղած, թողՀնադարեան ժամանակ-

ներում, գոնէ միջին դարուց մէջ, կամ յառաջ քան Ռուբենեանց Թագաւորութեան բարձուիլն, որ հինգ հարիւր տարիքներից շատ յառել չէ։ Ցեսած եմ մի քանի մեր նախնի Թագաւորաց պատկերներն, բայց յառաջն որ ստուգութիւն չկայ Թէ հարազատ պատկեր են այնք, եւ երկրորդն՝ Թագաւորաց հագուստից, որ այս պատկերաց մէջ այնչափ որոշ բան եւս չէ, ժողովրդոց հագուստն դժուար է երեւակայել։ Տարաբախտապէս մեր ազգային պատմութիւնքն, որոց գլխաւորագոյնն է Խորենացւոյն, եւ առաւել ձոխն Զամչեան վարդապետինն, ոչ ազգի, եւ ընդհանուր ժողովրդոց, այլ սոսկ Թագաւորաց եւ իշխանաց եւ նոցա պատերազմաց պատմութիւնքն են, ոչ սակաւ չափազանց ոճով։ Իշխանական գործոց եւ քաղաքական անցից վէպք են լոկ, լի են կրօնական գժտութեանց պատմութեամբ, լի են հրաշքներով եւ սքանչելեօք, եւ աղխողխոմ ձեւով կը պատմեն ազգի բոլոր հարուածքն ի թշնամեաց, բայց ազգի ներքին կենաց, նորա օրինաց, առեւտից, նորա ընկերական եւ ընտանեկան կենաց, սովորութեանց, ծիսից, նորա կենցաղավարութեան ձեւոյ, զգեստուց, կերակրոյ եւ այլ այսպիսի հետամտելի իրաց մասին բնաւ յիշատակութիւն չկայ։ Ծիծաղելով կը յիշուի մինչ ցայսօր Կալկաթոյ Հայոց մէջ, որ երբեմն մի հայազգի դատ ունելով քաղաքիս բարձրագոյն ատեանում, որովհետեւ Բրիտանական Հնդկաստանում քաղաքական դատից մէջ, գրեթէ ամէն ազգ իւր բնիկ օրէնքով կը դատուի, դատաւորն կը հարցնէ հայազգւոյ օրէնագիտից, Թէ արդեօք նոյն դատի վերաբերութեամբ Հայոց օրէնքն ինչ կը վճռէ։ Զայս լսելն ի բաց, կը դառնայ եւ ձայնելով կ'ասէ օրէնագիտին, "դատաւորին ասա՝ Հայերն օրէնք չունեն, Հայերն օրէնք չունեն„։ Թէ որքան եւ ծիծաղելի համա-

բնացի այս, սակայն չկարեմք ուրանալ, որ շատ հեռի չէ այս ասութիւնն ի ճշմարտութենէ: Որպէս մի ազգ, եւ յոյժ հին ազգ, անկարելի է թէ քաղաքական օրէնք եւ սահման, չպիտի ունեցած լինիմք բնաւ, սակայն թողեալ մի երկու եկեղեցական կանոնագիրք, ոչինչ յիշատակութիւն չկայ թէ ինչ էին մեր օրէնքն, ինչ մեր օրինաց կանոնքն, եւ ով դասաւորքն եւն: Ծայրէ ի ծայր մեր ազգային պատմութիւնն կարդա, — եւ մտածիր Նոյից սկիզբն կ'առնէ այն — եւ հարիւր միայն կանանց անուանց յիշատակութեան հանդիպելոց չես: Կան մի քանի թագուհեաց եւ իշխանուհեաց անուանք եւ այդոքիկ են միայն, եւ կը կարծէ ոք թէ հասարակ կանայք եւ մանկունք չկային մեր ազգի մէջ, եւ կամ բնաւ նոցա ընտանեկան կեանքն յիշատակի արժանի չէր: Սակայն չպիտի մեղադիր լինեմք եւ պատմագրացն, քանզի նախ Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ կրօնական նախանձով ոչ միայն կռապաշտութեան հետ բոլորովին անհետացրեց ամենայն ազգային վէպք եւ յիշատակութիւնք, որ մեհենից մէջ կը պահուէին, քրմից պաշտպանութեան ներքոյ, որք ժամանակի միմիայն դրագէտ անձինքն էին, այլեւ յայնմ հետէ այնքան հալածմունք եւ աւեր եկաւ մեր տարաբախտ աշխարհի վերայ, որ զարմանալի չէ թէ յայնմ հետէ գրեալ պատմութիւնք եւ յիշատակութիւնք եւս հետզհետէ ի կորուստ գնացին:

Թէ ինչ զգեստու էին Հայք երբ Հայաստանից ի Ջուղա եկին, այդ եւս ինձ անծանօթ է, եւ չմտաբերիմ եթէ կայ պատկեր կամ նկարագրութիւն որ ի յայտ բերէ զայն: Բայց թէ ինչ որ էր, արական սեռի հագուստն, երկբայութիւն չկայ, որ կամ իսկոյն կամ յետ ժամանակի ինչ փոխեցաւ ի պարսկական հագուստ: Իմ տեսածով

ընդհանուր արական սեռի զգեստու ձեւն պարսկական էր, եւ հետեւեալքն կը կազմէին կատարեալ սար մի զգեստու։ Կապայ, բաճկոն կամ ալխալուղ, շապիկ եւ վարտիք։ Կապայքն երկու տեսակ էին ծոցաւոր եւ հասանի։ Առաջնոյ գրպանն քառակուսի ձեւով կը բարձրանայր գրեթէ մինչ կզակի մօտ, միայն մի փոքր շապկի ճերմակն երեւեցնելով, եւ քղանցքն եւս երկայն էին մինչ ոտքի կոճեղաց մօտ, եւ այս քղանցքն ոչ կարած միացուցած էին միմիանց հետ, այլ տաղաւարի քղանցից նման մէջքէցն ի վայր կախ կը ձնային երեք փեղկովք, որով ոչ միայն խիստ անյարմար կ'առնէին զայն սրունից ազատ շարժմանն, եւ գործոյ մէջ զբաղման, այլեւ ի փչել հողմոյ դլուշակի նման բարձրացեալ կը սկսանէին օդումն ծածանիլ։ Եթէ քղանցքն կարճ լինէին, ասա մինչ ծնկաց մօտ, եւ գոնէ կիսով չափ միացրած միմեանց հետ, յաւել առնացի եւ վայելուչ հագուստ մի կը լինէր այն, բայց սովորութիւն չներէր զայս։ Վերջին տեսակն կամ հասանին — շատ քաջասիրտ մարդ պիտի եղած լինի այս Պարոն Հասան, որ վստահացած էր այս նորաձեւութիւնն հանել ընդդէմ սովորութեան — միեւնոյն էր որպէս առաջինն, միայն կը զանազանէր գրպանաւն, որ փոխանակ բոլոր լանջքն ծածկելոյ առաջնոյ նման, շրջուն կամարի ձեւով բաց կը պահէր զայն շատ կամ փոքր, որով շապկի ճերմակն յաւելի կ'երեւէր։ Հասանի տարազ հագանելն ի պատուի չէր, քանզի նորաձեւութիւն էր համարելի, եւ նորաձեւութիւնն յանցաւոր բան մի էր յայնժամ։

Բաճկոնն զոր կապայի ներքոյ կը հագանէին, բոլորովին կապայի ձեւ ունէր, միայն փոխանակ կապայի նման միագոյն պաստառից կազմելոյ — եւ կապայի համար ամէն պայծառ եւ թուխս գոյն ներելի էր — որպէս կա-

նաչ, կապոյտ, երկնագոյն, դեղին եւն — բաճկոնն նկարէն կամ տպեալ պաստառէ էր կազմեալ, եւ փոքր մի թանձր, բամբակած եւ աստառած լինելով: Բաճկոնի միւս մի տարբերութիւնն եւս այն էր, որ երկու կողմամ երկու քսակ ունէր կախած իր պահելոյ համար, եւ յարմար բան էին սոքա, բայց փոխանակ ծածկած լինելոյ քղանցքի ներքոյ, որ ապահով եւս կը լինէր, նոյնպէս եւ վայելուչ, միանգամայն ակն յանդիման բաց էին, եւ ընդհանրապէս խոշոր պաստառէ կազմեալ լինելով, շատ տգեղ եւ անճոռնի կ'երեւէին: Ոմանք բաւական լայն եւ երկայն կը կազմէին այս քսակն յաւել իրք դնելոյ համար, եւ երբ լի էին այս քսակներն, զմայլելի տեսարան մի կը ձեւացնէին երբ քսակատէրն փողոցում քայլում լինէր: Ժամացուցի ճօճանակի նման կը տատանէին օդոյ մէջ յետ եւ յառաջ, ամէն անգամ անցուդարձում բաղխելով ծնկների ընդդէմ: Սաստիկ բռնաւոր է սովորութիւնն յիրաւի: Ցետոյ կը գայր շապիկն, եւ վարտիքն: Կը տեսնուի, որ ամէն աշխարհում բնակիչքն իւրեանց հագուստն յարմարած են աշխարհի կլիմային, բայց վերջին հագուստի մասին, անուրանալի է որ զանցառութիւն էր եղած հնարողէ կողմից. ոչ միայն նրբանիւթ կտաւից էր կազմեալ այն, այլ ոչքան լայն, այնչափ լաւ էր համարելի, եւ թող ամէն ջուղայեցի իւր փորձից մտածէ թէ սորա նշանակութիւնն ձմերան սառնասառոյց եղանակումն ինչ է: Սատմոքն, ծնկնէն ապահովելով ցրտից, գրեթէ ցրտոյն յաղթած է ոք, բայց այս հրաշալի զգեստն ոչ մին կարող էր առնել եւ ոչ միւս: Ընդհակառակն երկու ընդարձակ ծխնելուղի նման կ'ընդունէր իւր մէջ ցրտաշունչ հողմն, որ բաւական էր մինչ ցոսկեր ուղեղն ներքոծել: Շապիկն իւր բնիկ ձեւովն կարծեմ կը տեւէ մինչ արդ:

Կօշկի մասին խօսել, նոցա ձեւն եւ տեսակն բազմազան էին եւ ոմանց բաւական տարօրինակ: Մին՝ զոր լաւ կը յիշեմ, քանզի հագած եմ փոքրիկ հասակումն, կը կոչուէր "Ճուշա": Թողեալ սորա այլ պատուական յատկութիւնքն, որ գարշապար չունէր, եւ այնպէս խելօքութեամբ շինած էր որ անխափիր կարելի էր աջ ոտինն ձախ ոտում հագանել, նոյնպէս եւ ձախ ոտինն աջ ոտում, ունէր այլ եւ եզակի յատկութիւն մի, այսինքն է ծայրի կողմից մի կտոր սրաձեւ մորթ ունէր յետ թեքած երեսի վերայ, որ կտուց կը կոչուէր, եւ այն թէ զարդու համար էր այս, չգիտեմ, այլ մի բան լաւ գիտեմ, քանզի խոր տպաւորութիւն եմ գտած անտի, որ այս կտուցն, փոխանակ պատուով իւր տեղում խոնարհեալ մնալոյ երբեմն ապստամբօրէն գլուխ կ'ամբառնայր: Կամ ուղղակի կը կանգնէր կամ կը թեքուէր առ հակառակ կողմն, եւ կը կարծէիր թէ մի յատուկ վրէժխնդրութեան հոգւով, տան մէջ կամ փողոցում յանկարծ եւ յանակնկալս, որ ոք իրի հանդիպելով, կը մխէր զինքն նորա նեղքոյ, եւ հետեւանքն էր, հագանողի կողմից գետինն համբուրել: Գիւա ասացեալ կօշկին եւս, որ բոլորովին բամբակեայ թելից եւ պաստառից էր շինուած, մեծ վաճառ եւ գործածութիւն ունէր, լաւագոյն տեսակն ութից տասն ղրուշ գին բերելով: Այս եւս մի աշխատանաց աղբիւր կարէր լինել աղքատ Ջուղայեցւոց համար, բայց չէր: Այլ շատ այսպիսի ձեռագործք եւ արհեստք կային Պարսից մէջ, որ միջակ ապրստի միջոց կարող էին լինել եւ Հայոց համար, այլ կ'երեւէր որպէս թէ Հայն չգիտի եւ չէր կարող սովորել զայս, թէ եւ բանաւոր պատճառ մի չկայր այսպիսի կարծեաց, եւ կարծեմ չկայ եւ մինչ ցայսօր:

Պէտք է մի փոքր եւս խօսինք գլխարկի համար: Գլխարկաց եւս քանի ձեւերը եւ տեսակներ կային, որք կը կո-

չուէին "Թաթի", "Սամադէ", Գիշերային կամ Շաբքօլա եւն, այլ բոլորի թագաւորն, որ իւր շքեղութեամբ եւ յատկապէս բարձր եւ վեհ հասակով կը գերազանցէր ամէն տեսակից, փափախ կամ մորթեայ գլխարկն էր. որ Բօխարայի եւս կը կոչուէր: Եւ սորա վեհութեան մօտ միւսներն նշմարանաց արժանի չլինելով, սորա վերայ միայն կը լսենք: Շքեղ եւ բարձրահասակ էր այն յիրաւի, երբեմն մին գազաչափ, եւ միշտ մի կանգնից յաւել: Սորածին գառին մորթից կազմեալ, դրսից որպէս թէ մի կոտորից կազմեալ կ'երեւէր, բայց լաւ տեսակն հարիւրաւոր կոտորներից էր շինուած, կոտորներ ընտրեալ մորթոյ միայն լաւ ոլորակ ոլորակ բուրդ ունող մասնից, եւ հետեւապէս մի մեծագին գլխարկի համար գուցէ տասնից մինչ քսան գառանց մորթ էր հարկաւոր: Արական հագուստից ծանրագին մասն էր այս կարծեմ, երկու կամ երեք Թումանից պակաս արժէք գլխարկն գործ ածելոյ արժանիք չունէր, բայց մինչ եօթն, ութ եւ տասն Թուման արժէիւք եւս կային այսպիսի գլխարկք, եւ եթէ ընթերցողն մտաբերէ այն ժամանակի դրամոյ սղութիւնն, կարող է մակաբերել որ յիրաւի այս մեծ գումար էր մի գլխարկ գնելոյ համար: Սոյնն բոլորից պատուաւորագոյնն էր համարելն, եւ միջակ եւ բարձր դասու մարդիկ միայն զայն գործ կ'ածէին թէ տան մէջ, թէ արտաքոյ: Շատ լաւ եւ յարմար նիւթից էր պատրաստեալ այն վասն ձմեռան եղանակում գլուխն ցրտից ազատ պահելոյ (թէեւ ամառան ջերմ եղանակումն եւս միեւնոյն գործ կ'ածուէր), բայց հարցանելին այն է թէ ընդէր այդչափ բարձրահասակ: Լաւ կը մտաբերեմ, որ օր մի մինչ մի նոյն այս գլխարկից ի գլուխս եդեալ Դաւրիժեցւոց Թաղլէ "Խերեւանով" կամ մեծ փողոցովն կ'երթայի, այդ ամէն ջուղայեցու ծանօթ եւ համբաւաւոր մեծ Սանդի

մօտով, որոյ շուրջն միշտ ժողովուած էին ազատախօս փիլիսոփայք ոմանք, յանկարծ այս փիլիսոփայից մին յետ նիցս ձայնելով՝ ասաց "Էյ պարոն չե՞ս կարող այդ գդակն կիսել, եւ մի կէսն եղբօրդ տալ,,: Շատ խոժոռեցայ ես սրտիս մէջ, այս մարդոյ բրտութեան վերայ, եւ պատասխանւոյ արժանի չհամարեցի նորա նշմարանքն — թէեւ խոստովանք լինի մեր մէջ, սկսայ ընթացքս արագել, քանզի այս ազատախօս փիլիսոփայից հետ հակաճառելն, երբեմն անակնկալ հետեւանք յառաջ կը բերէր — բայց այժմ, չկարողանամ ուրանալ, որ ուղղող, եւ արդարեւ, բարի խրատ էր այն: Ի՞նչ իրաւունք ունէի ես կամ այլ ոք այնպիսի գլխարկ ի գլուխս դնել, որոյ նիւթից մի կամ դուցէ երկու այլ գլխարկ կարելի էր կազմել: Այլ որպէս ասացի, որքան ձիգ, այնքան շքեղ էր համարելի: Գլխարկակար եւս չկայր Հայոց մէջ, եւ ոչ նորոգող, քանզի այս մեծագին գլխարկներն փութով ի բաց չէին ձգել, այլ յաճախ եւ յաճախ նորոգութիւն կը ստանային, գոնէ երկու կամ երեք տարի տեւական առնել: Ջուղայեցին, գոնէ Ջուղայեցւոց գլխարկն պատրաստել եւ նորոգել կարող էր, որով հայի դրամն հայի քսակ մտէր, այլ գլխարկակարութիւնն եւս այն աշխատութեանց շարքում էր, որ հային վերարերելի չէր, թէեւ առանց աշակերտելոյ եւս դժուար չէր առնել գայն:

Զպիտի մոռանամ ձմեռնային լոգիկն կամ "Քօլօջյան,,: Այս եւս կը կարծէր ոք, որ թէ թանձր եւ թէ թեթեւ, (ընդհանրապէս բաւական թանձր չէր խիտ սառնութիւնից ազատ պահելոյ համար) այնպէս ձեւով պէտք էր լինէր, որ լանջքն եւ փորն ծածկէր. եւ ջերմ պահէր, բայց այդպէս չէր: Շրեք փեղկից կը բաղկանայր այն, որ յետ կուսից եւ յառաջոյ կողմից կը հասանէին մինչ ծնկաց մօտ,

եւ յառաջոյ երկու փեղկն, երկու դրանց նման միշտ բաց էին, բնաւ պատսպարութիւն չտալով լանջացն եւ փորին: Այս Քօլօջայքն, կազմեալ էին ընդհանրապէս թխագոյն չուխայից, փոքր թանձրագոյն նիւթ մինչ աստառ տալով, եւ քանի մի տարիք կը տեւէին այնք: Կային որ աստառոյ փոխարէն գառին մորթ ունէին, եւ այս յաւել ջերմ եւ մխիթար էր, այլ պատուաւոր չէր համարելի: Ծխինանց Քօլօջայքն, երբեմն Սամուրով էին աստառած, եւ շատ վայելուչ եւ շնորհալի կ'երեւէին, մանաւանդ նորաձեւ տեսակն, որ փոխանակ փեղկաւոր լինելոյ, ատորին մասն, այսինքն միջքէն ի վայր, շղթազգեստի նմանութիւն կը բերէին կիտուած ունելով:

Իգական սեռի հագուստի վերայ խօսելով, պիտի գովեմք զնոսա, որ անփոփոխ էին պահած իւրեանց ազգեստն, եւ արական սեռի նման պարսկական իգական սեռի հագուստին չէին հետեւած: Թէ բնիկ հայկական ազգեստ էր այն, դժուարին է ասել, բայց հաւանական է կարծել, Թէ միեւնոյն ազգեստ էր զոր Հայաստանից բերած էին: Պարկեշտ եւ բաւական շնորհալի հագուստ էր այն, եւ քանզի զանազան ոսկեթել եւ կերպասեայ նիւթերից, եւ ամէն պայծառ գունով ներելի էր պատրաստել զայն, եւ հագուստի զանազան մասունքն զանազան գունով եւս կը լինէին ակնագրաւ եւ գմայլելի գունոց բազմութիւն կը տեսնուէր, երբ ընկերական հանդեսներում ժողովուած լինէին տիկնայք եւ օրիորդք իւրեանց շքեղ եւ զարդարուն ազգեստուք: Ոսկեթել ազգեստքն բաւական բազմածախս էին, եւ երկար տարիք կը պահուէին զգուշական խնամով, շատ անգամ մօրից առ դուստրն երթալով, եւ նաեւ առ թոռն, եւ դեռ լաւ վիճակում կ'երեւէր այն: Բայց որքան մարմնոյ ազգեստն վայելուչ էր եւ շնորհալի (որ կը բաղկանայր

մխիթանայից կամ թակալայից, որ բոլոր հասակի երկայնութեամբ էր պարանոցից մինչ ոտք. եւ մարմնոյ չափուն վայելչապէս յարմարեալ, բայց յառաջոյ կողմից բաց, որով կ'երեւէր կերպասեայ շապկի յառաջակողմն, որ ընդհանրապէս այլ գունով էր քան թակալայինն, եւ որ կուրծքն եւս կը ծածկէր, բայց լանջքից մինչ պարանոցի մօտ ճեղքուած ունելով, զոր սովոր էին պարանոցի մօտ արծաթի կոճակով եւ փոքր մի ի վայր գալձեալ արծաթի կամ ոսկեղէն ճարմանդով կոճակել, եւ ամենայնացեալք ունէին ուսից վերայ մանդիլ կամ սպանիական Մանտիլա ծածկոյթն որ կ'իջանէր յառաջոյ կողմից մինչ գօտւոյ մօտ, եւ ի յետուստ ձախձալ արարեալ կը տարածէր մխիթանայի երկայնութեամբ որպէս լայն ժապաւէն մի, եւ մէջքն կը շրջապատէր արծաթի գօտի կամ որպէս կը կոչէին քամարն) չկարեմ միեւնոյն ասել գլխոյ հագուստի համար: Գլխոյ հագուստ կ'ասեմ, քանզի գլխարկ չկայր, եւ գլուխն եւս իւր առանձին հագուստն ունէր, եւ յաւել մասունքից բաղկացեալ քան մարմնոյ բոլոր զգեստքն: Ցուսամ, իմ ի սրտէ պատուեալ ջուղայեցի Ծիկնայքն կը ներուին ինձ, եւ չեն բարկանալ իմ վերայ, եթէ իմ տեսած գլխոյ հագուստի վերայ քանի մի պարզ նշմարանքներ կ'անեմ, այս տեղ: Ոչ թէ ծաղրածութեան կամ քահանայ հոգւով, քաւ լիցի, ես իմ մօր եւ քերցն ծաղրօղ չեմ, այլ միայն ցոյց տալոյ համար, որ գեղեցկի եւ վայելչականի հետ, կային եւ տգեղ ինաստակար սովորութիւնք, զոր ուրախութեամբ կը լսեմ այժմ, զի գրեթէ բարձուելոյ վերայ են միանգամայն: Վեց մասունքից կը բաղկանայր մի տիկնոջ գլխոյ ծածկոյթ, եւ սոցա անուանքն եւս մի առ մի մարքումն ունիմ, եւ կը յիշեմ միայն սպառնի սերնդոց հետաքրքրութիւնը լցուցանելոյ համար: Առաջինը կուլալաչիկն էր, սորա

յետ կը գայր պշօռթիկն, յետոյ բաշմաղն, ապա շուշտակն, կօտն, եւ ի վերջոյ լաչակ կամ լաչիկն: Ծեր կանայք ձմեռն եղանակում կը պատէին գլխոյ վրայ՝ մի երկայն կերպասեայ կամ ասուեայ պաստառ եւս, որ մուղադամ կը կոչուէր, եւ դեռ լսած եմ իմ խղճիկ մօրից, որ կ՚ասէր, "ցուրտն գլուխս տանում է, որդի„: Ամենայն բժիշկ կը վկայէ, որ առողջութիւն է միշտ գլուխն ղով, եւ ոտքն ջերմ պահել, քանզի գլուխն յաւել մօտ է սրտին եւ որպէս կենդանութեան կեդրոն յաւել արիւն կ՚ընդունի իւր մէջ ուղեղին անուն տալոյ համար, քան ոտքն որ հեռի են սրտից, եւ վասն որոյ գլուխն կարօտ է յաւել ղով պահելոյ, որ արեան ջերմութիւնը բարեխառնէ, քան ոտքն: Շատ լաւ կ՚ասենք թէ ձմեռն եղանակն խիստ սառն լինելով, գլուխն միանգամայն անծածկոյթ պահելն վնասակար էր, բայց կարելի էր սիրուն եւ շնորհալի եղանակաւ ծածկել զայն, որպէս Պարսից Տիկնայք կ՚անէին, ապրշմեայ կամ ասուեայ թեթեւ պաստառով, կամ բարեձեւ գլխարկ մի դնելով: Ամենայն ջուղայեցի միայն գիտէր, եւ կանայքն լաւ եւս, որ այսպէս գիշեր ցերեկ այսքան փաթութներով գլուխն ծածկելն, թողեալ առողջութեան վնասն, էլ ինչ անմխիթարութիւնք կը պատճառէին, զորս հարկաւոր չէ աստ յիշել: Բայց թողնենք միւսներն, ամէնից վնասակարն, անձռնին, եւ անիմաստն, բաշմաղն գործածութիւնն էր: Այն որ հայ Տիկնանց զգեստու մասն չէ այս, լաւ յայտնի է, եւ փոխառածէ այն Տաճիկներից, շատ հաւանականաբար, այն ժամանակում, յորժամ Արարատեան գաւառն Տաճկաց իշխանութեան ներքոյ էր, եւ Տաճկաց կանայք միայն ի գործ կ՚ածեն զայս մինչ ցայսօր, մինչ անգամ Կոստանդնուպօլսում եւս: Շաշմաղ բառն եւս զոր Ջուղայեցիք բաշմաղ են փոխարկած, թէեւ գիւղական Հայք դեռ

բնիկ հնչմամբ կ՛արտասանեն զայն, տաճկական բառ է, բայց Տաճկաց մէջ եաշմաղն բոլորովին այլ ինչ է, եւ նորին գործածութիւնն եւս միանգամայն տարբեր քան ինչ որ Ջուղայում էր։ Ցեսողք կը վկայեն որ եաշմաղն Տաճկաց կանայք գործ կ՛ածեն որպէս երեսաց քօղ, եւ այդ միայն երբ դուրս կ՛երթան, եւ ոչ տան մէջ։ Նոցա գործածեալ եաշմաղն մի կտոր շատ նրբանիւթ շղարշեայ պաստառ է, որ թոյլ եւ հանգրիձեալ բայց շնորհալի ձեւով կը ծածկէ գրեթէ երեսաց մեծ մասն մինչ աչքերի մօտ, բայց պաստառի հիւսուածն այնպէս նուրբ է եւ այնպէս արուեստով եւ վայելուչ կերպով կը կառավարեն զայն, որ երեսաց ծածկեալ մասն եւս թափանցիկ քօղէ յետկուսից պարզ կ՛երեւի գրեթէ, եւ կերպարանացն յատկութիւնք նազելի եւ ակնագրաւ երեւոյթ մի կը տայ, եւ որպէս ասացաւ. այս քօղարկութիւնն միայն տանից դուրս գնացած ժամանակում է, Պարսից կանանց նման։

Բայց դու ևկ տես, ինչ էին բերած փոխարկած զայն Ջուղայում։ Ցառաջն որ եաշմաղն հիւսուածն այնքան նուրբ էր, հասարակ մարմնոյ ասացեալ կտաւից էր այն, եւ բաւական թանձր չհամարելով զայն, կերպատկերին եռանկիւնք ձեւով եւ երբ սաց մորթոյն կից կը կապէին զայն, այնպէս որ կզակն մինչ վերին շուրթն եւ այտից մեծագոյն մասն ծածկած կը մնային։ Եւ ամէն խղճիկ աղջիկ իւր փոքրիկ հասակից երբ առաջին անգամ կը կապէր այս տարօրինակ ծածկոյթն, այդ էր գնաց մինչ մահուան օրն։ Տան մէջ կամ արտաքոյ, մինչ անգամ բաղանեաց մէջ, գիշեր կամ ցերեկ բնաւ ժամ մի անգամ չպիտէր վերանայր նորա երեսից։ Բայց այս բաւական չէր, երբ աղջկունքն հասակի հասանելով հարսնանային այնուհետեւ պէտք էր բաշմաղն բարձրացնէին մինչ քթի ծայրն, եւ վայ այն հարսին, որ

վայրկեան մի անզգոյշ ճնայր, եւ թոյլ տայր քթի ծայրին ցածանալ, զարհուրելի անպարկեշտութիւն էր այն, այլ բերանն երեւացնել միոյ մօտ, աններելի էր բոլորովին: Հասած եմ այսպէս դէպքում հասակաւոր տիկնայքն կ'ասէին, «Ձէր քեզ մեղայ, ուրիշ բացէյայ չի էլ ամանչ-ման»: Զգիտեմ ուրիշ ինչ կը նշանակէր, բայց կարծեմ արհամարհական բառ էր բերանոյ փոխարէն: Ոմանիկ հարսներ, իւրեանց հարսնութեան առաջին քանի մի շաբաթում ինչ չարչարանք կը կրէին իւրեանց քթի ծայրին այս անողորմ սովորութեանն հնազանդութիւն սովորեցնել: Ապատամբ քիթք եւս կային, որ հեշտով եւ փութով հպատակութեան ներքոյ չէին դալ, եւ ցաւալի էր տեսնել, ամէն վայրկեան տարաբախտ հարսին մատունքն կը բարձրանային կրկին եւ կրկին համոզել կամ բռնադատել խեղճ քթին որ խոնարհեցուցանէ իւր ծայրն հրաշալի բաշմաղև ներքոյ: Ամուսնացեալ միայն ծեր կանանց ներելի էր փոքր մի թուլացնել այս անողոքելի սովորութիւնն: Բայց եւ այնպէս ճերմակավարս տիկնայք անգամ քահանայից եւ պատուաւոր անձանց մօտ դարձեալ իսկոյն կը բարձրացնէին բաշմաղն առ քթի ծայրն: Թէեւ պէտք է ասել, ողորմի այս սովորութիւնն հասատատողի հօր հոգւոյն, որ այսքանով բաւականացած է, եւ օրէնք չէ դրած որ բոլոր երեսքն ծածկեալ ճնայ միշտ հանդերձ աչքերովն: Բայց կը զարմանայ մարդ, թէ ինչ նպատակաւ կամ ինչ նշանակութեամբ հաստատուած էին այսպիսի անճոռնի սովորութիւնք: Միթէ միայն մարդն էր որ ի պատկեր Աստուծոյ արարաւ, եւ ոչ կինն: Ու ընդէր նորա աստուածարեալ գեղեցիկ պատկերն պէտք էր ծածկեալ ճնայր որպէս թէ երեւիլն ամօթալի բան էր: Ու յատկապէս բերանն, միթէ ինչ մեղք էր գործել այն, որ սովո-

բութիւնն կը պարտաւորէր ուտելոյ ժամանակում եւս, միշտ մի թաշկինակաւ ծածկել զայն որ բնաւ չերեւէր: Եթէ պարկեշտութիւն էր համարելի, պարկեշտութիւն մտքի եւ սրտի մէջ պէտք է լինի նախ, որ դիմաց վերայ երեւի, եթէ միտքն անպարկեշտ է, ոչ բերանն ծածկելով եւ համրացնելով, ոչ երեսն ծածկելով կարելի է պարկեշտութիւն գոյանալ: Իմ աղնիւ համազգի քերդ հայեցի պատկառանք եւ պարկեշտութիւնն, նոցա մտաց անարատութիւնն, հեզիկ եւ քաղցր վարքն, քաւ լեցի, այսպիսի յիմարական սովորութիւններից չէր կախուած, շատ բնիկ էին այնք եւ ընդարձոյս որչափ ես էի ծանօթ:

Զարդուց մասին, արական սեռն, ի պատիւ իւրեանց, զարդու սէր չունէին: Արական սեռի զարդն նորա պատուասիրութիւնն է, նորա առնավայել վարքն, նորա աշխատասիրութիւնն, նորա հաւատարմութիւնն: Զարդն փափուկ սեռին է պատկանելի: Վերջնոյդ զարդուց մէջ դլխաւորքն էին, բոժոժ եւ քրմակն, որ ոսկուց կը շինուէր եւ կը կրէին երեսաց երկու կողմամ: Քամարն կամ գօտին որ արծաթից էր կազմեալ, ձարմանդք, մատանիք եւ խալխալ: Վերջինդ արծաթի մանեակ կամ մեծ օղերին, զոր կը կրէին սրունից վերայ ոտին կոճեղաց կամ ձանից մօտ: Ոմանք կը սիրէին ոսկի դրամոց շար եւս ձգել զպարանոցաւ, կամ այլ տեսակ ոսկուց կազմեալ վզնոցներ, որոց մի տեսակն կը կոչուէր ձուկն եւ գարի, քանզի այդ երկու իրաց նմանութիւնն ունէին բոժոժքն: Բազկի զարդ, կամ ապարանջանք եւս ոմանք գործ կածէին, այլ ականջաց գինդ ոչ ոք, քանզի խղճիկ ականջքն շատ փաթութիների մէջ աներեւութացած էին միշտ: Սիրուն էին, եւ անշնորհ չէին բոլոր զարդքն եւս, բայց քանզի զարդուց ձեւն եւ գործածութիւնն հաճոյքից եւ

ճաշակից է կախուած, եւ քսակի պարարտութիւնից, յաւել ինչ չունիմ ասել այս մասին, քան միայն մաղթել որ միշտ աշխատասիրութեան պտղով լի լինի Ջուղայեցւոց քսակն, որով նոցա կանայք եւ դստերքն այս մասին ամենայն եղանակաւ լիացուցանեն իւրեանց հաճոյքն, եւ իւրեանց բնական գեղեցկութեան արժանաւորութեան համեմատ, արուեստական զարդեր եւս այնչափ կարողանան ունիլ, որչափ ամէնու սիրտ կը փափագէ, եւ այդ փոքր չէ կարծեմ:

ՈՒՏԵԼԻՔ ԵՒ ԸՄՊԵԼԻՔ

Թէեւ շատ պարզ, բայց պէտք է ասեմ, խիստ համեղ էին տեսակ տեսակ կերակրոց մեծագոյն մասն: Ու այն որ ժրագլուխ տանտիկնոջ վերակացութեամբ, եւ կամ նորա նոյն իսկ ձեռամբ էր պատրաստուած մաքուր եւ յստակ, Ջուղայեցւոց կերակրոց գլխաւոր եւ գերագոյն յատկութիւն եւ պատուականութիւնն էր, որոյ արժէքն նոքա կարող են միայն լաւ հասկանալ, որ օտար աշխարհներում, յատկապէս Հնդկաստանի մէջ պարտաւոր են ուտել իւրեանց կերակուրն, պատրաստուած այնպիսի խոհարարաց ձեռքով, առ որս միայն նայելն բաւական է շատ սուր ախորժակ անգամ բթացնել իսկոյն: Համեղութեան հետ, պարզ, բնական, եւ աննպարար էին Ջուղայեցւոց կերակուրքն, մի կամ երկու նիւթից բաղկացեալ, եւ առանց շատ կծու կամ թթու համեմանց խառնուրդ ունելոյ: Ընդհանրապէս մի կամ երկու տեսակ կերակուր բաւական կը համարուէր սեղանոյ վերայ, թողեալ ի հարկէ հանդիսաւոր հացկերութից մէջ, երբ բազմատեսակ կը լինէին, բայց եւ դարձեալ ամէն մին պարզ կերպով

պատրաստեալ: Կային եւ պահոց կերակուրք, բոլորովին բուսական նիւթերից պատրաստեալ, եւ բուսական նիւթոց ձիթով, բայց եւ այնք եւս, իրաւ որ, ունչ դարձնելոց կերակուրք չէին: Ցաւել բազմատեսակ էին սոքա, քան զատկականն, եւ Ջուղայում պահք պահելն, թողեալ հոգւոց օգուտն, մարմնաւոր ախորժից եւս զուրկ չէր: Կերակրոց շատերի անուանքն կը յիշեմ, եւ երեսուն տարիք, դեռ չեն կարողացած նոցա ոմանց հաճն եւս մոռանալ տալ: Թողեալ պարսկական հանրաճանօթ փիլաւն, եւ քօֆթայն, եւ տաճկական տեսակ տեսակ դոլմայքն, կային եւ զանազան դալարեօք եւ պտղովք պատրաստեալ կերակուրք, որք միշտ "ով" վերջաւորութիւնն ունէին, որպէս, խնձորով, սերկեւլով, դդմով, շոմէնով, եւն: Բայց մի քանիքն եւս շատ տարօրինակ անուանք ունէին, որպիսի են, շոմէնով տաքացրած, բակլատախտակ, շլիլաւ, խաւիծ, սրմնմուկ, մախոխ եւն: Վերջինդ որ պահոց կերակուր էր, թէեւ տեսած եմ՝ ոմանք ախորժաւնօք կը վայելէին, այլ ի տարաբախտութիւն իմ, երեւի թէ իմ քմայ ճաշակաւորութիւնն այնչափ սուր չէր որ կարողանայի որոշել նորին արժէքն եւ համեղութիւնն: Սակայն այս կերակրոց մասին կը պատմէին, թէ օր մի ջուղայեցի ոմն կը տանէ զայն, մի պարսիկ վարձկանի համար, որ իւր այգուն կ'աշխատեր: Երեկոյն՝ երթալոյ ժամանակում, կը դառնայ վարձկանն կը հարցանէ, "հայ", կ'ասէ, "ոչինչ անիրաւութիւն ես տեսած դու ինձանից, կամ ոչինչ վնաս ես տուած քեզ": "Ո՛չ", կը պատասխանէ հայն զարմացմամբ, "բայց ընդհէր կը հարցնես զայդ": "հայ", կը շարունակէ պարսիկն, այդ կերակուրն որ այսօր բերիր իմ համար, եթէ խաղողոյ որթոյ արմատոյ վերայ աճես, որթն կը չորացնէ, եւ դու բերած էիր որպէս

կերակուր իմ համար: Երկբայելի է թէ ուղիղ լինի այս անցքն, բայց եւ այնպէս առաջին պատմողն իմ նման տարաբախտ պէտք է եղած լինի, եւ մխիթարի պատուականութիւնն չհասկացած:

Ծփելի կերակրոց հետ կային եւ պտուղքն, այդ երկնապարգեւ պատրաստի եւ բնական կերակուրքն, որոց թէ աղնուութեան եւ անուշութեան մասին, յիրաւի շատ փոքր աշխարհք կարող են համեմատել Պարսկաստանին: Ի հարկէ ունի ամենայն երկիր եւ իւր լաւագոյն պտուղն, բայց մի ջուղայեցի կարող է՞ մոռանալ բնաւ գողտրիկ՝ անուշահոտ՝ ոսկեգոյն ծիրանն, սքանչելի մեծութեամբ եւ աննման տանձն, նուռնն, բազմատեսակ խնձորքն, ալոչն, տեսակ տեսակ շլորքն, յոգնատեսակ, գոյնզգոյն խաղողքն, դեղձն, ձմեռնային սեխն, կամ փոխե՞լ նոցա հետ ուրիշ այլ պտուղ: Իրաւ որ պտղոց մասին յոյժ սքանչելի է Պարսկաստան, յատկապէս վերջին ժամանակներում, երբ զանազան պատուաստաներ փորձելով, ոչ միայն նորանոր տեսակներ յաւելացրին, այլ պտղոց որակութիւնն մեծապէս բարւոքեցին յառաջից: Եւ որքան առատ էին, իմ տեսածով, պտուղք: Շատ անգամ անասնոց կերակուր կը լինէին: Բայց մի բան զարմանալի էր, որ որքան Պարսիկքն լուսի եւ առատօրէն կը վայելէին, ամէն պտուղ իւր եղանակում որպէս կերակուր, եւ կ'ասէին "Ղասիւէի դարդ,,, այսինքն առողջական որպիսութիւն ունի, որ շատ ճշմարիտ է, Հայք միշտ մի տեսակ, փոքր կամ շատ երկիւղիւ եւ կասկածով կ'ուտէին զայն, կարծելով որ հիւանդութիւն կը պատճառէ: Ի հարկէ, այս նախապաշարումն կայր, ոչ բոլոր պտղոց համար, այլ կային յատկապէս մի քանիք, զոր շատ ընտանիք միասակար կը համարէին, եւ իւրեանց կը զրկէին նոցանից հիւանդութեան երկիւղիւ:

Գուցէ անհաւատալի երեւի այս, բայց ստուգիւ կարող եմ ասել որ ես բնաւ տեսած չեմ մեղրապոպ (ձմերուկ) երբէք մեծ լինի մեր տան մէջ։ "Ցենդի բուն է,, կ'ասէին։ Դեղձն եւս միւսակար կը համարուէր։ Նուռն այնչափ ի յարգի չէր։ Ցանձն միայն հիւանդի պտուղ էր։ Դեղնաշլորն երկու կամ երեք հատից յաւելն շատ միւսակար էր համարելի։ Սինդեռ այս պտուղքն բոլորն եւս, թողեալ յոյժ ախորժելի լինելն, առողջարար, եւ դեղորէական յատկութիւն ունող պտուղք են։ Պտուղք որպէս բժիշկք կը վկայեն միւսակար են միայն տհաս վիճակում։ Հասունացեալ պտուղք ամենեւին անմիսաս են։ Այլ յետոյ տես, սորա հակառակն ինչպէս կը վայելէին անփոյթ կերպով տհաս պտուղքն։ Ալոչն միշտ կ'ուտուէր մինչդեռ տհաս էր եւ խիստ թթու, ծիրանն եւս նոյնպէս, մանաւանդ մատաղահասակքն շատ կը սիրէին զայն։ Երբեմն կը ժողովուէին պարտեզաց մէջ "թազա նուշ ուտել,, եւ անխնայ եւ աներկիւղ կը վայելէին զայն, աղաջրով նոցա վերայի թեփն ի բաց առնելով։ Ես ինձ թուի դորա նման դժուարամարս եւ անառողջ ուտելիք ինքն է միայն։ Սակայն ինձ թուի թէ այս տարօրինակ նախապաշարումն, զոր բազումք ունէին, ծագեալ էր այլ բանից, եւ ոչ պտղոց միւսակարութիւնից։ Ամառն՝ որ պտղոց ժամանակ է, սովորութիւն էր զովութեան համար բացօթեայ ննջել, գիշերն, եւ շատ անգամ տանեաց վերայ։ Արդէն յիշած ենք թէ ինչպէս սովորաբար կը ծածկուէին յառաջն, եւ յետոյ ջերմանալով ծածկոյթն կը մերժէին, եւ մարմին կը ցրտանայր։ Արդէն մարմինն գիշերն սառած լինելով, հետեւեալ կամ միւս օրում ջերմութիւն կամ տենդ կը զգայր, եւ բոլոր մեղքն կը ձգուէր պտղոց վերայ զոր հիւանդն կերեալ էր անցեալ կամ այդ օրում։ Ես որ ստոյգ է այս, յայտնի է այն բանից, զի աշնան

սկզբում երբ օդն կը սկսանէր յաւել զովանա, Հիւանդու-
թիւնն եւս կը յաւելնայր, եւ դարձեալ յանցանքն պաղոց
վերայ դնելով, շատ կը խորշէին որոք պտուղ վայելելից:
Իմ փորձն եւ տեսածն կը գրեմ միայն, գուցէ սխալ եմ
ես, բայց դժուարին է հաւատալ թէ հասունացեալ պտուղն
առողջ մարդոյ համար այնչափ անվնաս չէ որպէս հացն եւ
այլ կերակուր:

Ըմպելեաց մասին, յառաջն սուրճն եւ թէյ, այնչափ
ինչ ի հարկաւորաց կարգի չէին, եւ ոչ միշտ գործածելի:
Սուրճն միայն այցելուաց պատուասիրելոյ համար կը պատ-
րաստուէր, եւ երբեմն որպէս դեղ, եւ փոքրիկ ձուաձեւ
բաժակներով կ'ըմպէին առանց կաթնի: Թէյն եւս զոր հա-
զիւ անգամ. կաթնով կ'ըմպէին, գործ կ'ածուէր յաւել
որպէս երբեմնական հաճոյք ինչ: Բայց յետոյ վերջնոյդ գոր-
ծածութիւնն այնչափ յաճախեց, որ ի հարկաւորաց կարգ
մտաւ: Ամէն առաւօտ ընտանիք յաւել ըղձիւ կը սպասէին
թէյի կաթսայի երգելոյն եւ շոգւոյ բարձրանալոյն, քան
արեւու ծագմանն, եւ պէտք է ասել, որ իմ փորձով,
յատկապէս ձմեռնային ցուրտ առաւօտներում, ոչինչ այն-
պէս հաճոյական տեսարան կայր, որպէս մի ընտանեաց ի
միասին ժողովեալ վայելումն թէյի: Կային ոմանք, որք
անդադար կը տրտնջէին, թէ աւելորդ բան էր այն, վնա-
սակար, եւ մաղձ կը յաւելցնէր, բայց եւ այնպէս, որպէս
կ'երեւէր, սոյն իսկ տրտնջողքն, իւրեանց մաղձի յաւելման-
լոյ համար, այնքան մեծ հոգ չունէին, եւ պակաս ըղձանօք
եւ վայելմամբ չէր, որ թէյի բաժակի շրթունքն կը համբու-
րէին: Լսած եմ երբեմն ջուղայեցի անհատներից թէ
"թէյն ջուղայ քանդեց": Ո՛նչ յիմարական ասութիւն:
Իմ տեսածով ջուղայեցւոց նման յաւել սակաւապետ,
յաւել խնայող, յաւել պարզ կենցաղավարութիւն ունող

խումբ մի կարծեմ շատ փոքր աշխարհում կայր, եւ այս թեթեւ հաճոյքն եւս շռայլութիւն պէտք էր համարուէր նոցա համար արդեօք: Անոյշ լինի իւրեանց: Թող Ջուղայեցոց շռայլութիւնն միայն թէյն լինի եւ ոչ այլ ինչ, կ'ասեմ ես:

Ոգելից ըմպելեաց վերաբերութեամբ խօսելով, քանի տարիքներով յառաջ Ուիլ անուամբ անգղիացի բժշկի Պարսկաստանում արարեալ ճանապարհորդութեան գիրք մի կարդացի, որոյ մէջ Նոր Ջուղայեցի Հայոց վերայ խօսելով, այլ զանազան նշմարանաց մէջ, կը նկարագրէ զնոսա ընդհանրապէս արբեցութիւն սիրող եւ արբեցող մարդիկ, բայց ես կարող եմ խղճի մտօք ասել, որ քան զայս մեծ ստութիւն եւ զրպարտութիւն անկարելի է երեւակայել Ջուղայեցւոց մասին: Թէ ինչ թերութիւնք որ ունէին Ջուղայեցիք, այս մարդկութիւն անարդող եւ ամէն չարիք պատճառող թերութիւնից, պարծանօք պէտք է ասեմ, ընդհանրապէս առեալ որպէս ազգ կամ խումբ մի, բոլորովին ազատ էին: Ու իմ տեսածով, հնար էր յառաջ դնել զնոսա որպէս ժուժկալութեան եւ չափաւորութեան գեղեցիկ օրինակ մի շատ ազգաց, մանաւանդ վեր բժշկի ազգի: Ես կարծեմ Ջուղայեցիք եթէ արբեցութիւն սիրող եւս լինէին, փոքր մի ներելի աչքով պէտք էր նայել նոցա, մտածելով թէ որքան առատ եւ երժան են ըմպելիքն Ջուղայում, ուր գրեթէ ամենայն ոք փոքր կամ շատ ինքնին կը պատրաստէ զայն իւր տան մէջ, եւ լիուլի ունէ զայն բոլոր տարւոյ մէջ: Ու ոչ ունողքն եւս, եթէ ցանկան (որպէս իմ տեսածն է) չորս Շահի դրամով միայն կարող են լաւ "Ցնկուել" որպէս սովոր էին ասել: Բայց բոլոր այս առատութեամբ եւ երժանութեամբ, իրաւ որ գովելի էր նոցա ժուժկալութիւնն, եւ լըջասէր բնաւո-

բութիւնն։ Կը մտաբերեմ որ անգամ մի, Ասպահան քաղաքի շուկայում, մի պարսիկ — ոչ խեղճ ոք կամ արբեցող, այլ պատուաւոր անձն մի — խօսելով գինւոյ եւ օղւոյ պատրաստութեան վերայ, դարձաւ ասաց ինձ, "Հայ ուրեմն կ'ուզես ասել, որ բոլորքդ եւս տան մէջ պատրաստեալ գինի եւ օղի ունէք, եւ չէ՞ք ըմպել եւ արբենալ"։ Ու երբ պատասխանեցի թէ չափաւորապէս գործ կ'ածեմք, բայց ոչ արբենալոյ համար, եւ այդ գործածութիւնն եւս մշտական չէ, խիստ զարմացած էր եւ չկարէր հաւատալ։ "Ես կ'ասէր յառաջն կը սիրէի ըմպել, բայց այն պատճառաւ, որ յետ բաժակ մի ըմպելոյ, այլ եւս չկարողանայի զսպել զիս, մինչ ոտքից ընկած արբեցութեան մէջ կը ձգէի ինձ, թողի զայն։,, Բոլոր Մահմեդականք դրեթէ այսպէս էին, երբ սկսանէին ըմպել, չափաւորութիւն չգիտէին, եւ ըմպելոյ նպատակն նոցա համար արբեցութիւն էր։ Այն չէ որ մեր ազգի մէջ եւս բնաւ չկային թշուառք ոմանք որ թոյլ էին տուած անարգ եւ զզուելի արբեցութեան մոլութեանն յաղթել իւրեանց, եւ տարաբախտապէս յոլով ի սոցանէ քահանայք էին, բայց նոցա թիւն շատ, շատ սակաւ էր յիրաւի, ես չկարեմ յաւել քան չորս կամ հինգն մտաբերել։ Հանդէսներում եւ խնջոյից մէջ կը նկատուէին երբեմն մարդիկ, որ չափաւորութիւնից դուրս կը վազէին, եւ այնչափ յոյժ շնորհալի վիճակում չէին տեսնուիլ, եւ երբեմն անկարգութիւնք եւ շփոթք եւս կը ծագէին աստի, այլ առ ժամանակեայ էր այս, եւ սովորական ամօթն եւ սրտնքն կը կրէին այսպիսիքն յետ լըջանալոյն, իսկ անբուժելի արբեցող մարդիկ, բոլորովին գերի եղած իւրեանց արբեցութեանն, շատ սակաւ կային։ Մի երկու տարօրինակ սովորութիւնք եւս կային, որք երանի թէ բարձուած լինին այժմ։ Մին էր՝ որ յաճախ, յաճախ ստիպմամբ կը

հրաւիրէր հիւրընկալն իւր հիւրին ըմպել, եւ այս պատուասիրութիւն էր համարելի: "Ես մեռնեմ պիտի մի թաս էլ խմես, պէտք է խմես ճար չկայ,, եւ այսպէս խօսքերով կը ստիպէին, եւ խեղճ հիւրն եթէ սովոր չէր գինւոյ կամ ցքւոյ, թէ միասակաւ էր իւրն, թէ անախորժ եւ զզուելի էր այն, կը պարտաւորուէր քաղաքավարութեան համար, ընդունել հրաւէրն ընդդէմ հաճոյից եւ կամաց, եւ միսան կրել: Եթէ բարեկամական անիրաւութիւն չէ այս, չգիտեմ այլ ինչ անուն արժան է տալ: Ըմպելեաց մասին չէր այս միայն, ուտելեաց մասին եւս ոչ սակաւ ստիպմունք կային, եւ այնպէս սովորութիւն էր եղած, որ առաջին կամ երկրորդ անգամ հրաւիրելում ամէթ էր ձեռն ի գործ լինիլ: Եթէ քաղցած եւս էիր, քանիցս անգամ պէտ էր կրկնուէր հրաւէրն, "Համեցէք կեր, լաւայ փոքր էլայ կեր, մեղք է սեղանում պատահել եւ չուտելն,: Եւ եթէ պատասխանէիր, նոր ի նորոյ կերեալ էիր, եւ ախորժակ չունէիր, այդ բաւական չէր, "կուշտ մարդն եւս յիսուն թիքայ կարող է ուտել,, կ'ասէր տանուտէրն: Եւ այս յաւէշ կ'ածէ ինձ, որ քանիցս ի տարաբախտութիւն իմ կամ երկրորդ կերակրով ծանրաբեռնեալ եմ իմ նուաստութեանն, կամ յաւել հրաւիրանաց սպասելով, եւ չգտանելով քաղցած ելեալ եմ սեղանից:

Միւս մի տարօրինակ բանն էր, որ հանդիսներում, եւ յատկապէս բացօթեայ զբօսանաց տեղում, գրաւ կը կապէին հասակաւոր մարդիկ եւ պատանիք, տեսնել թէ ով կարող էր յաւել գինի ըմպել: Ոչ թէ սոքա արբեցող մարդիկ եւ պատանիք էին, քաւ լեցի, շատերն գուցէ կը զզուէին գինուց, եւ ոմանք լաւ գիտէին, թողեալ առժամանակեայ արբեցութիւնն, պէտք էր միսան եւս կրէին,

գլխացաւ, եւ այլ անհանգստութիւնք, բայց պարծանք մի էր համարելի որ այս ինչ անձն, այսքան կարողացաւ ընդել, այսքան ժամուց միջոցում: Ի՞նչ յիմարութիւն յիրաւի: Եւ ինչ պարծանք կայր այդպիսի յիմարական գործում, ով գիտէ, բայց այդպէս էր: Սակայն ի վերայ այսպիսի երբեմնական չափազանցութեանց, որ յաւել պատեհութիւնից կամ դէքից յառաջ կու գայր քան հակամիտութիւնից, իսկ բառից նշանակութեամբ, այդ թշուառ արբեցութեան ծարաւից, որ երբեմն հօրից առ սերունդն կ'անցանէ, ազատ էին Ջուղայեցիք: Հարիւրաւոր Ջուղայեցի պատանիկ եւ երիտասարդ կը ճանաչեմ ես, որ իմ սիրելի աշակերտքն էին երբեմն, եւ որք այժմ նոյն իսկ Ջուղայում, Հնդկաստանում, Ջաւայում, եւ Շուրջ պայում սփիւռ կան, յորոց ամէն մին փոքր կամ շատ յաջող վիճակում է, եւ շատերն առուանացեալ եւ պատկառեալ, եւ կարող եմ վկայել, որչափ ես ծանօթ եմ որ սոցա եւ ոչ մին երբէք ձգած է զինքն այս դառն մոլութեան մէջ: Շնորհէ երկինք որ այս մեծ պարծանքն միշտ անպակաս լինի Ջուղայեցւոց հասար: Թող տպաւորեն զայս մայրերն իւրեանց զաւակաց սրտում, թող սովորեցնեն հարք իւրեանց որդւոց, որ Ջուղայեցին միշտ լուրջ եւ զգաստ մարդ պէտք է լինի, որպէս միշտ եղած է, եւ դաւաճան կը լինի իւր ազգին եւ ծնողաց, ով որ աւերէ այս մեծ պարծանքն իւրնից բնաւ:

ՀԻԱՆԴՈՒԹԻՆ, ԲԺԻՇԿ ԵՒ ԴԵՂ

Մտածելով Ասպահան քաղաքի բարձր դրութիւնն — քանզի նորա նիստն մի բարձրաւանդակի վերայ է. որ իբր չորս հազար ոտնաչափ բարձր է ծովի հաւասարու-

թիւնից — նորա չոր եւ մաքուր օդն, գարունն, ամառն աշունն եղանակաց բարեխառնութիւնն, ձմերան անխոնաւ եւ առուգութիւն տուող ցուրտն, սխալ չէր լինել ոք կարծել, թէ Ջուղա աշխարհի առողջագոյն տեղեաց մին պէտք էր լինէր: Բայց այդպէս չէր: Նա սորա պատճառն էր, ի հարկէ, մաքրութեան եւ առողջական կանոնաց եւ նախազգուշութեանց բոլորովին պակասութիւնն, ոչ միայն Ջուղայում այլ բոլոր Պարսկաստանում, ուր ոչ ոք գիտէր նոցա արժէքն եւ հարկաւորութիւնն բնաւ, բայց այս առարկայի վերայ յետոյ կը խօսեմ:

Ըսասեմ թէ շատ անառողջ տեղեաց մին էր Ջուղա, բայց եւ ոչ այնչափ առողջ էր որչափ կարելի էր լինել: Տենդի եւ ջերմախտի հիւանդութիւնն (որ "նօբա„ կը կոչուէր) շատ յաճախ էր, մանաւանդ աշնան եղանակում: Նա տեսած եմ մի տեսակ տենդ, որ կը կոչուէր "Սէյեք„, այսինքն երեք օրէական, որ խիստ կանոնաւորապէս, ամէն երրորդ օրում, միեւնոյն ժամանակում կը դառնայր, եւ ժամ մի կամ երկու սաստիկ դող տալով հիւանդին, քանի մի ժամ եւս կը ձգէր ջերմութեան մէջ, եւ կ'երթայր երկու օրից յետ դառնալ կրկին: Այս տենդն երբեմն ամիսներ եւ մինչ տարի կը տեւէր, եւ սովորաբար կ'ասէին որ դորա համար դեղ չկայ: Միայն պէսպէս յիմարական միջոցներ գործ կը դնուէին կարծելով որ նոցանով հնար էր փարատել տենդն: Այս միջոցաց մի քանիսն կը յիշեմ: Մին էր, որ եթէ երեք հոգի միասին մի իշոյ վերայ հեծած լինէին, եւ նոցա հարց ձգուէր թէ Սէյեք տենդի դեղն ինչ է, ինչ որ հեծելոց մինն ասէր, այդ դեղ պիտի լինէր, կամ փարատէր տենդն: Այս հարցումն, երբեմն տանեաց վերայ գնալով, անտի կը լինէր բարձրաձայն աղաղակաւ եւ բազմիցս կատակասէր անձինք խիստ

անձոռնի պատասխանիք կու տային, յորոց մին զոր յիշեմ էր «Դեղին հաւու ծերա»։ Միւս մի միջոցն էր հիւանդին յանակնկալ երկիւղ պատճառել, կամ զարհուրեցնել, որ տենդն եւս երկիւղից փախչէ։ Կը մտաբերեմ որ մեր ընտանեաց մեի համար, որ հիւանդ էր այս տենդով, վեր աքանչելի միջոցն ի գործ դրուեց, իմ ներկայութեամբ։ Մինչ խեղճ հիւանդն միամիտ նստած էր, տանիքի վերնից — այնպէս որ անմիջապէս նորա մօտ գետին անկանէ, մի մեծ ջրով լի սափոր վայր ձգուեց, եւ կարող է ընթերցողն երեւակայել, թէ ինչ զարհուրանօք գրեթէ կէս կանգնաչափ վեր թռեաւ տարաբախտ հիւանդն, բայց հետեւանքն միայն այն եղեւ, որ տենդն երեւի լուր չգտաւ այս մասին, եւ ճիշդ իւր ժամանակին վերադարձաւ, եւ ընտանեաց միւս մին՝ իւր կրեալ սարսափից քանի օր հիւանդ մնաց։

Բայց խօսքն հիւանդութեան վերայ էր, դեղոց վերայ յետոյ կը խօսեմ։ Ջերմախտն եւ տենդն թէ եւ յաճախ այլ այնչափ վնասակար եւ մահաբեր չէին, թէեւ բաւական վիշտ եւ անհանգստութիւն կը պատճառէին եւ ոչ սակաւ նուաղութիւն։ Պիսակի կամ ծաղկի ախտն եւս, այնչափ յաճախ չէր, մանաւանդ երբ սովորեցան պատուաստի գիւտն ի գործ դնել, եւ մի զարմանալի բան եւս այն էր, որ այս ախտն միայն մանկական հասակում կ'երեւէր ի Ջուղա, մինչդեռ այլ աշխարհներում հասակաչափ, եւ մինչ անգամ ծերունի մարդիկ եւս գտանէն զայն։ Բայց կային քանի մի խիստ վտանգաւոր եւ մահաբեր հիւանդութիւնք եւս, որք երբեմն շատերի զոհ կ'անէին։ Սաթլջամի կամ թոքերն սառելոյ ախտն շատ կայր, մանաւանդ ձմերան եղանակում, եւ այս միայն անզգուշութիւնից կը պատահէր, մարմինն բաւական չպատսպա-

ըլլով ցրտից: Կայր նաեւ — եւ քանիցս անգամ հա-մատարած փոխադրութեամբ մեծաթիւ մահուընք պատ-ճառից մահմռուկ սաացեալ հիւանդութիւնն, որ երբէք չկարէ պատահել քան ժահրեալ ջրից կամ օդից: Կօլերա, կամ փորբերանի ախտն եւս, որ միեւնոյն պատճառից յառաջ կու գայ, թէ եւ միշտ չկայր բարեբախտապէս, այլ անգամ մի պատահեց իմ տեսածով, որ Ջուղայու փոքրիկ խմբից անց երեք հարիւր հոգի մահու բաժին արար, թողեալ այն որ յետ մեծ սովուն է պատահեալ: Վեր երկու ախտքն եւս փոխադրական են, որպէս ամենայն ոք գիտէ: Աչքացաւ եւս կայր երբեմն խիստ վշտալի եւ երկարատեւ, բայց կուրացնելոյ վտանգ չունէր:

Բժշկաց մասին, այն ժամանակներում կարող էիր ասել կամ ամէն ոք բժիշկ էր կամ բնաւ բժիշկ չկայր: Արհեստին աշակերտեալ եւ վկայական ունող բժիշկ բնաւ չկայր: Թէ Հայոց եւ թէ Պարսից մէջ սակայն, կային ոմք հաքիմ կամ բժիշկ կը կոչուէին, եւ սոքա սովորութեամբ կամ փորձով, մի կամ միւս հնաւանդ դեղորէիւք կը ջանային օգնել հիւանդին, բայց ծանր եւ վտանգաւոր հիւանդութեանց հազիւ երբէք գիտէին պատճառն կամ դեղն: Մի պարսիկ հաքիմի ես ծանօթ էի, եւ պէտք է ասեմ, որպէս բժիշկ իւր նմանն երբէք չունէր: Փիլիսոփայ ոմն էր սա, եւ մարդկային բնութեան լաւ տեղեակ լինելով, փոխանակ պէսպէս զարշահամ եւ զզուելի դեղորայք լծելոյ հիւանդաց փորն, զոր բժիշկք ընդհանրապէս սովոր են առնել (եւ տարակուսելի բան մի է՞ այս, սիրելի ընթերցող, որ դեղորայքն միշտ պիտի զարշահամ լինին.) ամէն համեղ կերակուր, ըմպելիք, եւ պտուղ կու տայր հիւանդին դեղոյ փոխարէն, կամ որպէս դեղ: Ի՞նչ է լաւ քան լիմոնից կազմեալ օշարակ, "սկեանջամին,, միւս անուշահամ օշա-

րակ, սամիթով փլաւ, նուռն, կարմիր կեռաս, եւ պատուական էսկէրի խաղող: Այսպէս էին այս երանելի եւ երջանկայիշատակ բժշկի դեղորայքն, զորս բաւական երկար ժամանակ վայելեցի ես ի մեծ հաճութիւն իմ: Բայց դուցէ դու կ'ասես սոքա դեղ չեն, որ հիւանդութիւն առողջացնեն, ես եւս պիտի ասեմ, ինչ հաստատութիւն կայր թէ այդ ժամանակի միւս բժշկաց գարշահամ դեղերն կարող էին առողջութիւն տալ:

Կային քանի մի քահանայք եւ աշխարհականք եւս, որ իւրեանց տեսածից եւ լսածից մի տեսակ բժշկական համբաւ ունէին, եւ իւրեանց կարեաց համեմատ կը ջանային օգնել հիւանդին, երբեմն յետ բերելով զնոսա այս աշխարհ, եւ բազմից ձանապարհորդելով առ միւսն: Բայց բոլորից յաւել իշխանաւոր եւ վճռական բժշկներն Ծերունի կանայքն էին, որ հիւանդի շուրջն ժողովեալ, ամէն ոք ազատօրէն իւր կարծիքն կը յայտնէր, նոյնպէս եւ միմիայն դեղն որ կարէր առողջութիւն տալ: Մին կ'ասէր "Մկրտաձէնց խաթային հէնց ես օրումն էր, գաղաբին ու ֆլուզի մաղզ խմելով լեւացաւ„: Միւսն կ'ասէր "վախեդելայ, պիտի ջոքջադամէջ ձեռնոտան լուանէք եւ Շաղիկին կոչէք աղօթի նորան„: Միւս մի, "Սրտի վերայ մոմ խալէք„ կ'ասէր, եւ "բամպակ վառէք„: Այլ միւսն՝ "աչքով են տուել„ կ'ասէր "աչքաուլունք եւ մատնհար կապէք կռնիցն„, եւ այլ այսպէս հրաշալի եւ ազդու դեղորայք կը մատակարարէին հիւանդի համար: Այսպէս էին այն ժամանակում Ջուղայու բժիշկներն, բայց, աւաղ, այն մեծ ամենաձարտար բժշկին, որ փոխանակ հիւանդութիւնն առողջացնելոյ, կարող էր նորա գալն խափանել միանգամայն, այն էր առողջարանական կանոնաց հետեւումն, բնաւ ոչ ոք ծանօթ չէր, եւ ոչ նորա արժէքն գիտէր ոք: Երբ

հիւանդութիւն կը զայրանայր, եւ կ'անձարանային, կը փութային ամենայն անօգուտ անոսիապաշտական միջոցներէ:

Դեղորէից մասին, ամէն տեղում մի բան շատ կայ, դեղ: Ջուղայում եւս նիւթական դեղոց թիւն պակաս չէր: Ներքեւից կը մտածէ մարդ, եթէ աշխարհում դեղ չլինէր, մարդիկ յաւել առողջ կեանք չէին վարել արդեօք, միայն բնութեան օրինաց կանոնացն հետեւելով: Այսօրէն օրում, լուսաւորեալ եւ քաղաքակիրթ աշխարհներում եւս, անգամ մի նայիր լրագրաց մէջ հրատարակութեանց հաղար ու մի դեղոց: Կը տեսնես դեղ որոյ մի ումն կօլէրայի ախտն կարող է առողջացնել: Հարիւր ու մի ազգու դեղորայք կը տեսնես գլխացաւի, սրտացաւի, հազի, անմարսողութեան եւ այլ հիւանդութեանց անվրէպ բուժող: Կան շատ դեղորայք եւս որ միանգամայն ամէն եւ բոլոր ցաւոց եւ հիւանդութեանց դեղ են, մօծակի խայթից սկսեալ մինչ բորոտութիւն, քթի ծայրն քորելուց սկսեալ մինչ անդամալուծութիւն եւն: Եթէ միւս մոլորակաց մէջ մարդիկ կամ բանական լինելութիւնք կան, որպէս կը կարծուի թէ կան, ինձ թուի եթէ այս լինելութեանց մին գայր մեր փոքրիկ աշխարհն, առաջին անգամ նայելով առ այս աքանչելի հրատարակութիւնքն — առ այս ամենայն ցաւոց դեղորայքն — "Իրաւ որ այս լաւ տեղ է,,, պիտի ասէր, "բնաւ հիւանդութիւն չպիտի լինի այս տեղում, բայց երկնչիմ շատ շուտով փոխել ունէր իւր կարծիքն:

Պարզ եւ բնական դեղ կը գործադրէին երբեմն. որ բոլորից լաւագոյնն էր. բայց առանց նորին իսկական լաւութիւնն հասկանալոյ: Մի հիւանդ որ դժուար լինէր առողջանան, եւ երկարատեւ նուազութեան մէջ էր, կը տանէին հանգստարանի շուրջն պտտացնել, որ այն տեղ,

մեռեալք նորա հիւանդութիւնն բառնային։ Եւ բազմից անգամ երթէ զգուշութեամբ տանէին եւ ցրտից պատսպարեալ, իսկապէս մեծ օգուտ կը գտանէր եւ կը սկսանէր առողջութիւնն վերաստանալ։ Բայց ի հարկէ ո՛չ թէ որպէս կը կարծէին, հիւանդութիւնն մեռեալքն կը փարատէին, այլ տան սենեակներէ անմաքուր օդից դուրս գալով, եւ պարզ եւ յստակ օդ շնչելով բացօթեայ տեղում, օգուտն դորանից յառաջ կու գայր։ Օգուտն պարզ օդ վայելելումն էր, շարժելումն, եւ շրջելում։ Պարզ եւ յստակ օդոյ արժէքն երբէք իմացուած չէր դեռ, եւ ո՛չ տեղափոխ լինելոյ եւ օդափոխ լինելոյ օգուտն։ Նա իսկ փոխադրական հանճարակ հիւանդութեանց ժամանակում եւս, ոչ ուրուք մտքով կ՚անցանէր թէ լաւագոյն միջոցն այն էր որ իւրեանց սովորական բնակութիւնից հեռանային առ ժամանակ մի, ընտանիք ընտանիքից բաժան ինային, երթային քանի մի օր այգեաց մէջ կամ դաշտերում կամ լերանց մօտ բնակէին, եւ այնչափ սիրուն այգիք, դաշտք եւ ոչ շատ հեռի բլուրք որ Ասպահանում կան, թողեալ մնոտակայ Հայոց գիւղօրէքն։

Բազմաթիւ էին նիւթական դեղորայքն, բուսերից անկերից, եւ ծաղկներից հաւաքած։ Ոմանք պարզ եւ ոմանք խառն ի խուռն բաղադրութեամբ։ Որ բոլորն եւս գարշահամ էին, աւելորդ է ասել, բայց մին, որ խիստ ազդու տպաւորութիւն է թողած մնացս վերայ, եւ դեռ մոռացած չեմ, «փօխտանի» ասացեալ լուծողական դեղն է։ Սորա հնարողին կամ հաւաքողին, միայն քրիստոնէական ներողամտութեամբ այսքան պէտք է ասել, որ Աստուած խղճայ իւր հոգւոյն։ Եթէ սխալ չլինիմ, ութ կամ տասն տեսակ աշխարհի ամենագարշահամ եւ գարշահոտ նիւթերից կը բաղադրուէր այս եղակի խառնուրդն,

զոր միասին կ'եփէին, եւ մի մեծ սկաւառակաւ լի, ջերմաջերմ եւ շոգիաբարձ առաւօտն կանուխ կը դնէին հիւանդի ձեռքն: Ղազիկ հիւանդ: Սորա հոտն անգամ բաւական էր առողջ մարդոյն հիւանդացնել, եւ դեռեւս հիւանդն պարտաւոր էր իւր նուազ եւ բերանն անհամ վիճակում ըմպել զայն մինչ վերջին կաթիլ: Ցուշ կ'ածեմ քանի քանի գիշերներ արթուն եմ ծնացած, երբ վճիռ կը լինէր որ վաղն պիտէր փոխանի խմէի: Կախաղան դատապարտուած մարդոյ նման, բոլոր գիշերն տուայտանաց մէջ կ'անցուցանէի, եւ վաղն երբ զարհուրելի ճգնաժամն կը հասանէր, երկու կոնների շուրջն թաշկինակներով կը կապէին խիստ պինդ, որ կ'ասէին թէ կ'արգելէ փսխել, քանզի ամէն ոք գիտէր որ հեշտ բան, կամ կատակ մի չէր ստամոքի համար ընդունել իւր մէջ այդչափ եւ այդպիսի դժոխային նիւթ, եւ այսպէս ամէն պատրաստութիւն տեսնելով, երբեմն գուրգուրելով, երբեմն սպառնալով կը պարտաւորէին ի վերջոյ ըմպել այդ դժոխային նեկտարն, որ յոլով անգամ անմիջապէս ընդ վայր երթալն իսկոյն ի վեր կու գայր, թողնելով հիւանդին յաւել նուազ եւ խանգար վիճակում քան յառաջն: Վէրն բոլոր դեղոց թագաւորն էր գարշութեան մասին, այլ կային միւսներ եւս, թէ եւ ոչ այնչափ անտանելի: Վերջին ժամանակներում, սկսած էին եւրոպական քանի մի դեղորայք ի գործ ածել, եւ սոցա առաջինն էր Կուինինն կամ Պիրուեան կեղեւն, զոր չափազանց երկիւղով գործ կ'ածէին, եւ խիստ փոքր քանակութեամբ, մանաւանդ որ շատ թանգագին եւս էր այն: Մի սիսեռնակչեռն մի Ղդանի կամ յաւել դին ունէր այն: Կային բաղում ծաղրալի եւ սնոտիապաշտական արարողութիւնք եւս, որք կը կարծուէին կարող են հիւանդութիւնք փա-

լատել, որպիսիք են — մի հայց եւ մի սոխ կը դնէին փո-
ղոցադրան տախտապարի վերայ, եւ ով որ առնոյր ուտէր
զայն, տան հիւանդի ախտն նորա վերայ կ'անկանէր:
Հիւանդի հասակի չափով կարմիր եւ ճերմակ թել կ'ո-
լորէին, եւ վարդի ծառոյ արմատում կը թաղէին, եւ
այս բժշկութիւն կու տայր հիւանդին կը կարծէին: Մե-
ռելոց գերեզմանաց վերայ ջուր ածելով, կ'արբուցանէին
զայն հիւանդին, որ կը պարտաւորուէր կատուի նման լե-
զուով լափել: Ու այլ շատ եւ շատ այսպիսի անոտիա-
պաշտութիւնք կային, որք, յուսալի է թէ այժմ բար-
ձուած են:

ՄԱՔՐԱՍԻՐՈՒԹԻՆ, ԱՌՈՂՋԱԿԱՆ ՋԳՈՒՇՈՒԹԻՆՔ

Մաքրասիրութեան մասին, ըստ երեւութին տան
մէջ, ամէն ինչ մաքուր էր: Ցունն յստակ եւ մաքուր
պահելն ամէն տանտիկնոջ պարծանք էր, որ երբեմն
ինքնին աւել եւ ջնջան ձեռքն առած կը սրբէր, կը մա-
քրէր տունն եւ տան կարասիքն: Մի ժրագլուխ կնոջ տան
մէջ երբ կարող էիր տեսնել բնաւ փոշի կամ աղտոտու-
թիւն, եւ տարին գոնէ մի անգամ վարձկանաց ձեռամբ
բոլոր տունն ի վերուստ մինչ ի վայր կը սրբուէր, կը
մաքրուէր եւ կարգի կը դնուէր: Բայց այս բոլոր մաքրու-
թիւնն միայն ըստ երեւութի էր, այսինքն ինչ որ աչքի
յանդիման էր մաքուր պիտի լինէր, աչքից ծածկուածն
փոյթ չէր, թէ ինչ վիճակում էր: Տանից սրբուած կամ
ձեւից մերժելի աղտեղութիւն կամ աչքից հեռի մի խոր-
շում կը կիտուէր տան մէջ, ուր կը մնայր ամիսներ, կամ
տան դուռն բանալով կը ձգուէր փողոցն: Շատ փողոցաց

առուի միւս կողմն, որոյ որպէս ճանապարհ գործածուե-
թիւնն խափանուած էր, կը տեսնուէին իրար վերայ կու-
տակած աղտեղութիւնք, եւ կը ծնային ոմ գիտէ որքան
ժամանակ: Բայց սոքա այնքան վնասակար չէին, քանզի
արեւն եւ պատուական չոր օդն շուտով չորացնելով զայնս
եւ նոցին օդն ժահրելոյ ազդեցութիւնն կը բառնային:
Ինչ որ յոյժ սարսափելի եւ գրեթէ մահաբեր վնասա-
կարն էր, մարդկային աղբն էր, որ ընդհանրապէս տարի
մի ժողովեալ կը ծնայր տան մէջ, արեւից հեռի եւ միշտ
թաց: Հաւաստի եմ կը մտաբերեն իմ հասակակից ջու-
ղայեցի համազգիք, երբ դպրոցի աշակերտ էին, թէ ինչ
դրութեան մէջ են տեսած դպրոցաց լուալիքներն, ուր
թէ եւ հարիւրաւոր մանկունք կային, տարին հազիւ ան-
գամ մի կը մաքրուէին: Այժմ հեռի եւս չէին այնք,
բայց այդպէս շտեմարանեալ կը ծնային, բոլոր ժամանակն,
գիշեր՝ ցերեկ, ամառն, ձմեռն անդադար ապականելով եւ
ժահրելով օդն, եւ մահաբեր հիւանդութեանց սերմանք
գոյացնելով: Ու յետոյ բոլորից վատթարագոյնն եւ ամենա-
վնասակարն այն էր, որ գրեթէ ամէն տան մէջ ջրհորն կամ
միանգամայն մօտ էր, կամ շատ հեռի չէր աղբանոցից: Ու
թէ ինչ սարսափելի հետեւանք ունի այս, հաւաստի եմ
թէ յառաջն չգիտէին, լաւ հասկացած պիտի լինեն ջու-
ղայեցիք այժմ: Մահմռուկ ասացեալ հիւանդութիւնն,
կալօրայն, եւ դիպքերիս կամ կուլացաւ մահաբեր ախտքն
միայն ժահրեալ ջրից կամ օդից կարող են գոյանալ, եւ
անուրանալի ապացոյց է այս, որ ուր որ առողջաբանական
օրինաց ներքոյ ջրոյ եւ օդոյ մաքրութեանն խնամ են
տարած, անդ այս հիւանդութիւնքն չկան, եւ բոլորովին
բարձուած են: Մեր առողջութիւնն, վասն որոյ, մեր նոյն
իսկ կեանքն կախուած է բոլորովին մեր շնչեալ օդոյ եւ մեր

ըմպելի ջրոյ մաքրութիւնից։ Եւ հնար էր արդեօք մաքուր ջուր գտանել այն ջրհորից որ աղբանոցի մօտ լինելով, եւ խոր քան զայն, բնական օրինօք պիտի ընդունէր իւր մէջ գետնից ծծած անմաքուր հիւթն, որ մահացու ժահր է։ Կը մտաբերեմ որ շատոնք կ'ասէին մեր տան ջրհորի ջուրն յանկարծ հաճն փոխելայ, եւ մի տեսակ անախորժ հոտ է ստացել, բայց ժէ ոք հետաքննին կը լինէր պատճառն իմանալ։ Աղբն եւ աղբանոցն եւս մի առարկայ է՞ որոյ վերայ մտածէ ոք կամ խօսէ, գուցէ պէտք է ասէր այն ժամանակում ջուղայեցի մի։ Այո՛ գարշելի առարկայ մի է այն, բայց ծածկելով եւ անյիշելի առնելով զայն, այնպէս է, որպէս թէ մի մարդ մի մեծ նեխեալ վէրք ունելով իւր մարմնոյ վերայ, որ անդադար միսն ուտելով կերթայ, ծածկէ զայն իւր աչքից, որ նորա գարշութիւնն չտեսանէ, եւ թոյլ տայ այնպէս մնալ եւ զայրանալ, փոխանակ բանալոյ տեսնելոյ եւ դարման տանելոյ եւ բառնայ զայն իւր մարմնից միանգամայն։ Աղտեղութիւնն չտեսանելոյն առնել եւ մաքուր դաստառակաւ ծածկելն, մաքրութիւն չէ, այլ փրկչի ասութեան համեմատ բռեալ գերեզմանի նմանութիւն կը բերէ այն։

Առողջաբանական կանոնաց եւ նախազգուշութեանց մասին, վեր յօդուածոյ պարունակութիւնից իմանալի է որ շատ սակաւ կային, եւ հազիւ ծանօթ էր ոք նոցա մեծ արժէքին եւ հարկաւորութեանն։ Բայց արդեօք այժմ եւս անմեղադիր պիտի մնան ջուղայեցիք. եթէ իրաց վիճակն դեռ այսպէս կը շարունակէ։ Կը մտաբերեմ որ մեծ կալօ բայի ժամանակում, որ դիպեցաւ մինչ ես ի Ջուղա էի. եթէ սխալ չլինիմ 1850—52ի միջոցներում, բոլորքն կ'ասէին որ Աստուծոյ բարկութիւն է այն, երկնային պատուհաս էր, եւ քանիցս անգամ մեծից մինչ փոքր հանգս-

տարանուածն ժողովելով, կ'աղօթէին որ անցանէր այդ ցասումն։ Այո, աղօթելն աստուածահաճոյ բան է, բայց ինձ թուի թէ կարծելն որ ամենողորմն Աստուած երբէք այսպէս ընդհանուր պատուհաս կը բերէ իւր արարածոց վրայ՝ հայհոյութիւն է։ Կարելի չէ ասել թէ այդ ժամանակուայ Պարսկաստանի այդ մասին ժողովուրդն ողբ զոհ գնացին այս հիւանդութեան մի յատուկ առաւելագոյն անօրէն ընթացքի մէջ էին, քան այլ տեղեաց ժողովուրդք, բայց դիւցուք թէ էին, ուրեմն խղճիկ անմեղ երեխայքն, որ դեռ բարի եւ չար չգիտէին, նոքա ընդհէր բաժանակից կը լինէին այդ պատուհասին։ Կան ոմանք որք կ'ասեն մոլեռանդութեամբ թէ ծնողաց մեղաց համար էր, որ նոքա եւս զոհ կ'երթային, բայց ինչ մի առաւել մեծագոյն հայհոյութիւն է այս։ Մեք մանրդիկս կը սարսափեմք կամաւ այսպէս անողորմութեան գործ գործել երբէք, անմեղին մեղաւորի պատճառաւ պատժել, եւ կարելի է թէ քաղցր եւ բարերարն Աստուած որ ինքնին ողորմութեան աղբիւր է, անմեղ երեխայքներից վրէժ առնու նոցա ծնողաց մեղքի համար։ Քաւ լիցի, մի հաւատար զայդ, ընթերցող։ Մեր տգիտութիւնն կամ անփոյթութիւնն է միայն, որ ամէն չնաս եւ պատուհաս կ'ածէ մեր վերայ, եւ ոչ ամենաբարի ստեղծողն։ Նա բանականութիւն է պարգեւած մեզ խորհել, քննել, եւ իմանալ մեր օգուտն եւ չնասն, եւ եթէ մեք մեր տգիտութիւնից կամ անփոյթութիւնից բնութեան անյեղլի եւ անփոփոխելի օրինաց հակառակ կ'ընթանամք, ոչ նա, այլ մեք կը բերեմք արժանի պատուհասն մեր վերայ, այսպիսի, որպէս եւ ամենայն դէպքերում։

Նոր Ջուղայ առանձին գիւղաքաղաք մի է, եւ Ասպահանայ բոլոր տեղեաց լաւագոյն դրութիւնն ունի, եթէ

միայն քանի մի կենսական եւ հարկաւոր զգուշութիւնք գործ դնուին վերոյիշեալ առողջական կանոնաց մասին, ինձ թուի, այնչափ առողջ տեղի մի կը լինի, որչափ այդ փոքրիկ քաղաքն էր, որոյ մասին կ'ասուի թէ, օտարական ոտն ուզելով դեղատուն բանալ անդ, հարցուփորձ կ'անէ թէ քաղաքի առողջութիւնն ինչպէս էր: Անցեալ հինգ տարեաց միջոցում միայն երկու հոգի են պակասած, կը պատասխանէ քաղաքացեաց մին: Նա ոմ էին այնք կը հարցանէ օտարականն: Քաղաքիս մի միայն բժիշկն, եւ մի միայն դեղավաճառն: Առաջինն պարտատեարց ձեռքից փախաւ, եւ երկրորդն, մեռաւ խեղճն քաղցուածութիւնից:

Թէեւ փոքր մի ձգաբանութիւն եղեւ այս առարկայի վերայ, որ յուսամ ընթերցողին չպիտի զզուացնէ, մանաւանդ որ շատ մի անուշահոտ բաներվի վերայ եւս չէր խօսքն, բայց մի քանի բառ եւս պէտք է խօսեմ Ծննդեան, ամուսնութեան յիշատակագրութիւն պահելոյ վերայ:

Իմ մանկութեան ժամանակում այսպէս բան բնաւ չկայր: Քանի մի գրագէտ ընտանեաց մէջ գուցէ կը գտնուէր որ ոք մատենի կազմի նեղքին կողմում յիշատակուած քանի մի Ծննդեանց յիշատակութիւն, այլ հաղուագիւտ բացառութիւն մի էր այս: Ժողովրդոց ընդհանրութեան սակաւք, շատ սակաւք կային որք ճշդիւ իւրեանց Ծննդեան թուականին տեղեակ լինէին: Ուստի եւ ոչ գիտէին թէ իւրեանց հասակն որքան է: Մարք սովորաբար կ'ասէին որ իւրեանց զաւակաց Ծննդեան թուականն լաւ գիտէին, ինչպէս ոչ: Բայց այս խղճիկ պարզամիտ անձինքն այնպէս մի անգիր հաշիւ կը պահէին, որ յետ յայտնելոյ զայն, բանն յառել մեռին եւ ծածուկ կը ճնայր, քան ինչ որ յառաջն էր: Սոքա միշտ թէ հասակի եւ թէ այլ ընտանեկան դիպուածոց ժամանակն կը կշռէին այլ մի նշանաւոր, բայց մի եւ

նոյնպէս անյայտ ժամանակաւ։ Օրինակի համար, մի մայր կ'ասէր։ "իմ Յովհաննէսն ծնուած է երեք տարի մեծ սովից յետոյ„, կամ "Մկրտիչ որդիս ամուսնացաւ երկու շաբաթով Ամենափրկչի տօնից յառաջ„, կամ, "Գարապետի խեղճ հայրն վախճանեց, աղուհացի առաջին երեքշաբաթ օրն, այդ տարին որ մեվերն ցուրտն տարաւ„։ Բայց թէ սովն երբ պատահեց, կամ որ տարուց Ամենափրկչի տօնին էր ամուսնութիւնն, կամ ուր տարում էր որթոց ցրտահարութիւնն պատահած, դրա անլուծանելի խնդիր էին ի հարկէ։ Բարեյիշատակ Թադդէոս Բէգնազարեան առաջնորդն էր, որ առաջին անգամ հաստատեց այդ կանոնն, որ ամէն թաղի եկեղեցեաց մէջ, յիշատակարանաց մատեան պահուի եւ ժողովրդոց մէջ պատահեալ ծնունդն միշտ յիշատակուի անդ հանդերձ մկրտութեամբ, եւ մկրտող քահանայի եւ կնքահօր անուամբքն։ Այլ ափսոս որ այսպէս կէս ու կէս էր այս կանոնն, եւ ամուսնութիւն եւ մահն արժանի յիշատակի բան չհամարեց։ Նե զարմանալի է թէ ընդէր, քանզի որչափ ես կը մտաբերեմ, այդպէս էր։ Մի թէ վերջին երկուքն եւս մի եւ նոյնպէս կարեւոր դէպք չէն մարդոյ կենաց մէջ, որպէս առաջինն։ Նե տես սորա օգուտն եւ պիտանութիւնն որքան է։ Ջուղայու ժողովրդոց նման մի փոքրիկ խմբի մէջ, այդ ժամանակում, որոյ վերայ կը խօսենք. տարին որ վերջանայր, ոչ ոք գիտէր թէ այդ տարում ինչ աճելութիւն կամ նուազութիւն է եղած, որքան ամուսնութիւն էր պատահած, որքան մահ։ Նե ոչ իսկ գիտէր ոք, կամ կարող էր բնաւ ասել թէ քանի անձինք կային Ջուղայում, եւ զարմանալին այն էր որ ոչ ոք փոյթ եւս չունէր այս մասին ծանօթութիւն գտանելոյ։ Այսպէս բաներն մի ստուերական եւ մթին իրք կ'երեւէին։ Զկարծեմ հեռի լինիմ ի ճշմարտութենէ, ասել, որ մինչ

անգամ մի թաղէ քահանայ իւր ժողովրդոց ճիշդ թիւն
չգիտէր, եւ ոչ կարող էր ասել քանի արուք, քանի էգք,
կային նոցա մէջ, եւ թէ մի տարում յաւելացած էին
նոքա թէ պակասած: Վերջին ժամանակներում եւս, լսե-
լով որ Ջուղայոյ աղջկանց թիւն շատ յաւելացած է, ի
պատճառս բազում մանկանց Հնդկաստան գալոց, հետամ-
տութիւն ունեցայ նոցա համեմատական թիւն իմանալ, եւ
քանի քանի Ջուղայից նորեկ թէ քահանայներից եւ թէ
աշխարհականներից խնդրեցի յայտնել ինձ, եւ ի պատաս-
խանի այս միայն լսեցի որ տղայքն — էլ ոչ ճիշդ, "բօլ"
աղջիկ կայ: Եւ միշտ այս "բօլ" բառն կը լսէի աղջկանց
մասին, սակայն մատաղահասակ, կամ անպսակ անձանց ճիշդ
համեմատական թիւն ոչ ոք կարաց ասել ինձ: Մինչդեռ
այս ընտանեկան կենաց երեք մեծ դիպուածոց յիշատա-
կութիւնն եթէ պահուէր կանոնաւորապէս ամէն եկեղե-
ցում, եւ որքան դիւրին էր այն եւ անծախք, քանզի այս
երեք դէպքն եւս եկեղեցի պիտէր երթային, եւ եթէ
տարւոյ վերջում վանքի կողմից, կամ այս բանի համար
կարգուած մի փոքրիկ մանաժողովի կողմից, բոլոր եկեղե-
ցեաց միջից նոյն յիշատակութիւնքն վերայ հաւաքուէին,
եւ կարգաւ ի ցուցակ անցանէին, ոչ միայն պարզ եւ
յայտնի կ'երեւէր անտի ծննդեան, ամուսնութեանց ճիշդ
թիւն ամէն տարւոյ համար, որ բաւական հետաքրքիր, եւ
կարծեմ ամենեցուն փափագելի ծանօթութիւն մի է, թո-
ղեալ նոցին տեւական յիշատակութիւնն, որ կը միայր ներ-
կայից եւ ապառնեաց համար, այլ եւ միշտ մի տարին ընդ
միւսոյն համեմատելով, պարզապէս ի յայտ կը գայր ժո-
ղովրդոց նուազումն կամ աճելութիւնն, եւ նա եւ մասամբ
ժողովրդոց վիճակն: Քանզի, հաւաստի մի բան է որ ա-
մուսնութեանց եւ ծննդոց թիւն յաջող ժամանակում

կ՚աճէ, եւ ձախող վիճակում կը նուազէ։ Ցետոյ եթէ տա-
րին անգամ մի, նոյնպէս Ծխատէր քահանայից ձեռամբ
բոլոր ժողովրդոց ընչագրութիւն լինէր — որ յիրաւի միայն
մի օրում կարելի էր կատարել, եւ ընչագրութիւնն կար-
գուէր զանազան գլխարկութեանց ներքոյ, ցուցանելով ա-
րականաց եւ իգականաց թիւն, եւ հասակն, (որչափ եւ
կարելի էր գուշակել վերջինդ) ամուսնացելոց եւ ամուրեաց,
կրօնաւորաց եւ աշխարհականաց, այրեաց եւ որբոց թիւն,
ամէնու աշխատանաց եւ ապրստի միջոցն, աղքատաց, եւ
անկելոց թիւն, եւ այլ այսպէս կարեւոր ծանօթութիւնք,
տես ինչ օգտաւէտ ծանօթութիւնք կը լինէին այնք, եւ
տարեց տարի սոյն ծանօթութիւնքն համեմատելով, ինչպէս
պարզ, որպէս հայելւոյ մէջ, ջուղայու ներքին դրութիւնն
եւ վիճակն ի յայտ կը գայր, եւ այսու հնար կը լինէր
դատել, ինչ դարման տանել վնասուց եւ թերութեանց,
եւ ինչ միջոցք գտանել ժողովրդոց վիճակն բարւոքելոյ,
նոցա առողջութեանն խնամ տանելոյ եւն։

Մեծամեծ միլիոնաւոր բնակչօք քաղաքներում, եւ
նա իսկ աշխարհներում, այս ընչագրութիւնն միշտ տեղի
կ՚առնու ամէն տասն տարին անգամ մի, եւ երբեմն յա-
ճախ եւս։ Ու յիրաւի խիստ հետաքրքիր եւ մանրապա-
տում ծանօթութեանց գիր մի կը լինի այն, եւ այսու
կառավարութիւնն բոլորովին կը ծանօթանայ ժողովրդոց
վիճակին, եւ հարկաւորն կը տնօրինէ յօգուտ նոցա։ Բայց
այսպիսի իրաց ոչ ոք փոյթ ունէր Ջուղայում իմ տեսա-
ծով։ Արդեօք այժմ եւս այդպէս է։ Ես մինչ այս կէտ
յոր գրեմ զայս, ճշմարիտն խոստովանիլ, չգիտեմ ճշդիւ
թէ Հայոց թիւն ի Ջուղա որքան է, թո՛ղ գիւղօրէից
Հայոց թիւն։ Շատ անգամ հետամուտ եմ եղած այս բա-
նին, այլ ուստից որ հարցրէլամ, տարբեր պատասխանիք

եմ գտած. ումանք երկու հազարի, ումանք երեք հազարի, եւ ումանք առաւել կամ սակաւու կարծիք տալով: Ետէ սիրելի ընթերցողդ գիտէ ճիշդ թիւն, պիտի ասեմ բարեբախտ է քան զիս: Ի՞նչ փափագանօք եւ ըղձիւ պանդուխտ Ջուղայեցիք կը սիրէին գտանել այս ծանօթութիւնքն, եթէ տարին անգամ մի հրատարակուէին այնք, եւ ոչչափ յօժարութեամբ կը բառնային ծախքն ոչչափ եւ լինէր: Բայց գուցէ ումանք դեռ կը կարծեն, թէ ի նանիր զըոյց է այս, կ'ասեն այսքան տարիք, որ այսպէս բաներ չէն եղած, ի՞նչպէս է ընթացել կեանքն: Բայց ինձ թուի, թէ այսպէս ապրելն եւս առանց մեր վճռակի եւ կենաց հանգամանքն հասկանալոյ, ոչ սակաւ անբան կենդանեաց նմանութիւն ունի, որք կը գան կ'երթան ժամանակի հոսանքի հետ, առանց յիշատակ կամ հետք թողնելոյ բնաւ:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՀԻՒՐՆԿԱԼՈՒԹԻՒՆՔ

Շատ բարեկամասէր, եւ բարեկամաց սէր շահող բնաւորութեան տէր էին Ջուղայեցիք: Ու համեմատաբար փոքրիկ խումբ մի լինելով, հարկաւորապէս գրեթէ ըստ մեծի մասին հեռաւոր կամ մօտ արեւնակցական կամ խնամական յարաբերութեամբ կապակցեալ էին իրար հետ, եւ հետեւապէս ընտանեկան այցելութիւնք եւ ընդունելութիւնք յաճախ էին եւ յաւէտ մտերմական: Հնար էր սոյն այցելութիւնն երկու բաժանել: Կարճ եւ երկար: Կարճ այցելութիւնքն ընդհանրապէս միայն սրտական սեռի կողմից էր, որք իրար տուն երթալով, ժամ մի կամ երկու զրուցելց յետ բաժանեալ ի բաց կ'երթային: Սովորութիւն էր այսպէս այցելուաց, միշտ, թէ առաւօտ էր, բաժակ մի ջրեաւ եւ քաղցրաւենեօք պատուասիրել (այդ ժամանակի

քաղցրաւենիքն էին գեաղանգամի, պլակ, ղուռս, փուքակ, նօղլ, եւ այլ այսպիսիք, առ որս, պիտի խոստովանիմ, յատուկ բնական լիմն ձգտուելն ունէի, որ շատ անգամ պատճառ կու տայր մօրս ղալմանօք ասել, (ինչպէս շուտով կը վերջանային այնք) եւ կէսօրից յետ գինի եւ պտուղ առաջի դնել, բայց միշտ յառաջն տաճկական փոքրիկ ձուաձեւ բաժակաւ սուրճ պիտի կարապետ լինէր միւսոց, եւ ծխաքարշ եւս կամ ղալեան կը հրաւիրուէր ծխող այցելուաց: Ի հարկէ հաճոյական եւ փափագելի էին այսպիսի այցելութիւնք երկու կողմից եւս, եւ սիրալիր ընդունելութեան կը դիպէին միշտ, այլ երկու անյարմարութիւնք կային, մին որ այս այցելութեանց որոշեալ ժամանակ չկայր, այսինքն ցերեկ, երեկոյ եւ մինչ ի գիշերի եւս ներելի էին այնք, որով ամենայն ոք կարող է երեւակայել, որ բազմից խիստ անյարմար կարէր լինել այց ընդունողի համար, եւ որոյ միմիայն ճարն այն էր, որ այսպէս անյարմար ժամանակում տան դրան բաղխմանն ունկնդիր չլինէր, կամ որպէս կ'ասէին "դուշ բաղբունի առներ„, Մինչ այցելուն կարծելով թէ ընտանիքն ներկայ չէին ի տան, հեռանայր ի բաց: Նւ միւս եւս, որ վեր պատուասիրութեան սովորութիւնն մի անհրաժեշտ պարտիք էր եղած, եւ մեծ ամօթ կը համարուէր, առանց վերասացեալ ուտելիք եւ ըմպելիքն այցելուի յառաջն դնելոյ, թոյլ տալ նորան բաժանուիլ: Նւ այս մասին եւս դժուար չէ երեւակայել, որ շատ անգամ անպատրաստ լինելն տանուտեառն, կամ տանտիկնոջն մեծ ամօթ կը պատճառէր, եւ նոցա անախորժ զգացմանց նեղոյց կը պահէր բոլոր այցելութեան ժամանակն, այլ եւ այցելուն կը կարծէր քամահանօք կը վարուին իւր հետ, որպէս լսած եմ, գանգատելով ասել ապա, "թէ մի թաս դառն

ղաֆայ եւս չտուին»։ Վասն որոյ եթէ այս կարճ բարեկամական այցելութեանց համար յատուկ օր մի կամ ժամ մի որոշուած լինէր, որքան լաւ էր լինելոց, թէ այցելուի եւ թէ հիւրնկալի համար։ Այլ աշխարհներում, ամէն ընտանիք իւրն այցելութեան որոշ օր ունի շաբաթու կամ երկշաբաթու միջոցում, այսինքն մին երկուշաբաթ, միւս երեքշաբաթ եւն, կ'ընտրեն եւ կը յայտնեն բարեկամաց, որ այդ օր պատրաստ կը լինին միշտ ընդունելութիւն տալ այցելուաց, եւ հետեւապէս ոչ այցելուն յուսախաբ կը լինի, եթէ ցանկայ այց տալ նոցա, եւ ոչ անյարմարութիւն կը պատճառէ, քանզի որպէս ասացաւ ընտանիքն ոչ միայն այդ օրում անշուշտ ներկայ կը լինին տան մէջ, այլ եւ ամենայնիւ պատրաստ ընդունել իւրն։

Միւս մի այցելութեան անյարմարութիւն կը յիշեմ, որ իրապէս մեծ անհանգստութեան պատճառ կը լինէր ընդունողին։ Այդ էր երբ որ ոք անձն պանդխտութիւնից տուն կը դառնայր։ Թէեւ ճանապարհորդութեան վաստակից խիստ յոգնեալ, թէեւ իւր ընտանիքից երկար ժամանակ բաժան, բայց թոյլ չէին տալ խեղճ մարդոյն օր մի կամ երկու հանգիստ առնուլ, իւր ընտանեաց տեսութիւնն վայելել, բաղանիք երթալ եւ մաքրուիլ։ Այլ միեւնոյն հասանելոյ կետուր կու գային կը ժողովուէին նորա տան մէջ բոլոր ազգականք հանդերձ գերդաստանով, որ կը նշանակէր մի կամ երկու օր անդ մնալ, յետոյ դրացիք եւ օտարականք եւս, մին երթալով միւսն գալով, չկարծեմ թէ ժամանակ կու տային անքուն եւ վաստակած մարդոյն փոխել իւր զգեստն անգամ, կամ փոքր մի նիհջ առնուլ։ Շատ այցելուք եւս մանրմունր տարօրինակ լուր կը հարցանէին, մանաւանդ Հնդկաստանից եկողներից, օրինակի համար մին կ'ուզէր իմանալ թէ իւր որդւոյն որ

իռանգուն էր Կալկաթայից կամ Ջաւայից եկողն տեսած էր, եւ կը զարմանայր լսել որ չէր տեսած: Հաւ չէր խեղճ նորեկին շաբաթ մի, կամ գոնէ մի երկու օր առանձնութիւն տային, փոքր ինչ հանգիստ վայելել, իւր ընտանեաց կարօտութիւնն առնուլ, եւ ապա գային տեսակցիլ եւ նորա հիւրընկալութիւնն վայելել: Բայց այդպէս չէր:

Երկար այցելութիւնքն գերդաստանական այցելութիւնքն էին, այսինքն բոլոր գերդաստանի անդամք մեծ եւ փոքր կ'երթային միահամուռ ազգականի կամ բարեկամի տուն: Այսպիսի այցելութիւնք տեղի կ'առնուին տօնակատարութեան, ծննդեան, մկրտութեան, եւ հարսանեաց դէպքերում: Ընդհանրապէս՝ հրաւիրանք կու գային այցելուքն կամ հանդիսականքն, եւ այս կը նշանակէր օր մի՝ երկու՝ եւ երբեմն երեք օր, ցերեկ եւ գիշեր կը մնային հիւրընկալի տան մէջ: Ու եթէ մի ընտանիք շատ ազգականք ունէին, նոցա հիւրնկալելն եւ պատուասիրելն եւ մխիթար առնելն թեթեւ բան չէր յիրաւի: Կու գային կը ժողովուէին համախումբ այր, կին, մարք, դստերք, որդիք — ամէն գերդաստանի բոլոր անդամք, մեծից մինչ փոքր, եւ երբեմն չորս՝ հինգ կամ յաւել գերդաստանք: Ի հարկէ հիւրընկալն իւր աստիճանի եւ կարողութեան համեմատ — եւ շատ անգամ իւր կարողութիւնից ի վեր — պատրաստութիւն տեսած էր իւր բազմախումբ հանդիսականաց համար, եւ ամենայն սիրով եւ յօժարութեամբ կը ջանայր կերակրել եւ մխիթար առնել զնոսա, եւ զուարճացուցանել, բայց ընդհանրապէս թէ տանտիրոջ կողմից եւ թէ հանդիսականաց կողմից դժուարութիւնք եւ տրտունջք պակաս չէին: Առաջնոյ պատճառն էր, շատ անգամ տան փոքրկութիւնն, սենեկաց պակասու-

թիւնն, հարկաւոր անկողնոց պակասութիւնն, եւ վերջինն ի հարկէ հետեւանք էր առաջնոյն: Ձմերան խիստ ցուրտ եղանակում, իրաւ որ, թողեալ մեծ անհանգստութիւնն, զոր բոլորն, թէ տան ընտանիքն եւ թէ հրաւիրեալքն կը կրէին, նա եւ վտանգք եւ հիւանդութիւնք եւս յառաջ կու գային, ցրտից անպատսպար ճնալոյ համար, տեղւոյ, ծածկութիւն եւ ջերմութեան պակասութեան, եւ անզգուշութեան պատճառաւ: Ու զարմանալի է թէ ընդէր էր այս այսպէս: Բոլոր դժուարութեանց գլխաւոր պատճառն էր հրաւիրականաց գիշերն իւրեանց հիւրնկալի տան մէջ ճնալն: Ջուղա համեմատաբար փոքրիկ տեղի մի է, եւ երեւանից մինչ մեծ մէդան թաղն երթալ չկարծեմ 25 վայրկեան յատել տեւէ, վասն յետ ցերեկին իւրեանց ընկերական զուարճութիւնքն վայելելոյ, եթէ ամէն ոք տուն դառնայր, եւ հանգիստ եւ ապահով ննջէին, եւ թոյլ տային նոյնն առնել եւ խեղճ հիւրնկալի ընտանեացն, եւ վաղն կրկին դառնային ինչ լաւ բան կ'ելնէր, բայց այդպէս չէր:

Բայց թէ էր՝ ինչ որ էր, պէտք է ասեմ որ իմ փորձով յիրաւի շատ քաղցր եւ ախորժելի էին այս ընտանեկան հաւաքմունքն: Զգիտեմ հասակաւորաց վայելչութիւնքն որքան էին, այլ որչափ կը յիշեմ, որպէս մանուկ եւ պատանի, ո՜հ որքան ըղձակաթ փափագանօք կը յօժարէինք ես եւ իմ նմանիք այսպիսի ընկերական զուարճութեանց մասնակցիլ: Ո՛վ փոյթ ունէր անհանգստութեան, ամենայն ինչ խաղ էր եւ վայելք: Ո՛րչափ քաղցր եւ ցանկալի էր երբ մատաղ աղջկունք պատանիք եւ մանկունք զուարճ եւ ծիծաղուկ դէմքով սրահում կամ պատիզում կը վազվազէին: Ծերերն եւ հասակաւորներն խումբ խումբ ժողովեալ, համեղ զրուցատրութեամբ կը զբօսնուին: Հարսներն կէս ամաչկոտ, կէս անզսպելի ծիծաղկոտ դէմքով — իւրեանց

մէջ անմեղ կատակներ եւ խաղեր կը խաղային։ Ցետոյ երեկնապահին բոլորն միախումբ այգիքն կ'երթային, այն տեղ ճեմել եւ զբօսնուլ։ Որթոյ դալար իւղալից տերեւներն քաղել վաղն անուշահամ "դօլմա„ կազմելոյ համար։ Ցետոյ կանաչ խոտաւէտ գետնոյ վերայ նստեալ շոգիաբարձ թէյն կը վայելէին։ Պաղոց ժամանակուամ գողտրիկ մատուռք՝ քաղցրահիւթ խաղողն, կարմրայտ դեղձն, ոսկեգոյն ծիրանն, անուշահոտ խնձորն ժողովելով միմեանց կը հրաւիրէին։ Երեկոյն լուսնակի ներքոյ Հինչ անմեղ զբօսանքն էր կը վայելէին, Հինչ զարմանալի եւ անլուր պատմութիւններ կը պատմէին, եւ ունկնդիրքն բերանաբաց կը լսէին որպէս իրական ճշմարտութիւնք։ Ո՛հ, Հինչ անհոգ եւ զուարճ կեանք է մատաղ կեանքն, այլ աւաղ ո՛րչափ փութով ի բաց կ'երթայ — կ'երթայ ի բաց ոչ եւս դառնալ։

Ծ Ն Ո Ւ Ն Դ

"Որդալերէնք„ կը կոչուէր զաւակաց ծնունդն։ Շատ հաւանական է թէ այս բառն յօրինած էր այդ նախապաշարման պատճառաւ, որ գրեթէ ամենայն աշխարհումն եւս կայ փոքր կամ շատ, որ որդին դստերից յաւել ընտրելի է, կամ յաւել ցանկալի է արու զաւակ գտանել քան էգ, եւ վասն որոյ որդալերէնք կոչելով գուցէ որպէս թէ բախտին համոզել կ'ուզէին որ որդւոյ եւ ոչ դստեր ծնունդ պարգեւէր։ Ի հարկէ, որպէս ամենայն տեղում, կը տեսնուի այս, Ջուղայումն եւս ընտանեաց մէջ, ծնունդն՝ յատկապէս անդրանկի ծնունդն մեծ խնդութեան եւ հանդիսակատարութեան դէպք էր։ Թէեւ կը պատահէր եւս, որ երբ զաւակաց թիւն փոքր մի յաւել էր, ոչ միայն բանն լռութեամբ կ'անցանէր, այլ եւ բաւական տրտնջանաց առիթ

եւս կը լինէր: Աղքատ աշխատաւոր կին մի կայր մեր թա-
ղում, որոյ անունն "Թամամ" էր, եւ կ'ասէր սա, որ այս
անունն տուած են իւրն այն պատճառաւ, որ յայտնեն իւր
ծնողքն, թէ ահա բաւական էր զաւակաց թիւն որչափ
ունէին, քանզի Թամամ Պարսից լեզուով կը նշանակէ
լրումն կամ վախճան: Զարմանալի չէ այս, որ ամէն տեղում
աղքատն յաւէլ զաւակաց տէր է քան հարուստն, որ կարող
է լաւ եւս կերակրել, լաւ եւս դաստիարակել իւր զաւա-
կունքն քան աղքատն: Իմ փորձով գրեթէ ամենայն աշ-
խարհում այսպէս է, շատ անգամ կը տեսնուին աղքատ
ծնողք պարառեալ բազմաթիւ զաւակօք, զորս կերակրելն
անգամ չկարեն խղձերն, մինչդեռ հարուստն կամ սակաւ
ունի, կամ գիշեր ցերեկ կը հեծէ բնաւ չունելոյ համար:
Արդեօք աղքատն իւր սակաւապէտ կենցաղավարութեան
պատճառաւ յաւէլ բնական եւ առողջ կեանք կը վարէ, եւ այդ
է պատճառն, թէ այդ եւս բախտի խաղերի մին է, զոր միշտ
կը խաղայ ապիկար եւ անօգնական աղքատի հետ: Այլ ինչ
եւ իցէ, Ծննդեան առաջին կարգն, երեխայի ծնունդ օր-
հնեն էր: Ու այս կը լինէր կամ պարզ եւ թեթեւ ձեւով,
միայն թաղի քահանայի ներկայութեամբ, կամ հանդի-
սաւոր ձեւով, այսինքն միւս թաղի քահանայք եւս կը
հրաւիրուէին, եւ երբեմն մինչ եպիսկոպոս եւ վարդապետք
անգամ, եւ մեծ փառաւորութեամբ եւ բազում հրաւի-
րականաց ներկայութեամբ կը կատարուէր օրհնութիւնն:
Ո՛հ, քանի քանի անգամ, եւ ոչքան մեծ եռանդեամբ
զանգակահար եմ հանդիսացած այս հանդէսներում, եւ
ինչպէս հասակակից մանկունք եւս մին միւսի ձեռքից կը
խլէինք զանգակներն, ցոյց տալ թէ ով յաւել ուժով եւ
արագութեամբ է կարող կատարել նոյն պաշտօնն, եւ
երկնչեմ որ խեղճ տիար Ծննդականի ականջում, զանգակաց

սուր եւ խառնաձայն հնչուածն Ապողինեան քնարի քաղցր դիւրուածն չպիտի պատճառէր: Ցետոյ վանական կուսանաց միաբանութիւնն կու գայր առանձին իւր օրհնութիւնն տալ, եւ յիրաւի որ մի սիրուն եւ հաճոյական տեսարան էր այս: Պատկառելի աբբասուհին եւ բոլոր ծերուհի եւ մատաղահասակ կուսանքն իւրեանց կրօնական պերճով, եւ նոցա պարկեշտ դէմքն կէս քօղուած իւրեանց կնկխով, պարառեալ ծննդականի անկողնոյ շուրջն կ'երգէին քաղցրաձայն "Փառք ի բարձունս" երգն: Ցետոյ շնորհաւորութիւնք եւ օրհնութիւնք կը լինէին ամէն կողմից, եւ կարող եմ ասել որ մի միւն ծերուհի կանանց հետ մրցելն օրհնանք տալոյ մասին, հեշտ բան չէր: Այնպէս — եթէ անտեղի չհամարուի այս բառն — կծու, կծու օրհնանք կու տային, որ ոչ միայն բաւական էր մօրն եւ իւր երեխային, այլ եւ նոցա քանի մի ապառնի սերնդոց համար:

Երկրորդ մեծ եւ կարեւոր արարողութիւնէր նորածին երեխայի առաջին անգամ լողացնելն: Ջրով լի կոնք մի դնելով ծննդականի սենեկի մէջ, կը գայն կը ժողովուէին անդ բոլոր ներկայ եղեալ ընտանիք եւ ազգականքն մեծից մինչ փոքր, եւ փոքրիկ նորեկ պարոն կամ տիկինն իւր խանձարրոյ մէջ պատեալ յերեւան կը գայր ծնուցչի գրկում: Բայց այս կետում ծնուցիչն սովորաբար փոքր մի դանդաղ եւ յամր կերեւէր իւր շարժմանց մէջ, եւ կը նայէր ներկայ եղելոց երեսն, որպէս թէ կ'ուզէր ասել թէ ահա ժամանակն է, եւ սորա նշանակութիւնն այն էր, որ ամէն ոք պէտք էր մի արծաթի կամ պղնձի դրամ ձգէր կոնքի մէջ, կարծեմ իբրեւ առաջին պատուասիրութեան նուէր նորեկ օտարականին, կամ գուցէ նորա առաջին անգամ բաղանիք գնալոյ ծախքն էր այն: Բայց ինչ որ էր, ծնուցչի իրաւունքն էր ասացեալ հանդանակեալ գումարն

գտանել: Ցետ այս անհրաժեշտ պարտականութիւնն կատարելոյ, ծնուցիչն ձեռն ի գործ կը լինէր իւր պարտիքն կատարել, եւ երեխայի լուացումն տեղի կ'առնոյր ի տես բոլորից: Ու ի հարկէ պակաս չէին այս կետում զանազան նշմարանքները, մանաւանդ տիկնանց կողմից, որ խնդալով մին միւսոյն կասէր, ա՛հ տես ինչ "Բիլուր" (մեծ) երեխայ է, միւսն թէ ինչ սիրուն աչքեր ունի, միւս մի, թէ այդպէս ազնիւ երեխայ ինքն տեսած չէ, եւ այսպէս գովեստներ ամէն բերանից, որ կարծեմ ամէն նորածին երեխայ գոած է եւ կը գտանէ միշտ:

Նորածին երեխայոց մասին երկու բան ճշդրտապէս կը յիշեմ, մին՝ որ ծնանելն ի բաց, պէտք էր աղ ածէին նորա մարմնոյ վերայ, եւ խանձարրուսմ պատեալ այնպէս կը մնայր մինչ վերոյ յիշեալ լուացումն կատարուէր: Թէ ինչ նպատակ ունէր այս սովորութիւն կամ ինչ օգուտ, ինձ յայտնի չէ գեռ, եւ զի որչափ ես գիտեմ այսպէս սովորութիւն ոչինչ այլ տեղում կայ, եւ ոչ յիշատակեալ է բժշկական գրոց մէջ, մի անիմաստ եւ ընտակար սովորութիւն էր այն: Թէ որքան թարմ եւ փափուկ է մի նորածին երեխայի մորթ, տեղեակ ոք գիտէ, եւ դորա վերայ աղ դնելն, ինձ թուի իսկապէս ցաւալի պիտի լինէր խղճիկ նորածնին: Մանաւանդ երբ երբեմն կը մնայր այն քանի մի ժամ, յառաջ քան լուանալն: Աղն երկու յատկութիւն ունի, մին՝ կարող է իքմեռնին համ տալ, եւ միւս նեխելի իրն ապականութիւնից պահպանել: Եթէ համեղութիւն տալոյ համար էր, փոքրիկ երեխայքն բոլորն եւս քաղցր եւ համեղ են (ի հարկէ՝ ուտելոյ համար չասեմ) եւ չկարծեմ աղի զօրութիւնն այնչափ է որ կարողանայ տեւել մինչ համեղ մարդիկ եւս շինէ նոցա: Իսկ միւս յատկութեան մասին, եթէ մի նորածին մանկան համար, որոյ մարմինն նոր եւ

դալար է, որպէս նորաբոյս տունկ մի կամ ծաղիկ, եւ կեն-
դանութեան ոգիքն կ'ուռան՝ կը կայտռին նոր երակաց մէջ
որպէս նորածագ արեւու ճաճանչից փողփողումն, աղ է
հարկաւոր, ուրեմն ծերունի մարդոց մարմինն միշտ մի աղի
քսակում պահել հարկաւոր է, քանզի նոքա յաւել կա-
րօտ են այնմ: Այնպէս մեծ կարեւորութիւն ունէր այս
երեխայոց աղելոյ սովորութիւնն, որ առած եղած էր,
անհաճոյ եւ անաղնիւ բնաւորութեան տէր մարդոց համար
ասել թէ "աղն փոքր է եղած„: Չկարծեմ տեւական ճնա-
սակարութիւն ունէր այն, այլ աներկբայ անհանգստու-
թիւն պիտէր պատճառէր երեխային, եւ նորոյ մորթոյ
դալարութիւնն խահրել: Եթէ ամէն երեխայ Նիկողայոս
Հայրապետի նման, որպէս աւանդութիւնն կ'ասէ, ծնանիլն
ի բաց կարողանար խօսել, հաւաստի եմ, պէտք էր բողբոջ
այս սովորութեան ընդդէմ:

Միւս մի սովորութիւնն էր, վեր յիշեալ առաջին
անգամ երեխայի մարմինն լուանալոյ ժամանակում, ծնուցչի
կողմից անփոյթ եւ բաւական բիրտ ձեւով շօշափիլն զայն:
Մանաւանդ թէ բաժակ մի կամ երկու օղի լինէր ծնուցչի
գլխում, որ շատ անգամ կը պատահէր: Թողեալ որ խա-
ղալիկի նման մի ձեռնից միւս ձեռն կը ձգէր խեղճ երե-
խային, այլ եւ մի անողորմ սովորութիւն եւս կայր, զոր
գործ կը դնէր, այն է երեխային, որպէս կ'ասուէր, "եղ-
նավզիկ„ առնել: Եղնավզիկ բառի նշանակութիւնն չգիտեմ,
թողեալ գուցէ բարդութիւն է այն եղն եւ վիզ բառերից, որ
կը նշանակէ եղնին նման երկայն վիզ ունող: Բայց առնելոյ
ձեւն այս էր, ծնուցիչն երկու ձեռն դնելով երեխայի ծնօտ ի
ներքոյ, երեք անգամ ջրիցն կը բարձրացներ օդոյ մէջ, բոլոր
մարմին կախ ընկած պարանոցիցն, եւ խեղջ երեխայի ձեռ-
ներն եւ ոտներն դողալով կը տատանէին օդոյ մէջ: Եւ որ-

չափ լսած եմ այս խիստ անողորմ սովորութիւնն կը կատարուէր այն դիտմամբ որ մանկան վիզն կամ պարանոցն երկայն լինէր։ Ինձ յայտնի չէ թէ պարանոցի երկայնութիւնն գեղեցկութեան նշան է, բայց Ջուղայեցիք, այս եղնավզկի արարողութեամբ չկարծեմ թէ յաւել երկայն վիզ ունեն քան այլ մարդոց ընդհանրութիւնն։ Այլ տես դու այս անգութ եւ չիմարական արարողութեան վտանգն որքան էր։ Թող ամէն ոք մտածէ եթէ իւրն այսպէս օգնախաղացութիւն մի տային, ինչ զգացումն եւ ցաւ պիտի կրէր, եւ եթէ կ'ասուի երեխայի մարմինն թեթեւ է եւ վնաս չպիտի կրէ, սակայն մտածելի է թէ որքան դալար է նորա մարմինն, նորա ոսկերքն որքան կակուղ են մեմ նման, եւ որչափ կարելի է թէ նորա պարանոցն վնասուի, կամ խոշոր ձեռաց ճնշումն նորա ծնօտն վնասէ, կամ ծռնէ, թողեալ արեան ընթացքի խափանումն որ պէտք է պատահի առ ժամն։ Գուցէ պիտի ասէ ընթերցողն, թէ այսքան տարիք եղած էր այս սովորութիւնն եւ ոչ էր վնասուած։ Երկուքն ես տեսած եմ։ Մի ամուսնացեալ կին որ Սուրբ Ստեփանոս եկեղեցւոյ կից տան մէջ կը բնակէր, որոյ պարանոց այնպէս կարկամեալ էր, որ չկարէր գլուխն շարժել, եւ միւս մի եւս անձն որոյ ծնօտն վնասուած էր եւ "թուշուռած" կը կոչէին։ Ի հարկէ, կ'ասէին սորա այսպէս ծնուած են, կամ այլ անոտի պատճառի կը վերագրէին վնասն, այլ հաւատա ինձ, եղնավզկին մեծ ձեռն ունէր այս բանում։ Եթէ հազար երեխայից մին եւս վնասուած լինի, եւ նշմարողն կարող էր դատել որ միոյ յաւել էր, բաւական չէր արդեօք խափան դնել այդպիսի մի չիմարական, անճոռնի եւ անգութ սովորութեան։ Եթէ վերացած չէ այն դեռ, կարծեմ վերացնելոյ միմիայն միջոցն այն է, որ բարեսիրտ ծնող մի այս օգնախաղացութեան

փորձն անգամ մի տայ նոյն իսկ ծնուցչին, եւ հաւասարի եմ այլ եւս եղնավզիկի արարողութիւնն չափաւ պատահէ, ի բարեբախտութիւն ապառնի նորեկ ազգայնոց:

Վեր գրուածներից դժուարին չէ դատել, որ այն ժամանակի ծնուցչաց մասին գովեստով խօսելն անտեղի պէտք է համարուի: Նային ոմանք, որ փոքր ի շատէ փորձ առած էին, բայց ի հարկէ արհեստի բուն գիտութեանն ծանօթ չէին բնաւ, եւ ի դէպս դժուարաբերութեանց կամ անօգուտ եւ գուցէ վնասակար միջոցների կը դիմէին, կամ անոտիապաշտական արարողութեամբք կը յուսային դժուարութիւնն բառնալ, եւ տէրն ինքն գիտէ թէ աշխարհ բերելու, ծրքան երեխայից եւս աշխարհից առ դուրս կը ճանապարհորդէին, երբեմն մօրն եւս ճանապարհակից առնելով:

Առաջին անգամ երեխային օրօրոցում դնելն եւս բաւական ծիսակատարութեամբ կը լինէր, եւ պարզ կը մտաբերեմ, այնչափ խիստ ծաղրալի եւ անոտիապաշտական արարողութիւն մի էր, զոր համառօտիւ նկարագրելն ասա անտեղի չհամարիմ: Գլխաւոր գործողն ի հարկէ դարձեալ ծնուցիչն էր: Նախ ափսէով մի լի որիզ կամ ցորեան կը դնէր օրօրոցի վերայ, ձեռ կ'առնէր սառման մի, կամ "հաւանք-դաստա" որպէս կը կոչէին զայն, հանդերձ ծեծիկովն, եւ մինչդեռ տան ընտանիքն կանգնեալ կը նայէին, կը գայր ծնուցիչն օրօրոցի մօտ, եւ յանկարծ ձիչ մի արձակելով, կը սկսանէր վազել օրօրոցի շուրջն ծեծելով հաւանգդաստէն որպէս զանգակ, ամէն անգամ շուրջ գալում օրօրոցի անկեան մինում ընդոստ կանգնելով, դարձեալ ձիչ մի կ'արձակէր եւ վազն կրկին կը շարունակէր, եւ այսպէս եօթն անգամ շուրջ գալով, եւ եօթն ձիչ արձակելով, ապա մանուկն յառաջ բերելով կը դնէին օրօրոցի մէջ:

Ա յս արարողութիւնն որպէս լաճ եմ, օրօրոցն դիւաց ազ-
դեցութիւնից ազատ պահելոյ համար էր, քանզի որպէս կը
կարծուէր դուք, կամ որպէս կ՚ասէին "քան մեզ լաւէրն„,
յատկապէս պատրաստ էին միշտ ծննդականին եւ իւր նո-
րածին մանկանն վնասել: Երբ ի նորոյ անկողին մտեալ
ծննդականն պարտաւորվէր հեռանալ քանի մի վայրկեան
եւս իւր անկողնից, իսկոյն ընտանեաց մին պիտի երթայր
անկողնուն նստէր, կամ եթէ ոչ ոք ներկայ էր, մի հատ
խորովածի շամփուր, կամ գոնէ ւ եւ իցէ երկաթի կամ
պողպատի կոտոր մի կը դնուէր անկողնում, եւ այսու
ազատ կը մնայր անկողինն դիւից, որք երեւի կը սիրէին
միշտ մտնել նորա մէջ, եթէ դատարկ մնայր: Որպէս մա-
նուկ այս տեղապահութեան պաշտօնն շատ անգամ կատա-
րած եմ ես ինքն, եւ գիտելով բանի կացութիւնն, մար-
մինս "կը փշաքաղուէր„, մտածելով որ մի գուցէ որ ոք
խաղ մի խաղան իմ հետ այդ մշտապատրաստ դուքն:
Նրեխայի օրօրոցումն եւս միշտ մի խորովածի շամփուր ներ-
կայ էր, նորան պահպանելոյ համար դեւական զօրութիւնից:
Սնոտիապաշտութիւնն կ՚ասեն տգիտութեան դուստրն է,
եւ այս ճշմարիտ է յոյժ յիրաւի:

Մ Կ Ր Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Մկրտութիւնն, որ կնունք կը կոչուէր, քանզի միշտ
մկրտութեան հետ դրոշմի խորհուրդն եւս կը կատարուէր,
միւս մի նշանաւոր ընտանեկան դէպք էր, երբեմն հանդի-
սաւոր եւ երբեմն լռին: Սովորաբար երեխային պէտք էր
եկեղեցի տանել մկրտելոյ համար, թողեալ թէ հիւան-
դութեան պատճառաւ հարկաւոր լինէր իսկոյն մկրտել
տան մէջ: Ցետ մկրտութեան եւ դրոշմի կատարմանն եկե-

ղեցիէն շարական երգելով եւ զանգակաց հնչմամբ երեխային տուն կը տանէին, եւ մայրն քօղեալ նստած կը լինէր սենեկում, եւ հնքահայրն յառաջ երթալով երեխային կը դնէր նորա ծնկաց վերայ: Հնքահօր պարտականութիւնն էր մի կոտոր թեթեւագին կամ ծանրագին (ըստ չափու քսակին) ձորձացու մի ընծայ տանել կամ երեխայի կամ սանամօր համար, եւ զայս մանկանն տուն տանելոյ ժամանակում եկեղեցիէն, հնքահօր գրկում, կը սիրէին երեխայի վերայ, եւ կը կոչուէր սաւան: Թողեալ զայս հնքահայրն պարտական էր մկրտող քահանայի աջհաւրոյն տալ, ժամ կոչի սիրան մխիթարել, եւ զանգակ հարկանողներին անմխիթար չթողնել: Բազում անգամ այս արժանաւոր աշխատանաց վարձն ես եւս գտած եմ, որ ընդհանրապէս մի կամ երկու պղնձի դրամ կը լինէր, բայց ցնծութիւնն որ կը պատճառէր այն, միայն նա է կարող երեւակայել որ զանգակ հարկանելոյ արհեստին հետեւած է երբէք: Բայց հնքահօր պարտականութիւնն դեռ վերջացած չէր: Սենեկից դուրս գալում, նորա կօշիկներն աներեւութացեալ կը լինէր, եւ ամէն ոք գիտէր ով էր աներեւութացնողն: Քանի մի դրամ եւս ծնուցչին ուղարկելով, որ երբեմն բաւական չհամարելով քամահանօք յետ կը դարձնէր, ի վերջոյ կը տիրանայր իւր կօշկացն, եւ այնուհետեւ ազատ էր: Մեծ պատիւ ունէր հնքահայրն, եւ մկրտութեան հանդիսումն պատուասիրութեանց նախարժանն նա կը համարուէր միշտ: Սանամայրն ոչ միայն, ինչ հասակի որ լինէր, հնքահօր մօտ միշտ պէտք էր եաշմաղն քթիծայրի վերայ պահել, այլ եւ չկարէր խօսել նորա հետ: Երբեմն երեխայի անուանակոչութիւնն մկրտող քահանայի կամացն կը ձգուէր, որ որպէս սովորութիւն էր ասել, տօնացուցում յիշատակեալ նոյն օրի սրբոյ անունն տալ, եւ լսած եմ որ մի պարզա-

միտ քահանայ մի մանկան անուն Կարապետ կոչելով, երբ տուն կը բերին եկեղեցիէն այնուհետեւ կը յայտնուի որ մկրտեալն աղջիկ է: Շատ անգամ միանգամայն անգրագէտ մարդիկ կնքահայր կը լինէին, եւ քահանայն մկրտութեան ժամանակում նոցա ասելիքն, բառ առ բառ պէտք էր նոցա բերանն դնէր, որ հեշտ բան չէր: Փոքրիկ հինդ վեց տարեկան մանկանց եւս երբեմն կնքահայր կը կարգէին, որք հազիւ թէ կը կարողանային մանուկն գիրկ առնուլ, թող թէ իմանալ խորհրդոյ եւ իւրեանց պաշտօնի նշանակութիւնն: Ոմանք խիստ բարեպաշտ անձինք կը խորշէին երեխային մօտենալ կամ համբուրել մկրտութիւնից յառաջ, ասելով որ դեռ հեթանոս է այն: Լսած չեմ թէ երեխայն երբէք փոյթ է տարած այս մասին կամ գանգատաւոր է եղած, գուցէ գիտէր նա որ իւր հեթանոս վիճակում եւս յաւէտ անմեղ եւ բարի էր ինքն քան այդպէս սուրբ մարդիկ:

ԵՐԵԽԱՅԻՑ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՑ ՉԵՒՆ

Ծնողական սէրն առ զաւակն, մանաւանդ նորա նորածին եւ անօգնական ժամանակում, բնութեան ամենագեղեցիկ եւ աքանչելի տեսարանաց մին է, եւ ընդարձոյս բոլոր կենդանեաց միջում: Շատ անբան կենդանեաց մէջ պակաս չէ այն քան բանական մարդկային սեռի մէջ: Նշմարիր մի ծիծառան մեծ աշխատութիւնն, զոր կաթոգնութեամբ եւ սիրով յանձն կառնու նախ բոյն շինելում, յետոյ իւր փոքրիկ ձագերն կերակրելում, եւ ի վերջոյ նոցա թռչել սովորացնելում: Կատաղի վագրն տասն անգամ յաւէտ կատաղի է իւր թշնամւոյ ընդդէմ, երբ մայր է փոքրիկ ձագուց, եւ կը պաշտպանէ նոցա իւր արիւնն

հեղոյց չափ։ Եթէ իրէ տանէ որսորդն նորա ձագն, կ՚որոնէ նորա շաւիղն, կ՚երթայ նորա հետեւից, չէ լքանել հետամտութիւնն մինչ կամ իւր կեանքն եւս զոհէ, կամ ձագն յետ գտանէ։ Ապուշ եւ դանդաղաշարժ կոճղն անգամ, իւր մեծ մեծ սիրուն աչքերում իւր անհուն կաթողնութիւնն կը ցուցանէ իւր մատաղ որթուն։ Փոքր մի հեռանալում իւրնից, կը բառանչէ եւ անհանգիստ կ՚եւրեւի մինչ գառնայ նա, եւ յետոյ ինչպէս մեծ գորովով կը լեզուէ կը գգուէ նորան։ Այսպէս մեծ է ծնողական սէրն, եւ կարծեմ փոքր զմայլելի բան կայ բնութեան մէջ քան զայն։ Եթէ զմայլելի է այն անբան անասնոց մէջ, ինչ պէտք է ասել բանական մարդոյ մասին, որ Թողեալ ընդարձոյս բնական մղումն, ի հասարակի ընդ միւս կենդանեացս, ունի նաեւ այդ աքանչելի իմացականութեան լոյսն, որով Թողեալ զգայն կարող է ճանաչել իւր զգացմունքն, կարող է որոշել իւր զգացմանց աղբերքն, եւ նորա պտուղ ամէն շարժուածն ամէն մի տրոփն ունի նորա համար պարզ եւ հասկանալի նշանակութիւն մի։ Կայ արդեօք աշխարհի մէջ յաւել չքնաղ, պատագրաւ եւ քաղցր տեսարան մի քան մօր իւր փոքրիկ զաւակի վերայ գուրգուրալն։ Բոլոր աշխարհ նորա աչքում ոչինչ է համեմատելով մարդկութեան այդ քաղցրիկ մանրիկ կոտորին զոր ծնգաց վերայ ունի։ Նորա սիրտն պատկերացած կ՚երեւի իւր գորովալիր աչքերում մինչդեռ վայր կը նայէ առ փոքրիկ Թարմ երեսն, որ Թէ եւ օդից յաւել փուխրական է, այլ առ ժամն կը ժպտէ, կը տատանէ փոքրիկ ձեռքն օդոյ մէջ, աքացիք կ՚արձակէ եւ ԹռԹռալով կը ճչէ, կը ձայնէ։ Ամէն մի շարժուածն յափշտակիչ հրճուանք մի ունի մօր համար, ամէն ժպիտ հարիւր ու մի համբոյրներով կ՚ողջունուի, ամէն ձայն եւ ճչուածն մի նոր եւ հրաշալի նշանակաւոր

բարբառ է նորա համար: Այդարեւ ինչ կայ ծնողական սիրոյ համեմատ, ամենաձնիւն է այն, Աստուածամերձն է այն մարդկային բնութեան յատկութիւններից:

Ջուղայեցի ծնողաց, յատկապէս մարց սէրն առ իւրեանց զաւակունքն, չասեմ թէ բնականից արտաքոյ էր, այլ ինչ ինչ յատկութիւններ ունէր, որ ամէն տեղում տեսանելի չեն: Մանկան բոլոր բոլորովին կախուած լինելն մօր խնամքից միայն, առանց նաժշտի եւ դայեկի օգնութեան, կ'ածէր զաւակն որպէս յասմիկի դալար ճիւղ մի մօր բնոյ վերայ պատատուած: Կաթին հետ, զոր Ջուղայեցի մայրն պակաս երկու տարի կը մատակարէր իւր զաւակին, եւ երբեք հաւատալոց չէր եթէ լսեր որ կան երեխայք որ բնաւ մօր կաթն չեն գտած, կը ջամբէր եւ կը վայելէր անդադար յայնմհետէ այդ մշտական փոխադարձ սէրն իւր զաւակից, զոր այսպէս սերտ կանխակցութիւն կարող է միայն գոյացնել: Ու ինչ աշխատ, ինչ նեղութիւն, ինչ վնաս, ինչ անհանգստութիւն կայր, զոր իբրեւ յօժարակամ պատարագ երբեք կը խնայէր մատուցանել որդեսիրութեան սեղանոյ վերայ: Իմ քաղցրիկ մայր, չարժանացայ անգամ գերեզմանիդ հողն համբուրել, բայց այդպէս մայր էիր դու ինձ, այո: Ու կարծեմ ամէն Ջուղայեցի նոյնն պիտի ասէ իւր մօր համար:

Եթէ այսչափ մեծ էր ծնողական սէրն, անհարկաւոր է ասել, թէ ո՛րչափ խանդաղատանօք, գթով եւ սրտայօժար զոհողութեամբ էր զաւակաց զարգացնելն: Բայց, ափսո՜ս, մի քանի անբարի սովորութիւնք կային, քանի մի անվայելուչ եւ չարաչար եղանակներ, որք երեխայից եւ մանկանց թէ բարոյական եւ թէ ֆիզիկական զարգացման պէտք էր վնասէին, եւ կը վնասէին իրապէս, երբեմն անդարմանելի վնասներով: Ի հարկէ տգիտութեամբ էր նոցա

արարքն, եւ եթէ ջուդայեցի ծնողաց ասէիր կարելի է թէ նոքա իւրեանց զաւակաց վնասու եւ թշուառութեան պատճառ լինէին, անհաւատալի պիտի երեւէր նոցա, բայց եւ այնպէս, մասամբ անգիտութենից, մասամբ սորկական հնազանդութենից հին սովորութեանց, եւ մասամբ անզգուշութենից, կը շարունակէին նոյն վատթար եւ խորշելի սովորութիւնքն, եւ հետեւանքն, իրաւ որ տիրելի եւ ցաւալի էին զաւակաց նոյնպէս եւ ծնողաց համար:

Բարոյականի մասին, վնասակար սովորութեանց մին էր այն, որ երեխայի միտքն բացուելոյ ժամանակում, շատ սակաւ գործ կը դնէին ծնողք այդ զգուշութիւնն, որ յոյժ հարկաւոր է այդ հասակում նոցա իմացականութեան վերայ լաւ օրինակներով, լաւ սկզբունքներ տպաւորել: Երեխայի միտքն այդ ժամանակում միանգամայն անգիր քարտէզ մի է, եւ զգայարանաց զարգացման հետ կ'ըմբռնէ անմիջապէս եւ կը դրոշմէ իւր վերայ բոլոր ինչ որ յանդիման կու գան իւրն: Ու որովհետեւ այդ հասակում մանկան աշխարհն լոկ իւր տունն եւ ծնողքն են, հետեւապէս իւր կենաց առաջին տպաւորութիւնքն նոցանից պիտի գտանէ, թէ բարի եւ թէ չար, եւ ամէն ոք գիտէ թէ այս մատաղ հասակի տպաւորութիւնքն որչափ խոր եւ անջնջելի են, եւ թէ իրպէս բազմիցս կը տեւեն մինչ ցվախճան կենաց: Զասեմ թէ կամաւ այլ գուցէ զանցառութեամբ կամ անզգուշութեամբ մանկանց թոյլ կու տային լսել եւ տեսնել այն ինչ, որ բնաւ բարի տպաւորութիւն չպիտի թողոյր նոցա մտաց վերայ: Յանզգուշ նոյն իսկ ծնողք խաբել եւ սուտ խօսել կը սովորեցնէին նոցա: Օրինակի համար, "եկ սիրելի, կ'ասէր մայր մի, այս դեղն խմիր, եւ ես երկու հատ սիրուն կարմիր խնձոր կու տամ քեզ": Մանուկն որ կը դժուարէր մինչ

այժմ, երեան կը զուարթանայր, եւ առանց երկբայելոյ
ծնողք խոստմանն — քանզի երեխայական միտքն դեռ
երկբայել չգիտեր, եւ ոչ խաբէութեան ծանօթ էր, կ'առ-
նայր կ'ըմպէր դեղն, եւ կը նայէր խոստացեալ պարգեւն
գտանել, բայց ի փոխարէն կը լսէր, որ լռնձորն իւր համար
վնասակար էր, եւ տան մէջ այդ ժամանակուամ խնձոր
չկայր, եւ կը ծիծաղէր ապա մայրն որ այսպէս հնարա-
գիտութեամբ դեղն ըմպել տուեր մանկանն։ "Ըկ նստիր
թող գլուխդ սանդրեմ„, կ'ասէր մայրն, "եւ քեզ մի
հատ խաբխաբկի ձագ կու տամ„։ Երեխայն լռնդալով կը
վազէր մօր մօտ կարծելով որ թռչնոյ սիրուն ձագ մի կը
գտանէ, բայց սանտրելուց յետ կ'իմանայր ապա թէ խաբ-
խաբուկն ինչ կը նշանակէ։ Ծնողք երբեմն եթէ ձանձրու-
թիւն կրէին մանկան, նորա բնութեան սովորական, ոս-
տոստելուց կամ վազվազելուց տան մէջ, կը գուրգուրէին
նորան երթալ մի թթուաղէմ դրացւոյ տուն եւ ասել
որ "բեգիր բէնիշինն„ տայ։ Վերջին բառդ կը նշանակէն
պարսկերէն, բռնիր նստացրուր։ Խեղճ մանուկն միամտու-
թեամբ կ'երթայր, եւ փոխարէն որպէս կը կարծէր, մի
հարկաւոր իր գտանելոյ եւ բերելոյ ի հաճութիւն ծնո-
ղացն, թթուերես դրացին, երեան յաւել թթուացնելով
կը հրամայէր նորան սպառնական ձայնիւ որ մի խորշում
իւր յանդիման նստէր եւ սպասէր անշարժ մինչ բեգիր
բէնիշինն գտանէր, եւ այսպէս քանի մի ժամ բանտար-
կեալ կը մնայր մանուկն։ Այս ամենայն ծիծաղելի կատակ
եւ հնար կը կարծուէր ծնողաց կողմից, բայց դժուարին
չէ մտածել թէ ինչ տպաւորութիւն պէտք էր թողուին
այնք մանկան մտաց վերայ։ Առաջին խաբուելուամ կը զար-
մանայր, երկրորդում ինքն եւս կը սկսանէր սուտ լսօսել
եւ խաբել։ Մինչդեռ ոչքան հարկաւոր էր այդ հասակից

սովորացնել մանկանն ձշմարտախօսութեան սէր եւ յարգն, խոստովանապահութեան պատիւն, եւ հաւատարմութեան կարեւորութիւնն, որ բարոյականութեան դլխաւոր սկզբունքն են, եւ առանց որոց մարդ չէ կարող ի պատուի լինել երբէք: Ցետոյ ոմանք ծնողք կամ երբեմն խիստ թուլութեամբ կը վարուէին իւրեանց մատաղ զաւակաց հետ, կամ անհնարին խստութեամբ — երկուքն եւս ձնասակար նոցա բարոյապէս զարգացմանն: "Իմ քաղցրիկ, իմ աչքի լոյս, ընդէր կլաս, քոյրդ թակէլ է քեզ, եկ, եկ իմ մօտ ես ձագարին կ'ասեմ գնայ նորան ուտի, ես մի լաւ կը թակեմ նորան, դու մի լար, դու լաւ տղայ ես, եկ ինձ համբոյր մի տուր.: Փոքր ժամանակից յետոյ, եթէ այս միեւնոյն "աչքի լոյսն" որ ոք մի երեխայական ձնաս կամ սխալութիւն գործէր — կը հարցանէր հայրն կամ մայրն թէ ո՛վ արար զայն, եւ մանուկն, որ դեռ խաբել չէր սովորած, պարզմտութեամբ կը խոստովանէր թէ ինքն էր արարեալ, իսկոյն ապտակ մի կամ երկու կ'ընդունէր երեսին եւ խեղճն լալով կը փախչէր ի բաց: Առաջին պարքն վրէժխնդրութիւն, երկրորդն խաբել եւ զրպարտութիւն կը սովորացնէր մանկանն: Այդ մանուկն միւսանգամ իւր սխալութիւնն չպիտի խոստովանէր, այլ կ'ուրանայր եւ այլոց վերայ կը ձգէր: Եթէ առաջին դէպքում ծնողն փոխանակ մանկան քեռն ձագարի կերակուր տալոյ, նորան կոչէր եւ արդարութեամբ քննելով իմանայր թէ յանցանքն ո՛րին էր, եւ յանցաւորին ամաչացնելով ներողութիւն խնդրել տայր միւսից, եւ իրար համբուրել տալով հաշտացնէր նոցա, եւ խրատէր նոցա որ քոյր եւ եղբայր պէտք էր միշտ սիրով ձնային, եւ երկրորդ դէպքում, նախ գովէր իւր մանկան ձշմարտախօսութիւնն, եւ յետոյ ցոյց տալով նորա ձնաստու հետեւանքն, խրատէր որ

միւս անգամ զգոյշ մնայ, եւ այնպէս սխալութիւն չգործէ, եթէ ոչ իւր ծնողացն կը տխրացնէ, եւ վիշտ կը պատճառէ նոցա, տես ինչ բարի տպաւորութիւնք այս եղանակից կը գոյանային մանկան մտաց մէջ, եւ ինչպէս ծնողաց այսպիսի զգուշաւոր խնամքովն կը զարգանային նորա հասակի հետ նոյն տպաւորութեան զգացմունքն, եւ բարի զաւակ եւ արժանապատիւ անձինք կը լինէին նոքա: Հաւէ միշտ մանկանց բարոյապէս պատժել, երբ հարկաւոր է պատժել, քան ֆիզիգապէս: Ցեսած եմ որ մի մայր իւր փոքրիկ որդւոյն միայն ասելով թէ որովհետեւ անհնազանդ է եղած իւրն, այլեւս չպիտի սիրէ ինքն նորան, մանուկն անմիջապէս փղձկեալ սկսած է լալ:

Երդնուլ, յիշողատուութիւնք, կագ եւ կոխ եւս կը պատահէին մանկանց յանդիման, եւ ոչ ոք փոյթ կը տանէր գոնէ հեռացնել նոցա, նոյն անբարի կրից առժամանակեայ զրգռմանց միջից, որ բնականաբար, յառաջն ցաւալի, եւ յետոյ չար տպաւորութիւն պէտք է թողոյր նոցա դալար մտաց վերայ: Կային ծնողք, որ փաղաքշանք կը համարէին յիշողական բառեր խօսելով առ իւրեանց մանկունքն: "Ա՛յ շան ձագ կ'ասէր հայր մի իւր զաւակին, եկ ինձ համբոյր մի տուր,: Կամ մայրն ծիծաղելով կը պատմէր, որ այդ օրն սաքուլին իւրն կոչել է Փէրէսուխատ,: Առանց նշանակութիւնն գիտելոյ, կային մանկունք, որ թութակ լեզուով շար մի յիշողներ կարող էին խօսել, որ՝ որ ոք պարկեշտ դիմաց վերայ բառական ամօթ ածել կարող էին: Եւ հարցանելի է թէ ուսանիցն սովորած էին զայն: Ընդհանուր սովորութիւն էր ի զուր եւ անտեղի երդնուլ, եւ ինչ սարսափելի սրբազան երդումն ներով: Կանաչ մեռոնն, սուրբ պատարագն, բոլոր սրբոց անուանքն, եկեղեցին, տաճարն, եւ այլ այսպիսիք հասա-

րակ երդման ձեւ էին, Թողեալ այն որ մի անուսի եւ Թեթեւ բանի համար կը լսէիր այսպիսի խօսքեր, "քո մահն տեսնեմ, կալապետիս Թաղեմ, ձեր արեւն է վկայ, ձեր մօրուքն հողում տեսնեմ Թէ սուտ եմ ասում„: Բայց ի վերայ ամենայնի երդնուլն սուտ խօսելոյ նշան է, քանզի եթէ խօսքն ճշմարիտ է ինչ հարկաւորութիւն կայ երդնլոյ:

Այս երդնլոյ, նոյնպէս եւ յիշոց տալոյ սովորութիւնն ոմանք ջուղայեցի մանկունք կը բերէին իւրեանց հետ մինչ Մարդասիրական Շեմարանն, ի Կալկաթա: Ի պատիւ իւրեանց. պէտք է ասեմ, որ յետ անգամ մի կամ երկու զգուշացնելոյ, եւ ցուցանելոյ իրի մեղքն եւ անպատուութիւնն, կը վերացնէին զայն իւրեանց բերանից, այլ կը պատահէր երբեմն որ մի մանուկ յանկարծ բորբոքուած ժամանակում, իւր ընկերաց միայն կ'արձակէր դէռ անկերպ յիշոց մի, եւ երբ նոյն յանցանաց համար կը բերուէր իմ մօտ, "վարպետ, ներիր„ կ'ասէր, "կամաւ չասացի, բերանից յանկարծ դուրս թռաւ„: Ահա այսպէս խոր է մանկական մտաց տպաւորութիւնն, եւ դժուարին ջնջել եւ բառնալ բոլորովին: Եթէ ծնողք գիտէին որչափ մեծ կասում ունի իւրեանց օրինակից, իւրեանց շարժմունքից, իւրեանց խօսակցութիւնից, իւրեանց ամէն մեծ եւ փոքր արարմունքից, իւրեանց զաւակաց բարոյական զարդացումն, նոցա կենաց երջանկութիւն կամ թշուառութիւնն, եւ թէ գիտէին որչափ մեծ պատասխանատուութիւն կայ իւրեանց վերայ այս մասին, եւ զգուշանային ամենայնիւ, իրաւ որ աշխարհում յաւել երջանկութիւն պիտի լինէր քան որչափ կայ: Փոքրիկ սրտաշարժ անցք մի կարդացած եմ այս մասին, զոր անտեղի չհամարեմ յիշատակել աստ: Կ'ասուի Թէ մարդ մի որ յոյժ պատուասէր եւ բարի անձն էր ողբան

լուրջ, արբեալ ժամանակում — որ յաճախ կը պատահէր — խիստ կռուասէր էր եւ կը մաքառէր իւր կնոջ հետ, եւ երբեմն կը գանէր խակ։ Օր մի լուրջ աստիճանում դրսից տուն դառնալով, կը տեսնէ որ իւր մատաղահասակ որդին եւ դուստրն կը խաղան սենեկի մի մէջ։ Շատ զաւակասէր լինելով, կը կանգնէ պատուհանի մօտ առանց իւրն ցոյց տալոյ կամ իւր ներկայութիւնը յայտնելոյ, եւ կը նայէ նոցա խաղալն։ Բայց ի զարմանս իւր կը տեսնէ որ փոքրիկ վեցամեայ որդին իւրն կը ձեւացնէ որպէս արբեալ, կու գայ կը դիպչէ սենեկի որմոյն, գետին կը գլորուի, եւ կը կանգնէ, կ'երերայ ոտից վերայ, եւ թութակ լեզուովն անպարկեշտ բառեր կը խօսէ, կը վազէ քեռ վերայ, նորան գետին կը ձգէ եւ կը սպառնայ հարկանել, եւ քոյրն կ'աղաչէ նորան. կը ջանայ փախչել նորա ձեռքից, եւ այսպէս կը շարունակէ խաղն։ Տարաբախտ հայր։ Իւր մեղութեան այսպէս ճշդիւտ պատկերացուցումն իւր անմեղ երեխայից կողմից, այնպէս խիստ կ'ամաչացնէ նորան, այնպէս սաստիկ կը խղճահարէ որ աչքերն արտասուաք կը լցուի, եւ այն օրից կ'ազատէ իւրն միանգամայն արբեցութեան սխալից։ Այսպէս հայելոյ նման կ'օրինակեն մանկունք ճշդիւ ամէն ինչ որ յանդիման կու գայ նոցա, առանց հասկանալոյ չարն եւ բարին։

Այլ մի անճոռնի եւ ձեռասակար սովորութիւն էր նոյն իսկ ստնդեայ դալար հասակից երեխայի սրտի մէջ երկիւղ եւ զարհուրանք սերմանել, որոյ պատուղն չկարէր այլ ինչ լինել, քան զարգացնել մանկանն երկչոտ, փոքրոգի, եւ անոտիապաշտ։ Եթէ երեխայն լայր զանազան ահռելի ձայներ կը լսացնէին նորան, որ երկիւղից լացն դադարէր։ Երբ մանկան խելքն նոր սկսած էր բացուիլ, կը սպառնային նորան, որ "բօբօխի,, մօտ կը ձգէն որ ուտէ իւրն, եթէ չդադարէ լալուց։ Կ'ասէին մանկանն որ ջրհորոյ մօտ չպիտի երթայ, եւ

ոչ մէին տեղ, քանզի սատանայ կայ անդ։ Ցետոյ հասա-
կաւոր անձինք մանկանց մօտ լուրջ դիմաք կը նստէին եւ
կը պատմէին իրար այնպիսի զանազան, անհեթեթ, ան-
հաւատալի եւ առասպելայօդ եւ անհիմն հոգեւոյսութեանց
եւ դիւահոսութեանց պատմութիւնները, որ բաւական էր
նոցա արիւնն ջուր դարձուցանել երկիւղից։ Մին կ'ասէր
թէ այս մեռեալ անձն — անունն եւս տալով — "խօթռա-
միշ„ է դարձած, եւ պատանն ուսերի վերայ փողոցներում
կը շրջէ, մարդիկ տեսած են։ Միւս՝ երկար ու մանր ձեւով
կը պատմէր ինչ որ իւր դրացիէն լսած էր, որ գիշերն իւր
տան ստորերկրեայ շտեմարանում դիւաց հարսանիք է
տեսած։ Միւս մի՝ կ'ասէր որ սեաւ կատուքն դեւեր էին եւ
կը շրջէին կատուի կերպարանաք, եւ այս մասին մի երկար
պատմութիւն եւս կը կցէր իւր ասութիւնն հաստատելոյ
համար, եւ շատ այլ այսպէս ծաղրալի եւ ստայօդ անցքեր
եւ պատմութիւններ կը պատմէին քուրսիի շուրջն, կամ
լուանի ներքոյ։ Ծաղրալի կը թուին ինձ այնք այժմ, այլ
հաւատայ, ընթերցող, մանկական հասակում աւետարանա-
կան ճշմարտութիւնք կ'երեւէին այնք։ Ու դժուարին չէ
երեւակայել թէ ինչ անհաճոյ եւ վնասակար տպաւորու-
թիւնք կարող էին պատճառել մտաց վերայ, երբ մանկա-
կան հետաքրքրութեամբ բոլորովին ականջացած կը լսէր
նա այսպէս սարսուռ բերող գերբնական իրաց անհիմն պատ-
մութիւնները, զոր ծանր դէմքով, եւ իւրեանք հաւատալով
կը պատմէին հասակաւոր մարդիկ։ Հաւ յուշ կ'ածեմ ես
այս պատմութիւններից շատերն, եւ թէ որպէս գրեթէ
գլխոյս մազերն կը ցցուէին երկիւղից։ Բաւական չէի՞ն այնք
արդեօք մանկանց կարծել տալ թէ օդն, երկիր, իւր տունն,
փողոցքն եւ ամենայն տեղ, ամէն խորշ լի էին դիւօք, լի
էին զարհուրելի երեւոյթներով, եւ կերպարանօք, եւ ինքն

միայն մշտական խաղալիկ էր նոցա ձեռքում։ Ու չէ՞ որ բաւական էր այս մանկան սրտի բնիկ քաջութիւնն ճնշել, նորա արիւնավառ արիւթիւնն միանգամայն երկչոտութեան փոխարկել, նորան անոտիապաշտ եւ փոքրոգի բնաւորութեան տէր առնել, եւ այսպէս պահել նորան մինչ ցվախճան կենաց, եթէ պատեհութիւն չգտանէր նա բնութեան անփոփոխելի օրինացն տեղեկանալ եւ թօթափել իւր անձնից այդպիսի խաւարային տպաւորութիւնք։ Բայց թօթափելն եւս կը կարծես դիւրին է։ Ո՛չ, թէեւ հասեալ եմ ես այժմ ծերութեան հասակ, եւ ժամանակ է արդ որ հասկացած լինիմ որ բոլոր այն պատմութիւնքն սուտ էին եւ երեւակայեալ միայն, այլ մի զլւմանալ թէ խոստովանիմ — եւ եթէ իմ հասակակից ջուղայեցիք ցանկան կարող են նոյնն առնել եւ նոքա — որ այս հասակում իսկ դեռ մտին տեղ մտնել ախորժելի չէ, եւ յուշ կը բերէ սարսափն որ տպաւորուած է մանկական հասակից։ Մթնում ի՞նչ յաւել է կարող լինիլ քան լուսում, բայց տես դու դալար կենաց տպաւորութեան խորութիւնն, եւ անջնջելի ազդեցութիւնն։ Ցիրաւի մեղք եւ անիրաւութիւն է մանկան պարզմտութիւնն եւ հոգւոյ ընդաբոյս արիութիւնն խահրել եւ բառնալ երկիւղ եւ անոտիապաշտական նախապաշարմունք ներշնչելով նորա մտաց մէջ։ Ծնողաց համար մեծ պարտականութիւն է ոչ միայն բաց է ի բաց խորշել այս մեղադրելի անզգուշութիւնից, այլ ընդհակառակն քաջալերել մանկան իւր շատ մատաղ հասակից երկիւղն արհամարելի բան մի համարել։ Ծանօթացնել նորան որ Աստուծոյ քաղցր նախախնամութիւնն ամէն տեղ տարածուած է իւրն պաշտպանել թէ լուսում թէ մթնում, եւ սատանայն եւ դեւք, թէ կան եւս, անկարող են երեւիլ կամ վնասել իւրն։ Վտանգից

յետ պահելոյ համար, լաւ է մանկան զգուշացնել եւ խրատել քան ի զուր անոտիապաշտական սարսափ ձգել նորա սրտի մէջ: Օրինակի համար, լաւ է ասել որ եթէ ջրհորի մօտ երթայ, վտանգ կայ, որ անկանի նորա մէջ եւ խեղդուի, քան ասել թէ սատանայ կայ անդ: Լաւ է ասել, եթէ տանիքն ելանէ կարելի է վայր անկանի եւ վնասուի կամ մեռանէ, քան ասել չար ոգիք կան անդ, եւ իւրն կ'ըմբռնեն կը տանեն ի բաց: Այսպիսով մանկան միտքն եւ դատողութիւնն կը սկսանի բացուել եւ տարաձ ծուել, եւ իւր շրջակայ իրաց իսկ պատճառն եւ հետեւանքն կը կարողանայ հասկանալ եւ կը զարգանայ արիասիրտ, մեծահոգի եւ անոտիապաշտութիւնից ազատ մարդ մի:

ԲԱԼՈՒԼ ԵՒ ՕՐՕՐՈՑ

Այսչափն բարոյականի մասին էր: Նորածին մանկանց ֆիզիկական զարգացումն եւս կցորդուած ունէր իւր հետ սովորութիւնք ինչ, որոց վնասակար հետեւանքն առաւել թշուառ եւ աւաղելի էին քան առաջնոյն: Քանզի բարոյական թերութիւնք, դեռեւս հնար կայ ուսմամբ, փորձով, օրինակով, եւ բանականութեան լուսով կամ բառնալ կամ գոնէ մեղմացնել, բայց ֆիզիկականն ոչ: Երկու էին այս սովորութիւնքն, կամ յաւել լաւ է ասել միջոցքն զորս սովորութիւնը կը գործադրէր ասացեալ ցաւալի հետեւանքն յառաջ բերել: Սորա էին մին բալուլ, միւս օրօրոցն: Բալուլ ամէն ջուղայեցի գիտէ ինչ կը նշանակէ, բայց չգիտացողի համար, հարմարօտիւ միայն այսչափ բաւական է ասել, որ սովորութիւն էր նորածին երեխային, ասա, մինչ մի տարի կամ յաւել, արթուն ժամանակումն

թէ ձմեռն թէ ամառ, փաթուքթել պարանոցից ի վայր, խոշոր եռանկիւնի կտաւով մի, մանկան կռներն եւս փակուած կը մնային այս փաթուքթի մէջ, եւ այնպէս կը պնդէին փաթուքթն, որ երեխայն կը նմանէր մի պատանած դիոց, եւ եթէ ոտքիցն բռնէիր փայտի կոճեղ նման ցից կը մնէր ձեռքում: Բալուքն կամ բալլեքն այս էր, այլ որովհետեւ սորա միանակաւոր հետեւանքն մի եւ նոյն էր որպէս օրօրոցինն, երկուքի վերայ միասին խօսելով բաւական կը համարուի:

Ջուղայեցի ընթերցողն գուցէ պէտք է ասէ, այս մարդն ինչ է գնում խօսի, ինչ է եկած խելքումն, օրօրոցն միանակաւոր բան համարել: Օրօրոցն՝ որոյ անունն հարիւրաւոր տարիքներից հետ կը յիշուի, որ ամէն երեխայի համար, սերնդից առ սերունդ գործ է դրուած մինչ ցայսօր, որ երեխայի ամենայարմար ննջարանն եւ գրգարանն է, եւ ինչպէս հնար է մի երեխայի զարգացնել առանց օրօրոցի: Իմ նուաստութիւնն եւս գիտէ որ բազմադարեան եւ հին լինելոյ համար բարի պէտք է համարուի արդեօք: Նա երկրորդ թէ բոլոր օրօրոցներն մի եւ նոյն ձեն եղած ձեւով եւ գործածութեամբ, որպէս Ջուղայինն: Նա իմ տեսածի եւ իմ փորձոյ վերայ կը խօսեմ, եւ կը թողում ընթերցողն դատողութեանն արժէք դնել այնմ կամ զրաբանութիւն համարել, որպէս եւ կամք իցեն իւրեան:

Իմ տեսած օրօրոցն — երկնչեմ թէ չպիտի փոխուած լինի դեռ — փոքրիկ մահճի ձեւ ունէր իրր երեք կամ չորս ոտնաչափ երկայն, մի եւ կէս ոտնաչափ — կամ փոքր յաւել — լայն եւ երկու ոտնաչափ գետնից բարձր: Մնարի, նոյնպէս եւ անարի հակառակ կողմից, լայնութեան երկու եզերքից կը բարձրանային իրր երեք ոտնաչափ բարձրութեամբ երկու կամարաձեւ շրջանակք, յաւել որ-

պէս զարդ, եւ ճախարակեայ ձող մի օրօրոցի երկայնութեամբ կը տարածուէր մի շրջանակի վերին կողմից առ միւսն, եւ բեւեռած էր նոցա վերայ։ Օրօրոցի չորս ոտքն հաստատած էին երկու կողմից, երկու կէս գլանաձեւ տախտակաց վերայ եւ հետեւապէս օրօրոցն այս գլանաց վերայ լինելով, փոքր մի մղումն գտանելով կը սկսանէր շարժիլ կամ օրօրիլ։ Անկողինն կամ երեխայի ննջելոյ տեղին, երկու կողմից անպատսպար էր, այսինքն վանդակ կամ եզերք չունէր, որ մանկանն պահպանէր վայր գլորուելից, եւ այս պատճառաւ, մի ոտնաչափ լայնութեամբ թանձր կտաւից կազմեալ երկու երկայն երիզներ կային, որոց մի ծայրն օրօրոցի մի կողմումն էր կապուած, եւ միւս արձակ ծայրն կը տարածուէր երեխայի վերայով, մինչ միւս կողմն եւ երբ հարկաւոր լինէր մի եւ նոյնպէս կը կապուէր այդ կողմումն։ Այս երիզքն կապանք կը կոչուէին — եւ յիրաւի որ կապանք էին — եւ մին կ'անցանէր երեխայի ուսերի վերնով մինչ փորի մօտ, եւ միւսն փորից մինչ ոտքերի մօտ։ Համառօտ նկարագրելով, այսպիսի մի գործիք էր ահա օրօրոցն, խղճիկ մանկանց համար չարչարանաց եւ մեծամեծ վնասուց գործիք, որպէս ահա կը տեսնենք։ Երեխայն որ, որպէս ասացաւ, մինչ արթուն էր բոլոր ժամանակն բալուլի մէջ էր բանտարկած, եւ կարող էր ոչ կռներն շարժել, ոչ փոքրիկ ձեռքն եւ ոտն, ննջելոյ ժամանակում բալուլից կը հանուէր եւ անմիջապէս կը դնուէր օրօրոցի վերայ, առանց ժամ մի գոնէ ազատութիւն տալոյ որ իւր թմրեալ անդամքն փոքր մի շարժէր։ Կը տեսնիր որ խղճիկ անլեզու արարածն կճմռտայր, կռներն կը բարձրացնէր, ոտքերն կը ձգձգէր, եւ ամէն շարժմամբ ցոյց կը տայր որ իւր դալար մարմին թմրած եւ վշտացած էր բալուլի կապանքից, բայց մայրն որպէս թէ անզգայ նորա անխօս ա-

ղաչանացն, քանի մի համբուրիւ, օրօրոցի վերայ դնուելոյն պէս, երկու երիզքն կամ կապանքն կը քարշէր նորա վերայ մեի նեղքոյ վաստակած եւ ցաւած կռներն կը դնուէին, եւ միւսի նեղքոյ ծնկներն եւ սրունքն, եւ կապանքի ծայրերն առ իւր կողմն բերելով կը պնդէր օրօրոցի ստորին մասում: Ցեսած եմ որ մայրն իւր ոտն դէմ դնելով օրօրոցին կը ձգէր կապանքն որքան ուժով որ կարող էր, խեղջ կինն անգիտութեամբ կարծելով որ այսու կը պաշտպանի մանկան վայր գլորուելից, բայց երեխայի երեան կը սկսէր կապտիլ արեան շրջանն կապ գալով: Երեխայն կը լայր, կճէր սաստիկ, մայրն կը շփոթուէր, «վայ ինձ, ինչ է եղել երեխս» կ'ասէր, կը ջանայ դիւեցուցանելով դադարացնել նորան, բայց երեխայն յաւել կը ճչէր, եւ ի վերջոյ այնչափ կը ճչէր մինչ մայրն օրօրոցից առնոյր, կամ կը թմրէր կը ճնայր այնպէս տագնապի մէջ: Այս բաւական չէր, մանկան աղաղակն եւ ճիչն դադարեցնելոյ համար, միւս միջոցն էր ղրկը ղրկ, ղրկը ղրկ օրօրոցն օրօրելն, սաստկացնելով օրօրն ճչելոյ սաստկութեան հետ, եւ խղճիկ արարածն ինչ անմարս կաթն որ ունէր ստամոքսում, այս շարժմունքից կը սկսէր փսխել: Եթէ սոյն օրօրոցն, եւ նոցա գործածութեան եղանակն կը տեւէ դեռ եւս, թող մայր մի, իւր հինգ կամ վեց տարեկան մանկանն, որ խօսել է կարող, եւ որոյ անդամքն յաւել պինդ են քան նորածին երեխայինն, դնէ օրօրոցի մէջ, եւ կապանքն լաւ ձգելով սկսանի օրօրել կէս ժամ միայն, եւ կը տեսնէ թէ ինչ աղաղակ կը բարձրանայ, եւ ինչպէս կ'աղերսէ մանուկն որ փրկէ իւրն այն պատուհասից, եւ յետ փրկուելոյն ինչպէս կը դանտէ որ մարմինն բոլորն կը ցաւէ եւ գլուխն կը պտոյտքէ: Դժուարին չէ երեւակայել նաեւ, որ մի հասակաւոր մարդոյ անգամ կռներն եթէ մարմնոյ հետ պինդ

կապուի, նոյնպէս եւ ոտքն միմեանց հետ, որ բնաւ շարժել կարելի չլինի, այդպէս ժամ մի ինալն ինչ կը նշանակէ: Բայց նմանութիւնն յաւել ճիշդ լինելոյ համար, թող դարդակ ստամոքսում ջուր ըմպած լինի, եւ մի բարեսիրտ անձն նորան անդադար մի կողմից միւս կողմն շարժէ, ինձ թուի, եթէ ամենաբարի քրիստոնեայ իսկ լինի այդ անձն, այնպէս բառեր կը սկսէ գործ դնել, որ պարկեշտ ականջաց համար չպիտի յարմար լինին: Եթէ զարգացեալ պինդ անդամոց համար այդպէս չարչարանք է այն, ուրեմն խղճիկ անլեզու երեխայից համար ինչ պէտք է լինէր, որոյ դալար, փափուկ, դիւրաթեք, դիւրաբեկ մարմինն, եւ կաւուղ ոսկերքն, օր ի քան եւ չորս ժամուց՝ գրեթէ քանի միջոցում, բանտարկուած, կապած կը մնային կամ բալլի կամ օրօրոցի մէջ: Մի նորաբոյս տունկ յաւել լաւ կ'աճէ, որպէս փորձով գիտեմք, երբ ազատ է ամէն արգելքից եւ սեղմունքից, եւ կը կարողանայ տարածել ազատօրէն իւր ոստքն օդոյ մէջ: Թող ո՛ եւ իցէ ձնշուհի վերայ գայ դալար տնկոյն, եւ ահա կը ճնաւուէ, ո՛չ միայն իսկոյն զարգացում կը նուաղէ, այլ եւ բնականից արտաքոյ կամ թեք կամ այլ որ ոք անկատարութեամբ կը մեծանայ: Փոքրիկ երեխայք մի թէ նորաբոյս դալար ծաղկանց կամ տնկոց նման չէն, եւ հարկաւոր չէ միթէ նոցա գողտրիկ թարմ անդամոցն եւս նոյն ազատութիւնն տալ: Այլ քաղաքակիրթ երկիրներում ես տեսած չեմ բնաւ բալուլ կամ օրօրոց, եւ կարծեմ կը զարմանան լսել որ այսպիսի չարչարանաց գործիք կը գտանուին ուրեք երբեք: Ընդհակառակն սովորութիւն է նորածին մանկանց բնաւին՝ բոլորովին ամէն սեղմունքից ազատ պահել: Հայն եւ թերեւս զգեստ կը հագցնեն որ ազատօրէն բոլոր անդամքն կարողանան շարժել: Արեւուն ժամանակում թէ

մը ծնկաց եւ թէ իւր փոքրիկ վանդակապատ անկողնոյ վերայ կայ արձակ եւ ազատ, իւր փոքրիկ ոտքերովն աքա-ցել օդուն, կռնակն շարժել եւ տատանել, եւ ղու ղու առնելով լարել զայնս խնդալով առ մայրն: Նոյնպէս են եւ ննջեալ ժամանակուն, եւ մի բարեյարմար գործի կայ նոցա համար զոր կը բանան մանկան վերայ, եւ այսու ապահով կը ճնայ նա ցրտից, ձանձից, մռճակից եւն: Այս գործին շատ ընթերցողք տեսած պիտի լինին գուցէ, եւ կազմելն ոչ մեծ ճախք ունի, ոչ դժուարին է: Կը նմանի այն ջուղայու մոմած կտաւով ծածկեալ լապտերին, երէ երկայնութեան կիսոյ վերայ բաժանես զայն: Կամարաձեւ երկաթի թելեր ունի որպէս լապտերն. այս թելերի ծայրերն երկու կողմից եւս ժողոված են եւ սլաք մի կ'անցանէ նոցա մէջ, որոյ վերայ կը բացուին կամ կը խնուին: Բայց ժամանակուն կը նմանէ այն որպէս ասացաւ կէս լապտերի, բայց յաւել բարձր եւ լայն, եւ ոչ լապտերի չափ երկայն: ծածկուած են շղարշեայ, կամ թաւոնի նման փոքրիկ ծակոտկէն պաստառով, օդախաղացութեան համար, եւ երեխայն կը ճնայ սորա ներքոյ թէ մահճուն, թէ գետնոյ վերայ: Ջերմ պահելոյ համար, ծածկոյթն եւս մանկան մարմնոյ վերայ չէ ձգուել, այլ սորա վերայ, եւ միանգամայն ապահով կը ննջէ երեխայն որպէս մի փոքրիկ սեռնակի մէջ, ազատ եւ առանց ո՛ եւ իցէ ծանրութիւն կամ ճնշումն ունելոյ մարմնոյ վերայ:

Բայց մինչ այսչափ, խօսքս միայն բաւլի եւ օրօրոցի չարչարանաց եւ անհանգստութեան վերայ էր, զոր այս երկու գործիքն կը պատճառէին խղճիկ մանկանց, եւ որպէս սովորութիւն էր ասել "կը մեծանայ կը մոռանայ", եւ կը մոռանայր իսկ, բայց ցնաան միայն այսչափ չէր, այլ այս բանից կը հետեւեն վտանգներ եւ մշտական վիշտ եւ

տարաբախտութիւնք զորս մոռանալն անհնար էր։ Ջուղայում իմ տեսածով կարծեմ երկու հազար հինգ հարիւր — գուցէ դեռ պակաս — յաւել հայք չկային եւ այս երկու հազար հինգ հարիւր հոգւոց մէջ, կարող եմ ստուգիւ ասել, որ քսանից յաւել եւ ոչ պակաս արատաւոր անձինք կային, այսինքն խեղանդամք, կաղք, ապշամիտք, պարանոցով կարկամեալք, անդամալոյծք, եւն, որ յերեխայական հասակէ այսպէս մեծացած էին։ Սոքա ժամանակակիցք էին, եւ մեծ մասին անուանքն կարող եմ յիշել։ Թողնելով քրիստոնեայ լուսաւորեալ ազգերն, որ ի հարկէ փափուկ եւ յաւել կատարեալ կենցաղարութեան ձեւ ունին, օրինակ կ'առնումք Հնդկաստանի երկրական բնակիչքն։ Սոցա մէջ որպէս կանոնաւոր շնչագրութիւնքն — զոր կառավարութիւնն ժամանակ առ ժամանակ կը կատարէ — կը ցուցանեն որ հաւասարաբաժին թուով, հինգ հազարի մէջ հազիւ թէ այդպէս արատաւոր մի կայ։ Սոցա ընդհանրի ապրելոյ ձեւն շատ — յոյժ շատ ստոր է քան Ջուղայեցւոց ապրելոյ ձեւն էր։ Ցած աստիճանի ընտանիք այնչափ անխնամ, անփոյթ եւ բազմիցս անպատասպար ձեւով կ'ապրեն, զոր մի Ջուղայեցի տեսանէր կը զարմանայր, բայց օրական հազարաւոր անձանց հանդիպելով, հազիւ երբեք այսպիսի արատաւոր կը տեսնուի սոցա մէջ։ Ի հարկէ խօսքս այնպէս արատաւորացոյ վերայ չէ, որ ծնեալս կամ վտանգի են հանդիպած մանկական հասակից յետոյ, այլ նոցա վերայ է միայն, զոր ի Ջուղայ սովոր էին ասել "մօրից այդպէս ծնուած է։„ Ուրեմն ինչպէս է արդեօք, որ այսպէս միլիոնաւոր ազգի մէջ մօրից ծնուած արատաւորն այսպէս սակաւ է, կամ կարելի է ասել հազիւ թէ կայ, մինչդեռ Ջուղայու այչափ փոքրաթիւ խմբի միջում, հազարի մէջ մերձ

տան հոգի կային։ Կալկաթայու ծնեալ Հայ մի, անգամ
մի այս հարցն ձգեց ինձ, Թէ ընդհ՞ր էր որ Ջուղայեցւոց
այդչափ սակաւաթիւ խմբի մէջ, այդքան արատաւորք
կային, որչափ ինքն էր տեսած Կալկաթայում։ Առ ժամն
չկարողացայ իմանալ Թէ ինչ պատասխանի տալ այս հարց-
մանն, բայց բաւական աչքերս բացուեց ապա, այդ տար-
օրինակ խնդրոյ վերաբերութեամբ, եւ ես եւս սկայ զար-
մանալ Թէ իսկապէս ընդհ՞ր էր այս, մինչդեռ Հնդկա-
հայոց մէջ, մի հատ եւս չկայր, եւ նոցա Թիւն Ջուղայե-
ցւոց կիսով չափ Թուից պակաս չէր։ Այլ յետոյ փորձով
լաւ իմացայ "ընդհ՞րն"։ Նա Թ՛ղ ո՛վ կ՛ուզի զբաբանու-
Թիւն կարծէ իմ ասութիւնն, այլ խոհական մտածողն
չկարէ ուրանալ, որ մասամբ գուցէ ծնուցչաց անկրթու-
Թիւնն էր, այլ գլխաւորապէս բալուչն եւ օրօրոցն էին այս
վնասուց պատճառն, որ մի մարդոյ իւր բոլոր կենաց մէջ
արատաւոր կը Թողնէին։ Սորա գրիչն ի տարաբախտու-
Թիւն իւր մի ոտքով կաղ է։ Կը յիշեմ որ մանկութեանս
ժամանակում խաղընկերքս կը ծիծաղէին իմ վերայ, Թէեւ
չգիտէի ընդհ՞ր, քանզի բարեբախտաբար ցաւ չզգալով, լուր
եւս չունէի իմ արատաւորութեան մասին։ Երբ փոքր մի
զարգացայ, եւ հասու եղայ այնմ, ըստի որ այդպէս ծնած
եմ, եւ այդպէս եւս կը կարծէի ապա բոլոր ժամանակ,
միայն անհրաժեշտ տարաբախտութիւն մի համարելով զայն։
Բայց քանի ամօք յառաջ դէպ լինելով ինձ մի երեւելի
բժշկի մօտ երթալ վասն հիւանդութեան ինչ, նա եւս
հարցրեց ինձ Թէ ինչ պատճառաւ կաղ կը շրջէի, եւ իմ
հաւատացածն յայտնեցի նորան ի հարկէ, ասելով "մօրից
այսպէս ծնած եմ։" Բժիշկն ծիծաղեց, հաղիւ կարելի է
այդ, ասաց նա, պէտք է որ վնասու հանդիպած լինիս, եւ
պատուիրելով որ ընկողմանիմ մահճի վերայ, քննեց արա-

տաւոր ոտս, եւ ձեռս տանելով դրեց ազդեր կամ ծնկանս ոսկեր վերին ծայրի վերայ, տես, ասաց, այս ոսկեր ծայրն որ դուրս կը ցցուէ չպիտի այսպէս լինի, իւր տեղից դուրս է անկեալ, որ երեխայութեանդ ժամանակում պէտք է պատահած լինի, անզգուշութեամբ որ ոք ձնշուելն տալով նմին, եւ այդպէս ճնալով ոսկեր բնական տեղն մնով լցուած է եւ մի ոտնդ կարճ է մնացած: Եթէ դեռ մանկական հասակում լինէիր, ասաց, կարելի կը լինէր ոսկրն իւր տեղն ձգել, եւ կաղութիւնդ իսկոյն կը բարձուէր, բայց այժմ փորձելն դժուարին եւ ցաւալի կը լինի: Կարճ ասելով նորածին ժամանակումն "ղալչաղս" դուրս էր ընկած, եւ ոչ ոք իմացած էր քանի կացութիւնն, եւ ցաւն եւ լացն եւ ճիչն, որ ի հարկէ, պիտի հետեւեալ լինի այնմ, խեղճ ծնողքս անխափան այլ պատճառի պէտք է տուած լինեն, քան բուն պատճառին: Այն չէր, որ ես տեղեակ չէի, յառաջ քան բժշկի յայտնելն, որ ասացեալ ցից ոսկրն աւելորդ բան մի էր այդ տեղում, լաւ գիտէի քանզի միւս ծունկնս այդպէս չէր, բայց ի հարկէ կը կարծէի, որպէս լսած էի, թէ այդպէս ծնեալ եմ: Ահա եթէ օրօրոցի կամ բալլի դառն կապանաց եւ փաթութի ճնշումն չէր պատճառած զայս, չգիտեմ թէ այլ ինչ պիտի պատճառած լինէր: Ու բոլոր խմանման կամ միւս արատաւորք եթէ իւրեանց տարաբախտութեան յանցանքն վեր երկու չարչարանաց եւ վտանգի գործեաց վերայ դնեն, սխալ չեն լինել: Բայց թէպ ասենք թէ բոլորի պատճառն օդքա չեն, եթէ սակաւուց պատճառ եւս լինեն, բաւական չէ այդ, օրօրոցն եւ բալուլն տարտարոս ուղարկել յաւիտեան: Միայն մի մարդոյ բոլոր կեանքն թշուառացնել, կային քանզի շատ ողորմելի թշուառք եւս ասացեալ դժբախտ արատաւորաց մէջ, փոքր բան է: Ու մի ծնող

չպիտի արդեօք զարհուրի, որ իւր երեխայի կեանքն, կարելի է, թէ ինքն իւր ձեռամբ յաւիտեան ապերջանիկ առնէ, առանց իմանալոյ։ Ցեռոյ ոմ կարող է ասել, թէ շատ երեխայք իւրեանց կեանքն եւս զոհ չեն տուած այս անիրաւ սովորութեանն։ Եթէ նոցա արտաքին անդամքն այդպէս թարմ եւ դիւրաշէնս են, որքան առաւել փափուկ նոցա ներքին կենսական գործարանքն պէտք է լինին, եւ այդպէս կապանքներով խղճերին սեղմել եւ ճնշել չկարէ միթէ նոցա արեան շրջանն կապ տալ, կամ աղիքն կտրել, կամ սրտի շարժումն դադարեցնել, եւ կամ այլ այսպիսի մահացու վնասներ պատճառել։ Կը յիշեմ որ շատ անգամ լսած եմ, որ կ'ասէին այս ինչ մանուկ "երեխայութիւն" էր գտել եւ մեռաւ։ "Երեխայութիւնն" կը նշանակէր յանկարծակի ջղաց ձգձգումն, մանկան երեսն կապտելն եւ մահ։

Պատուելի ջուղայեցի մայր, քո նախնիքն անգիտութեամբ արարին ինչ որ արարին, եւ հաւաստի եմ դառնութեամբ սիրտ լայն, եթէ իմանային որ բնաւ իւրեանց զաւակաց, փոշատեսակ իսկ, թշուառութեան պատճառ էին եղած, թող թէ մահուան։ Բայց դու որ գիտես զգուշացիր։ Եթէ կը սիրես քո զաւակին — եւ ոմ է որ գիտէ յաւել գորովով սիրել քան ջուղայեցի մայր մի — եթէ կը փափագես քո զաւակի կենաց երջանկութիւնն, եւ դեռ իմ յիշեալ օրօրոցն ունիս քո տան մէջ, առաջին անգամ թէյի ջուր պատրաստելում, խորտակիր, ջարդիր այն եւ վառիր, բալուլի եռանկիւնի կտաւն լուցկի շինելով առաջնոյն։ Իրաւ որ լաւ ողջակէզ մի մատուցեալ կը լինես զաւակիդ երջանկութեան սեղանոյ վերայ։ Թող կայտառելով, թրթռալով, աքացելով, կռներն շարժելով ազատ եւ արձակ մնայ նորածին սիրելիդ, թող լոյս եւ օդ վայելէ միշտ. որչափ կարող է, մի՛ սեղմել նորա մարմինն ոեւիցէ եղանակաւ, եւ

կը տեսնես կ'աճէ կը զօրանայ նա, յաւել զուարթ, յաւել յաղթանդամ, յաւել առողջ եւ ամէն արատից եւ վշտից ազատ։ Եթէ օրօրոց կ'ուզես, գոնէ այդ տեսակն գործ ածիր, որ ձօճկի նման երկու կողմի կախ է եւ եղերք կամ վանդակ ունի շուրջն, եւ երեխայն չկարէ վայր անկանել, եւ կապա- նաց հարկաւորութիւն չկայ։ Սորա շարժումն օրօրոցի նման անհանգստարար եւ ձեռնակալ չէ։ Թող երեխայն ազատ արձակ թաւալի նորա մէջ։ Նայիր նորան մինչ ժպտելով կը ձայնէ, փոքրիկ կռներն կը լարէ առ քեզ, եւ ուրախացիր, եւ խղճա՛ այն տարաբախտ մանկանց վերայ, որ փոխանակ այդպէս ազատութիւն վայելելոյ, կապանաց մէջ կը ծնանին։

ՀԱՐՍԱՆԻՔ

Հարսանեաց՝ ընդհանրապէս, նախ կը կարասպետեր նշանադրութիւնն, որ երբեմն հարսանիքէն քանի մի ամ սով յառաջ տեղի կ'առնոյր, եւ երբեմն քանի մի օրով յառաջ։ Նշանադրողն եւ նշանադրելին, այսինքն, պա- տանին եւ օրիորդն, որք կամէին ամուսնանալ, շատ փոքր ձայն ունէին, եւ բանն բոլորովին նոցա ծնողաց կամքէն էր կախուած։ Եւ երբ երկու կողմէ ընդունելութիւն լինէր, նշանադրութեան օրն կ'որոշուէր։ Պէտք է ասեմ ի պատիւ Ջուղայեցւոց, որ ամուսնութեան խնդրոյ մէջ դրամոյ անուն եւ սակարկութիւն չկայր, որպէս շատ այլ տեղւոյ սովորութիւն է, նա իսկ Հայոց մէջ, ուր փեսային կամ հարսի կողմէ այսչափ կամ այնչափ դրամ պէտքայ միջոց գան նշանադրութեան հաստատման հետ։ Այս շատ լաւ էր, բայց երկու գործողացն, սոյն նոցա կենաց ամենակա- րեւոր դէպի մէջ, միանգամայն չէզոք թողնէին, եւ նոցա

ընդունելութիւնն անգամ հարկաւոր չհամարէին, փոքր մի տարօրինակ էր: Մանաւանդ որ բազում անգամ, պատահեին եւ օրիորդն երբեք տեսած չէին իրար, եւ ոչ բառ մի իւրեանց կենաց մէջ խօսեցած էին միմեանց հետ: Կը պատմէր բարեկամ պատանի մի իւր նշանադրութեան մասին այսպէս: "Օր մի„ կ'ասէր, "քանի մի ազգականք երեկնապահին ժողովուելով իւրեանց տան մէջ, յետ փոքր մի սպասելոյ, ճանապարհ անկան գնալ, եւ հայրն կոչելով իւրն, 'որդի,, ասաց, 'հարէդ (վերարկու) գնիր եւ եկ մեր հետ,: "Ես հոտ առած էի„ կ'ասէր պատանին, "որ ինձ ամուսնացնելոյ համար զըոյց կայր մեր ընտանեաց մէջ, այլ թէ երբ, եւ թէ ընդ ում, բնաւ լուր չունէի: Ի հարկէ հօրս հրամանին հնազանդելոյ, եւ ճանապարհի կիսուն միայն, բարեկամաց միից հարցուփորձ առնելով իմացայ որ ինձ կը տանէին նշանադրել մի օրիորդի հետ„, որոյ հետ ապա ամուսնացաւ: Բնաւ տեսած չէր յառաջն օրիորդին, եւ ոչ մինչ այդ օր լուր ունէր որ նորան ընտրած էին հարսնանալ իւրն: Բայց կը կարծէ ոք թէ ահա այս նշանադրութեան օրում գոնէ առաջին անգամ պէտք էր տեսանէր նորան, բայց այդպէս չէր: Նշանադրելի օրիորդին դուրս կը բերէին, այլ երեսն քօղած, եւ նշանադրութիւնից յետ եւս, թէեւ սովորութիւն չէր, այլ եթէ պատանին բաւական քաջասիրտ լինէր, եւ իւր նշանադրելոյ ընտանեացն վստահանայր երբեմն այցելութիւն տալ, այդ ժամանակում եւս, այնչափ դժուար էր օրիորդին բնաւ տեսանել, որչափ դժուար է ցերեկով աստղ տեսանել, քանզի խեղճ աղջկան համար անպարկեշտութիւն կը համարուէր, բնաւ երեւիլ իւր փեսայացուի աչքում, եւ նորա գալոյ լուրն լսելն ի բաց, տան անյայտ խորշերի մեւում կ'երթայր կը գաղտուէր: Ամօթ էր նաեւ փեսայա-

ցուի համար երբեք իւր հարսնացուի ողջութեան լուրն հարցանել, կամ խօսել նորա վերայ։ Սխալ չափի լինիմ ասել, շատ ամուսնացեալ անձինք, այր եւ կին կը տեսնէին իրար առաջին անգամ այն ժամանակուամ, երբ Յակոբ Լիային տեսաւ։ Ու լաւ եմ որ Յակոբայ եւ Լիայի պատահածի նման դէպք, երբեմն Հայաստանի մէջ եւս պատահած է, որ բնաւ անհաւանական չէ։ Կը պատահէր երբեմն — թէեւ շատ սուղ անգամ, քանզի խելօք աղջկանց շատ մտաղ հասակում կ'ամուսնացնէին, եւ սովորութիւն էր ասել, "տան եւ չորս տարուց յետ աղջկայ խասկն յետ կու տայը,„ — որ օրիորդի կողմից հաւանութիւն չէր լինել, կամ յառաջագոյն տեսած լինելով պատանուոյն, եւ չհաճեցած նորան, կամ գուցէ սրտի խորոց մէջ սէր ունելով այլ մի պատանուոյ համար, բայց խելօք աղջիկն կամ չէր համարձակուել բնաւ յայտնել իւր զգացմունքն, կամ եթէ յայտնէր եւս մեծ անպարկեշտութիւն եւ անհնազանդութիւն կը համարուէր, եւ շատ սակաւ ծնողք փոյթ ունէին դստեր յօժար կամ անյօժար լինելոյ մասին, եւ նշանադրութիւնն եւ ամուսնութիւնն կը կատարուէր սպառնալիօք եւ գրեթէ բռնութեամբ։ Ինձ ծանօթ է այսպէս մի դէպք, որ քաջութեամբ կը ներհակէր օրիորդն երիտասարդի միոյ հետ ամուսնանալ, եւ կը սպառնայր անգամ պսակադրութեան ժամանակում հաւանութիւն չտալ, բայց պարտաւորեցին խղճին, բերին տաճարի եւ քահանայի յանդիման, եւ հաւանութիւն տալոյ ժամանակում, թէեւ ուշաթափ ելաւ վայր անկաւ տարաբախտ հարսն, բայց պսակի խորհուրդն կատարուեց, եւ կապուեց ամուսնութեան այսպէս անսրբազան կապ մի։ Հարսի ուշաթափ լինելոյն ականատես էի եւս։

Այսպէս էին հարսանեաց նախերգանքն։ Սոքա՝ որոց ընդունելութիւնն նախագոյն եւ ամենակարեւոր պետք էր

համարել ոչնչէ տեղ կը դնուէին, եւ կորիզուխ բռնակալ սովորութեան կը հնազանդէին բոլորն։ Նշանադրութեան օրում մատանի մի կը տուէր հարսնացուին, եւ միջոց ժամանակում մին հարսանեաց տեղի առնուլն, երկու ընտանիքն եւս միմեանցէ հեռի եւ խորթ կը մնային որպէս յառաջն։ Բայց ամէն նշանադրութիւն չէր նշանակել հարսանիք։ Նշանադրութիւնն մարդկային կամք եւ յօժարութիւն էր, եւ կը կատարուէր ըստ հաճոյից, այլ կայր գերմարդկային զօրութիւն մի եւս, որ նոյնպէս ըստ հաճոյից կարող էր իրացուցանել կամ ոչնչացուցանել նշանադրութեան ուխան։ Ըե այս էր հասութեան կամ չհասութեան բազմադիմի եւ փոփոխական զօրութիւնն, որ կայր ի ձեռս կրօնականաց։ Բազմադիմի եւ փոփոխական կը կոչեմ, քանզի իմ տեսածով, շատ մի առաձգական որպիսութիւն ունէր այս զօրութիւնն, ընդհանրապէս շատ խիստ էր, այլ թուլացնելոյ հնար կայր, եւ ամէն դէպքում նորա խստութիւնն միեւնոյնչափ չէր, երբեմն նուազ էր, երբեմն յաւել, դէպքի եւ հանգամանաց համեմատ։

Շատ մերձ արիւնակցաց ամուսնութեանէ միաւորութիւնն, յաւէտ բժշկական կանոնաց նեղքոյ բան մի է, եւ անուրանալի է, որ որպէս փորձով տեսնուած է, այսպիսի ամուսնութիւնք եթէ յաճախ շարունակեն, կը հետեւին անտի մեծամեծ վնասակարութիւնք նոյն ամուսնութիւնից ծնեալ սերնդոց մէջ, շատ անգամ տոհմին վերջացնելով, կամ խելագարութիւն պատճառելով։ Ըե այս պատճառաւ է որ բերած հաստատած են որպէս կրօնական կանոն, որպէս զի ժողովուրդն անփոյթ չմնան նորին պահպանութեան մասին։ Սակայն խիստ բռնաբարութեան գործի մի էր փոխարկուած նոյնն ի ձեռս ոմանց կրօնականաց, առանց որոց հրամանի պսակի խորհուրդն չկարէր կատարուիլ։ Ջուղայե-

ցիք փոքրիկ խումբ մի լինելով, բնականաբար նոցա մեծ մասն մծատուոր կամ հեռաւոր ազգականութիւն ունէին միմեանց հետ: Ես կարծեմ մանր խուզղուքեամբ եթէ քննուէր, շատ սակաւ ընտանիք կը գտնուէին, որ բոլոր բոլորովին օտար լինէին իրարից, եւ բնաւ կանխակցութիւն չունէին միմեանցից: Ցետոյ թէոդ արհնակցական կանխակցութիւն, կնքահայրութիւնն եւս որպէս ասացաւ, յառաջ կը բերուէր որպէս արգել ամուսնութեան կնքահօր եւ սանահօր ընտանեաց մէջ: Ես սոցա հետեւանքն էր, որ յաճախ անգամ, եթէ այդպէս ցանկայր կրօնական իշխանութիւնն, կարող էր մի կամ միւս հեռաւոր ընտանութիւն յառաջ բերել եւ արգել դնել ամուսնութեանն: Ես շատ անգամ որպէս ես տեսած եմ այսպէս եւս կը լինէր: Թէեւ նշանադրութիւնն եղած էր, թէեւ հարսանեաց հանդիսի պատրաստութիւնքն կատարուած էր, վերջին կետում մի կամ միւս չհասութեան հնչին պատճառ յառաջ բերելով արգել կը դնէր կրօնական իշխանութիւնն, եւ կ'ասէր պսակադրութեան հրաման չկարէ տալ: Բայց որպէս ասացաւ, առաձգական եւ փոփոխական զօրութիւն ունէր վեր իշխանութիւնն, եւ խիստ զօրաւոր միջոց մի կայր, որ եթէ գործ դնուէր, եւ պիտի գործ դնուէր, կարող էր ողղել ասացեալ իշխանութեան խստութիւնն, եւ որչափ եւ կարճ լինէր չհասութիւնն, զարմանալի կերպով կարող էր ձգտել եւ ծայրն ծայրի հասցնել: Այս միջոցն դրամ էր: Ո՛վ որ ցանկայր տալ, չհասութիւնն եւ արգելն կը բառնայր իսկոյն: Ձցանկացողն կը պարտաւորուէր նշանադրութիւնն յետ ստանալ եւ այլ նոր փորձ մի փորձել: Աղքատաց մասին հազիւ երբեք խիստ բծախնդիր էր իշխանութիւնն, քանզի օգուտ չունէր: Գիտէր այն որ ծառն է արժանի շարժելոյ, ուստից պտուղ կարող է թօթափիլ:

Այս դրամն տուգանք կը կոչուէր, թէեւ դժուարին է ասել եկեղեցական որ օրինաց համեմատ։ Գուցէ փոքր մի անախորժ ձայն ունի, բայց ճիշդ դատելով, ոչինչ քան յայտնի կաշառ էր, որ եկեղեցական լեզուով Սիմոնական-նութիւն կը կոչուի։ Եթէ ամուսնութիւնն չհաս էր, չհաս էր, եւ չհաս եւս պէտք էր ճնայր։ Ուրեմն ի՞նչ-պէս հասանելի կը լինէր, երբ դրամոյ քսակն յառաջ կու գայր։ Տուգանքն՝ գործեալ յանցանաց համար կը պահանջուի միշտ։ Եթէ չհաս ամուսնութեան կատարումն (որ դեռ տեղի առած չէր), յանցանք էր, ուրեմն ոչ տուգանք, այլ կաշառ էր այն թոյլտուութիւն գտանելոյ նոյն յանցանքն գործել։

Այլ զնարդ եւ իցէ, բաղումք ասացեալ տուգանքն տրանջելով կու տային յանձարութենէ, եւ ամէն արգելք կը բարձուէր իսկոյն, բայց ոմանք եւս կ'ընդդիմանային այս ապօրէնութեանն։ "Շատ լաւ, այս մին չհաս է, միւս մի աղջկան հետ կ'ամուսնանամ„ կ'ասէին։ Կը մտաբերեմ որոշակի մի պատանւոյ դէպք այս մասին, որ այժմ հանգուցեալ է, այլ որոյ որդիքն իմ աշակերտք էին երբեմն։ Սորա առաջին նշանագրեալ օրիորդին իշխանութիւնն չհաս համարեց։ Բայց պատանին գիտելով այս ինչ կը նշանակէ, եւ չկամելով հպատակել կեղեքմանն, նշանագրուեց այլ մի օրիորդի հետ, եւ բնական է որ այս անգամ յառաջագոյն քննեալ՝ տեսած էր որ չհասութեան արգելք չկայ։ Բայց այս իւր քննութիւնն էր։ Իշխանութիւնն յաւել խոր կարող էր քննել, եւ այս անգամ եւս մի հին փտած չհասութեան պատճառ յառաջ բերեց։ Կրկին այլ օրիորդի հետ նշանուեց պատանին, եւ եթէ սխալ չլինիմ, ի վերջոյ երրորդ թէ չորրորդի հետ էր որ կարողացաւ ամուսնանալ, եւ կարծեմ ի վերջոյ իշխա-

նուէրն ամաչողութիւնից էր որ ազատ թողից այս մարդոյն: Կրօնական հալածումն չէր այս, եւ եթէ այդ չէր, ինչ էր ուրեմն:

Միւս մի դէպք կը մտաբերեմ, որ դարձեալ իշխանուէրեան վերայ յաղթական եղեւ նորօրինակ եւ ծիծաղելի եղանակաւ մի: Հարուստ գիւղացի պատանի մի նշանադրուած էր, ջուղայեցի օրիորդի մի հետ Դաւրիժեցւոց թաղում (օրիորդի ծերունի հայրն հանրածանօթ արհեստաւոր ոմն էր): Որպէս սովորութիւն էր գիւղացւոց, քանի քանի ազգականք փեսայացուին առած, եկած էին ջուղայ հարսանիքն կատարել: Օր մի հարսանիքից յառաջ, իշխանուէրեան կողմից լուր հասաւ, որ ամուսնութիւնն չհասէ, եւ պսակադրութեան հրաման չկարէ տալ: Ի՞նչ կը կարծես, ինչ արարին այս քաջասիրտ գիւղացիք, քսակի բերանն բացան որպէս իշխանութիւնն ակնկալում էր: Ո՛չ թէ նոքա: Ոսկոյն հետամուտ լինելով այլ մի հարսնացու աղջիկ գտան, որոյ համար չհասութիւն չկարէր լինիլ, եւ փեսացուին ամուսնացրին նորա հետ, բայց առաջին հարսնացուին եւս անամուսին չթողին: Իւրեանց հետ եկեալ պատանեաց միջից ընտրեցին մին, եւ փեսայացրին նորան, եւ փոխանակ միոյ երկու հարսանիք տեղի կալան, եւ միոյ փոխարէն երկու հարսունք առեալ իւրեանց հետ, լինդութեամբ դարձան առ իւրեանց գիւղն:

Բայց ամէն մարդ այսպէս համառօտ փոփոխութիւն առնելն չկարէ, եւ չսիրէ, մանաւանդ երբ երկու նշանադրեալքն կը սիրեն իրեար, եւ գրաւուած են կաթոգին զգացմամբ: Կալկաթայում, մերազգեաց մէջ այսպէս դէպք մի պատահեցաւ, երբ մեր վանաց առաջնորդաց մին ներկայ էր: Պատանի մի, եւ օրիորդ նշանադրուած էին, եւ ի հարկէ այս աշխարհներում, նշանադրեալքն յառաջագոյն տեսած,

մտերմացած, եւ սիրած են իրեար։ Ամուսնութեան օրէն փոքր ինչ յառաջ, եպիսկոպոսն զլացաւ պսակի հրամանատալ, քանզի իսկապէս բաւական մերձ արենակցութիւն կայր նոցա մէջ։ Երբ փեսայացուն եւ բարեկամք երթալով կը համոզէին եպիսկոպոսին, կը դառնայ, կ'ասէ նա, "ինչ խապար է, մեթէ աղջկանց պակասութիւն կայ, թող այլ մէյ հետ ամուսնանայ։" "Սրբազան կը պատասխանէ փեսայացուն, եթէ ձի լինէի գնում այդ կարելի էր, այլ այս օրիորդին կ'ուզեմ կին ածել ինձ, որ պիտի կենակից լինէ որքան կենդանի եմ։" Ի վերջոյ առաձգական միջոցն ի գործ դնուելով ամուսնութիւնն կատարեցաւ։

Ցետ նշանադրութեան կու գայր հարսանիքն, եւ փոքր բան մի չէր այն։ Իմ տեսածով երկու, երբեմն երեք օր կը տեւէր հանդէսն, այլ ծերունիքն կ'ափսոսէին անցեալ լաւ ժամանակներն, որ եօթն օր կը տեւէր, կ'ասէին։ Ցանկարծ երկու երեք աւուրց միջոցում հաստատուած հարսանիքներ եւս կը լինէին, մի օր նշանադրութիւնն տեղի կ'առնոյր, միւս օր հարսանիքն, մանաւանդ բարեկենդանի վերջին շաբաթում։ Կը մտաբերեմ մի երիտասարդ, որ Ռաշտից Ջուղա հասաւ չորեքշաբաթ օրում, հինգշաբաթ եւ ուրբաթ որոնց հարսնացու գտանել, եւ գտաւ, եւ շաբաթ օրում ամուսնացաւ։ Սորա զաւակաց մին յետոյ իմ աշակերտաց մին եղաւ։ Ջուղայեցի ծերունի բարեկամ մի, ինձ կը պատմէր Կալկաթայում, թէ օր մի, բարեկենդան շաբաթներում, քանի մի իւր հօր սիրելի այցելուքներից ժողոված լինելով իւրեանց տան մէջ, յանկարծ նոցա մին կը ձայնէ կ'ասէ, այս բարեկենդան թող մի լաւ "քէֆ անենք," (զուարճութիւն կատարենք)։ Այո, այո, կը ձայնեն միւսներն, "լսիր Ցովհաննէս," կը յաւելու մին, "եկ Մկրտչին պսակենք, եւ էլ ինչ լաւ քէֆ անելոյ միջոց կայ

քան զայդ: Յովհաննէսն իմ բարեկամի հայրն էր, եւ Մկրտիչն իմ ասացեալ բարեկամին: Եւ այս զոյգն կը պատահի մինչդեռ պատանի Մկրտիչն կանգնեալ սպասաւորում կը լինի այցելուացն, որպէս տան պատանեաց համար սովորութիւն էր առնել: "Հայրս ուրախութեամբ հաւանութիւն տուեց," կ'ասէր իմ բարեկամին, "առանց բառ մի խօսելոյ իմ հետ: Հարնացուն ձարեցին փոքր աւուրց միջոցում, եւ կատարեցին մեծահանդէս հարսանիք մի: Ուրեանց քէֆ անելոյ պատճառաւ ինձ կամայ ակամայ ամուսնացրին," կ'ասէր:

Զարմանալի էր, որ գեղեցիկ գարնան եւ ամառան ախորժելի եւ բարեխառն եղանակն թողնելով, որ անոյշ ծաղկամբք եւ պտղովք լի էին, հարսանիքներն ընդհանրապէս կը կատարուէին բարեկենդանի միջոցում, երբ դեռ ձմեռն վերջացած չէր եւ ցուրտ էր բաւական: Եւ որովհետեւ որպէս վերն ասացաւ բազում ընտանիք կու գային կը ժողովուէին, եւ սովորաբար երկու, երեք օր գիշեր ցերեկ կը ճնային հարսանեաց տան մէջ, անհանգստութիւնն եւ դժուարութիւնք, մանաւանդ թէ տունն փոքրիկ էր, մեծամեծ կը լինէին չիրաւի, եւ ոչ սակաւ տրտունջ եւ քրթմնջիւն եւս կը գոյանայր: Ի՛նչ լաւ կ'երեւէր ամառան հեշտալի օդում կատարել զայն, երբ ամէն ոք կարող էր բացօթեայ եւ ազատ վայելել իւր բաժին զուարճութիւնն: Կը յիշեմ այսպէս հարսանեաց հանդէս մի քաղէր թաղում: Վարդավառի միջոցներն էր կարծեմ, եւ լուսինն լրութեամբ պայծառ փայլելով բոլոր հանդիսականք մի բաց մեծ սրահում ժողովեալ, լուսնի ներքոյ կը վայելէին հանդիսի զուարճութեան հետ նաեւ օդոյ անուշութիւնն, զովն եւ քաղցրութիւնն, բոլորի երեսաց վերայ խանդ եւ ծիծաղ փայլելով, փոխանակ ցուրտ եւ անհանգստութիւն զգալոյ, որ զուարճութեան աւերող են:

Հարսանեաց հանդիսի նախասկիզբն երեկոյից կը լինէր, եւ յայնմհետէ "հսկումն էր եւ կատարումն ամենայն գրելոց:,, Ցետ հացկերոյթի, զոր տիկնայքն եւ պարոնայքն առանձին կը վայելէին, եւ ոչ ի միասին, զբուցարութեամբ, երգովք, պարուք, եւ այլ եւ այլ զուարճական միջոցներով կ'անցանէր ժամանակն, մինչ գիշերոյ մի կամ երկու ժամին, ի հարկէ իմանալի է որ գինւոյ բաժակքն եւս յաճախ ի գործ կը բերուէին, այս միջոցում, եւ երբեմն կագ եւ կռիւ եւս կը պատահէին որպէս հետեւանք: Դուսանք եւս — որ սազանդալ կը կոչուէին — անհրաժեշտ էին, երեք կամ չորս հոգւոց բաղկացեալ, եւ միայն այն ականջքն որ լսած են նոցա նուագելոյ ձայնն, կարող են դատել թէ որչափ ինչ էր նոցա քաղցրութիւնն, բայց եւ այնպէս ուրախական երեւոյթ մի կ'ընծայէր հանդիսին: Կը մտաբերեմ նա իսկ նուագելոյ գործեաց չորսն, եւ ընդհանրապէս սոքա էին ի սովորական գործածութեան: Դաբն, կամ մեծ թմբուկ, տրմպետաձն, կամ փոքրիկ թմբուկ, որ երկու մորթածածկ սկաւառակից էր կազմեալ զիլ եւ բամբ ձայնիւ, զուռնայն, կամ փողն, եւ քամանչայն, որ թէեւ անարուեստ կազմեալ, յաւել եւրոպական երաժշտական գործւոյ նմանութիւն եւ ձայն ունէր: Կէս գիշերում, "Հինադրէնքն տեղի կ'առնոյր, որ կը նշանակէր ձեռքն կարմրացնել մրտենւոյ տերեւոյ շաղաղեալ փոշւով եւ կարծեմ այս սովորութիւն մի էր օրինակեալ ի Պարսից: Մեծ սկաւառակաւ սոյն շաղաղն իւր գլխոյ վերայ դրած ներս կը բերէր հանդիսականաց մէջ խահարան ընդհանրապէս, նուագածութեամբ եւ պարելով, եւ ամէն ոք պարտական էր քաղաքավարութեան օրինաք, գոնէ փոքր մի մատին ծայրին եւս դնել, մատաղահասակ անձինք կը սիրէին բոլոր երկու

ձեռքն եւս լաւ կարմրացնել: Իբր երկու ժամուն, փեսայացուն, որ մինչ այժմ, հազիւ երբեք կ'երեւէր ուրեք, յերեւան կը բերուէր իւր խաչեղբօր ձեռամբ, եւ նշանաւոր տեղւոյ կանգնեցնելով նորան, մերձակայ ազգական տիկնայքն, պարառեալ բոլոր հանդիսականաց խմբով, յառաջ կ'երթային թագաւորի "կարմիրն,, կապել: Այո՛ մի կերպասեայ կարմիր գունով, ոսկեթել ասղնագործեալ, իբր չորս մատնաչափ լայն ժապաւէն էր, զոր փեսային աջ ուսից կը կախէին, եւ շեղ տարածելով լանջաց վերայ, միւս ծայրն կը պնդէին գօտւոյ մօտ ի ձախ կողման: Ցետոյ սորա նման այլ մի երիզ, այլ կանաչ գունով, հարսին տան մէջ կ'ընդունէր փեսային, որ նոյնպէս հակառակ ուսից կը տարածուէր առ գօտւոյ միւս կողման: Սոքա երկուքն ի միասին "կարմիր կանաչ„ կը կոչուէին, որք միմիայն յիշատակքն են մեր ազգային գունոց, կամ լաւ եւս է ասել, ազգային դրօշակաց գունոց, երբ աշխարհ ունէինք, թագաւորութիւն ունէինք եւ դրօշակ ունէինք, որ աւաղ այժմ եւ ոչ մին ունիմք: Մի հնաւանդ եւ սիրուն սովորութիւն էր, եւ գիտացողք համար իսկապէս սրտաշարժ: Այնպէս հաստատուն պահած էին այս գեղեցիկ սովորութիւնն, որ մինչ անգամ, եթէ ոք ամուսնութիւն բարեմաղթէր պատանւոյ միոյ, սովորաբար կ'ասէր "բարով կապենք կարմիրդ,„ եւ պատանուհւոյն, "բարով կապենք կանանչդ:„ Ցետ կարմիրն կապելոյն, որ կը կատարուէր տիկնանց ձեռամբ միայն, եւ փոքր մի ծիսով, այսինքն քանիցս պտոյտքելով թագաւորի գլխոյ շուրջն, եւ բազում համբոյրներ եւ օրհնանք տալով, ճանապարհ կ'ելնէին բոլոր հանդիսականք, փեսային ընկերել առ հարսին տունն, գուսանքն նուագածութեամբ բոլորից յառաջն երթալով: Ընկերող հանդիսականքն, որք "մակալ„ կը

կոչուէին այդ պաշտօնուամ, թէ տիկնայք եւ թէ պարոնայք, վառ մոմեղէն մի, ամէնու ձեռքուամ (որ տան կուսանաց առակն յուշ կ'ածէր), կը քայլէին փեսայի հետեւէից։ Այս ժամանակուամ երբեմն երբեմն պատանի մի դուրս կու գայր հանդիսականաց միջէց փեսայի յանդիման եւ կը սկսանէր մեծաձայն օրհնութիւնք տալ նորան, մաղթելով տեսակ տեսակ բարիք եւ պարգեւք։ Որչափ կը մտաբերեմ այս ինչ էին ասացեալ բարեմաղթութիւնքն — կ'աղաղակէր պատանին — "մակարանիք, թագաւորի թուրն կարուկ, ձին վազուկ լինի, նորա կերակուրն լինի եխնու (խաշուի) երեան, վռոշն (հարիսայք) տակն," եւ այլ քանի մի այսպէս ընտիր բաներ, եւ յետոյ հանդիսականքն միաձայն կը ձայնէին շաբօշ կամ շաբաշ, որ կը նշանակէր թէ օրհնողն իւր պարտականութիւնն կը կատարէր եւ գովեստի արժան էր։ Ձմերան եղանակուամ, դիւրին բան չէր առաւօտեան այնպիսի կանուխ ժամուց մէջ փողոցումն լինիլ, քանզի սաստիկ ցուրտ կը լինէր, բայց դեռեւս ում կատարն որ դեռ փոքր մի ջերմ էր գինեաւ, կը սկսանէր մի կամ միւս հայերէն կամ պարսերէն երգ մի եղանակել, եւ երբեմն հրացանաձգութիւնք եւս կը լինէին։ Եւ այսպէս բաւական խառնաձայնութեամբ կը ժամանէին հարսինն տունն։ Այս տեղ եւս ի հարկէ փոքր կամ շատ հանդիսականք կը գտնուէին, եւ հարսին ծնողքն իւրեանց հանդիսակցաց հետ ընդառաջ կու գային փեսային եւ իւր մակարներին մինչեւ տան դուռն, եւ կ'ընդունէին նոցա տան մէջ։

Երկու կամ երեք ժամ կը տեւէր մինչ հարսն պատրաստուէր, հարսնութեան զգեստն բոլորն փեսայի տանից կ'ուղարկուէր, եւ այս միջոցում հարսին ընտանիքն ըմպելեօք, անուշեղինօք, եւ պաղովք կը պատուասիրէին

փեսայի հանդիսականաց։ Ընթեմն հարսին ծնողաց կողմից եւս ամբողջ սար մի զգեստուց պատրաստուած կը լինէր փեսայի համար, եւ զայս փեսայն պարտաւոր էր հագանել հանդիսականաց յանդիման, յետոյս քօղդ միոյ։ Ապա հարսին քօղեալ դուրս բերելով իւր սենեկից բոլոր հանդիսականաց մօտ, "կանաչ„ կապելոյ արարողութիւնն կը կատարուէր, միեւնոյն ծիսով, եւ հանդիսիս որպէս "կարմիրն„ էր կապուած, եւ զկնի այսորիկ, հարսին հայրն յառաջ գալով կ'օրհնէր իւր դստերն եւ փեսային, եւ այս կետում կ'երգէին Ջուղայու արժանայիշատակ բանաստեղծ Գրիգոր քահանայի "Արդ հրամանաւ„ սաացեալ սրտառուչ երգն, որ բաւական արտասուք կը պատճառէր հարսին ընտանեաց, վասն բաժանման ի սիրելոյ իւրեանց — ես տեսած եմ ոմանք փեսայք եւս արտասուած են, բայց այս շատ ծիծաղ կը պատճառէր անպսակ պատանեաց մէջ։ Ապա յուղն կ'անկանէին գնալ առ եկեղեցի, ուր պսակադրութիւնն կը կատարուէր, եւ անտի բոլոր հանդիսականաց բազմութեամբ կը դառնային փեսայի տունն։

Անծանօթ ընթերցողն կը կարծէ այժմ թէ հանդէսն վերջացաւ, եւ հանդիսականքն իւրեանց շնորհաւորութիւնն տալով փեսային եւ իւր ընտանեաց, յետ ամբողջ գիշեր մի անքուն մնալոյ, կ'ընտրէին արդ գոնէ ձաշից յետոյ, ամէն ոք տուն դառնալ եւ հանգստանալ, եւ ամուսնացեալոյ եւ նոցա ընտանեաց եւս ազատութիւն տալ նոյնն առնելոյ։ Բայց ո՛չ, ինչ որ եղեւ մինչ ցարդ, գրեթէ միայն նախատօնակ էր ապագայից։ Դեռ պիտի կատարուէին, եւ անհրաժեշտ սովորութիւն էր սոցա ամէն միոյ կատարումն, "խաւագլուխն„, "գէշտն„, հարսին քօղ վեր առնուլն, "թասխմէնքն„ եւ խաչվերացն։ Սոքա կամ ամէն երկուքն մի օրում կը կատարուէին, կամ առանձին՝ առանձին օր։

Կարճ նկարագրելով, Յսաւագլուխն կը նշանակէր որ ամէն արու հանդիսական պէտք էր իւր տանից մի աքաղաղ բերէր, եւ հարսանեաց առաջին օրում, յետ ճաշից, ամէն մին իւր աքաղաղն կռնակի նեղքից առած, կ'երթային կը ժողովուէին տան սրահի մէջ, եւ երկու հոգի մի մեծ սուր երկու ծայրից բռնելով, սուր կողմն առ վեր — եւ որ հասարակօրէն բութ էր, միւաններն, փեսայն առաջինն լինելով, խղճիկ թռչնոյն ոտքից բռնելով յառաջ կ'երթային եւ հարկանելով սրոյն կը ջանային գլուխն թռցնել ի բաց: Ծոյժ սակաւ ոմանք կը յաջողէին առնել զայս, եւ մեծ մասն կը փորձէին մի, երկու, երեք, չորս անգամ եւ այսքան անգամ վերաւորելով խեղճ կենդանւոյն ի բաց կը ձգէին միւս վերաւորելոց մէջ, որք դեռ կենդանի, կը թռչտէին եւ թաւալգլոր կը լինէին ցաւից, եւ այս շատ անգամ խանդ եւ զուարճութիւն կը պատճառէր տեսողաց: Ցետ այս անգութ եւ բարբարոս կոտորուճն առնելոյն, փեսայի որձակի կամ աքաղաղն գլուխն սրոյ ծայրն անցուցեալ, մին միւսի ձեռն բռնելով կը սկսանէին պարել, բայց ոչ իգական սեռն ի պատիւ իւրեանց: Ո՛վ որ բարբարոս ազգաց պատմութիւն է կարդացած, իսկոյն կարող է իմանալ թէ ուստի է սկիզբն առած այս սովորութիւնն: Ափրիկայում կան դեռ քանի մի ցեղք, որ մինչ ցայսօր եւս, իրար հետ կռուելով, եթէ մին ցեղ միւսից գերի տանէ, ոչ միայն հանդիսով կը մորթեն եւ կ'ուտեն նորան, այլ եւ գլուխն նիզակի ծայր անցնելով կ'առնուն կը պարեն: Ու թէ այսքան դարեր ինչպէս էր բարբարոսութեան այդ զզուելի խեշերանքն մնացել Ջուղայեցւոց մէջ, զոր Յսաւագլուխն ճշդիւ կը ներկայացնէր, զարմանալի էր: Պարսից մէջ այսպիսի սովորութիւն չկայր: Ու նաեւ զարմանալի էր թէ ընդհ՚ր էր որ Քրիստոնէութիւն, եկե-

ղեցին եւ կրօնականք չէին փոյթ տալած դադար տալ շատ ժամանակաւ յառաջ այս չարագուշակ, չարանշանակ սովորութեանն: Այլ մի զզուելի եւ անգութ սովորութիւն եւս կայր, որ փեսային եկեղեցիէն դուրս գալուն յետ պսակադրութեանն, գառն մի կամ ոչխար կը մորթէին նորա ճանապարհի վերայ, այնպէս որ խեղճ կենդանւոյ արիւնն ջերմաջերմ կը թափէր նոյն իսկ փեսային եւ անմեղ հարսին կօշկաց վերայ: Ի՞նչ յաւել բնութեան եւ մարդկային զգացման ընդդէմ բան կայ, քան մի անմեղ եւ անվնաս կենդանւոյ արիւն թափել: Այո՛, տարաբախտաբար մարդիկս դեռ սովոր ենք անխօս կենդանեաց կեանքն զոհել մեր կերակրոյ համար, որ դարձեալ բարբարոսութեան ժամանակից է ճնացած, երբ մարդն դեռ երկիրն մշակել չգիտէր, եւ որսով միայն կ'ապրէր, որպէս գազանք կ'առնեն այժմ, բայց չարչարանօք զոհել, եւ յետոյ այսպէս մեր աչքի յանդիման, որ նորա արեան խոխոջի ձայնն մեր ականջն լսէ, եւ այդ եւս մեր ուրախութեան օրում, իրաւ որ անգութ եւ անմարդկավայել էր:

Ուրախութեան ժամանակում կը սիրէ ոք, որ բոլորն եւս ուրախ լինին, եթէ մի անբան կենդանւոյ եւս հանդիպէ, կ'ուզէ նորան ուրախացնել, բուռն մի դալար խոտ ձգելով նորա մօտ, եթէ կարող է, բայց նորա արեամբն գետինն ներկել մեր աչքի յանդիման, նորան կեանքից զրկել չարչարանօք, նորա մահուան տագնապին ականատես լինել, ո՜հ, որչափ անողորմ բան է: Ելանի թէ, ի պատիւ մարդկութեան ջնջուած վերացրած լինին այս անգութ եւ պժգալի սովորութիւնքն:

Թէեւ խօսքիս թելից կը հեռանամ, բայց չկարեմ, քան մի քանի բառ խօսել իմ տեսած անգթութեամբ վարմանց վերայ անբան, անմեղունչ կենդանեաց հետ: Այն-

պէս կ'երեւէր, որպէս թէ կը կարծէին անասունք բնաւ զգայմունք չունին։ Կը վաստակացնէին նոցա անողորմ կերպով, եւ եթէ խեղճ անասունն վաստակից լքեալ գետին անկանէր, սաստիկ հարուածով կը գանէին։ Տեսած եմ մի եզին առաւօտից մինչ երեկոյ աշխատացնել ջուր քաշելում այգի ջրելոյ համար։ Խեղճ էշերն կ'ապրէին այդ Իրլանդացւոյ իշոյ նման, որոյ տէրն շատ բարկացած էր լսել, որ իբր կերակուր չտայ նորան։ "Ի՛նչ," կ'ասէր, "կերակո՞ւր, երկու բեռն յարդ կայ ձգեալ տանս մէջ, թողեալ խոտն, այլ միայն էշս ժամանակ չէ գտտման որ ուտէ»։ Փոխանակ ծնանելն ի բաց, ջրում խեղդելոյ հեշտմահուամբ, թոյլ կը տային շանց բազմանալ եւ փողոցներն լցել, եւ թէ ինչպէ՞ս կ'ապրէին սոքա միայն իւրեանց էր գիտելի։ Միայն այսքան ես գիտեմ, որ ամէն ոք մեծից մինչ փոքր անհաշտ թշնամի էին առ այս տառապեալ կենդանիքն։ Տեսնելն ի բաց ուր եւ լինէր, քարակոծ առնել եւ չարչարելն անհրաժեշտ պարտականութիւն մի կը համարուէր։ Կարճ ասելով, անասնոց համար սէր կամ գութ բնաւ չկայր։ Երեխայքն անգամ, որոց բնութեան բոլորովին ընդդէմ է, առանց դիտելոյ իւրեանց արարմանց անգթութիւնն, կարող էին մի խղճիկ թռչնոյ, կամ անշնաս կատուի անհնարինս չարչարել, կամ անխռով դիմօք, մի ոչխարի կամ կովու գլուխ կտրելոյն, եւ արեան թափման ականատես լինիլ, քանզի իւրեանց ծնողքից այդպէս կը սովորէին։ Ազնիւ եւ գթոտ ոգին, զայս չկարէ առնել, եւ երեւելի իմաստասիրի ասութիւն, մի է, թէ ով որ անխօս անմեղունչ կենդանեաց համար գութ չունի, չունի մարդկավայել հոգւոյ ազնուութիւն չունի նա դեռ։ Չասեմ թէ ամէն ոք այսպէս էր, այլ կը խօսեմ սովորութեան վերայ ընդհանրապէս։ Ցուսալի է թէ այսպէս

չէ այժմ, եւ Ծնողք օրինակ կը լինին իւրեանց զաւակաց, եւ կը տպաւորեն նոցա սրտում, որ անասունք եւս իւրեանց նման զգացումն ունին եւ շատ անգամ իւրեանց խաղն ցաւ է նոցա համար: Կը սովորացնեն նոցա, որ մի եւ նոյն Ամենաբարի Աստուածն է նոցա կեանք եւ զգացմունք տուած որ մեզ է տուած, եւ եթէ մեզ գերագոյս է կարգած նոցանից բանականութիւն տալով, այդու յաւէտ մեծ պարտականութիւն է դրած մեր վերայ, որ որպէս ինքն միշտ քաղցր եւ գթած է առ մեզ, մեք եւս նոյնն լինիմք առ իւր անխոս արարածքն, որ մեզ կը հնազանդին, կը ծառայեն, եւ մեզ հարկաւ մի օգուտ կը տան: Ճանապարհորդ մի կը պատմէ, թէ ձմեռն եղանակում Շուէտացւոց գիւղ մի կը հասանէ Ծննդեան տօնի օրերում: Շուէտացւոց երկիրն հիւսիսային ծայրում լինելով, շատ ցուրտ է, եւ այդ ժամանակում գրեթէ բոլորովին ձիւնապատ է: Կ'ասէ ճանապարհորդն թէ մի գիւղացւոյ տան մէջ կ'իջեւանէ, եւ շրջելով գիւղումն, մի նոր օրինակ բան կը տեսնէ զոր չկարողանայ հասկանալ: Ամէն տանեաց վերայ անկած էր, կ'ասէ, բարձր ձող մի, որոյ ծայրում յարդի խուրձ մի կ'երեւէր դրուած: Դառնալով տուն, կը հարցանէ տանտիկնոջից թէ ինչ կը նշանակէր այն: Եւ տիկինն կը պատասխանէ թէ Ծննդեան տօնի հանդիսի թռչնոց բաժինն էր այն, որ նոքա եւս կերակրուէին եւ ուրախակից լինէին մեզ: Այդ խրձոց մէջ ցորեան կայր, եւ մեր մատաղ զաւակունքն միշտ ձմեռն, որ ոք հանդիսի կամ ուրախութեան օրում, որովհետեւ բոլոր դաշտքն ձիւնապատ են, եւ խեղճ թռչունք դժուարաւ կարող են կերակուր գտանել, միշտ այդպէս ձողոց վերայ կը բարձրացնեն, որ աներկիւղ գան եւ վայելեն զայն: Որքան սրտաշարժ պատմութիւն է այս, երանի թէ ամենայն Ծնողք իւրեանց

զաւակաց սրտում այսպէս գութ սերմանէին, եւ սովորացնէին որ միշտ իւրեանց ուրախութեան օրում, անխօս եւ մեր ընկեր եւ օգնական կենդանեաց եւս բաժանակից առնեն իւրեանց ուրախութեանն, եւ յիրաւի որ այսպէս զգացմունք առաւել բարի, ազնիւ, եւ քաղցրասիրտ մարդիկ կը զարգացնեն նոցա:

Դառնալով առ մեր պատմութեան թելն, գէշան — որոյ բառական նշանակութեան անտեղեակ եմ —, կը նշանակէր որ ամէն հրաւիրական իւր տանից մի մեծ խան բերել կը տայր, որոյ մէջ կը լինէին պատուղք, անուշեղէնք եւ գինի, եւ յետ երեկոյեան հացկերութին, որոյ խորհրդակից մեծ մեան առաւօտեան կոտորեալ հաւքն կը կապմէին, եւ վան որոյ, հաւուտել, եւս կը կոչուէր սոյն ընթրիքն, ասացեալ խանքն ներս կը բերուէին հացկերութի դահլճէն, եւ կը դնուէին մէն մի նոյնն առակող հանդիսակցի մօտ, եւ յետոյ իրար հրաւէր կարդալով, մին միւսին իւր խանից գինւոյ բաժակ կ'ուղարկէր, եւ անուշեղէնքն վայելելով, եւ ողջութիւն ըմպելով իրար կենաց, այսպէս բազմիցս գիշերն ի լոյս կը հանէին:

Հարսին քօղ վերառնուլն եւս, որոյ նշանակութիւնն յայտնի է, կը կատարուէր հանդիսով եւ ծիսով, եւ յետ քօղոյ բարձմանն, առաջին անգամ հարսին տիկնայքն իւրեանց խմբի մէջ դնելով կը պարէին ի միասին նորա հետ: Պարէն եւս պիտի յիշեմ զի Շէրոպացւոց նման մարդ եւ կին զոյգ՝ զոյգ չպարէին, այլ առանձին, մէն մի իւր համար, եւ ճարպկութիւնն ոտից կամ քայլից շարժուածն չէր այնքան, որչափ բազկաց եւ մարմնոյ թեքթեքուածն եւ շարժուածն, որ երբեմն բառական գեղեցիկ էր եւ շնորհալի: Սովորութիւն էր հարսին քօղն առնուլն ի բաց, պատանեաց մին կը խլէր զայն, եւ կը վազէր առ փողոցն, եւ առաջին անձին որում

կը հանդիպէր արու կամ էգ, այդու նախագուշակութիւն կը համարուէր, թէ հարսին անդրանիկ զաւակն ուստր թէ դուստր էր լինելոց։

Թասխմէնքն կը նշանակէր փեսայի եւ հարսին կենաց եւ ողջութեանն բաժակ ըմպել։ Հացկերոյթ կը լինէր, եւ զկնի հացկերութեին, բաժակներ կը լցուէին գինեաւ, եւ մատաղ տիկնանց օշարակաւ, եւ բոլորն ի միասին շատ եւ զարմանալի օրհնութիւններ տալով նոր ամուսնացելոցն, կ'ըմպէին զայն։ Ծերունի տիկնայքն ընդհանրապէս այս օրհնութեանց ձեւն ունէին — "Ձկէք, ծաղկէք, կանաչէք, տասներկու ուստերօք եւ տասներկու դստերով սեղան նրստէք" —, բայց բարեբախտաբար օրհնութեանդ վերջին մասն հազիւ երբեք իրականութիւն կը ստանայր, քանզի փոքր բան չէր այն։ Սովորութիւն էր նաեւ յառաջագոյն թագաւորի եւ հարսին գինեաւ լի բաժակն շուրջ ածել հանդիսակցաց մէջ, եւ ամէն ոք ոսկի կամ արծաթի դրամ մի կը ձգէին — գուցէ որպէս նախահոդութիւն վասն ապրուստի քսան եւ չորս զաւակաց — այլ այս սիրոյ պարգեւքն չկարծեմ թէ գինւոյն յատուկ անուշութիւն մի կարող էին տալ։

Խաչվերացն կրօնական ծէս էր, որ փեսայի եւ հարսին պսակադրութեան ժամանակում, պարանոցում ձգեալ կնքուած նարօտն, յետ աղօթելոյ քահանայն կը բանայր, եւ յետ կը ստանայր նոյնպէս եւ խաչն որով պսակած էր նոցա։ Այս խաչն խաչեղբօր պահպանութեան ներքոյ կը մնայր ողբան խաչվերացն չէր տեղն առեալ, եւ երաշխաւոր եւ պատասխանատու էր այնմ։ Վասն որոյ միշտ կը ջանային ոմանք գողանալ զայն խաչեղբօրից, եւ յետոյ վերջինդ պարտական էր կամ մի ընծայ, կամ ընկերական խնջոյք մի խոստանալ, որ գողացեալ խաչն յետ գտանէր։

Երբեմն մինչ շաբաթ մի կը յետաձգուէր խաչվերացն, եւ այս միջոցում փեսայն եւ հարսն բաժան պէտք էր ճեպչին, եւ յետ խաչվերացին միայն, ազատութիւն կը գտանէին ի վերջոյ առագաստի արժանանալ: Եւ այսու կը վերջանայր եւ հարսանեաց հանդէսն:

Այժմ արժան է փոքր մի եւս խօսել փեսայի եւ հարսին վերայ թէ նոքա ինչ դեր կը կատարէին վերոյհիշեալ հանդիսաներում: Փեսայն բոլոր այս օրերում "թագաւոր" տիտղոսն կը կրէր, որով ի հարկէ մակաբերելի է որ հարսն եւս թագուհի էր: Բայց երկուքն եւս Զենէացւոց կայսեր նման անհրեւոյթ եղանակաւ կը թագաւորէին: Թագաւորն երբեմն երբեմն կ'երեւէր, այլ այնպէս խոնարհեալ եւ ամաչկոտ դէմքով, որ կը կարծէիր կը փափագէր ներողութիւն խնդրել եղած բանի համար, որ բոլորովին իւր յանցանքն չէր կ'ուզէր ասել: Եւ թէեւ թագաւոր կը կոչուէր, սխալ եմ ասել նորա արքայական իշխանութիւնն, բոլորովին խաչեղբօր ձեռն էր անցած, եւ խոնարհութեամբ պէտք էր հպատակել նորան, եւ ոմանք խաչեղբարք բաւական խստութեամբ կը պահանջէին այս հպատակութիւնն: Հանդիսականաց միջում հրաման չունէր նստել Նորին Վեհափառութիւնն, եւ պարտաւոր էր ոտքի վերայ կանգնած ճեպչը մինչ խաչեղբօրից թոյլտուութիւն գտանէր: Հացկերութի ժամանակում պարտաւոր էր առանձին իւր կերակուրն ուտել, եւ ոչ հանդիսականաց հետ: Իսկ թագուհին, խղճիկ աղջիկ, եկեղեցիէն տուն բերելն ի բաց կը տանէին կը մեկին նորան մի նեղ, փոքրիկ խորշ կամ պուճախի մէջ, եւ վարագուրաւ կը ծածկէին մուտքն, որ ոչ ոք չկարողանայ տեսնել նորան, եւ խեղճ աղջիկ քանի մի օր այս տեղում բանտարկեալ կը ճեպչը, անհանգիստ, առանց ուրուբ օդ շնչելոյ, եւ կարծեմ առանց իմանալոյ թէ ինչ

էր այս յիմարական արարման պատճառն։ Արականք ի բաց պէտք էր ճնային այս խղճիկ թագուհւոյ զարմանալի պալատից, թագաւորն նայել անգամ չկարէր առ այդ կողմն, միայն տիկնայք արտօնութիւն ունէին հարսին ընկեր լինել, եւ այդպէս բոլոր ժամանակն մինչ քօղ վերառնոյ օրն կը ճնայր նա անդ այդ խորշում, կարող ոչ ազատ շրջել, ոչ ազատ օդ վայելել։ Եւ թէ ինչ պատճառաւ էր այս այսպէս, Տէրն ինքն գիտէ։

Թագաւորն, թէեւ վերջին ժամանակներում այդ սովորութիւնն բարձուած էր գրեթէ, տարօրինակ արքայական պատմուճանօք կը զարդարուէր իսկ։ Կը մտաբերեմ մին յատկապէս, որ հետեւեալ փառաւորութեամբ էր շքեղացեալ։ Սովորական զգեստու վերայ ունէր պայծառ կարմիր գունով, լայն եւ երկայն լոդիկ մի, որ բինիշ կը կոչուէր, եւ զոր միայն ծերունի տիկնայք գործ կ'ածէին, եւ սոյն լոդկի քղանցքն կը հասանէին մինչ ոտից մօտ, եւ թեւքն եւս այնչափ երկայն էին, որ ձեռքն չէին երեւար։ Ներկայն կերպասեայ պաստառ մի, որ Մուղադամ կը կոչուէր, ձգած էր պարանոցումն եւ սորա երկու ծայրքն կը կախէին մինչ ծնկաց մօտ։ Գլխոյ վերայ ունէր սովորական գաւին մորթից կազմեալ երկայն գլխարկն, եւ գլխարկի շուրջն փաթթուեալ կայր այլ մի կերպասեայ կարմիր պաստաղ, — այս արքայական պսակն էր կարծեմ — եւ կարմիր կանաչն եւս լոդկի արտաքոյ, լանջաց վերայ կը փայլէր։ Ահա ընթերցողն կարող է երեւակայել, թէ ինչ արքայափառ տեսարան մի առաջի կ'ընծայէր նա, եւ զարմանքն այն էր որ տեսողքն չէին ծիծաղեր։

Հարսին զգեստն սովորական ձեւով էր, եւ ի հարկէ ըստ կարելւոյն աղնուագոյն նիւթերից կազմեալ, այլ շատ տարօրինակ էր քօղն։ Ոչ թէ նուրբ կտաւից կամ շղարշից

էր այն, որպէս ընդհանրապէս քօղն է, եւ որ հարսին չհինեալ պատկառոտ դիմացն յաւել ընդհաշուք պարկեշտութեան զարդ մի կը լինի քան ծածկոյթ, եւ կ'առաւելու նորա գեղեցկութիւնն, այլ թանձր ոսկեթել պատմուճան մի էր այն, զոր կը ձգէին նորա գլխոյ վերայ, եւ կը տարածուէր գրեթէ մինչ ոտքի մօտ, եւ զայս բաւական չհամարելով մի երկու հատ եւս այլ զարդարուն պաստառներ կը բարդէին նորա վերայ, այնպէս որ խղճիկ հարսն այդ կէտից որ կը քօղարկուէր լուսից՝ արեւմտեան պիտի լինէր, եւ իւր տանից եկեղեցին եւ փեսայի տունն երթալում պէտք էր նորան կուրի նման առաջնորդէր կին մի, որ հարսնապահ կը կոչուէր: Այս եկեղեցի եւ տուն երթալոյ ժամանակում կերպասեայ թաշկինակի մի ծայրն հարսին տալով, միւս ծայրն փեսայն կ'ըմբռնէր, եւ քայլ մի կամ երկու յառաջելով հարսին կ'երթայր, որ շատ նման էր, որպէս թէ մի գառին վիզ առասան ձգած տանում լինէր իւր հետեւից քարշելով: Բոլոր բոլորովին, ինձ թուի թէ հարսանեաց հանդիսի օրերում, փեսայի եւ հարսին համար, երջանիկ ժամանակ մի չէր, այլ ընդ հակառակն, թէ յետոյ ի՞նչպէս էր զայդ չկարեմ ասել: Բայց անուրանալի է, որ թէ ոլքան եւ նահապետական ձեւ ունէր այդ ժամանակաց ամուսնութիւնն, դեռեւս իգական սեռի բնիկ պարկեշտութիւնն, հեզաբարոյութիւնն եւ անտրտունջ հլութիւնն այնչափ էր, որ հազիւ երբեք, եւ գուցէ պակաս քան հարիւրի մէջ մի դէպքում, ասուլիս, կամ անհամաձայնութիւն, կամ խորթութիւն եւ բաժանումն կը պատահէր ամուսնոց մէջ, եւ ընդհանրապէս սիրով կ'երեւէին:

Բայց ինչ պարզ, դիւրին, եւ սակաւածախք բան են բերած փոխարինած հարսանեաց հանդէսն Եւրոպացիք, որոց մէջ բնակուող մեր համազգիք եւս օրինակած են այժմ

ամէն տեղում: Ցետ հարսանեաց օրն որոշելոյ, հրաւիրա-
նաց տոմսակ կ'ուղարկեն քանի օրով յառաջ, առ ամէն
ընտանի եւ բարեկամ, ներկայանալ եկեղեցում որոշեալ
ինչ ժամում: Նոյն օրում եւ ժամադրեալ կետում փեսայն
իւր, եւ հարսն իւր տանից առանձին կ'երթան եկեղեցի,
ուր արդէն հրաւիրեալքն ժողովուած են, եւ յետոյ փեսայն
եւ հարսն կ'երթան բեմի յառաջ, եւ քահանայն պսակի
խորհուրդն կը կատարէ: Անմիջապէս զկնի երկուքն եւս, կը
յառաջանան մի սեղանոյ մօտ որոյ վերայ դրած է յիշա-
տակարանաց մատեան, յորում պէտք է երկուքն եւս
ձեռնադրեն, որպէս եւ մի քանի վկայք, եւ յետոյ միասին
ընդ բարեկամաց կը դառնան տուն, փեսայն եւ հարսն
(այժմ) միասին եւ մի կառքում, եւ հրաւիրականքն յետ
ընորհաւորութեանց, եւ փոքր մի ըմպելիք, կամ թէյ,
կամ սուրճ եւ քաղցրաւենիք վայելելոյ, մի կամ երկու
ժամից յետ բոլորն եւս ի բաց կ'երթան, եւ խաչվերացն
եւս կը կատարուի այդ ժամանակում, եւ թէ փեսայն, եւ
թէ հարսն, եւ թէ տան ընտանիքն ազատ կը մնան յայնմ
հետէ: Մոռացայ ասել որ այս հանդէսն ընդհանրապէս
առաւօտեան իբր կէսօրի մօտում, կամ երեկնապահին տեղի
կ'առնու եւ ոչ երբեք գիշերն: Եթէ ցանկան, կարող են
ապա քանի մի օրից յետ, նոր ամուսնացեալքն հայկե-
րոյթ կամ պարահանդէս տալ իւրեանց բարեկամաց, այլ
այս պարտականութիւն չէ համարելի: Այլ մի բան եւս
մոռացայ ասել, որ իմ տեսածով սովորութիւն էր ի
Ջուղա, որ ամենայն հրաւիրեալ ընտանիք, պէտք էր մի
կամ միւս թեթեւ նուէր ուղարկել հարսին կամ փե-
սային, եւ սովորաբար այս նուէրն կը բաղկանայր քաղ-
ցրաւեղէնքից, որոյ գլխաւորն եւ անհրաժեշտն էր կոնաձեւ
շաքարն կոչեցեալ Ղանդ: Մի խանի մէջ եդեալ, կ'ուղար-

կուէր սոյն նուէրն առ փեսային տունն մի կամ երկու օրով յառաջ քան հարսանիքն, եւ կը կոչուէր Թարաղ։

Այլ ինչ եւ իցէ, այս ամենայն, սովորութիւնից նոյնպէս եւ ձաշակից է կախուած։ Ջուղայեցիք ազատ են վայելել այսպիսի ընտանեկան զուարճութիւնք որպէս եւ փափագելի եւ հաճոյ է ինքեանց, եւ հաւաստի եմ արդէն մերժած կը լինեն ի բաց սոյն հանդիսի կից ունայնք անբարի սովորութիւնքն, որք յիշեցան ի վեր։ Ես իմ մասին ի սրտէ կը բարեմաղթեմ բոլոր փեսայացու պատանեաց "կարմիր„, եւ հարսնացու օրիորդաց "կանաչ„ եւ ամենայն մխիթարութիւն եւ երջանկութիւն, զորս ամուսնական կեանքն կարէ ընծայել։ Ու կը վերահաստատեմ զայս ասելով — Ամէն։

Մ Ա Հ

Սովորութիւն էր մահ բառն յիշելում ասել, "հեռի տանիցս, հեռի շէնիցս։„ Բայց թող որքան որ կ'ուզենք հեռի համարենք զայն մեզնից, սակայն միթէ նոյն իսկ մեր ծննդեան ժամից, ամէն օր, ամէն ամիս եւ ամէն տարի քայլ առ քայլ մեք մեզէն յառաջ չերթանք եւ չմօտենանք առ այն։ Կենաց՝ մահ պէտք է հետեւէ, փութով լինի այն կամ անագան։ Բնութեան դլխաւոր եւ անհրաժեշտ օրինաց մին է այս։ Ո՛ եւ իցէ իրից խորշելն, հեռանալն, ի բաց փախչել եւ ազատիլն կարելի կամ հաւանական է գուցէ, բայց այս մի բանից ոչ։ Բայց այդ կարծիքն եւս բոլորովին սխալ է, զոր շատ մարդիկ ունէին եւ դեռ ունին, իբր թէ մահն ճակատագիր է, այսինքն յառաջագոյն վճռուած է մեր ծննդեան օրից թէ երբ եւ ինչ մահուամբ պէտք է մեռանիմք։ Այս միանգամայն սուտ վարդապետութիւն է եւ հերթանոսու-

թիւնից ծնացած։ Դաւիթ մարգարէն մարդոյ կենաց չափն կը դնէ եօթանասուն տարիք, բայց այս եւս հաստատուն կոպար չէ, քանզի այս օրերում շատոնք մինչ ութսուն, մինչ իննսուն, եւ ոմանք մինչ հարիւր եւ հարիւրից անց տարիք կ'ապրեն։ Մահն կախուած է մարմնոյ ֆիզիկական կազմուածքից, ապրելոյ ձեւից, զգոյշ կամ անզգոյշ կեն-ցաղավարութիւնից, չափաւոր կամ անչափաւոր կեանք վարելից, նաեւ ի ծնողաց ժառանգեալ հիւանդութիւնից, անակնկալելի դէպքերից, եւ ի վերջոյ ծերութիւնից։ Ի վերջին պատճառէ յառաջ եկեալ մահն է միայն բնա-կան, եւ հետեւապէս բնութեան օրինաց համեմատ, մա-տաղ հասակում մեռանելն բռնի մահ է, յառաջ եկեալ վերասացեալ մի կամ միւս պատճառից, որոյ համար կամ մեռնողն ինքն է պատճառն ուղղակի, կամ միայն զոհ կը լինի այնպիսի հանգամանաց եւ դէպքի, որոց մասին պա-տասխանատու չպիտի համարուի ինքն, այլ միայն թէ տարաբախտ է եղած։ Մարդոյ կեանքն առողջական կա-նոնաք երկարելն մի նոր բան չէ, եւ ոչ ապացուցանելոյ կարօտութիւն ունի։ Կալկաթայում իմ տեսածով, երբ բոլորովին զուրկ էր քաղաքն մաքուր ըմպելի ջրից, եւ հարկաւոր մաքրութիւնից, ժողովրդոց մահաթիւն սովո-րաբար վաթսնից մինչ ութսուն, մինչ հարիւր կը հա-սանէր, այսինքն մի տարւոյ միջոցում հազար հոգիից այս-քան կը մեռանէին, եւ յետոյ երբ քաղաքի վիճակն բարւոքեցաւ, եւ հաստատեցան առողջական օրէնք եւ կանոնք, մահաթիւն իջաւ մինչ քսանից երեսուն, եւ այս ինչ կը ցուցանէ քան կենաց երկարիլ։ Ուրեմն ճակա-տագիրն, ոչ միայն մահու մասին, այլ մեր կենաց բոլոր դիպուածոց եւ հանգամանաց վերաբերութեամբ սուտ է եւ անհիմն։ Բայց ի հարկէ թէ որքան եւ երկարի կեանքն

գեռեւս վախճանն նոյն է, վասն որոյ ինչ օգուտ չտեսա-
նելոյն առնել զայն, կամ երկնչիլ նորան յիշել: Զկամիմ
ասել թէ հարկաւոր է մեզ թշուառացնել, միշտ մտա-
ծելով մահուան վերայ, մանաւանդ զի մատաղ, եւ միջակ
հասակի համար եւս միշտ սարսափ եւ տրտմութիւն ունի
այս, ոչ, քաւ լիցի, այլ լաւ չէ արդեօք նայել առ այն,
այնպէս անխռով հոգւով, որպէս թէ մի այցելու է այն
որ օր մի պիտի գայ, եւ պատրաստ լինինք հանդիպել նմին:

Բայց մահու վերայ փիլիսոփայել չէր իմ կամքն,
բազում իմաստուն մարդիկ արդէն խօսեցած են այս
մասին: Միայն պիտի յայտնեմ իմ յիշողութիւնքն,
թէ մահն, որ արդէն իւր սարսուռն ունի, քանի յաւել
սարսռելի, քանի յաւել զարհուրելի կերպարանք մի ունէր
տուած իւրն այդ ժամանակում, որոյ վերայ խօսքն կայ,
եւ թէ ինչ տարօրինակ սովորութիւնք եւ ծէսք կը հե-
տեւէին այնմ թէ ննջեցելոց եւ թէ կենդանեաց համար:

Շատ անգամ մահն եւ մահուան լուրն կ'ընդունէր
ննջեցելոյ ընտանեաց կողմից, որպէս մի դէպք բոլորովին
անակնկալելի եւ անհաւանական եւ անհաւատալի, որպէս
թէ բնութեան օրինաց դէմ այդպիսի բան բնաւ չկայր
գրուած, եւ հետեւապէս այնպիսի անհնարին, անկարելի,
դառն եւ անողոքելի, լաց, աղաղակ, սուգ եւ կոծ կը հե-
տեւէր այնմ, որ իրաւ սարսափելի էր լսել, սարսափելի
էր տեսնել: Ոմանք այնպէս անիրաւեալ զգացմանց ներքոյ
կ'ընդունէին մահուան գոյժ մի, որ մինչ անգամ, իւրեանց
բարկութեամբ լսարերի վերայ կը թափէին, առանց մտա-
ծելոյ թէ ինչ էր նորա յանցանքն: Վանքական ծառայից
մին կը պատմէր թէ օր մի Հնդկաստանից հասեալ մի
թուղթ, Առաջնորդն կը յանձնէ իւրն եւ կը հրամայէ
տանել յանձնել այս ինչ ընտանեաց: Ն'ասէր տանուտէրն

եւ իւր մայրն Թուղթն տեսնելն ի բաց, յանկարծ դառնալով առ ինքն, "այ, ոաքդ կոտրուած լինէր„ աղաղակեցին, "երբեք մեր տան դուռն ճանապաճ չլինէիր դու, այ դու գառն երես, այ դու անպիտան մարդ, կորի՛ր, գնա այս տեղից։„ Զարմանքից քարացած էի, կ'ասէր ծառայն, թէ ընդէր այդպէս կը նախատէին ինձ, մինչդեռ առանց բառ մի խօսելոյ, միայն իմ մեծաւորի հրամանն էի կատարած։ Ու տեսնելով իմ զարմանքն, "կոյր ես ասացին Թշուառական, չտեսանես որ սեաւ կնքամոմով է կնքուած այս Թուղթն, որ քո կոտրած ձեռնով բերած ես, եւ մեր օրն սեւացրած։„

Սիրելեաց մահն, արդարեւ ցաւալի դէպք է միշտ, եւ բնական է որ պիտի լաց եւ կսկիծ պատճառէ։ Այլ ինձ Թուի Թէ իրական վիշտն եւ կսկիծն, աղաղակ բառնալ, գոռալ, մազեր փետել, եւ գետնի վերայ Թաւալգլոր գալ չսիրէ, այլ ընդհակառակն կ'ընտրէ լուռ եւ անմռունչ զգալ զայն, եւ կը սիրէ յաւել ծածկել իւր տրտմութիւնն քան այլոց ցոյց տալոյ տեսարան մի առնել։ Կը Թափեն նորա աչքից աղի արտասուք, այլ Թաշկինակին աչքերի վերայ դնելով գաղել կ'ուզէ, եւ այսպէս տրտմութիւնն է որ կարեկցութիւն եւ համակրութիւն կը պատճառէ, եւ որ տեսողի աչքերն արտասուք կը լցնէ։ Արական սեռն այսպէս էր, պիտի ասեմ ի պատիւ իւրեանց, այլ իգական սեռի համար որպէս Թէ պարտաւորութիւն էր, ամենայն չափազանցութիւն գործ դնել, որ յաւէտ սարսափ եւ արհաւիրք կը պատճառէին տեսողաց քան ցաւակցութիւն եւ գութ։ Բարձրաձայն ձչել, գոռալ, գետին անկանիլ եւ Թաւալ գալ, գլուխն գետնոյ վերայ ծեծել, մազերն դուրս տալ, երեսն կռփել, եւ այլ այսպէս տարօրինակ եւ անքրիստոնէավայել արարմունք գրեթէ հասարակ էր ննջեցելոյ ընտանեաց եւ

ազգականաց կողմից, եւ յետոյ երկար ու բարձրաձայն գո-
վեստներ պիտի լինէին ննջեցելոյ համար, հեհեկալով եւ
լալով (երբեմն առանց արտասուաց) կը պատմէին մանր ու
երկար ձեւով ննջեցելոյ, կենդանի ժամանակում, թեթեւ
գործքն, շարժմունքն եւ արարքն, որ երբեմն բաւական էին
եղեռներգութիւնն ի զաւեշտ փոխարկել, եւ ծիծաղ պատ-
ճառել ունկնդրաց: Ու այս կը տեւէր, սակաւ ինչ ընդհատու-
թեամբ, երկու կամ երեք օր, փոքր ի շատէ վերանորո-
գուելով մահուան ութներորդ եւ քառասներորդ օրում:
Զգիտեմ ինչ տպաւորութիւն ունէր այս հասակաւոր ան-
ձանց վերայ, այլ լաւ կը յիշեմ որ մատաղ հասակում,
որպէս սովորութիւն է ասել, նոյն իսկ գլխոյս մազերն կը ցցու-
էին ասացեալ տեսարանի սարսափից: Կը յիշեմ յատկա-
պէս այդ ժամանակն, երբ ննջեցելոյն տանից դուրս տանում
լինէին, եւ թէ ինչ չափազանցութիւնք տեղի կ'առնուին,
դժուարին է նկարագրել: Նոյնպէս եւ եկեղեցում յետ պաշ-
տօնի կատարմանն կը գային կը ժողովուէին մերձակայ ընտա-
նիքն դագաղի շուրջն, եւ նոյն իսկ մատաղ հարսունքն, որոց
բարձրաձայն խօսելն դեռ ոչ ոք լսած չէր, այս ժամանակ ա-
զատ էին ձչել, աղաղակ բառնալ, եւ դագաղի վերայ անկա-
նել եւ գովասանք տալ, եւ որքան յաւել ձիչ եւ աղաղակ,
կը կարծուէր թէ յաւել տխրութիւն կը զգացուի, հան-
դարտութեամբ եւ մեղմով արտասուողին, որ իսկապէս կը
ցաւէր ի սրտէ, կը պարսաւէին որպէս թէ քարասիրտ էր եւ
"մի ձայն եւս չհանեց", կ'ասէին: Թողեալ բոլորովին հեթա-
նոսական սովորութիւն լինելն, օգուտն ինչ էր այս արար-
մանց, ով գիտէ: Մեք Քրիստոնեայքս որ ապառնի բարեգոյն
կենաց յոյս ունիմք, եւ գիտեմք որ այս կեանքն միայն կարա-
պետ է միւսոյն, չպիտի արդեօք մեղք համարել այսպէս ան-
վայել ձեւով հպատակելն արարչի կամաց, որով որպէս թէ

կը ծաղրենք նոյն մեր յոյսն։ Այո, սիրելիացէ բաժանուելն ցաւալի է, բայց միթէ Ամէնիմաստ ստեղծողն արտասուք չէ՞ մատակարարած դոյն ցաւն ամրքելոյ համար։ Թող ցաւեցեալ սիրտն թափել տայ աչաց իւր արտասուքն եւ այդ բաւական է, այլ այնպէս արհաւիրք յարուցանելն ոչ բնական էր, եւ ոչ քրիստոնէավայել։

Ցետոյ ննջեցելոյ մասին, թող սիրելի հայր լինէր կամ մայր, որդի կամ դուստր, նա իսկ փոքրիկ անմեղ երեխայ մի, վերջին շունչն հնչելն ի բաց, անմիջապէս կը փոխարկուէր կը լինէր — կամ գոնէ այսպէս կը համարուէր — որպէս զարհուրելի առարկայ մի։ Ընտանւոյ մատաղահասակ անդամոց իսկոյն տանից դուրս կ'ուղարկէին որ չտեսանեն զայն, հասակաւորքն եւս, ամէն ոք չէր վստահանար մօտ գնալ ննջեցելոյն, երկիւղից պաշարեալ, ապա մարմինն լուանալէ յետոյ, կը պատանէին զայն, երեսն ծածկելով եւ այնպէս մի պլանդակ եւ զարհուրելի կերպարանք տալով նմին, որ իսկապէս տեսնողին չկարէր քան ահ եւ սարսուռ պատճառել։ Ու այս պատանելն այնչափ անհրաժեշտ բան կը համարուէր, որպէս թէ առանց դորան Պետրոս Առաքեալն պիտի զլանայր դրախտի դուռն բանալ նոցա համար։ Աղքատ ընտանիք, պարտք անելով անգամ, ուստից որ կայր՝ պէտք էր ձարէին պատանացուն, ննջեցելոյ իւր սովորական զգեստուին Թաղելն անլուր եւ անհաւատալի բան մի կը համարուէր։ Մինչդեռ այլ երկրներում տեսած եմ որ պատանել բնաւ չկայ։ Ննջեցելոյն կը զգեստաւորեն իւր սովորական սար մի մաքուր զգեստով, մինչ անգամ գուլպայ եւս տալով ոտիցն։ Կը դնեն նորան կամ իւր մահճի կամ մի սեղանոյ վերայ, որ կ'երեւի որպէս քնած անձն մի։ Ընտանեաց բոլոր մեծ ու փոքր անդամքն, նոյն իսկ փոքրիկ մանկունք եւս կը ժողովուեն նորա շուրջն, ծաղկունք կը

դնեն նորա մօտ, կը համբուրեն նորան, կը նայեն մի եւ նոյն սիրոյ եւ գորովոյ աչքով առ նա, որպէս երբ կենդանի էր, ոչ սարսափ կայ, ոչ երկիւղ, եւ ընդհէր պէտք է լինի, եթէ անբարի սովորութիւնը կամաւ չպատճառէ զայն, որպէս առնէր ի Հուդա: Այդպէս կը ճնայ ննջեցեալն ընտանեաց իւր ընտանեաք, մինչ եկեղեցի տանեն կամ հանգստարան, եւ ոչքան վայելուչ սովորութիւն է այս համեմատելով միւսոյն: Մահն բնականաբար փոքր մի սարսափ ունի, բայց յաւել զարհուրելն ձեւացնելն զայն, օգուտն ինչ է: Թողեալ այն որ փոխանակ ննջեցելոյ յիշատակն եւ վերջին տեսութիւնը քաղցր եւ դիւր տպաւորութիւն թողնելոյ սրտում, անախորժ եւ զարհուրական գաղափար մի կը տպաւորէ մտաց վերայ, մանաւանդ մատաղահասակ անձանց:

Ցեղոյ միւս մի տարօրինակ եւ անվայելուչ սովորութիւն կայր, որ բարեկամք եւ ազգականք ննջեցելոյ տան մէջ ժողովուելով, այն տեղ օր մի, երբեմն երկու, գիշեր ցերեկ կը ճնային, եւ կերակրոյ հոգացողութիւն պէտք էր սոցա համար, թողեալ թաղման օրի հանդիսաւոր հացկերոյթն, եւ խեղճ ընտանիքն, արտասուք աչքերում պէտք էր պատրաստէին կերակուր պատրաստել: Ուրախութեան ժամանակում հասկանալի է այս, բայց ինչ կը նշանակէ այսպէս դառն եւ տխուր օրում ժողովուել կերուխում առնել, որ երբեմն զուարճութեան հանդիսի ձեւ կ'առնոյր բազմակաց կողմից, թէեւ խեղճ ընտանիքն ողբով եւ սգով կը պարապէին պատրաստել նոյն ննջոյքն: Եթէ հարկաւոր էր սգաւորացն ընկերել եւ մխիթարել, դժուար չէր թէ քանի հոգի նոցա մօտ ճնալով, միւսներն երթային տուն իւրեանց կերակուրն վայելել, եւ դառնալ եւ նոցա ժամանակ տալ նոյնն առնելոյ: Ննջեցելոյ հետ ուտելիք եւ ըմպելիք պէտք էր

տանել Հանգստարանն եւս, որ հոգեհայց կը կոչուէր, արդեօք ննջեցեալոյ հոգւոյն էր այն օգուտ թէ կենդանեաց, իւրեանց էր միայն գիտելի: Մեռելոյ յիշատակի օրերուն եւս, նմանապէս ուտելիք եւ ըմպելիք կը տանէին Հանգստարանն, եւ նոյն իսկ ննջեցեալոյ գերեզմանի վերայ սեղան կազմելով լալով կ'ուտէին զայն, որպէս թէ սրբազան պարտականութիւն մի էր, եւ ոմանք եւս բաժակ մի կամ երկու օղի ըմպելով բաժանեալ հոգւոյ կենացն, կը սկսանէին այնուհետեւ խիստ օղեխառն արտասուք թափել: Ցեսած եմ ես ինքնս մի կին, որ մի գերեզմանի մօտ նստեալ, որոյ քարի թիւն կը ցուցանէր յիսուն տարիք անց, աղիողորմ ձեւով թափելով ասացեալ օղեխառն արտասուքն, կու լայր եւ կը գովէր ննջեցեալոյ լաւութիւնքն զորս ունեցած էր կենդանի ժամանակում, բայց յետոյ յայտնուեց, որ այդ չէր իւր սիրելոյ գերեզմանն, եւ սխալմամբ էր գովաբանում մի օտարի, զոր գուցէ բնաւ տեսած չէր: Իրաւ որ միանգամայն անքրիստոնէավայել եւ ծաղրալի էին այս սովորութիւնքն, որ յուսալի է թէ այժմ բարձուած պիտի լինին: Սողովմոն իմաստունն ամէն բանի համար ժամանակ կ'որոշէ, եւ ամենայն խոհական անձն չէ կարող քան վկայել, որ կերուխում առնելոյ ժամանակն այս չէր:

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԻՊԱԿՔ

Վրիպակ	Էջ	Տող	Ուղիղ
դարձեալ	8	3	վարձեալ
պդուկն	8	27	պուուկն
անխնամե	11	7	անխնամ
գեփոյ	11	9	գեփով
ի Նորոց	15	12	ի Նորոյ
գաւկ	18	19	գաւակ
անդ	18	30	առ
աուուխեան	20	20	աուուխեամբ
լուխք	24	10	լուխիք
Դարուաչէք	25	30	Դարուազէքն
փողագրունքն	25	30	փողոցագրունքն
վաղ	26	25	վաղ
բաղալք	27	15	բաղալիք
թեթեւ	33	6	խեթիւ
գնողք	34	5	գնողք
ձեռօք	34	19	ձեռք
գէթ	36	5	էի
Ա.դ	39	8	Ա.ռ
միջում	42	12	միջոցում
անցն	43	27	անցքն
կը պատասանէ	55	22	կը պատասխանէ
Ձարովթի	59	28	Ձարավթի
դարվաչէք	59	30	դարվազէք
այասպէսի	69	13	այսպիսի
ջանաց	72	4	ջանայր
միայն	86	3	միոյն
աուխրուխիւններ	86	22	աուխրուխիւնն էր
որ	87	28	ոչ
գուչատան	90	4	գուլատան
գնկնէն	105	24	գնկնէրն
նոյն	107	28	նորն
երբսաց	112	21	երեսաց
պատանիկ	123	11	պատանիք
որ	165	18	այլ
կճէր	167	11	կճէիր
կ'ջանայ	167	12	կը ջանայր
օր ի	168	12	օրի
կխնուին	169	14	կը խփուին
քանի	172	12	բանի
կողմի	174	4	կողմից
Ա.յ'	184	6	Ա.յս
կողման	184	13	կողմն
հարիսայք	185	11	հարիսաի
առակող	191	15	առաքող
դասերով	192	11	դասերօք
աղջիկ	193	24	աղջիկն
պատատ	194	22	պատատառ
արեւմնաս	195	9	բարեւմնա
բարկուխեամբ	199	26	բարկուխիւնն
եղնաերգուխիւնն	201	6	եղերերգուխիւնն

Qualitätsleinband Ft. Lindauf
Haltbarkeits-
Garantie
Wagner a/-E., Nr. 3 Blick 69